11648

3(075)
Д-43

…ՎԼԻՍԱՆ

…ԼՍՍԱՆԻԿՈՎԱ



ԴԱՍԱԳԻՐՔ
ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ
ՀԱՄԱՐ
II ՄԱՍ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(075)
43

…Տ ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏՐԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ — 1933

1 DEC 2009
2 5 SEP 2006

ԲՆԱԳԻՐԸ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ Է ՌՍՖՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

3(075)
Լ-43

Բ. ԼԵՎԻՏԱՆ յեվ Մ. ՈՎՍՅԱՆՆԻԿՈՎԱ

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1006
(28063)
26778

ԴԱՍԱԳԻՐՔ
ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

II ՄԱՍ

ՈՒՍՄԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

10687

ՊԵՏՀՐԱՏ—ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ ★ 1933

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека

02 MAY 2013

11648

48950-65

Պատ. խմբագիր Դր. Հակոբյան, Տեխ. խմբագիր Գ. Զէնյան, Թարգմ Դր Հակոբյան Սրբագրեց՝ Գար. Հակոբյան. Գլավլիտ 8358 բ) Հր № 2783, պատվեր № 2373, տիրաժ 30000 Հանձնված է արտադրության 23 նոյեմբերի 1933 թ., ստորագրված է տպագրելու 4 դեկտեմբերի 1933 թ.
Պետհրատի տպարան, Երևան

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Նկատի առնելով այսպիսի դասագրքի հրատարակման հետ կապված դժվարությունները և հաշվի առնելով հենց դպրոցում, գործնական աշխատանքի ընթացքում նման դասագրքի ստուգման անհրաժեշտությունը, Լուսժողկոմատի կոլեգիայի կողմից այս տարի սույն դասագիրքը թույլատրվում է այն պայմանով, վոր բոլոր ոգտակար լրացումները և փոփոխությունները մտցնելով՝ հետագայում սա դառնա կայուն դասագիրք:

Հասարակագիտության այս դասագիրքն ընդգրկում է տարրական և միջնակարգ դպրոցների ուսման 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ տարիների միասնական դասընթացը:

Դասագիրքը բաղկացած է չորս մասից, համաձայն ուսման չորս տարիների, վորոնց համար նախատեսված է այս գիրքը: Դասագրքի բովանդակությունը լիովին համապատասխանում է ՌՍՖԽ Հանրապետության Լուսժողկոմատի 1933—1934 թ. թ. հրատարակած ծրագրերին:

Դասագրքի առաջին մասն (ուսման 3-րդ տարի) ընդգրկում է Ռուսաստանի հեղափոխական շարժումների հիմնական շրջանները, բանվոր դասակարգի հաղթանակը Հոկտեմբերին, քաղաքացիական պատերազմը, բոլշևիկյան կուսակցության դերը նրա առաջնորդների ղեկավարությամբ, վորը նախապատրաստեց Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն ու կազմակերպեց նրա պաշտպանությունը:

Երկրորդ մասն (ուսման 4-րդ տարի)ամփոփում է պրոլետարական դիկտատուրայի եյությունը, ծանոթացնում է խորհրդային շինարարության հիմունքներին, ցույց է տալիս սոցիալիստական հասարակության կառուցման այն նվաճումները, վոր ձեռք են բերել մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները՝ լենինյան կոմ-

կուսակցության ղեկավարությամբ և նրա առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ: Երրորդ մասը (ուսման 5-րդ տարի) ծանոթացնում է աշակերտներին բանվոր դասակարգի մեծ ուսուցիչների և առաջնորդների—Մարքսի, Էնգելսի, Լենինի, Ստալինի կյանքին, գործունեության ու պայքարին և տարրական պատկերացում տալիս նրանց ուսմունքի հիմունքի մասին:

Չորրորդ մասն (ուսման 6-րդ տարի) ավելի խորն է մշակում մարքսիզմ-լենինիզմի հիմնական հարցերը, քան նախորդ տարիներում:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ — ՀԱՄԿ(Բ)Կ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՋՈԿԱՏՆ Է

1917 *թվի հոկտեմբերին, բանվոր դասակարգը, չքավորագույն գյուղացիության հետ միացած, տապալեց կապիտալիստների իշխանությունը, վոչնչացրեց նրանց տիրապետությունը և հաստատեց իր իշխանությունը:*

Բանվորներն ու գյուղացիներն իրենց կեղեքողներին հաղթեցին, վորովհետև այդ հեղափոխական պայքարը ղեկավարում էր բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը՝ իր առաջնորդներ՝ Լենինի և Ստալինի գլխավորությամբ: *Առանց մարտերում (պայքարում) կոփված լենինյան կոմունիստական կուսակցության, բանվոր դասակարգը չէր կարող հաղթել կապիտալիստներին, չէր կարող իր հետևից հեղափոխական ճանապարհով տանել աշխատավորական մասսաներին, չէր կարող հաջող կերպով սոցիալիզմ կառուցել:*

Իսկ ի՞նչ բան է կուսակցությունը։

«Մեր կուսակցությունը,—*ասում է Լենինը*,—բանվոր դասակարգի ազատագրության գիտակից և առաջավոր մարտիկների միություն է»։

Ո՞վքեր են մտնում կոմունիստական կուսակցության մեջ։ Ո՞ւմ է նա ընդգրկում։

Կոմունիստական կուսակցության անդամ ընդունվում են միայն աշխատավորները։ Բոլշևիկների կուսակցությունն իր շարքերում ամենից առաջ ընդգրկում է լավագույն բանվորներին։ *Նա իր շարքերը համալրում է առաջավոր բանվորներով և կոլտնտեսականներով—լավագույն հարվածայիններով։*

Հսկայական պարտականություններ են դրվում կոմունիստների՝ Լենինի կուսակցության անդամների վրա։ Կուսակցությունը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կոմունիստ ոչ միայն անձնուրաց կերպով պայքարի բանվոր դասակարգի գործի համար, այլև առաջին դիրքերում լինի, իր հետևից տանի նաև մյուս աշխատավորներին։

Ահա թե կոմունիստների մասին ինչ է ասել լենինյան կոմունիստական կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինը Խորհուրդների 2-րդ համամիութենական համագումարում՝ 1924 *թ. հունվարի* 26-*ին, Լենինի հիշատակին նվիրված նիստում։*

«Մենք՝ կոմունիստներս առանձնահատուկ կառուցվածքի մարդիկ ենք։ Մենք ձևված ենք (պատրաստված ենք առանձնահատուկ նյութից։ Մենք նրանք ենք, որոնք կազմում են պրոլետարական մեծ ստրատեգի[1]*) բանակը, Լենինի բանակը։ Չկա ավելի բարձր բան, քան այդ բանակին պատկանելու պատիվը։ Չկա ավելի բարձր բան, քան այն կուսակցության անդամի*

[1]) *Ստրատեգիա.—հակառակորդի դեմ պայքարելիս կուսակցության գործողությունները ղեկավարելու արվեստն և գիտությունն է։*

կոչումը, որի հիմնադիրն ու ղեկավարը յեղել է ընկ. Լենինը։ Ամենքին չի վիճակված այդ կուսակցության անդամը լինել։ Ամենքին չի վիճակված այդ կուսակցության անդամության հետ կապված դառնություններին ու փոթորիկներին դիմանալ։ Բանվոր դասակարգի զավակները, պայքարի ու կարիքի զավակները, անհավատալի զրկանքների ու հերոսական ջանքերի զավակները—ահա ովքեր ամենից առաջ պետք է այդպիսի կուսակցության անդամները լինեն։

Ահա թե ինչու լենինեցների կուսակցությունը, կոմունիստների կուսակցությունը, միաժամանակ կոչվում է բանվոր դասակարգի կուսակցություն»։

Ի՞նչի համար էր պայքարել և պայքարում է կոմունիստական կուսակցությունը։

Կոմունիստական կուսակցությունն իր առաջացման հենց սկզբից պայքարել է սոցիալիստական հասարակության համար—մի հասարակություն, ուր չեն լինի կեղեքիչներ և կեղեքվողներ։ Կուսակցությունը հենց սկզբից իր խնդիրն է դրել—կեղեքողների դեմ բանվոր դասակարգի մղած պայքարի միմյանցից անջատ փորձերը միացնել և դարձնել բանվոր դասակարգի կազմակերպված, գիտակցական պայքար՝ ուղղելով այդ պայքարը բուրժուազիայի տիրապետության դեմ, սոցիալիզմի համար։

Մինչև հեղափոխությունը կուսակցությունը հարկադրված էր դժվարին պայմաններում աշխատելու։ Ցարական կառավարությունն անգթորեն պատժում էր բոլոր նրանց, ով փորձում էր պայքար կազմակերպել ինքնակալության (ցարի) դեմ, կապիտալիստների ու կալվածատերերի դեմ։ Տաժանակիր աշխատանքի, բանտի ու աքսորի եյին դատապարտվում բոլոր նրանք, ովքեր փորձ եյին անում դեմ դուրս գալու գոյություն ունեցող կարգին։ Աշխատավորության ազատագրման համար պայքարող հազարավոր մարտիկներ շղթաները շառաչեցնելով Սիբիրի ճանապարհներով գնում եյին դեպի

տաժանակիր աշխատանք ու աքսոր, մահանում եյին ցարական բանտերում ու ցարական կախաղանների վրա։

Սակայն ոչինչ չեր կոտրում բոլշևիկների կամքը։ Բոլշևիկները, Լենինի գլխավորությամբ հաղթահարելով բոլոր դժվարությունները, կազմակերպում եյին բանվորական մասսաներին։ Գործարաններում և ֆաբրիկներում, բանվորական ավաններում և ընդհատակյա կազմակերպություններում նրանք պրոլետարիատին դաստիարակում եյին անհաշտ դասակարգային պայքարի ոգով։

Կուսակցությունն ավելի ու ավելի յեր իր ազդեցության տակ առնում գյուղացիությանը և կազմակերպում եր նրան պայքարելու ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ։ Աշխատավոր գյուղացիությունն սկսում եր հասկանալ, որ միայն բանվոր դասակարգի հետ միանալով հնարավոր ե հաջող կերպով պայքարել կապիտալիստների, կալվածատերերի և կուլակների դեմ։ Կուսակցությունը տարեցտարի ամրապնդում ե պրոլետարիատի և գյուղացիության միությունը։

1917 թվի հոկտեմբերին կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը տապալվեց։ Աշխատավորները դարձան իրենց յերկրի տերը։ Ծանր ու հուսակտուր կյանքին վերջ դրվեց։

Կուսակցությունը, վերջապես, հնարավորություն ստացավ կպչելու իր վերջնական նպատակի իրագործման գործին—անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցմանը։

Սակայն կապիտալիստներն ու կալվածատերերն իրենց իշխանությունը կամավոր կերպով չհանձնեցին բանվորներին և գյուղացիներին։ Նրանք կատաղի կերպով ընդդիմադրեցին։ Քաղաքացիական պատերազմ բորբոքվեց։ Սպիտակ բանակների հորդաները շարժվեցին Խորհրդային յերկրի վրա։ Օտարերկրյա կապիտալիստներն իրենց բանակներն ուղարկեցին օգնելու ռուսական բուրժուազիային։ Նրանք յերկաթյա օղակով շրջապատեցին Խորհուրդների յերկիրը։

Կուսակցությունն իր ամբողջ ուժերը նվիրեց պրոլետարական պետության պաշտպանությանը։ Վլադիմիր Իլյիչ Լենինն ինքն անմիջականորեն ղեկավարում եր յերկրի վողջ պաշտպանությունը։ Լենինի և կուսակցության Կենտկոմի ղեկավարությամբ ստեղծվեց Բանվորա-գյուղացիական հզոր Կարմիր բանակը։

Կուսակցությունը բանակի գլուխը դրեց լավագույն բոլշևիկ-լենինեցներին։ Ստալինը, Վորոշիլովը, Ֆրունզեն և ուրիշ հին բոլշևիկներ հաղթանակներ կազմակերպեցին քաղաքացիական կռիվների կարևորագույն ճակատներում։

Կուսակցությունը Կարմիր բանակի համար յերկաթյա կարգապահության և բանվոր դասակարգի գործին անձնուրաց նվիրվածության օրինակ եր։ Շարքային կոմունիստների, քաղղեկների, կոմիսարների և հրամանատարների հերոսությունը գրավում եր Կարմիր բանակի բոլոր մարտիկներին։ Անսահման դիմացկունությունը, տոկունությունը և անհաշտելի ատելությունը կապիտալիստների ու կալվածատերերի հանդեպ՝ Կարմիր բանակին դարձնում եյին անպարտելի։

Կոմունիստական կուսակցության հաստատ ու անշեղ ղեկավարությամբ Կարմիր բանակը հաղթեց բոլոր ռազմաճակատներում։ Նա ջախջախեց Դուտովի ու Կալեդինի, Կրասնովի, Կոլչակի և Յուդենիչի, Դենիկի ու Վրանգելի բանակները։ Կարմիր բանակի հուժկու դրոհին չդիմացան նաև օտարերկրյա կապիտալիստների լավ զինված բանակները։ Խորհրդային Միությունը մաքրվեց սպիտակ-գվարդիականներից և օտարերկյա բանակներից։

Խորհրդային Միությունը հաղթելով քաղաքացիական կռիվներում, ձեռնամուխ յեղավ տնտեսական շինարարությանը։ Կոմունիստական կուսակցությունը մեծագույն հաղթանակներ տարավ նաև այդ ճակատում։

հաղթահարելով դժվարությունները, կուսակցությունը յերկիրը դուրս հանեց քայքայումից ու քաղցից: Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների հետևանքով քայքայված տնտեսությունը վերականգնվեց: Նորից աշխատեցին գործարանները, ֆաբրիկները, ելեկտրոկայանները: Պրոլետարական պետության օժանդակությամբ, պրոլետարական քաղաքի օգնությամբ արագորեն վերականգնվեց գյուղատնտեսությունը:

Վերականգնելով տնտեսությունը, կուսակցությունն անցավ ժողովրդական վողջ տնտեսության վերակառուցմանը—նոր գործարան-գիգանտների, ելեկտրակայանների, յերկաթուղիների շինարարությանը, հին ֆաբրիկների ու գործարանների վերակառուցմանը, գյուղում խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների ուժեղացրած շինարարությանը:

«Ինչպես կռվի ճակատներում կուսակցությունը ղեկավարելով և հրահանգելով, կարմիր բանակայինների հետ պառկում եր խրամատներում,—ասում է հին բոլշևիկ և Ստալինի լավագույն օգնական ընկ. Կագանովիչը.—այդպես էլ հիմա մեր կուսակցությունը, կառավարելով վիթխարի կերպով ծավալված շինարարությունը, կազմակերպում է հարվածայնությունը, աշխատում է դազգյահի մոտ, հաց է մթերում և բազմամիլիոն մասսաներին կազմակերպում է սոցիալիզմի հաղթանակի համար»:

Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է ու առաջնորդը: *Կուսակցությունը բանվոր դասակարգի և աշխատավորության լայն մասսաների կազմակերպիչն է:*

Մեր կուսակցության ուժն այն բանի մեջ է, վոր նա տիրապետում է հեղափոխական գիտությանը, վորի համաձայն մարդկային կյանքն այնպես պետք է կառուցվի, վոր այլևս կեղեքողներ ու կեղեքվողներ չլինեն: Այդ գիտությունը մարքսիզմ-լենինիզմն է: Նա ստեղծված է համայն աշխարհի բանվոր դասակարգի մեծագույն առաջնորդների—Մարքսի, Ենգելսի, Լենինի, Ստալինի կողմից:

Նրանք պրոլետարիատին ցույց տվին, թե նա ի՞նչ ճանապարհով կարող է բուրժուազիայի լծից ազատել իրեն և բոլոր աշխատավորներին ու սոցիալիստական հասարակություն կառուցել, վորի մեջ չի լինի մարդու շահագործումը մարդու կողմից: Մարքսիզմ-լենինիզմը կուսակցությանն անպարտելի յե դարձնում, վորովհետև տիրապետելով այդ գիտությանը՝ նա գիտի, ի՞նչպես և ո՞ւր տանել աշխատավորական մասսաներին:

Ղեկավարվելով Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքով, կուսակցությունը հանդիսանում է մարտական շտաբ, վորը մեր յերկրի բոլոր աշխատավորների համար գործողության ընդհանուր պլան է նշում:

Ընկ. Ստալինն այսպես է ասում այդ մասին.—

«Պատերազմում վոչ մի բանակ չի կարող գործ կատարել առանց փորձված շտաբի, յեթե նա չի ցանկանում իրեն պարտության դատապարտել: Մի՞թե պարզ չե, վոր պրոլետարիատն առավել ևս չի կարող գործ կատարել առանց այդպիսի շտաբի, յեթե նա չի ուզում իրեն հոշոտեն իր անիծյալ թշնամիները:

Սակայն վո՞րն է այդ շտաբը: Այդ շտաբը միայն կարող է լինել պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը: Բանվոր դասակարգն առանց հեղափոխական կուսակցության—դա առանց շտաբի բանակ է: Կուսակցությունը պրոլետարիատի մարտական շտաբն է»:

Այսպես, կոմունիստական կուսակցությունը կազմված է բանվոր դասակարգի լավագույն ներկայացուցիչներից: Նա պրոլետարիատի առաջավոր ջոկատն է և նրա առաջնորդը: Նա պրոլետարիատի այն կազմակերպությունն է, վորը միակ ընդունակն է պրոլետարիատին և մյուս աշխատավորական մասսաներին առաջնորդելու դեպի սոցիալիզմի հաղթանակը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՋՈԿԱՏՆ Է

Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է: Առանց դրան խոսք չէր կարող լինել բանվոր դասակարգի և մյուս աշխատավորների միլիոնավոր մասսաների կուսակցության կողմից իրապես ղեկավարելու մասին:

Մեր կուսակցությունը կոչվում է Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն: *Նա իր շարքերում ընդգրկում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների վողջ Միության կոմունիստներին:*

Կոմունիստական կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտավոր է խստորեն կատարել նրա ծրագիրն ու կանոնադրությունը:

Կոմունիստական կուսակցության ծրագիրը *շարադրում է այն խնդիրները, վորոնք դրված են նրա առաջ վորպես բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի և սոցիալիզմի համար մղած պայքարում բոլոր աշխատավորների ղեկավարի: Կուսակցության ծրագրում, Մարքսի–Էնգելսի–Լենինի և Ստալինի ուսմունքի հիման վրա շարադրված են կապիտալիստական հասարակության վոչնչացման ուղիներն ու յեղանակները, նոր՝ սոցիալիստական հասարակության կառուցման ուղիներն ու յեղանակները:*

Կոմունիստական կուսակցության կանոնադրությունը *վորոշում է կուսակցության կառուցվածքը, այսինքն, թե վորո՞նք են կուսակցական կազմակերպությունները և կուսակցության անդամների պարտականությունները, կուսակցության մեջ ընդունելու կանոնները, ինչպես են ընտրվում կուսակցական կոմիտեները, ինչպիսի կարգապահություն պետք է լինի կուսակցության մեջ և այլն:*

Կուսակցության ստորին հիմնական կազմակերպությունը կուսակցական բջիջն է: *Բջիջներ կազմակերպվում են ֆաբրիկներում, գործարաններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ՄՏ կայաններին կից, հիմնարկներում: Այս կամ այն ձեռնարկության կամ հիմնարկության մեջ աշխատող կուսանդամները պարտավոր են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության բջիջի անդամը լինել:*

Կուսակցությունը բջիջի միջոցով անմիջականորեն կապվում է բանվորության, կոլտնտեսականների և բոլոր աշխատավորների լայն մասսաների հետ: Բջիջում, նրա անդամների մեջ լայն դաստիարակչական աշխատանք է տարվում: Կոմունիստները մշտապես դաստիարակչական աշխատանք են տանում անկուսակցական աշխատավորության մեջ:

«Բոլշևիկների ուժը՝ կոմունիստների ուժն այն բանի մեջ է,—ասում է ընկ. Ստալինը,— վոր նրանք կարողանում են մեր կուսակցությունը շրջապատել անկուսակցական միլիոնավոր ակտիվով: Մենք, բոլշևիկներս, չեյինք ունենա այն հաջողությունները, վորոնք այժմ ունենք, յեթե մենք չկարողանայինք մեր կողմը նվաճել միլիոնավոր անկուսակցական բանվորների և գյուղացիների վստահությունը»:

Բջիջը ղեկավարում է ամբողջ ձեռնարկության աշխատանքը: Նա պայքարում է արտադրական պլանի կատարման համար, ֆաբրիկայի, գործարանի, ՄՏ կայանի, խորհտնտեսության, կոլտնտեսության բոլոր տնտեսական խնդիրների կատարման համար: Կուսակցությունը միշտ և ամենուրեք մասսաների հետն է: Կոմունիստները լավագույն հարվածայիններն են և բանվորների, կոլտնտեսականների ու բոլոր աշխատավորների սոցմրցակցության լավագույն կազմակերպիչները:

Կուսակցության բարձրագույն որգանը համամիութենական համագումարն է: *Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցներում կուսակցության ղեկավար որգանը նրա* Կենտրոնական կոմիտեն *է (ՀամԿ(բ)Կ):*

ԻՈՍԻՖ ՎԻՍԱՐԻՈՆՈՎԻՉ
ՍՏԱԼԻՆ (ՋՈՒՂԱՇՎԻԼԻ)

ՎՅԱՉԵՍԼԱՎ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ
ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԼԱԶԱՐ ՄՈՅՍԵՅԵՎԻՉ
ԿԱԳԱՆՈՎԻՉ

ՄԻԽԱԻԼ ԻՎԱՆՈՎԻՉ
ԿԱԼԻՆԻՆ

ԿԼԻՄԵՆՏ ՅԵՖՐԵՄՈՎԻՉ
ՎՈՐՈՇԻԼՈՎ



ԳՐԻԳՈՐԻՅ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ
ՕՐՋՈՆԻԿԻՁԵ (ՍԵՐԳՈ)

ՎԱԼԵՐԻԱՆ ՎԼԱԴԻՄԻ
ՐՈՎԻՉ ԿՈՒՅԲԻՇԵՎ



ՍԵՐԳԵՅ ՄԻՐՈՆՈՎԻՉ
ԿԻՐՈՎ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ ՔԱՂԲՅՈՒՐՈ

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՎԻԿԵՆՏԵՎԻՉ ԿՈՍԻՈՐ

ԱՆԴՐԵՅ ԱՆԴՐԵՅԵՎԻՉ ԱՆԴՐԵՅԵՎ

ՀամԿ(բ)Կ. Կենտկոմն ընտրվում է կուսակցության համամիութենական համագումարում: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղարը լենինյան կոմունիստական կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինն է:

Քաղաքական ղեկավարության համար կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն կազմակերպում է քաղաքական բյուրո (Քաղբյուրո): Քաղբյուրոյի կազմում մտնում են բոլշևիկյան կուսակցության հնագույն անդամները—Լենինի լավագույն աշակերտները:

Ահա նրանք, լավագույններից լավագույնները.— Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը (Ջուգաշվիլին), Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը, Լազար Մոյսեյվիչ Կագանովիչը, Միխաիլ Իվանովիչ Կալինինը, Կլիմենտ Ցեֆրեմովիչ (Սերգո), Վալերիան Վլադիմիրովիչ Օրջոնիկիձեն (Սերգո), Վալերիան Վլադիմիրովիչ Կույբիշևը, Սերգեյ Միրոնովիչ Կիրովը, Ստանիսլավ Վիկենտյեվիչ Կոսիորը և Անդրեյ Անդրեյեվիչ Անդրեյեվը:

Ազգային հանրապետություններում (Ուկրայնա, Բելոռուսիա, Ուզբեկստան, Ադրբեջան, Հայաստան, Վրաստան և այլն) կուսակցական բարձրագույն օրգանները հանրապետական համագումարներն են: Համագումարներում ընտրվում են հանրապետությունների կենտրոնական կոմիտեները,—Ուկ. (բ)Կ Կենտկոմը, Բել. Կ(բ)Կենտկոմը, Ուզ. Կ)բ)Կ Կենտկոմը, Հայկոմկուսի Կենտկոմը և այլն: Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում կենտկոմները կուսակցության ղեկավար օրգաններն են: Նրանք ղեկավարում են հանրապետության բոլոր մարզային, շրջանային և ստորին կուսկազմակերպությունները:

Մարզերում և յերկրամասերում կուսակցության բարձրագույն օրգանները յերկրային և մարզային կուսակցական կոմիտեներն են: Նրանք ընտրվում են յերկրային և մարզային կուսակցական կոնֆերենցիաներում:

Շրջաններում տարեկան վոչ պակաս քան մեկ անգամ շրջանային կուսակցական կոնֆերենցիաներ են հրավիրվում: Կոնֆերենցիաներն ընտրում են կուսակցության շրջանային կոմիտեներ: Կոնֆերենցիաների միջև ընկած ժամանակամիջոցում շրջանային կոմիտեները ղեկավարում են գործարանային, կոլտնտեսային, խորհտնտեսային և մյուս կազմակերպությունները:

Մեր կուսակցությունն այնպես է կառուցված, վոր բոլոր ստորադաս կազմակերպությունները հպատակվում են վերադաս կազմակերպություններին: Նրանք պարտավոր են կատարելու նրանց բոլոր վորոշումներն ու ցուցմունքները: Նրանք պարտավոր են իրենց գործունեյության մասին հաշիվ տալ նրանց:

Կուսակցության բոլոր որգաններն ընտրվում են կուսակցական համագումարներում, կոնֆերենցիաներում և ժողովներում: Կուսակցության յուրաքանչյուր անդամը մասնակցում է կուսակցության վորոշումների քննարկ-

Гос. Публ библиотека ՀՍԽՀ—ССРА им. А. Мясникяна

մանք և ընդունմանը: Սակայն երբ այս կամ այն հարցի մասին վորոշումն ընդունված է, կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտավոր է անառարկելիորեն հպատակվելու և կատարելու բջիջի, կոնֆերենցիայի, համագումարի մեծամասնության այդ վորոշումը:

Մեր կուսակցության այսպիսի կառուցվածքն ապահովում է նրա շարքերի միասնությունը և ամուր, յերկաթյա կարգապահությունը:

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԻԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է

Բանվոր դասակարգը չի կարող յերկու կամ մի քանի կուսակցություններ ունենալ: Բանվոր դասակարգը մեկ է և նա մի նպատակ ունի—հաղթել բուրժուազիային և կոմունիստական հասարակություն կառուցել: Դրա համար էլ **բանվոր դասակարգը մի կուսակցություն ունի—դա կոմունիստական կուսակցությունն է**: Միայն նա պրոլետարիատին իսկապես տանում է դեպի հաղթանակ՝ բուրժուազիայի նկատմամբ:

Բուրժուական յերկրներում կոմունիստական կուսակցությունից բացի կան նաև այլ կուսակցություններ, վորոնք իրենց «բանվորական» կուսակցություններ են անվանում: Սակայն նրանք իրենց այդպես են անվանում միայն նրա համար, վորպեսզի նրանց համար հեշտ լինի խաբել բանվորական մասսաներին: Գործնականում այդ կուսակցությունների ղեկավարները դավաճանում են բանվորության շահերին: Նրանց խնդիրն է բանվորներին հետ պահել բուրժուազիայի դեմ պայքարելուց: Նրանք աշխատում են խեղաթյուրել և բանվոր դասակարգից թաքցնել Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքի ամենաէական մասը, այսինքն այն, վոր սոցիալիստական հասարակության կառուցման համար բանվոր դասակարգը պետք է իշխանությունն իր ձեռքը վերցնի և պրոլետարիատի դիկտատուրա հաստատի:

Վորպեսզի բանվորներին հետ պահեն կապիտալիստների դեմ պայքարելուց, նրանք ամեն յեղանակով ապացուցում են, վոր պրոլետարիատը կարող է խաղաղ ճանապարհով, չստեղծելով իր իշխանությունը, հասնել սոցիալիզմին:

Այն կուսակցությունները, վորոնք համաձայնում են կապիտալիստների հետ, զիջումներ են անում նրանց, կոչվում են ոպորտունիստական, համաձայնողական կուսակցություններ: Ցարական Ռուսաստանում այդպիսի կուսակցություններ էյին մենշևիկներն ու եսերները:

Մեր կոմունիստական կուսակցությունը միշտ պայքարել է այդ համաձայնողական կուսակցությունների դեմ: Նա յերկարատև և համառ պայքար է մղել մենշևիկների ու եսերների դեմ, մերկացնելով նրանց բանվորների և գյուղացիների առաջ:

Այն կուսակցությունը, վորը պաշտպանում է բանվոր դասակարգի շահերը, հետևաբար նաև բոլոր աշխատավորների շահերը, վոչ մի դեպքում չի կարող և վոչ մի համաձայնության գալ բուրժուազիայի հետ: Բանվոր դասակարգի կուսակցությունը պետք է բանվոր դասակարգին և վողջ աշխատավորությանն անշեղորեն առաջնորդի մի նպատակի—սոցիալիզմի: Այդպիսի կուսակցություն է միայն կոմունիստական կուսակցությունը:

Մեր կուսակցությունը բանվոր դասակարգի միակ և **միասնական** կուսակցությունն է:

Ի՞նչ է նշանակում այս:

Սա նշանակում է, վոր մեր կուսակցությունն առաջավոր բանվորների այնպիսի միություն է, վորը մտածում ու գործում է միասնորեն, վորպես մի մարդ:

Կոմունիստական կուսակցությունն իր բոլոր անդամներից պահանջում է **գիտենալ կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը**, գիտենալ այն, թե կուսակցությունն ինչ միջոցներով է կյանքում իրագործում իր ծրագիրը: Կուսակցությունը պահանջում է, վոր նրա

յուրաքանչյուր անդամ գիտենա կուսակցության կարևորագույն վորոշումների մասին:

Կուսակցությունն իր բոլոր անդամներից յերկաթյա կարգապահություն է պահանջում: Նա նրանցից պահանջում է անառարկելիորեն կատարել կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և նրա բոլոր վորոշումները: Կուսակցության անկարգապահ անդամների մասին Լենինն ասել է.—«Ով թեկուզ և չնչին չափով թուլացնում է պրոլետարիատի կուսակցության յերկաթյա կարգապահությունը (առանձնապես նրա դիկտատուրայի ժամանակ), նա փաստորեն օգնում է բուրժուազիային՝ ընդդեմ պրոլետարիատի»:

Մեր կուսակցության կարգապահությունը բոլշևիկյան կարգապահություն է, գիտակցական կարգապահություն: Նա յենթադրում է կոմունիստական կուսակցության յուրաքանչյուր անդամի բարձր գիտակցականությունը: Յուրաքանչյուր կոմունիստ, մինչև կուսակցության կողմից այս կամ այն վորոշումն ընդունելը, իրավունք ունի ազատ կերպով քննարկելու կուսակցական բոլոր հարցերը, սակայն յերբ կուսակցության կողմից վորոշումն ընդունված է, այստեղ արդեն յուրաքանչյուր կոմունիստ պետք է հպատակվի կուսակցության մեծամասնության վորոշումներին և անառարկելիորեն կատարի դրանք:

Կուսակցությունն անողոք կերպով պայքարում է անկարգապահության դեմ՝ իր շարքերում: Նա պայքարում է բոլոր նրանց դեմ, ովքեր շեղվում են կուսակցության վորոշումները կիրառելուց, նրանց դեմ, ովքեր կասկածում են լենինյան գծի ճշտության մեջ, այն գծի, վորը կուսակցությունը կիրառում է իր ողջ աշխատանքում: Կուսակցությունն անհաշտ պայքար է մղում բոլոր նրանց դեմ, ովքեր ձգտում են նրան շեղել լենինյան ճիշտ գծից:

Կուսակցությունն իր անդամներից չի պահանջում, վոր նրանք միայն համաձայնեն իր վորոշումների հետ:

Նա պահանջում է, վոր յուրաքանչյուր կուսանդամ պայքարի այդ վորոշումների կատարման համար:

Ինչպես քաղաքացիական կռիվների ճակատում յուրաքանչյուր մարտիկի նվիրվածությունն ստուգվում էր մարտի դաշտում, այնպես էլ այժմ յուրաքանչյուր կոմունիստի նվիրվածությունն ստուգվում է այն բանով, թե նա ի՞նչպես է պայքարում իր ֆաբրիկի, գործարանի, ելեկտրոկայանի, խորհտնտեսության, կոլտնտեսության պլանի կատարման համար, թե նա ի՞նչպես է պայքարում դասակարգային թշնամիների և նրանց գործակալների՝ գործալիքների, լոդըրների, գռփողների դեմ, արթո՞ւն է պահպանում հանրային սեփականությունը, արդյո՞ք նա իր աշխատանքում ծառայում է վորպես օրինակ այն բոլոր բանվորների և կոլտնտեսականների համար, վորոնց հետ նա աշխատում է: Կուսակցությունը յուրաքանչյուր կոմունիստից պահանջում է, վոր նա լավագույն հարվածային լինի, վոր նրա աշխատանքն օրինակելի լինի բոլոր շրջապատողների համար:

Կոմունիստական կուսակցությունը թույլ չի տալիս և վոչ մի ֆրակցիայի, խմբակի գոյություն իրա ներսում:

Խմբակների ու ֆրակցիաների գոյությունը կքայքայեր կուսակցությունը: Յեվ բոլոր կուսանդամների կողմից կուսակցության առաջ կանգնած խնդիրները միասնաբար կատարելու փոխարեն, կուսակցության ներսում յեղած զանազան խմբակներն ու ֆրակցիաներն անխուսափելիորեն կպայքարեյին միմյանց հետ և միայն խառնաշփոթություն կմտցնեյին նրա շարքերը: Կուսակցության ներսում ֆրակցիաների ու խմբակների գոյությունը վերջ ի վերջո կտաներ դեպի պրոլետարիատին թշնամի կուսակցությունների կազմակերպում: Կուսակցությունն այն ժամանակ անընդունակ կլիներ բանվոր դասակարգին և բոլոր աշխատավորներին առաջնորդելու դեպի սոցիալիստական հասարակության կառուցումը: Դրա համար էլ կոմունիստական կուսակցությունն ամե-

նավճառական կերպով պաշտպանում է իր միասնությունը և պայքարում է բոլոր նրանց դեմ, ովքեր ցանկանում են խախտել այդ միասնությունը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՈՒՄԸ

Կոմունիստական կուսակցությունն անընդհատ պայքարում է իր շարքերն անհարազատ, ներս խցկված մարդկանցից մաքրելու համար: Բացի դրանից, մեր կուսակցությունը ժամանակ առ ժամանակ իր շարքերի գըլխավոր զտում է անցկացնում: Կուսակցությունն այդպիսի զտում անց է կացրել 1921 թվին, 1929 թվին և անց է կացնում ներկայումս:

Կոմունիստական կուսակցությունը բանվորների, կոլտնտեսականների և բոլոր մյուս աշխատավորների առաջ, նրանց ակտիվ մասնակցությամբ ստուգում ու զտում է իր շարքերը:

Զտման ժամանակ կուսակցության յուրաքանչյուր անդամ պատմում է իր աշխատանքի մասին, այն մասին, թե նա ի՛նչպես է հասկանում կուսակցության առաջ կանգնած խնդիրները, այն մասին, թե նա ի՛նչպես է այդ խնդիրները կյանքում իրականացնում: Կուսակցությունն ստուգում է, թե յուրաքանչյուր կոմունիստ ի՛նչպես է պայքարում և թե ի՛նչ չափով է պատրաստ հետագայում էլ պայքարելու կուսակցության գործի համար, բանվոր դասակարգի գործի համար: Բոլոր նրանց, ովքեր անարժան են կրելու լենինյան մեծ կուսակցության անդամի կոչումը, կուսակցությունը հեռացնում է իր շարքերից:

Կուսակցությունն ո՞ւմ է զտում իր շարքերից:

Պրոլետարիատի յերդվյալ թշնամիները ներս են թափանցում մեր ֆաբրիկները, գործարանները, էլեկտրոկայանները, խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները և բանվորների ու կոլտնտեսականների դիմակի տակ հաճախ ներս են թափանցում նաև կուսակցության շարքերը, վոր հետո ամեն կերպ խաբեն բանվոր դասակարգին և նրա կուսակցությանը, քայքայեն մեր գործը: Կուսակցությունն իր շարքերը մաքրում է անհարազատ և խորթ տարրերից, վորոնք փարբեյությամբ մըտել են իր շարքերը:

Կուսակցությունն իր շարքերը զտում է նաև այն մարդկանցից, վորոնք թեև անհարազատ դասակարգերի ծնունդ չեն, սակայն իրենց աշխատանքով գործում են հոգուտ դասակարգային թշնամիների: Յեթե կուսակցության անդամը, փոխանակ իր գործարանի, ֆաբրիկի, խորհտնտեսության, կոլտնտեսության, հիմնարկության պլանի կատարման համար պայքարելու, արգելակում է այդ կատարումը, ապա կուսակցությունը չի կարող այդպիսի «կոմունիստին» թողնել իր շարքերում: Կուսակցությունն այդպիսի «կոմունիստներին» վտարում է իր շարքերից:

Կան և այնպիսի «կոմունիստներ», վորոնք խոսքով համաձայնում են կուսակցության բոլոր վորոշումներին, քվեարկում են հոգուտ նրանց, իսկ գործնականում չեն պայքարում նրանց կատարման համար: Կուսակցությունն այդպիսի մարդկանց հեռացնում է իր շարքերից:

Կուսակցությունն իր շարքերը մաքրում է բոլոր նրանցից, ովքեր խախտում են նրա յերկաթյա կարգապահությունը: Բոլոր նրանց, ովքեր չեն կատարում կուսակցության և պրոլետարական պետության վորոշումները, կասկածի յեն յենթարկում, խոսում են այն մասին, վոր մեր պլաններն անիրագործելի յեն, չեն հավատում մեր պլանների կատարմանը և չեն պայքարում նրանց կատարման համար—կուսակցությունը վտարում է իր շարքերից:

Կուսակցությունն իր շարքերը զտում է բոլոր նրանցից, ովքեր չեն ցանկանում գործնականում պայքարել դասակարգային թշնամու դեմ, ովքեր չեն պայքարում կուլակային տարրերի, գոփողների, լոդրերի, գողերի և բոլոր նրանց դեմ, ովքեր հափշտակում են հանրային սեփականությունը`

Կուսակցությունն իր շարքերից զտում է այն մարդկանց, վորոնք ցանկանում են կուսակցության մեջ գտնվելը և Խորհրդային պետության ծառայելն օգտագործել իրենց անհատական շահերի համար—կարյերիստներին (պաշտոնի յետևից վազողներին), մորթապաշտներին և այլն: Կուսակցությունն իր շարքերը մաքրում է բոլոր բյուրոկրատներից—այն մարդկանցից, վորոնք կտրվել են աշխատավորական մասսաներից, արհամարհում են բանվորների, կոլտնտեսականների և մյուս աշխատավորների կարիքներն ու պահանջները:

Կուսակցությունն իր շարքերը մաքրում է բոլոր նրանցից, ովքեր իրենց վարքով աշխատավորության առաջ գցում են կուսակցության արժանիքը:

Կուսակցությունն իր շարքերը մաքրելով՝ ե՛լ ավելի ամուր ու մարտունակ է դառնում:

«Մեր կուսակցությունը զտում է իրեն,—ասում է ընկ. Կագանովիչը,—վորպեսզի ե՛լ ավելի մարտունակ դառնա, վորպեսզի սրի իրեն, վորպեսզի կուսակցական մուրճն ավելի լավ կռի, վորպեսզի մեր ապարատն ավելի լավ աշխատի, վորպեսզի մեր տնտեսությունն ավելի լավ զարգանա, վորպեսզի գրասենյակայնությունն ու բյուրոկրատիզմն ավելի արագ վերացվեն, վորպեսզի բանվորական մասսաները և գյուղացիությունն ավելի լավ ապրեն:

Ահա թե մենք ինչո՛ւ համար ենք զտում անցկացնում»

ՍՏԱԼԻՆԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե

Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը միշտ ել Լենինի ամենամոտիկ և ամենահավատարիմ օգնականն է յեղել: Նա միշտ ել առանց տատանումների ընթացել է Լենինի հետ ձեռք-ձեռքի տված:

Լենինի մահվանից հետո Ստալինը Համամիութենական կոմունիստական կուսակցության և Կոմինտերնի

անփոփոխ ղեկավարն է: Ինչպես Լենինը Մարքսի-Ենգելսի գործի շարունակողն եր, այնպես ել Ստալինը Մարքսի-Ենգելսի-Լենինի գործի շարունակողը և համայն աշխարհի պրոլետարիատի ու աշխատավորության առաջնորդը դարձավ:

Ստալինի իսկական ազգանունը Ջուղաշվիլի յե: Ինքնակալության (ցարի) ժամանակ Ստալինը բազմիցս ստիպված է յեղել թաքնվելու ցարական վոստիկաններից: Վոստիկանական լրտեսներից չճանաչվելու համար Իոսիֆ Վիսարիոնովիչը փոխում եր իր ազգանունը: Վոստիկանությունից թաքնվելով, նա աշխատել է՝ «Դավիթ», «Կոբա», «Նիժերաձե», «Չիժիկով», «Իվանովիչ», «Ստալին» անուններով: Այսպիսով ընկ. Ջուղաշվիլու կուսակցական անունը մնաց Ստալին:

Ստալինը ծնվել է 1879 թվին Թիֆլիս նահանգի Գորի քաղաքում: Նրա հայրը կոշիկի գործարանի բանվոր եր:

1893 թվին Ստալինն ընդունվում է Թիֆլիսի հոգևոր սեմինարիան: Այդ սեմինարիայում վրդովեցուցիչ ռեժիմ կար: Հետևում եյին աշակերտների յուրաքանչյուր քայլին: Ընկ. Ստալինն այդ մասին այսպես է պատմում,—«Ժամի 9-ին տալիս եյին թեյի զանգը, գնում եյինք ճաշարան, իսկ յերբ վերադառնում եյինք սենյակը, դուրս եր գալիս, վոր այդ ժամանակամիջոցում խուզարկել ու քրքրել են մեր բոլոր արկղները...» Ստալինը չքավոր ծնողների զավակ եր, դրա համար ել նրան ավելի եյին հետապնդում, քան մյուսներին:

Այս բոլորն Ստալինին վաղ հասակից ատելություն ներշնչեց գոյություն ունեցող կարգերի հանդեպ: Նա սկսեց մտածել այն մասին, թե ինչպես վերացնել այդ կարգերը: 15 տարեկան հասակից նա սկսեց մասնակցել հեղափոխական շարժմանը: Նա կապվեց Անդրկովկասում աշխատող ընդհատակյա խմբակների հետ: Ստալինը սեմինարիայի վերակացուներից և տեսչից թաքուն սկսեց գրքեր կարդալ Մարքսի-Ենգելսի ուսմունքի մասին:

1897 թվին Ստալինը գլխավորում է մարքսիստական խմբակները։ Նա մասնակցում է Թիֆլիսի յերկաթուղային արհեստանոցների բանվորության ժողովներին։ Այդ ժողովները գաղտնի եյին գումարվում։ Բոլոր միջոցները ձեռք եյին առնվում, վորպեսզի ցարական լրտեսները չիմանային դրանց մասին և չջախջախեյին հեղափոխական կազմակերպությունը։

Ստալինը 19 տարեկան հասակում, 1898 թվին, մըտնում է կուսակցության մեջ։ Սեմինարիայի ուսուցիչները և վարչությունն իմանում են Ստալինի հեղափոխական աշխատանքի մասին։ Սկսում են հետևել նրան։ Նրան ամեն կերպ հալածում և հետո էլ հեռացնում են սեմինարիայից։

Ընկ. Ստալինը 1899—1900 թ.թ. յեռանդուն աշխատանք է տանում բանվորական հեղափոխական խմբակներում։ Նա բանվորներին պատմում է Մարքսի-Ենգելսի ուսմունքի մասին։ Սովորեցնում է նրանց, թե ինչպես պետք է իրենց շուրջը համախմբեն լավագույն բանվորներին՝ ինքնակալության, կապիտալիստների և կալվածատերերի դեմ պայքարելու համար։ Այն բանվորները, վորոնց հետ Ստալինն աշխատում եր, շատ եյին սիրում նրան։

1900—1901 թ.թ. Թիֆլիսում գործադուլներ տեղի ունեցան։ Ցարական վոստիկաններն անգթորեն ճնշեցին գործադուլ արած բանվորներին։ Կուսակցության Թիֆլիսի կոմիտեն ցրեցին։ Բազմաթիվ հեղափոխականներ ձերբակալվեցին։ Ստալինի մոտ խուզարկություն կատարվեց։ Ցարական վոստիկանությունը ցանկանում եր ձերբակալել նրան, սակայն Իոսիֆ Վիսարիոնովիչը թաքնվեց։

Ստալինն իր ամբողջ կյանքը նվիրում է բանվոր դասակարգի գործին։ Լենինի հետ միասին նա ստեղծել է բոլշևիկների բանվորական կուսակցությունը։ Լենինի հետ միասին նա պայքարել է բոլոր նրանց դեմ, ովքեր

ցանկանում եյին բանվորությանը սխալ ճանապարհով տանել։

Ստալինը Թիֆլիսից անցավ Բաթում։ Այստեղ նա կազմակերպեց կուսակցության Բաթումի կոմիտեն։ Ստալինի ղեկավարությամբ գործադուլներ են տեղի ունենում գործարաններում։ Ստալինը 1902 թվի փետրվարին բանվորական ցույց է կազմակերպում ցարական կարգերի դեմ։ Սակայն վոստիկանները մարտին բռնում են նրան ու գցում Բաթումի բանտը։ Այդ բանտում նա մնաց մինչև 1903 թվի վերջը։ Դրանից հետո Ստալինին 3 տարով աքսորեցին Սիբիր, Նովայա Ուդա գյուղը։

Այդ աքսորավայրում գտնվելու ժամանակ Ստալինը Լենինից նամակ է ստանում։ Այդ նամակն սկիզբ դրեց յերկու մեծ մարդկանց մտերմությանը։ «Այդ... փոքրիկ նամակը,—գրում է Ստալինը,—ինձ է՛լ ավելի ամրապնդեց իմ համոզմունքում, վոր մենք հանձին Լենինի ունենք մեր կուսակցության լեռնային արծվին»։

Ստալինն աքսորում քիչ մնաց։ Առաջին որերից նա փախչելու հնարավորություններ եր փնտրում, վորպեսզի նորից հեղափոխական աշխատանք տանի։ Յեվ աքսորավայր հասնելուց ընդամենը մի ամիս հետո նա փախչում է այդտեղից ու վերադառնում Կովկաս։

Այստեղ նա մեծ աշխատանք է տանում 1905 թվի հեղափոխության նախապատրաստության համար։ Բանվորներին սովորեցնում է, թե ինչպես պետք է պայքարել։

1905 թվի վերջին Ստալինը վորպես պատվիրակ գնում է Տամերֆորսի (Ֆինլանդիա) բոլշևիկյան կոնֆերենցիային մասնակցելու։ Այստեղ Ստալինն առաջին անգամ հանդիպում է Լենինին։ Լենինի հետ հանդիպելը հաստատում է նրա այն համոզմունքը, թե հանձին Լենինի, համաշխարհային պրոլետարիատն ունի իր առաջնորդին—լեռնային արծվին,— ինչպես Ստալինը բնորոշել է Լենինին,—վորը չի իմանում թե ինչ բան է վախը թշնամիների դեմ մղվող պայքարում։ 1906 և 1907 թ.թ.

Ստալինը մասնակցում է կուսակցության 4-րդ և 5-րդ համագումարներին:

Կուսակցության 5-րդ համագումարից վերադառնալուց հետո նա աշխատում է Բաքու քաղաքում: Նա իր շուրջն է համախմբում Բաքվի բոլշևիկներին: Նա հասնում է այն բանին, որ Բաքվի կազմակերպությունը դառնում է ամենաամուր կազմակերպություններից մեկը:

Ոստիկանությունը հետապնդում է Իոսիֆ Վիսարիոնովիչին և կրկին ձերբակալում նրան: Նա ութ ամիս բանտ է նստում, որից հետո 3 տարով աքսորվում է Վոլոգդայի նահանգը՝ Սոլվիչեգոդսկ: Սակայն Ստալինն այնպիսի մարդ չէր, որ հնարավոր լիներ նրան աքսորավայրում պահել: Մի քանի ամիս հետո Ստալինը նորից փախչում է աքսորից, վերադառնում է Բաքու և կուսակցական աշխատանք է տանում:

1910 թվին ոստիկանությունը նորից ձերբակալում է Ստալինին: Նրան նորից քշում են Սոլվիչեգոդսկ: Սակայն մի տարուց հետո Իոսիֆ Վիսարիոնովիչը նորից կարողանում է փախչել:

Փախուստից հետո՝ Կենտրոնական կոմիտեյի հանձնարարությամբ նա աշխատում է Պետերբուրգում: Դա այն ժամանակն էր, երբ ցարական կառավարությունը դաժանորեն պատժում էր հեղափոխական բանվորներին: Ցարական կառավարությունն անողոքորեն վրեժխնդիր էր լինում 1905 թվի հեղափոխության համար:

Հեղափոխական աշխատանքն անկման մեջ էր գտնվում: Ընկ. Ստալինն ամեն ջանք գործ է դնում բոլշևիկների Պետերբուրգի կազմակերպությունն ամրապնդելու համար:

Իոսիֆ Վիսարիոնովիչը չկարողացավ երկար աշխատել: Նրան նորից ձերբակալում են ու աքսորում Վոլոգդա: Սակայն Ստալինը նորից փախչում է: Նա վերադառնում է Պետերբուրգ և նորից լծվում է ընդհատակյա աշխատանքին:

1912 թվին Ստալինը բոլշևիկյան կուսակցության Կենտկոմի անդամ է ընտրվում:

1912 թվի ապրիլին նա նորից ձերբակալվում է: Ցարական աստիճանավորներն Ստալինին չորս տարով քշում են հեռավոր Նարիմի երկրամասը: Սակայն ցարական դահիճներին այստեղ էլ չի հաջողվում պահել բոլշևիկ Ստալինին: Այդ տարվա ամռանը նա Նարիմից փախչում է Պետերբուրգ: Քիչ ժամանակ անց, Ստալինը գնում է արտասահման՝ Լենինի մոտ:

1912 թվի վերջին նա նորից վերադառնում է Պետերբուրգ: Այստեղ նա ղեկավարում է բոլշևիկյան «Պրավդա» թերթը:

Ոստիկանությունն ամեն ջանք գործ է դնում Ստալինին գտնելու համար: 1913 թվի գարնանը ոստիկանությանը հաջողվում է ձերբակալել Ստալինին: Նրա բազմաթիվ փախուստներից կատաղած ցարական աստիճանավորները Իոսիֆ Վիսարիոնովիչին քշում են Տուրուխանի հեռավոր երկրամասը՝ հետ ընկած Կուրեյկա գյուղը:

Այստեղ պայմանները շատ ծանր էին: Այստեղ գիշերը կես տարի էր տևում: Որսորդությունից և ձկնորսությունից բացի, գոյության ուրիշ ոչ մի միջոց համարյա չկար:

Հազարավոր կիլոմետրով հեռու էր ընկած երկաթգծից: Տարեկան միայն երկու անգամ շոգենավ էր գալիս: Փախչել հնարավոր չէր: Այսպես, ցարական դահիճներին հաջողվեց որոշ ժամանակով ընդհատել անվեհեր, անխոնջ, Լենինի լավագույն ոգնական Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինի հեղափոխական պայքարը: Միայն փետրվարյան հեղափոխությունն ազատեց նրան:

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ ընկ. Ստալինը Լենինի հետ միասին զինված ապստամբության կազմակերպիչն էր:

Ընկ. Ստալինը բացառիկ մեծ դեր խաղաց քաղաքացիական կռիվներում:

Ամենավտանգավոր տեղերում, ուր սպիտակ բանակներն սպառնում եյին ջախջախել մեր Կարմիր բանակին, ջարդել կարմիր զորամասերին, միշտ հայտնվում եր Ստալինը: Նա ամուր կերպով իր ձեռքն եր վերցնում կարմիր զորամասերի ղեկավարությունը: Կանգնեցնում եր նահանջը, ամրացնում եր ֆրոնտը, և նրա ղեկավարությամբ Կարմիր բանակը, փոխանակ նահանջելու, սկսում ե արագությամբ հարվածել թշնամիներին:

Այդպես յեղավ 1918 թվին Ցարիցինի տակ, վորն այժմ նրա անունով կոչվում ե Ստալինգրադ: Այդպես յեղավ այդ թվի աշնանն արևելյան ֆրոնտում—Պերմի տակ:

1919 թվին գարնանը Կարմիր բանակն Ստալինի ղեկավարությամբ հետ մղեց Յուդենիչի հարձակումը Պետրոգրադի վրա և ջախջախեց նրա բանակը:

Այդ թվի աշնանն Իոսիֆ Վիսարիոնովիչն արդեն հարավային ճակատում եր և պայքարում եր Դենիկինի բանակի դեմ:

Հարավային ֆրոնտում տարած մարտական աշխատանքի և սպիտակ-գվարդիականներին լավագույն հակահարված կազմակերպելու համար Ստալինը պարգևատրվել ե Կարմիր դրոշի շքանշանով:

1920 թվին Ստալինն աշխատում եր հարավ-արևմըտյան ճակատում՝ լեհական բանակի դեմ:

Հրամանատարներն ու կարմիր բանակայինները սիրում ու հպարտանում եյին իրենց առաջնորդ Ստալինով: «Բոլշևիկյան առաջնորդ»—եյին անվանում նրան:

Ստալինը մեծ ուշադրություն եր դարձնում բանակի մատակարարումը կազմակերպելուն: Նա իմանում ու հասկանում եր, թե մարտիկի համար ինչ մեծ նշանակություն ունեն լավ սնունդն ու հագուստը: Ցեվ թե Ցարիցինում, թե Պերմում, թե հարավային ճակատում Ստալինը բոլոր միջոցները ձեռք եր առնում, վորպեսզի լավ մատակարարի մարտիկներին, նրանց ուժեղ ու տոկուն դարձնի:

Ստալինն ամենից ավելի լավ կարողանում եր գնա-

հատել բանակի աշխատողներին, վորոնք իրենց կյանքը նվիրել եյին պրոլետարական հեղափոխության գործին: Այդ բանը լավ իմանում եր ամբողջ բանակը և դրա համար ել նա այդպես սիրում եր իր առաջնորդին, այդպես անձնուրացորեն նրա ղեկավարությամբ կռվում եր բոլոր թշնամիների դեմ:

Ընկ. Ստալինը 1922 թվից ընտրվում ե ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար: Ընկ. Ստալինը Լենինի լավագույն աշակերտն ե և բոլշևիկյան կուսակցության առաջնորդը:

Ահա թե նա ինչպես ե խոսում իր մասին.—

«Ինչ վերաբերում ե ինձ, ապա յես միայն Լենինի աշակերտ եմ և իմ նպատակն ե—դառնալ նրա արժանավոր աշակերտը: Այն խնդիրը, վորին յես նվիրել եմ իմ կյանքը, բանվոր դասակարգին բարձրացնելն ե: Այդ խնդիրը վոչ թե վորևե ազգային պետության ամրապնդումն ե, այլ սոցիալիստական, նշանակում ե նաև ինտերնացիոնալ պետության ամրապնդումն ե, ըստ վորում այդ պետության ամրապնդումն օժանդակում ե վողջ միջազգային բանվոր դասակարգի ամրապնդմանը: Յեթե բանվոր դասակարգին բարձրացնելու և այդ դասակարգի սոցիալիստական պետությունն ամրապնդելու իմ աշխատանքի յուրաքանչյուր քայլն ուղղված չլինի ամրապնդելու և բարելավելու բանվոր դասակարգի դրությունը, ապա յես իմ կյանքն աննպատակ կհամարեյի»:

Բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիությունն ընկ. Ստալինի ղեկավարությամբ մեծ հաջողություններ ձեռք բերին մեր յերկրում սոցիալիզմի շինարարության գործում: Բոլշևիկների Համամիութենական կոմունիստական կուսակցությունը նրա ղեկավարությամբ բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանն անշեղորեն առաջնորդում ե դեպի անդասակարգ՝ սոցիալիստական հասարակության կառուցումը:

Կոմունիստական Ինտերնացիոնալը նրա ղեկավարությամբ համայն աշխարհի բանվոր դասակարգին առաջնորդում է դեպի սոցիալիզմի վերջնական հաղթանակը։

ԼԱԶԱՐ ՄՈՅՍԵՅԵՎԻՉ ԿԱԳԱՆՈՎԻՉ

Լազար Մոյսեյեվիչ Կագանովիչը Լենինի հավատարիմ աշակերտն է և լենինյան կոմունիստական կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ամենամոտիկ ոգնականը։

Ընկ. Կագանովիչը ծնվել է 1893 թվին։ Վաղ հասակից նա հարկադրված է յեղել բանվորի ինքնուրույն կյանք վարել։ Նա աշխատել է վորպես կաշեգործ բանվոր։

Ընկ. Կագանովիչը 18 տարեկան հասակում, 1911 թվին, մտել է բոլշևիկների կուսակցության մեջ։ Դա այն ժամանակն եր, յերբ ցարական կառավարությունն ամենադաժան կերպով պատժում եր հեղափոխականներին։ Ընդհատակյա աշխատանքի ծանր պայմաններ, անվերջ գրկանքներ, հալածանքներ, ձերբակալություններ, բանտ, աժանակիր աշխատանք, թերևս և կախաղան—ահա թե ինչ եր սպասում յուրաքանչյուր բոլշևիկի։ Սակայն այդ բոլորից չեր վախենում յերիտասարդ բանվոր ընկ. Կագանովիչը։ Կուսակցության մեջ մտնելով Լազար Մոյսեյեվիչն իրեն ընդմիշտ նվիրեց բանվոր դասակարգի գործին։

Մինչև հեղափոխությունը Լազար Մոյսեյեվիչը հեղափոխական աշխատանք եր տանում Կիևում, Եկատերինոսլավում, Յուզովկայում (Դոնբաս)։ Ցարական վոստիկաններն անվերջ հետապնդում եյին Լազար Մոյսեյեվիչին։ Հաճախակի խուզարկություններ եյին կատարում նրա մոտ։ Նա հաճախակի ձերբակալվում եր։

Փետրվարյան հեղափոխությունից հետո (1917 թ.) կուսակցությունն ընկ. Կագանովիչին ուղարկեց ամենապատասխանատու աշխատանքի։ Նա աշխատում եր կուսակցության ռազմական կազմակերպություններում և բանվորներին նախապատրաստում եր զինված ապստամբության համար։

1917 թ. հոկտեմբերին ընկ. Կագանովիչը Գոմելում ղեկավարում եր կուսակցության Պոլեսեյի մարզային կազմակերպությունը։

Ընկ. Կագանովիչը մեր բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի կազմակերպիչներից մեկն է։ Նա Կարմիր բանակի կազմակերպման համառուսական կոլեգիայի կոմիսարն եր։

Լազար Մոյսեյեվիչը ղեկավարել է Նիժնի Նովգորոդի, Վորոնեժի, Թուրքեստանի կուսկազմակերպությունները։

Կուսակցության XIII համագումարում (1924 թ. մայիսին) ընկ. Կագանովիչն ընտրվեց ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամ։ Դրանից հետո նա միշտ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամ է ընտրվում։

1924—25 թ. թ. ընկ. Կագանովիչն աշխատում է վորպես ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար։ 1925 թվի մայիսից մինչև 1928 թիվը նա աշխատում է Ուկրայնայում։ Ընկ. Կագանովիչը Ուկրայնայի կոմկուսի (բ) կենտկոմի գլխավոր քարտուղարն եր։

1928 թվից նորից աշխատում է վորպես ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար, իսկ 1930 թվի ապրիլից նա միաժամանակ աշխատում է նաև վորպես կուսակցության Մոսկվայի Կոմիտեյի—ՀամԿ(բ)Կ ՄԿ-ի քարտուղար։

Ընկ. Կագանովիչը սոցիալիստական շինարարության խոշոր կազմակերպիչ է և ղեկավար։ Նա ղեկավարում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի գյուղատնտեսական բաժինը։ Աշխատանքի այդ պատասխանատու, դժվարին բնագավառում ընկ. Կագանովիչը գյուղի սոցիալիստական վերակառուցման ամենօրյա կոնկրետ ղեկավարության որինակներ ցույց տվեց։

Ընկ. Կագանովիչի ղեկավարությամբ Մոսկվայի

բոլշևիկները հսկայական հաջողություններ են ձեռք բերել:

Առաջին հնգամյակի տարիներին Մոսկվայում խոշորագույն գործարաններ են կառուցված.—Ստալինի անվան ավտոմոբիլի գործարանը, «Շարիկո-պոդշիպնիկ» գործարանը, վորը բանվորները կոչեցին ընկ. Կագանովիչի անվան գործարան, «Ֆրեզեր» գործարանը, վորն ամեն տեսակ գործիքներ է պատրաստում, հեծանվի գործարանը և բազմաթիվ այլ գործարաններ: Ընկ. Կագանովիչն անդուլ հետևել ու ղեկավարել է այդ գիգանտների շինարարությունը:

Մոսկվայի մարզը մեծ հաջողություններ է ձեռք բերել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում: Մարզի գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին ընդգրկված են կոլտնտեսություններում: 600 խորհտնտեսություններ են կազմակերպված: Առաջներում Մոսկվայի մարզը հացահատիկ, բանջարեղեն և այլ գյուղատնտեսական մթերքներ քիչ էր արտադրում: Նա ստանում էր Միության այլ վայրերից բերված մթերքներ: Ընկ. Կագանովիչի ղեկավարությամբ Մոսկվայի մարզն ավելի ու ավելի յե մեծացնում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը—նա սպառող մարզից դառնում է արտադրող մարզ:

1932 թվին Մոսկվայի մարզը հացամթերումը կատարողների առաջին շարքումն էր: 1933 թվի գարնանը նա ցանքն առաջին հերթին ավարտողների թվումն էր:

Ընկ. Կագանովիչն ամեն օր հոգ է [illegible]ում բանվորների և աշխատավորների նյութական դրությունը բարելավելու համար: Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում բանվորական բնակարանների շինարարությանն ու բարելավմանը: Ընկ. Կագանովիչի ղեկավարությամբ Մոսկվան դառնում է Խորհրդային Միության օրինակելի մայրաքաղաքը:

Ընկ. Կագանովիչը մեծ ուշադրություն է դարձնում աճող սերնդի դաստիարակությանը: Նա անդուլ հետե-

վում է, թե ինչպես են աշխատում դպրոցները, թե վո՛րքան են նրանք սովորողներին զինում գիտելիքներով և նրանցից բանվոր դասակարգի գործի համար կառուցողներ և մարտիկներ դաստիարակում:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՀԱՄԼԿՅԵՄ)

Լենինյան կոմյերիտմիությունը կուսակցության ամենամոտիկ և լավագույն օգնականն է սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Կոմյերիտմիությունը կուսակցական կազմակերպություն չե, դա կուսակցություն չե: Դա բանվորական և գյուղացիական յերիտասարդության կոմունիստական կազմակերպություն է: Կոմունիստական կուսակցությունը ղեկավարում է կոմյերիտմիությանը: Կոմյերիտմիությունն իր շարքերում դաստիարակելով բանվորական և գյուղացիական յերիտասարդությանը, կուսակցության շարքերը համալրում է կայուն կոմունիստներով:

Յերիտասարդական կոմունիստական միությունը կրում է Լենինի անունը և պատվով է կատարում նրա պատգամները: Կոմյերիտմիության կանոնադրության մեջ գրված է.—«սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում կոմյերիտմիությունը պարտավոր է արժանի լինել իր մեծ ուսուցչի անվանը, նա պետք է ամենայեռանդուն, ազնիվ, համարձակ և հեղափոխությանն անձնուրացորեն նվիրված մարտիկ լինի, վորը յերիտասարության և բոլոր աշխատավորների համար որինակ հանդիսանալով»:

Վլադիմիր Իլյիչն ի՞նչ պատգամներ է թողել կոմյերիտմիությանը:

Կոմյերիտմիության III համագումարում Լենինն ասում էր, վոր կոմյերիտականը պարտավոր է իմանալ, «վոր նա, մտնելով կոմունիստական յերիտասարդության

միության մեջ, պարտականություն է հանձն առել կուսակցությանն օժանդակել կոմունիզմ կառուցելու և օգնել վողջ յերիտասարդ սերնդին՝ կոմունիստական հասարակություն ստեղծելու»:

Վլադիմիր Իլյիչն ասում եր, վոր յերիտասարդությունը կարող է սոցիալիզմի շինարարության, մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման գործում կուսակցությանը հաջողությամբ օգնել միայն այն ժամանակ, յերբ նա սովորի, սովորի ու սովորի:

Կոմյերիտականը պետք է լավ տիրապետի Մարքսի-Էնգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքին: Միայն այն ժամանակ նա կլինի սոցիալիզմի լավ կառուցող, կիմանա, թե ինչի՛ համար և ի՛նչպես պետք է պայքարել:

Կոմյերիտականը պետք է տիրապետի այն գիտելիքներին, վորոնք կօգնեն նրան դառնալու լավ մասնագետ, գիտուն ինժեներ, տեխնիկ, բժիշկ, ուսուցիչ և այլն:

Ընկ. Ստալինը 1928 թվին կոմյերիտմիության VIII համագումարում, զարգացնելով Լենինի հայացքները կոմեյրիտականների ուսուցման մասին, ասում եր.— «Ձեր առաջ ամրոց կա կանգնած, դա, այդ ամրոցը կոչվում է գիտություն՝ գիտելիքների բազմաթիվ ճյուղերով: Մենք պետք է այդ ամրոցը գրավենք, ինչ ել վոր լինի: Յերիտասարդությունը պետք է գրավի այդ ամրոցը, յեթե նա ցանկանում է լինել նոր կյանքի կառուցողը, յեթե նա ցանկանում է իսկապես դառնալ հին գվարդիային փոխարինողը»:

Վլադիմիր Իլյիչը սովորեցնում եր, վոր կոմյերիտմիությունը պետք է հարվածային խմբակ լինի բոլոր աշխատանքներում, սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր բնագավառում: Նա ասում եր.—«Կոմունիստական յերիտասարդության միությունը պետք է հարվածային խմբակ լինի, վորը յուրաքանչյուր աշխատանքում ցույց է տալիս իր օգնությունը, հանդես է բերում իր ձեռներեցությունը, իր նախաձեռնությունը»:

Կոմյերիտմիությունն իր վողջ աշխատանքի ընթաց-

քում ապացուցեց, վոր նա հավատարիմ է Լենինի պատգամներին: Նա պատվով է կատարում այդ պատգամները և կուսակցության իսկական օգնականն է: Կոմյերիտմիությունը կուսակցության հետ միշտ վոտք-վոտքի, միշտ մարտականորեն է կատարում իր վրա դրված պարտականությունները:

Կոմյերիտմիությունը կուսակցության հետ միասին քաղաքացիական կռիվների ճակատներում հերոսաբար պայքարել է թշնամիների դեմ: Բազմաթիվ կոմյերիտականներ նահատակվել են մարտերում: Շատերը քաջության և անվեհերության հրաշքներ են ցույց տվել: Կոմյերիտականներ կան, վորոնք Կարմիր դրոշի յերեքական շքանշան ունեն՝ քաղաքացիական կռիվների ժամանակ իրենց ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների համար:

Քաղաքացիական կռիվներում ցուցաբերած մարտական ծառայությունների համար կոմյերիտմիությունն ամբողջությամբ պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:

Կոմյերիտմիությունը շքանշանն ստանալով հայտարարեց.

«Շքանշանը վոչ միայն պարգև է, շքանշանը մեծ պարտավորություն է, վոր լենինյան կոմյերիտմիությունն ընդունում է իր վրա...

Մենք յերբեք չենք արատավորի այսոր մեզ հանձնված Կարմիր դրոշի շքանշանը: Մենք յերդվում ենք արդարացնել այդ, յերդվում ենք նոր փառքով պսակել Կարմիր բանակի վառ կարմիր դրոշակները և Կարմիր նավատորմի ալ-կարմիր վիմպելները (ծովային դրոշակները):

Մենք յերդվում ենք չիջեցնել մեր ձեռքերը մինչև այն ժամանակ, քանի հաղթական «Ինտերնացիոնալի» հնչյունները չեն թնդա ամենուրեք, ուր թափվում է բանվորների ու գյուղացիների արյունն ու քրտինքը:

Մենք հանդիսավորապես խոստանում ենք Խորհրդ-

դային կառավարության ամենաջերմ մասնակցություն ունենալ նրա բոլոր նախաձեռնություններում և նրա վողջ աշխատանքում:

Թե դաշտում և թե գործարանում, թե կարմիր բանակայինների զորանոցում և թե կոոպերատիվ խանութում մենք կանենք մեր փոքրիկ գործը, հիշելով, վոր դա այն մեծ գործի մի մասն է, վորը կոչվում է սոցիալիզմի շինարարություն»:

Դասակարգային թշնամու—կուլակի ու վնասարարի—դեմ մղվող պայքարում կոմյերիտմիությունը նույնպես առաջին շարքերումն է: Բազմաթիվ կոմյերիտականներ սպանվել են կուլակների կողմից՝ պայքարելով նրանց դեմ, մերկացնելով նրանց վնասարարությունը, նրանց հակահեղափոխական աշխատանքը:

Սոցիալիստական շինարարության ընդգավառում կոմյերիտմիությունն ապացուցեց, վոր նա իսկապես բանվոր դասակարգի հարվածային բրիգադն է: Սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում կոմյերիտմիությունը մարտականորեն, հարվածայնորեն է աշխատում ու հաղթահարում բոլոր արգելակները: Կոմյերիտմիությունը սոցմրցակցության նախաձեռնողն է: Նա հարվածային աշխատանքի լավագույն որինակներ է ցույց տալիս:

1922 թ. Կոմյերիտմիությունը վերցրեց ռազմա-ծովային նավատորմի շեֆությունը: 1931 թվին նա վերցրեց ռազմա-ոդային նավատորմի շեֆությունը: Կոմյերիտականները նավատորմում օրինակելի մարտիկներ են, ռազմական ուսուցման հարվածայիններ և կարգապահության մեջ լավագույնները: Կոմյերիտականներն ամրապնդում են յերկրի պաշտպանությունը:

Դպրոցներում յերեխաների ընդհանուր ուսուցումն իրագործելու ճակատում կուսակցությանն ոգնելու համար կոմյերիտմիությունը վերցրել է ընդհանուր պարտուսի (պարտադիր ուսուցում) շեֆությունը: Նա ակտիվորեն ոգնում է կուսակցությանն այնպես վերակառուցելու դպրոցը, վորպեսզի նա գիտելիքներով զինի սովորողներին, վորպեսզի նա նրանցից սոցիալիստական հասարակության կարգապահ ու կայուն կառուցողներ դաստիարակի:

Կոմյերիտմիությունը ղեկավարում է պիոներներին, վորոնք նրա ոգնականներն են ու փոխարինողները:

Կոմյերիտմիության ղեկավարությամբ աճում է սոցիալիզմ կառուցողների ամրակուռ ու հուժկու բանակը:

Սոցիալիստական շինարարության ճակատում հերոսական, անձնվեր աշխատանքի համար վողջ լենինյան կոմյերիտմիությունը պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով:

Կոմյերիտմիության անդամ կարող են լինել միայն աշխատավորների զավակները: Կոմյերիտական կարող է լինել միայն նա, ով հպատակվում է Միության խիստ կարգապահությանը, ընդունում է նրա ծրագիրն ու կանոնադրությունը և ակտիվորեն մասնակցում է սոցիալիստական շինարարությանը:

Խ. Միության մեջ կոմյերիտմիութենական բարձրագույն որգանը Կոմյերիտմիության համամիութենական համագումարն է: Նա ընտրում է ՀԱՄԼԿՅԵՄ-ի Կենտրոնական կոմիտեն: Կուսակցության նման կոմյերիտմիության մեջ էլ ստորադաս կազմակերպությունները յենթարկվում են վերադաս կազմակերպություններին:

Կոմյերիտմիությունն ամրակուռ ու կարգապահ կազմակերպություն է: Կոմյերիտմիության աշխատանքի հաջողությունների գրավականն այն է, վոր կոմյերիտմիությանը ղեկավարում է բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը և նրա կենտրոնական կոմիտեն՝ ընկ. Ստալինի գլխավորությամբ:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ո՞վքեր են մտնում կոմունիստական կուսակցության մեջ։

2. Ինչո՞ւ համար բանվոր դասակարգին կոմունիստական կուսակցություն է պետք։

3. Ո՞րն է կուսակցության ստորին, հիմնական կազմակերպությունը։ Ո՞րն է ՀամԿ(բ)Կ բարձրագույն օրգանը։

4. Կուսակցությունը վորոնցի՞ց է զտում իր շարքերը։

5. Լենինն ի՞նչ պատգամներ է թողել կոմյերիտմիությանը։

6. Ո՞վ է ղեկավարում կոմերիտմիությանը։

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

§ 1. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱՑԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Մեր յերկրում գոյություն ունի Խորհուրդների իշխանություն։ Առաջին անգամ Խորհուրդներ ստեղծվեցին 1905 թ.։ Դրանք ստեղծվեցին ցարական իշխանության դեմ մղած պայքարում։ 1905 թ. հեղափոխության ժամանակ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվորներն իրենցից ընտրում եյին գործադուլային կոմիտեներ։ Հենց այդ գործադուլային կոմիտեներից ել առաջացան բանվորական պատգամավորների առաջին խորհուրդները։

1905 թ. խորհուրդները հանդիսացան մեր խորհրդային իշխանության սաղմերը։

Ինքնակալության (ցարի) դեմ մղվող հեղափոխական պայքարի զարգացման համեմատ, խորհուրդները գործադուլային պայքարի օրգաններից վեր եյին ածվում պետական իշխանության օրգանների։ Այդ տեսակետից առանձնապես խոշոր նշանակություն ուներ Պետերբուրգի (այժմ Լենինգրադի) Խորհուրդը։

Բանվորական պատգամավորների խորհուրդներ առաջացան նաև մի շարք այլ քաղաքներում—Ռոստովում (Դոնի վրա), Սամարայում, Պյատիգորսկում, Նիկոլայեվում, Լուգանսկում, Խարկովում, Յեկատերինոսլավում, Սորմովում, Օդեսայում, Կոստրոմայում, Սմոլենսկում, Կրասնոյարսկում, Իրկուտսկում, Չիտայում, Խարբինում և այլ քաղաքներում։

Մի շարք գավառական խորհուրդներ 1905 թ. հասան այն բանին, վոր նրանք տեղերում համարյա բոլո-

բալին վերացրեցին ցարական իշխանության օրգանները և այն փոխարինեցին խորհուրդների օրգաններով:

Օրինակ՝ Տվեր քաղաքում խորհուրդների առաջադրմամբ ֆաբրիկներում ու գործարաններում փաստորեն իշխանությունն անցավ բանվորների ձեռքը: Ոչ միայն ֆաբրիկները, այլև քաղաքը 1905 թ. դեկտեմբերին խորհուրդների ձեռքում էր:

Ռոստովում (Դոնի վրա) բանվորական պատգամավորների խորհուրդը նույնպես քաղաքի իշխանությունը վերցրեց (գրավեց) իր ձեռքը:

Լենինն ուսումնասիրելով 1905 թ. հեղափոխության փորձը, այն յեզրակացության յեկավ, վոր 1905 թ. խորհուրդները իշխանության օրգաններ էյին: Լենինը հանձինս բանվորական պատգամավորների առաջին խորհուրդների տեսնում էր պրոլետարական իշխանության սաղմնային օրգանները: 1905 թ. խորհուրդները օրինակ դարձան այն բանվորական և զինվորական պատգամավորական խորհուրդների, վորոնք ծագեցին 1917 թ. փետրվարյան հեղափոխության առաջին իսկ օրերին:

1917 թ. փետրվարի 27 (նոր տոմարով մարտի 12-ին) յերբ ցարական ինքնակալությունը տապալվեց, իշխանությունը գրավեցին կապիտալիստները: Նրանք կազմակերպեցին իրենց ժամանակավոր կառավարությունը: Բուրժուական կառավարության կազմի մեջ մտան մեծ թվով խոշոր ֆաբրիկատերեր և կալվածատերեր:

Ժամանակավոր կառավարության կողքին Պետրոգրադի բանվորներն ու զինվորները կազմակերպեցին բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդ: Նույնպես խորհուրդներ կազմակերպվեցին նաև Մոսկվայում և բոլոր արդյունաբերական քաղաքներում: Բայց խորհուրդներում բուրժուազիայի պաշտպան հանդիսացող մենշևիկներն ու էսէռները մեծամասնություն էյին կազմում: Դրա համար էլ խորհուրդները շարժվում էյին այդ բուրժուական կուսակցությունների ցանկությամբ, և փոխանակ ամբողջովին յերկրի իշխանու-



Վ. Ի. ԼԵՆԻՆ

թյունն իրենց ձեռքը վերցնելու, խորհուրդները պաշտպանում էյին ժամանակավոր կառավարությանը:

Բոլշևիկյան կուսակցությունը բացատրում էր բանվորներին ու գյուղացիներին, վոր ժամանակավոր կառավարությունը նրանց խաբում է: Բոլշևիկյան կուսակցությունն ապացուցում էր, վոր ժամանակավոր կառավարությունը պաշտպանում է բուրժուազիայի շահերը: Բոլշևիկներն ասում էյին, վոր բանվորները պետք է իշխանությունն իրենց ձեռքը վերցնեն և սկսեն նոր կյանք կառուցել, այնպիսի կյանք, վորտեղ չլինեն կեղեքողներ, վորոնք ապրում են բանվորների ու գյու-

ղացիների աշխատանքի հաշվին: Աշխատավորությունը մենշևիկների ու եսերների խաբեբայությունն ու դավաճանությունը պարզաբանելու ամենօրյա իր համառ աշխատանքի շնորհիվ, կոմունիստական կուսակցությունը խորհուրդներում մեծամասնություն գրավեց:

Կուսակցությունը Լենինի գլխավորությամբ բանվորներին և գյուղացիներին առաջնորդեց դեպի ապստամբություն: 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով նոյեմբերի 7-ին) կապիտալիստների ու կալվածատերերի տիրապետությունը տապալվեց:

Իշխանությունն ամբողջապես անցավ բանվորական ու զինվորական խորհուրդների ձեռքը:

Այդ նույն օրը Պետրոգրադում բացվեց Խորհուրդների Համառուսական II համագումարը: Խորհուրդների համագումարը Ռուսաստանը հայտարարեց Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ՌՍՖԽՀ):

Այդ համագումարում ընտրվեց ամբողջ յերկրի առաջին խորհրդային կառավարությունը:

Խորհրդային կառավարության նախագահ ընտրվեց բանվորների ու գյուղացիների սիրելի առաջնորդ—Վլադիմիր Իլյիչ Լենինը:

§ 2. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՈՐԳԱՆՆԵՐՆ ԵՆ

Խորհրդային իշխանության ստեղծումով չվերջացավ բանվորների և գյուղացիների պայքարը կեղեքիչների դեմ: Հոկտեմբերի ժամանակ ջարդված կալվածատերերն ու կապիտալիստները փորձում եյին զենքը ձեռքներին յետ ստանալ իրենց կորցրած իշխանությունը: Սպիտակ գվարդիական բանակներն ու ավազակախմբերն ամեն կողմից շրջապատեցին յերիտասարդ խորհրդային յերկիրը: Նրանց օգնում եյին օտարերկրյա կապիտալիստները: Յերկրի ներսում Սպիտակ գվարդիականները կազմակերպում եյին ապստամբություններ,

սպանում եյին բանվորների ու գյուղացիների առաջնորդներին—բոլշևիկներին:

1918 թ. կապիտալիստները հարձակում կազմակերպեցին Լենինի վրա: Եսերուհի Կապլանը կրակեց ընկ. Լենինի վրա, յերբ Լենինը դուրս եր գալիս նախկին Միխելսոնի գործարանում տեղի ունեցած բանվորական ժողովից: Վլադիմիր Իլյիչը ծանր վիրավորվեց:

Քաղաքացիական պատերազմից հետո ել դասակարգային թշնամիները— սպիտակ գվարդիականները, նախկին կապիտալիստները, կուլակները—շարունակեցին վնասել խորհուրդներին:

Այժմս ել նրանք ամեն ջանք գործ են դնում խցկվելու մեր ֆաբրիկները, գործարանները, էլեկտրոկայանները, կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, վորպեսզի հափշտակեն հանրային (հասարակական) գույքը, փչացնեն մեքենաները, հրդեհեն պահեստները, ֆաբրիկներն ու գործարանները—և ամեն կերպ աշխատում են վնասել խորհրդային իշխանությանը:

Այդ բանում նրանց օգնում են օտարերկրյա կապիտալիստները, վորոնք ամբողջ ժամանակ Խորհրդային յերկրի վրա պատրաստում են նոր հարձակում:

Դրա համար էլ խորհուրդների առաջին խնդիրն է՝ ճնշել բոլոր դասակարգային թշնամիների դիմադրությունը և կազմակերպել խորհրդային յերկրի պաշտպանությունը:

Իրենց այս խնդիրը, ինչպես և մյուս խնդիրները խորհուրդները կարող են կատարել միայն այն դեպքում, յերբ բոլոր աշխատավորները կազմակերպվեն կոմունիստական կուսակցության կողմից ղեկավարվող բանվոր դասակարգի շուրջը:

Առանց դրան աշխատավորական մասսաները չեն կարող հաղթել իրենց թշնամիներին: Այդ է ապացուցում կեղեքիչների դեմ աշխատավորների մղած պայքարի ամբողջ պատմությունը:

Բերենք օրինակներ:

250 տարի առաջ Ռուսաստանում Ստեփան Ռազինի ղեկավարությամբ բռնկեց գյուղացիական ապստամբություն, բայց ապստամբությունը ճնշվեց ցարական կառավարության կողմից: Ինքը՝ Ստեփան Ռազինը նմանապես զոհվեց:

100 տարի հետո՝ 1773 թ. բռնկեց նոր, ավելի խոշոր Պուգաչովյան ապստամբությունը: Մերձվոլգյան և Ուրալի վողջ չքավոր գյուղացիությունը համախմբվեց ապստամբության առաջնորդ Եմելյան Պուգաչովի շուրջը: Բայց Պուգաչովյան ապստամբությունը նմանապես ճնշվեց, իսկ Պուգաչովը մահապատժի յենթարկվեց:

Այն ժամանակ Ռուսաստանում դեռ չկար բանվոր դասակարգ, վորն առաջնորդեր գյուղացիությանը դեպի հեղափոխական հաղթանակ: Հենց սա յեր գյուղացիական ապստամբությունների պարտության գլխավոր պատճառը: Հետագայում նմանապես գյուղացիները շատ-շատ անգամ ապստամբել են իրենց կեղեքիչների դեմ, բայց բոլոր այդ ապստամբություններն ել չեն կարողացել հաղթանակով պսակվել:

«Գյուղացիական ապստամբությունները կարող են հաջողություն ունենալ միայն այն դեպքում—ասում է ընկ. Ստալինը—յեթե նրանք զուգակցվում են բանվորական ապստամբությանը, և յեթե բանվորները ղեկավարում են գյուղացիական ապստամբությունները»:

Առանց բանվոր դասակարգի օգնության ու ղեկավարության, գյուղացիները չեն կարող համախմբվել յերկարատև պայքարի՝ ընդդեմ կեղեքիչների:

Լենինը սովորեցնում եր, վոր «միայն պրոլետարիատն է ի վիճակի համախմբել և իր հետևից տանել աշխատավորության և շահագործվող ազգաբնակչության փոշիացած ու հետամնաց շերտերին»:

Այդ բանը գործնականում ապացուցեց մեր յերկրի

բանվոր դասակարգը: Իր դրոշների ներքո նա կազմակերպեց աշխատավոր գյուղացիությանը՝ ցարական ինքնակալության դեմ, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ պայքարելու, և 1917 թ. Հոկտեմբերին աշխատավորությանը հաղթություն բերեց:

Իսկ ինչո՞ւ բանվոր դասակարգն է հանդիսանում բոլոր աշխատավորների ղեկավարը՝ շահագործողների դեմ մղած պայքարում, սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Գյուղացիները ցիր ու ցան ընկած են գյուղերում, վորոնք միմյանցից տասնյակ կիլոմետրներով հեռու յեն: Նրանք ունեն իրենց տնտեսությունը: Ճիշտ է, աշխատավոր գյուղացիության խոշոր մեծամասնության տնտեսությունը շատ խղճուկ եր ու չնչին—մի փոքրիկ հողամաս և ուրիշ վոչինչ: Դրանով նա հազիվհազ կերակրում եր իրեն և իր ընտանիքին: Միշտ նա տնքում եր պարտքերի ծանրության տակ: Ծանր աշխատանքի լծի տակ տնքում եր նրա ամբողջ ընտանիքը: Բայց և այնպես յուրաքանչյուր գյուղացի աշխատում եր իրեն համար, իր առանձին հողամասում: Եվ այդ փոքրիկ տնտեսությունը կաշկանդում եր գյուղացուն, կապում եր նրա վոտն ու ձեռը: Նա կպչում եր իր տնտեսությանը, իր փոքրիկ հողամասին:

Աշխատելով իր հողամասում, աշխատելով ինքն իրեն համար՝ գյուղացին պարզ չեր տեսնում իր դասակարգային թշնամիներին և դրա համար ել սկզբում անհասկանալի յեր, վոր կեղեքումից ու ճնշումից ազատվել կարելի յե միայն կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը տապալելով:

Բանվոր դասակարգը կապիտալիզմի օրոք չուներ վոչ ֆաբրիկներ, վոչ գործարաններ և վոչ ել մեքենաներ: Նա աշխատում եր այն ֆաբրիկներում ու գործարաններում, վորոնք պատկանում եյին կապիտալիստներին:

Կապիտալիստներն ամբողջ ժամանակ աշխատում

եյին քամել բանվորներից նրանց ամբողջ հյութը, վորքան կարելի յե քիչ վճարել և վորքան կարելի յե շատ աշխատեցնել:

Կապիտալիստը պարզորոշ կերպով բանվորի նկատմամբ հանդես եր գալիս վորպես շահագործող, վոր ինքը չի աշխատում, իսկ ապրում ե բանվորների աշխատանքի հաշվին:

Ֆաբրիկում աշխատանքը շատ դժվար եր ու ծանր, բայց այդտեղ բանվորները սովորում եյին աշխատել պլանով, համաձայնեցնելով աշխատանքը միմյանց հետ, սովորեցնում եր կազմակերպվածություն: Բանվորները միատեղ աշխատելով, կեղեքվելով կապիտալիստներից, սովորեցին միահամուռ ձևով հակահարված տալ կապիտալիստներին:

Ահա ե ինչո՛ւ առաջավոր բանվորներն այդպես հեշտ հասկանում են Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքը՝ շահագործողների—կապիտալիստների և կալվածատերերի դեմ պայքար կազմակերպելու և նրանց իշխանությունը տապալելու անհրաժեշտության վերաբերյալ:

Բանվորները կազմակերպեցին իրենց կուսակցությունը, վորը յերկար տարիներ ղեկավարում եր իրանց պայքարը՝ ընդդեմ շահագործողների, իսկ ներկայումս ղեկավարում ե կյանքի նոր ձևով վերակառուցումը, սոցիալիստական շինարարությունը:

Աշխատելով և պայքարելով միատեղ՝ բանվոր դասակարգը սովորեց պաշտպանել բոլոր աշխատավորների շահերը: Անցնելով իշխանության գլուխ՝ պրոլետարիատը հոգ ե տանում վոչ միայն իրեն մասին, այլև բոլոր աշխատավորների մասին:

Քանի վոր բանվոր դասակարգն ավելի կազմակերպված ե, կապիտալիստների դեմ մղած պայքարում մեծ փորձ ունի, քանի վոր նա ավելի լավ ե հասկանում բոլոր աշխատավորների շահերը, ավելի լավ ե տեսնում, թե ուր պետք ե առաջնորդել աշխատավորներին—ուստի նա

հանդիսանում ե բոլոր աշխատավորների ղեկավարը՝ շահագործողների դեմ և սոցիալիզմի համար մղվող պայքարում:

Դրա համար ել խորհուրդների յերկրորդ խնդիրը հանդիսանում ե՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ համախմբել բոլոր աշխատավորներին պրոլետարիատի շուրջը:

Աշխատավորների համախմբումը և թշնամիներին վերջնականապես վոչնչացնելու համար մղվող պայքարը հարկավոր ե նրա համար, վոր կառուցենք նոր կյանք՝ առանց կեղեքման ու շահագործման: Այդ նոր կյանքում չի լինի մարդկանց բաժանումը շահագործող ու շահագործվող դասակարգերի:

Դրա համար ել խորհուրդների յերրորդ խնդիրն ե՝ կառուցել սոցիալիզմ, այսինքն մի հասարակություն, վորտեղ չլինեն վոչ դասակարգեր և վոչ շահագործում: Այս բոլոր խնդիրները կատարելու համար հարկավոր ե ամուր, ուժեղ և հաստատուն իշխանություն—հարկավոր ե դիկտատուրա: Իշխանությունն իր ձեռքը վերցնելով՝ բանվոր դասակարգն ստեղծեց իր դիկտատուրան—պրոլետարիատի դիկտատուրան:

Ի՞նչ ե այդ նշանակում:

Պրոլետարիատի դիկտատուրա նշանակում ե, առաջինը, վոր պրոլետարիատն իր ձեռքը վերցնելով իշխանությունը՝ անխնա ճնշում ե կապիտալիստների, կալվածատերերի և մյուս կեղեքիչների կողմից ցույց տրվող դիմադրությունը, անխնա ճնշում ե նրանց բոլոր ձգտումները, վորոնց նպատակն ե վերադարձնել իրենց կորցրած իշխանությունը:

Պրոլետարիատի դիկտատուրա նշանակում ե, յերկրորդ, վոր պրոլետարիատը ղեկավարում ե աշխատավոր գյուղացիությանը՝ կեղեքիչների դեմ մղվող պայքարում և նոր սոցիալիստական հասարակության կառուցման գործում:

Պրոլետարիատի դիկտատուրա նշանակում ե, յեր-

բորդ, վոր պրոլետարիատը հաստատել է իր իշխանությունն անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Բանվոր դասակարգն իր այդ դիկտատուրան իրագործում է հենց բանվորական, գյուղացիական ու կարմիր բանակային պատգամավորների խորհուրդների միջոցով:

Այսպիսով, խորհուրդները հանդիսանում են պրոլետարիատի դիկտատուրայի որգանները:

Ընկ. Ստալինը բազմիցս մատնանշել է, վոր «պրոլետարիատի դիկտատուրան իշխանություն է, վոր հենվում է պրոլետարիատի՝ գյուղացիության հետ ունեցած միության վրա»:

Խորհուրդները հիշելով առաջնորդի ցուցմունքները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ամեն կերպ ամրացնում են բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության աշխատավորական մասսաների հետ: Մեր կառավարությունը բանվորա-գյուղացիական կառավարություն է:

«Միայն մեզ մոտ, Խորհրդային յերկրում—ասում է ընկ. Ստալինը—գոյություն ունի այնպիսի կառավարություն, վորը սարի պես կանգնած է բանվորների ու կոլտնտեսական գյուղացիների կողմը, գյուղի և քաղաքի բոլոր աշխատավորների կողմը—ընդդեմ բոլոր հարուստների և շահագործողների»:

§ 3. Ո՞Վ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԸՆՏՐԵԼՈՒ ՅԵՎ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

Խորհրդային իշխանությունն ընտրովի իշխանություն է: Իսկ ո՞վ իրավունք ունի խորհուրդներում ընտրելու և ընտրվելու: Խորհրդային որենքով խորհուրդներում ընտրել և ընտրվել կարող են միայն աշխատավորները, վորոնք կազմում են մեր յերկրի բնակչության ամենախոշոր մեծամասնությունը:

Խորհրդային յերկրի ամեն մի աշխատավոր, վորի տարիքը հասել է արդեն 18-ի, իրավունք ունի խորհուրդներում ընտրել և ընտրվել: Խորհրդային իշխանությունը խտրություն (տարբերություն) չի դնում աշխատավոր ռուսի և հրեայի, հայի և թուրքի, տղամարդու և կնոջ միջև: Պահանջվում է, վոր մարդը աշխատավոր լինի, չշահագործի ուրիշի աշխատանքը, և վորպեսզի նրա աշխատանքը ոգտակար լինի հասարակությանը: Միայն այս դեպքում է նրան տրվում ընտրական իրավունք:

Բանվորները, աշխատավոր գյուղացիները, հիմնարկ-ձեռնարկությունների ծառայողները, վարձու բանվոր չունեցող տնայնագործներն ու արհեստավորները,—ահա սրանք իրավունք ունեն խորհուրդներում ընտրելու և ընտրվելու: Ընտրական իրավունքով ոգտվում են նաև աշխատավորների ընտանիքի անդամները, վորոնք վարում են տնային տնտեսությունը:

Խորհրդային որենքով ընտրական իրավունք է տրվում Կարմիր բանակին ու նավատորմին: Կարմիր բանակայինները և կարմիր նավաստիները նույն բանվորներն ու գյուղացիներն են: Նրանք խորհրդային իշխանության պաշտպաններն են, և նրանց մասնակցությունը խորհրդային պետության շինարարության գործում անհրաժեշտ է:

Խորհրդային որենքն ընտրական իրավունք է տալիս նաև մեր յերկրում աշխատող ոտարերկրյա բանվորներին ու գյուղացիներին: Խորհրդային պետությունը պրոլետարական պետություն է և նրա համար ամբողջ աշխարհի աշխատավորները մեկ են:

§ 4. Ո՞Վ Է ԶՐԿՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐՈՒՄ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Խորհրդային որենքն ընտրական իրավունքից զրկում է բանվոր դասակարգի թշնամիներին: Ընտրական իրավունքից զրկվում է ամեն մեկը, ով ուրիշի վարձու աշ-

խատանքից ոգտվում է շահագործման նպատակով և ամեն մեկը, ով նախկինում շահագործել է ուրիշի վարձու աշխատանքը: Դրանք նախկին կալվածատերերը, կապիտալիստները և գյուղի կուլակներն են:

Ընտրական իրավունքից զրկված են այն նախկին սպաները (ոֆիցեր) և զինվորական աստիճանավորները, վորոնք ծառայել են սպիտակ բանակներում. զրկված են նաև հակահեղափոխական բանդաների (ավազակախմբերի) ղեկավարները: Խորհրդային որենքն ընտրություններին թույլատրում է միայն սպիտակ բանակի սպաներից նրանց, ովքեր Կարմիր բանակում ծառայելով և իրենց մասնակցությամբ խորհրդային յերկրի զինված պաշտպանությանը, ապացուցել են իրենց նվիրվածությունը խորհրդային իշխանությանը:

Նախկին վոստիկանական (պոլիցիայի) բոլոր ծառայողները և գործակալները (ագենտները) չեն ոգտվում ընտրական իրավունքով: Ընտրական իրավունքից զրկվում են նախկին մինիստրները, նահանգապետները, գավառապետները, վոստիկանական աշխատողները, բանտապետները—բոլոր նրանք, ովքեր ցարի ժամանակ իրենց վոզնու ձեռքերում եյին պահում բանվորներին ու գյուղացիներին և յեղել են ցարական կարգերի ամենից նվիրված ծառաները:

Ընտրություններին չեն թույլատրվում քահանաները (տերտերները), մոլլաները և այլն:

Ընտրական իրավունքից նմանապես զրկվում են վոչ աշխատավորների ընտանիքի այն անդամները, վորոնք նյութական (տնտեսական) կախում ունեն ընտանիքի ավագից (մեծից):

Այսպիսով խորհրդային շինարարությունից հեռու յեն պահվում նրանք, ովքեր իրենց նախկին կամ ներկայիս գործունեությամբ հանդիսանում են բանվորների և աշխատավոր գյուղացիների թշնամին:

§ 5. ՄԵԾ ՊԱՏԻՎ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ԽՈՇՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼԸ

Խորհուրդն իր ամբողջ աշխատանքը տանում է իր անդամների (պատգամավորների) միջոցով: Իսկ ո՞ւմ են աշխատավորներն ընտրում խորհուրդների մեջ: Ո՞ւմ են նրանք հանձնարարում այդքան պատասխանատու գործը:

Աշխատավորները խորհուրդներում ընտրում են ամենից գիտակից և մեր յերկրի ամենից ակտիվ աշխատավորներին, վորոնք իրենց աշխատանքով կարողացել են ձեռք բերել ընդհանուրի վստահությունը, վորոնց բանվորներն ու կոլտնտեսականները գիտեն ու հավատում են:

Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ակտիվ կերպով մասնակցել նրա աշխատանքներին: Նա պարտավոր է իրեն ընտրողների առաջ պատասխանատու լինել տնտեսության մեջ հայտաբերված յուրաքանչյուր թերության ու բացի համար. նա պարտավոր է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի վերացվեն նկատված բացերը: Յեթե պատգամավորը նկատում է, վոր գործարանը արտադրում է վատ ապրանք, չի կատարում պլանը, յեթե նկատում է, վոր բնակարանի վերանորոգումը վատորակ է կամ թե տեսնում է հասարակական գույքի փչացում, տեսնում է կեղտ ու անմաքրություն՝ ճաշարանում—պարտավոր է անմիջապես միջոցներ ձեռք առնել այդ բացերը վերացնելու համար:

Կանոնավոր աշխատելու համար պատգամավորը պարտավոր է մշտական կապ պահպանել իրեն ընտրողների հետ, իմանալ նրանց կարիքներն ու պահանջները և ժամանակին այդ հարցերը դնել խորհրդի առաջ—լուծելու:

Խորհրդի պատգամավորները պարտավոր են հաշվետու լինել ընտրողների առջև՝ թե խորհրդում

իրենց կատարած աշխատանքների մասին և թե ամբողջ խորհրդի աշխատանքների մասին:

Խորհրդային օրենքի համաձայն ընտրողները կարող են յետ կանչել վատ աշխատող պատգամավորներին:

Յեթե ընտրված պատգամավորն անբարեխիղճ ու անկանոն է վերաբերվում դեպի իր պարտականությունները, կամ թե փոխանակ գործարանում, կոլտնտեսությունում, հիմնարկ-ձեռնարկում լավ աշխատանքի օրինակ ծառայելու, ինքը մյուսներից վատ է աշխատում— խորհրդային օրենքն այդ դեպքում իրավունք է տալիս ընտրողներին ուղղելու իրենց սխալը և յետ կանչելու այդպիսի պատգամավորին:

Հետ կանչվածի փոխարեն ընտրողները կարող են նոր պատգամավոր ընտրել:

§ 6. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԵՆ ԱՐՎՈՒՄ ՅԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Խորհուրդների վրա դրվում են շատ խոշոր խնդիրներ: Այդ խնդիրներն իրագործելու համար անհրաժեշտ է, վոր խորհրդի յուրաքանչյուր անդամ ակտիվ աշխատանք կատարի: Բայց այդ դեռ բավական չի: Խորհուրդների աշխատանքներին պետք է մասնակից արվեն աշխատավորության լայն զանգվածները (մասսաները):

Խորհուրդներին կից կազմակերպվում են մի շարք սեկցիաներ. արդյունաբերական, շինարարական, բնակարանային, վառելանյութային, առողջապահական, ժողովրդական լուսավորության, ռազմական և այլն: Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է աշխատել խորհրդի սեկցիաներից մեկում: Բացի խորհրդի անդամներից, սեկցիաների աշխատանքներին մասնակից են արվում պրոֆմիութենական կազմակերպությունների, Կարմիր բանակի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները: Սեկցիաներում իրավազոր անդամներ են վոչ միայն խորհրդի անդամները, այլև ներգրավված

մասնակիցները: Խորհուրդների սեկցիաների միջոցով աշխատավորական զանգվածները (մասսաները) մասնակից են արվում յերկրի կառավարման ամենօրյա աշխատանքներին:

Ի՞նչ աշխատանքներ են կատարում առանձին սեկցիաները:

Սեկցիաները ստուգում են աշխատանքն այն բոլոր հիմնարկությունների, վորոնք գտնվում են տվյալ խորհրդի տերրիտորիայում: Նրանք ակտիվորեն մասնակցում են տվյալ քաղաքի, կամ գյուղի տնտեսության կազմակերպման գործին: Սեկցիաները պայքարում են խորհրդային իշխանության օրգանները օտար, անհարազատ մարդկանցից, վնասարարներից, բյուրոկրատներից (վորոնք, թղթերից զատ, չեն տեսնում կենդանի մարդկանց, արհամարհանքով են մոտենում աշխատավորության կարիքներին ու պահանջներին) մաքրելու համար: Սեկցիաները հետևում են, վոր խորհրդային իշխանության բոլոր օրենքները, վոր տվյալ խորհրդի վորոշումները քաղաքի և գյուղի բոլոր հիմնարկների կողմից ճշտորեն կիրառվեն կյանքում:

Սակայն միայն սեկցիաների միջոցով չի, վոր խորհուրդներն աշխատավորներին մասնակից են անում յերկրի կառավարման գործին:

Յերկրի կառավարման գործին աշխատավորության ամենօրյա մասնակցությունը կատարվում է նաև պատգամավորական խմբակների միջոցով:

Պատգամավորական խմբակներ կազմակերպվում են այն բոլոր գործարաններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, վորտեղ կան խորհրդի յերեքից վոչ պակաս պատգամավորներ: Բանվորների և աշխատավորների արտադրական պլանները լավագույն ձևով կատարելու համար պայքարի դուրս բերելու հետ մեկտեղ, պատգամավորական խմբակները խնդիր ունեն խորհրդի աշխատանքներին մասնակից

ղարձնելու տվյալ գործարանի, ֆաբրիկի, կոլտնտեսության և խորհրտնտեսության բոլոր աշխատավորներին։

Պատգամավորական խմբակները մեծ դեր ունեն կատարելու պատգամավորներին ընտրողների հետ կապելու գործում։ Պատգամավորական խմբակների միջոցով խորհուրդները սերտորեն կապվում են գործարանների, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների հետ։ Պատգամավորական խմբակը հանդիսանում է խորհրդի աչքը ձեռնարկության մեջ։ Նրանց միջոցով խորհուրդները տեղյակ են լինում այդ ձեռնարկությունների կարիքներին և օժանդակում են նրանց։

Նրանց միջոցով է, որ խորհուրդները պարզում են, թե ձեռնարկությունները որքանով ճիշտ են կիրառում խորհրդային օրենքները։ Նրանց միջոցով խորհուրդները իմանում են աշխատանքներում յեղած բացերի մասին, միջոցներ են ձեռք առնում այդ բացերը վերացնելու ու մեղավորներին պատասխանատվության կանչելու։ Այս կերպով Խորհրդային Միության միլիոնավոր աշխատավորներ ներգրավվում են յերկրի կառավարման գործում։

§ 7. ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

Յերբ արդեն աշխատավորներն իշխանության գլուխ անցան՝ խորհրդային յերկրում իսպառ վոչնչացվեցին այն օրենքները, վորոնցով կինը յենթակա վիճակում եր պահվում։

Մեր յերկրի աշխատավոր կանայք լայնորեն օգտվում են իրենց ստացած իրավունքներից։ Տարեցտարի ավելանում է խորհուրդների ընտրություններին մասնակցող կանանց թիվը։ Աճում է նաև խորհուրդների և սեկցիաների կին անդամների թիվը։ Յերկրում խորհուրդների անդամների մեկ հինգերորդականը կանայք են։

Մի շարք սեկցիաներում, ինչպիսիք են՝ առողջապահական, աշխատանքի, ժողսննդի, կանայք կատարում են գլխավոր դերը։ Հազարավոր կանայք կան, վորոնք գյուղխորհրդի նախագահներ են, շրջանային աշխատողներ կամ թե կենտրոնական հիմնարկների ղեկավարներ։ Տասնյակ հազարավոր կանայք մեր սոցիալիստական շինարարության բոլոր ճյուղերում զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ և հիանալի կերպով կատարում են իրենց աշխատանքը։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպե՞ս են ծագել խորհուրդները։

2. Ո՞ւմ է պատկանում իշխանությունը մեր յերկրում։

3. Ինչո՞ւ բանվոր դասակարգը հանդիսանում է բոլոր աշխատավորների ղեկավարը—շահագործողների դեմ և սոցիալիզմի համար մղվող պայքարում։

4. Ի՞նչ է նշանակում պրոլետարիատի դիկտատուրա։

5. Մեր օրենքներով ո՞վ կարող է խորհուրդներում ընտրել և ընտրվել։

6. Ո՞վքեր են մեզ մոտ զրկված ընտրական իրավունքից։

7. Ի՞նչ պարտականություններ ունի խորհրդի անդամը։

8. Ինչո՞ւ և ի՞նչ սեկցիաներ են կազմակերպվում խորհուրդներին կից։

9. Վորտե՞ղ և ինչո՞ւ յեն կազմակերպվում պատգամավորական խմբակները։

---

§ 8. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղխորհուրդը գյուղի բարձրագույն իշխանությունն է, պրոլետարիատի դիկտատուրայի օրգանը։ Նա ղեկավարում է գյուղի բոլոր խորհրդային, անտե-

ռական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունները: Իր բոլոր աշխատանքներում գյուղխորհուրդը ղեկավարվում է կենտրոնական իշխանության օրենքներով և հետևում է, որ գյուղի բոլոր կազմակերպությունները նմանապես այդ օրենքները կիրառեն կյանքում:

Գյուղխորհուրդը հետևում է նոր կոլտնտեսությունների կազմակերպման և հների ամրապնդման համար:

Գյուղխորհուրդը հետևում է, որ կոլտնտեսություններում չմնա ոչ մի կտոր չցանված հող, որ մեքենաները, ձիերն ու լծկանը ճիշտ օգտագործվեն: Նա հետևում է, որ կոլտնտեսությունում ամեն ինչ իր ժամանակին պատրաստված լինի դաշտային աշխատանքներն սկսելու համար, որ կոլտնտեսական դաշտերի բերքատվությունը բարձրանա, որ բերքի հաշվառքը և պահպանումն օրինակելի լինի, որ կոլտնտեսության յեկամուտը ճիշտ բաշխվի:

1933 թ. հունվարի 19-ի օրենքով կուսակցությունը և կառավարությունը վերացրեցին հացի հանձման հին կարգը և մտցրեցին պետությանը պարտադիր կերպով հաց վաճառելու (հանձնելու) կարգը: Համաձայն այդ նոր կարգի, կոլտնտեսությունները, կոլտնտեսականները և մենատնտես գյուղացիներն ստանում են պետության կողմից սահմանված գներով պետությանը հաց հանձնելու (վաճառելու) հաստատուն նորմաները:

Հացի հանձնումը պարտադիր է բոլոր կոլտնտեսությունների և մենատնտեսների համար: Ոչ մի կերպ որևէ խուսափում, իր ժամանակին հացը հանձնելու պարտավորությունից, չի կարող թույլատրվել:

Գյուղխորհուրդները պետք է միջոցներ ձեռք առնեն հացի հանձնումն իրականացնել ժամկետին և լրիվ չափով: Նրանք պետք է յերևան հանեն հացի հանձնմանը դասակարգային թշնամիների կողմից ցույց տրվող ամեն մի ընդդիմադրություն: Նրանք պետք է ստիպեն կուլա-

կային, չարակամ և ոչ աշխատավոր տարրերին կատարելու բոլոր սահմանված մթերումները:

Սահմանելով հացի հանձնման կարգը, կառավարությունը խստագույն կերպով արգելել է հացի հանձնման ամեն տեսակի հանդիպական, լրացուցիչ պլանները: Բանվորա-գյուղացիական կառավարությունն այդ արել է այն նպատակով, որ ամրացնի կոլտնտեսությունները, որ կոլտնտեսականներին դարձնի ունևորներ, որ կոլտնտեսությանը և մենատնտես գյուղացիներին հնարավորություն տա հաստատապես հաշվելու-իմանալու իրենց յեկամուտները: Ամեն ոք, ով համարձակվի խախտել կառավարության օրենքը և ավելացնի (նույնիսկ մի կոլտնտեսության համար) այդ օրենքով սահմանված հացահատիկի հանձնման չափը, կպատժվի ամենախիստ կերպով: Գյուղխորհուրդները պետք է աչալուրջ հետևեն, որ սահմանված չափերի ավելացում տեղի չունենա:

Մեքենա-տրակտորային կայանների (ՄՏԿ) և կոլտնտեսությունների միջև գոյություն ունի պայմանագիր, որ օրենքի ուժ ունի: Այդ պայմանագրի համաձայն, մեքենա-տրակտորային կայանները կատարում են հողի մշակում, ցանքս, բերքի հավաքում, կալսում, իսկ կոլտնտեսությունները նրանց այդ աշխատանքը վարձատրում են բնամթերքով—այսինքն՝ հացահատիկով, բամբակով, վուշով և այլն: Գյուղատնտեսական աշխատանքները կատարելու համար ՄՏԿ-ները պետք է ստանան բերքի որոշ բաժինը:

Խորհրդային իշխանությունը սահմանել է այդ օրենքը, որ ամրապնդի գոյություն ունեցող ՄՏԿ-ները և ստեղծի նորերը: Առանց այդ վարձի պետությունը չէր կարող պահել ՄՏԿ-ներր և չէր կարող օգնություն ցույց տալ կոլտնտեսություններին:

Գյուղխորհուրդները պետք է ուշի ուշով հետևեն, որ կոլտնտեսությունները ժամանակին և լրիվ վարձա-

տրեն ՄՏԿ-ների աշխատանքը: Նրանք նմանապես պետք է հետևեն, վոր մեքենա-տրակտորային կայանները ստացված հացը, բամբակը, վուշը, ճակնդեղը և այլն ժամանակին հանձնեն պետությանը:

Ջախջախված դասակարգային թշնամիները դեռևս անձնատուր չեն յեղել և անձնատուր չեն լինի, մինչև վոր մենք նրանց վերջնականապես չջլատենք: Նրանք խաբեբայական ճանապարհով խցկվում են կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները և աշխատում են ներսից քայքայել նրանց: Նրանք դաշտի մշակման ժամանակ վնասարարություն են կազմակերպում, բերքահավաքի ժամանակ ամեն կերպ վնասում, հափշտակում են բերքը:

Ընկ. Ստալինն ասում է. «Խնդիրն այն է, վոր դուրս շպրտենք այդ նախկին մարդկանց մեր իսկ սեփական ձեռնարկություններից ու հիմնարկություններից և վերջնականապես դրանք վտանգից զերծ պահենք»:

Բոլոր աշխատավորների առաջնորդի այդ ցուցմունքը գյուղխորհուրդների կողմից պետք է անշեղորեն կյանքում կիրառվի: Նրանք պետք է անողոք պայքար մղեն կոլտնտեսությունները, խորհտնտեսությունները, նմանապես և խորհուրդները մաքրելու այնտեղ խցկված կուլակային տարրերից, վորոնք ներսից քայքայում են խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները, խանգարում են գյուղի սոցիալիստական վերակառուցմանը:

Կոլտնտեսությունների ամրապնդումն անհնար է մինչև վոր խստագույն պայքար չմղենք կոլտնտեսական գույքը կուլակների ու վնասարարների հափշտակումից պահպանելու համար, մինչև վոր վճռաբար չպայքարենք անտնտեսվարության դեմ, լոդրության դեմ և իրենց՝ կոլտնտեսականների կողմից դեպի աշխատանքը յերբեմն ցուցաբերվող անբարեխիղճ վերաբերմունքի դեմ:

Խորհրդային կառավարությունը մի շարք որենք-

ներ է հրատարակել՝ հասարակական (հանրային) սեփականության պահպանման մասին, պրոգուլշչիկների դեմ պայքար մղելու մասին և այլն: Այդ բոլոր որենքներն ուղղված են կոլտնտեսությունների թշնամիների դեմ, կոլտնտեսությունները քայքայող անձանց դեմ, հոգուտ ազնվորեն աշխատող կոլտնտեսականների:

Գյուղխորհուրդները պետք է լայնորեն բացատրեն բոլոր կոլտնտեսականներին ու մենատնտես գյուղացիներին այդ բոլոր որենքները և նրանց ոգնությամբ այդ որենքները կիրառեն կյանքում:

Գյուղխորհուրդը ղեկավարում է կոոպերատիվի աշխատանքը: Նա բարեկարգ վիճակում է պահում հին ճանապարհները և կառուցում է նոր ճանապարհներ: Կազմակերպում է հակահրդեհային պահպանություն: Կազմակերպում է դպրոցներ, լիկկայաններ, խրճիթ-ընթերցարաններ և գրադարաններ: Գյուղխորհուրդը կազմակերպում է դպրոցում յերեխաների նախաճաշ տալը, հետևում է, վոր դպրոցն ապահովված լինի դասագրքերով և այլ ուսումնական պիտույքներով: Նա հետևում է, վոր հիվանդանոցն ու ամբուլատորիան առանց ընդմիջումի աշխատեն: Գյուղխորհուրդը հաշվառում է պահում, թե յուրաքանչյուր տարի ինչքան աշխատավորներ են Կարմիր բանակ կանչվում (զորակոչիկներ). գյուղխորհուրդը պաշտպանում է կարմիր բանակայինների ընտանիքների շահերը: Նա յերևան է բերում այն անձանց, վորոնց պետք է զրկել ընտրական իրավունքից: Վորպեսզի գյուղխորհուրդը հաջող կատարի իր այս մեծ և դժվարին պարտականությունները, խորհրդի մեջ պետք է ընտրել լավագույն կոլտնտեսականներին: Ամեն կերպ պետք է պայքարել, վոր խորհրդի բոլոր անդամներն ակտիվորեն մասնակցեն խորհրդի, նրա սեկցիաների և պատգամավորական խմբակների աշխատանքներին:

Քաղխորհուրդը: Բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների քաղաքա-

յին խորհուրդներ կազմակերպվում են բոլոր քաղաքներում և բանվորական ավաններում: Քաղաքում և բանվորական ավանում քաղխորհուրդը բարձրագույն իշխանությունն է:

Բոլոր դպրոցները, հիվանդանոցները, միլիցիան, լուսբաժինները, առողջապահություն, կոմունալ և մյուս բաժինները յենթարկվում են քաղխորհրդի ղեկավարությանը: Բոլոր այդ հիմնարկ ձեռնարկներին ղեկավարում ու կառավարում է քաղխորհուրդը: Նա նշանակում ու փոփոխում է այդ հիմնարկների ու ձեռնարկությունների ղեկավարներին, քննում ու հաստատում է դրանց պլանները, ստուգում է նրանց աշխատանքը և այլն:

Քաղխորհուրդը մշակում է քաղաքի հետագա տնտեսական և կուլտուրական շինարարության պլանն ու կիրառում է կյանքում:

Իր աշխատանքների ընթացքում քաղխորհուրդները ղեկավարվում են Խորհրդային կառավարության օրենքներով, վճռական պայքար մղելով բոլոր նրանց դեմ, ովքեր փորձ են անում խեղաթյուրել այդ օրենքները, ովքեր աշխատում են օգտագործել խորհրդային հիմնարկները՝ հենց իրենց՝ խորհրդային իշխանությունը վնասելու համար: Քաղխորհուրդը հրատարակում է իր պարտադիր վորոշումները և հետևում է, վոր դրանք կյանքում կիրառվեն:

Դասակարգային թշնամիների կողմից ցույց տրվող ամեն մի դիմադրություն ճնշելու համար, հեղափոխական կարգ ու կանոն պահպանելու համար ինչպես քաղխորհուրդը, այնպես էլ գյուղխորհուրդն ունեն պրոլետարական դատարան, միլիցիա:

Այս կազմակերպությունները պաշտպանում են բանվորների ու գյուղացիների շահերը և անողոքաբար պատժում են աշխատավորների այն բոլոր թշնամիներին, վորոնք փորձում են խանգարել բանվորներին ու գյուղացիներին՝ նոր կյանք կառուցելու:

Ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում Խորհրդա-

յին իշխանության ամրապնդման գործում մեծ նշանակություն ունի պետական ապարատի զտումը դասակարգային թշնամիներից, այն բոլոր մարդկանցից, վորոնք լցվում են մեր խորհրդային որգանները կուսակցության և կառավարության վորոշումները խեղաթյուրելու համար: Զտման ժամանակ ուշի ուշով ստուգվում է յուրաքանչյուրի աշխատանքը, թե ինչպես է նա կատարում հանձնարարված գործը, կարողանու՞մ է արդյոք իր վողջ աշխատանքը տանել աշխատավորության շահերի օգտին:

1930–31 թ. պետական ապարատի զտմանը մասնակցեցին մի քանի միլիոն աշխատավորներ: Զտման հետևանքով դրսևորված ու զտված են տասնյակ հազար անպետք աշխատողներ, վնասարարներ, բյուրոկրատներ և այլն:

Զտվածների փոխարեն խորհրդային ապարատ են ուղարկվել 15 հազար բանվորներ ու կոլտնտեսականներ:

Քաղաքային խորհուրդն իր աշխատանքներում նախ և առաջ հենվում է ֆաբրիկների ու գործարանների հարվածայինների վրա: Հենվելով նրանց վրա՝ քաղխորհուրդը համախմբում է աշխատավորներին քաղաքը կառավարելու համար, քաղաքի տնտեսության շինարարության համար: Քաղխորհուրդը հաշվի յէ առնում բոլոր յեկամուտները և ծրագրում է, թե ի՛նչպես ավելի ճիշտ և օգտակար ձևով ծախսել այդ միջոցները (յեկամուտները) քաղաքային տնտեսության կարիքների վրա, աշխատավորության կարիքների վրա: Քաղխորհուրդը պայքարում է, վոր քաղաքում գտնվող բոլոր հիմնարկձեռնարկները կատարեն իրենց պլանները: Նա պայքարում է աշխատանքի արտադրողականության բարձրացման վերաբերյալ կուսակցության և կառավարության վորոշումը կյանքում իրագործելու համար՝ յուրաքանչյուր աշխատավորի արտադրանքը մեծացնելու, ինքնարժեքն իջեցնելու, պրոգուլների դեմ կռվելու, հանրային գույքը հափշտակողների դեմ կռվելու և այլն:

Անհարազատ մարդկանց՝ սպիտակ գվարդիականներին, նախկին կապիտալիստներին, կալվածատերերին, կուլակներին, վորոնք սողունի պես տարածվել են մեր յերկրի այս ու այն կողմերը և աշխատում են վնասել խորհրդային իշխանությանը—դրանց մեզնից հեռու պահելու համար կուսակցությունը և կառավարությունը մտցրել են պասպորտային (անձնագրային) սիստեմ: Քաղխորհուրդները պետք է աչալուրջ կերպով հսկեն, վոր վոչ մի պասպորտ չընկնի մեջ անհարազատ մարդկանց ձեռքը:

Քաղխորհուրդը մեծ աշխատանք է տանում քաղաքի բարեկարգման համար: Նա բանվորության համար կառուցում է նոր բնակարաններ, վերանորոգում է հները, պահպանում է նրանց հրդեհից, կազմակերպում է հակահրդեհային պահպանություն: Քաղխորհուրդը կառուցում է ջրմուղներ, կոյուղի յե անցկացնում, կառուցում է բաղնիքներ, լվացքատներ, մայթում և սալահատակում է փողոցները, անց է կացնում ելեկտրականություն, ելեկտրոքարշ (տրամվայ) և այլն:

Քաղաքների բարեկարգման համար առանձնապես մեծ աշխատանք է կատարում, վորովհետև ցարական կառավարությունից և դաշնակներից մենք ժառանգություն ենք ստացել վոչ միայն անբարեկարգ, այլև միանգամայն քայքայված տնտեսություն ունեցող քաղաքներ:

Քաղխորհուրդն ամեն տեսակի միջոցներ է ձեռք առնում, վորպեսզի բարձրացնի բնակչության գրագիտական և կուլտուրական մակարդակը: Դրա համար նա կառուցում ու պահպանում է դպրոցներ, լիկկայաններ, գրադարան-ընթերցարաններ, ակումբներ, թատրոններ և հանգստի ու կուլտուրայի պարկեր:

Քաղխորհուրդը հոգում է նաև յերեխաների մասին: Նա աշխատում է, վոր դպրոցական յերեխաները ստանան գրքեր, տետրեր, դպրոցում նախաճաշեն և այլն: Քաղխորհուրդը բնակչության համար կազմակերպում է

բժշկական ոգնություն: Նա ղեկավարում է հիվանդանոցների, դեղատների ու ամբուլատորիաների աշխատանքը: Քաղխորհուրդն ոգնում է կարմիր բանակայինների կարիքավոր (չքավոր) ընտանիքներին:

Քաղխորհուրդը յերևան է հանում այն անհարազատ մարդկանց, վորոնց պետք է զրկել ընտրական իրավունքներից:

Խորհուրդների շրջանային համագումար. Շրջանում բարձրագույն իշխանությունը խորհուրդների շրջանային համագումարն է:

Խորհրդի շրջանային համագումարին գալիս են շրջանի բոլոր խորհուրդների ներկայացուցիչները: Խորհուրդների շրջանային համագումարները քննում և հաստատում են բոլոր այն հարցերը, վորոնք վերաբերում են շրջանի կյանքին: Նրանք պարզում են, թե ինչ միջոցներ ունի շրջանը և ինչպես պետք է նպատակահարմար ծախսել այդ միջոցները:

Համագումարում իր աշխատանքների մասին հաշվետվություն է տալիս շրջանային գործադիր կոմիտեն: Խորհուրդների շրջանային համագումարները քննարկում են այն հարցը, թե ի՛նչպես է գնում շինարարությունն ամբողջ յերկրում և իրենց շրջանում: Ցանկություններ են հայտնում, և առաջարկություններ են արվում այն մասին, թե ինչպես պետք է զարգացնել ամբողջ յերկրի ժողովրդական տնտեսությունը: Ծրագրում են շրջանի աշխատանքների պլանը: Խորհուրդների շրջանային համագումարն ընտրում է պատգամավորներ Համահայաստանյան հանրապետական (իսկ Ռուսաստանում մարզային—յերկրային) խորհուրդների համագումարի համար:

Խորհուրդների յերկրային (մարզային) համագումար. Խորհրդային Ռուսաստանում, բացի այնպիսի շրջաններից, ինչպիսին մեզ մոտ Խորհրդային Հայաստանում են, կան նաև ավելի մեծ միավորներ՝ մարզեր (յերկրներ): Այդ մարզերում (յերկրներում) բարձրա-

գույն իշխանությունը խորհուրդների մարզային (յերկրային) համագումարն է:

Խորհուրդների մարզային (յերկրային) համագումարին գալիս են մասնակցելու քաղաքային և շրջանային խորհուրդների համագումարների ներկայացուցիչները: Մարզային (յերկրային) համագումարը տալիս է հանրագումարներն այն աշխատանքի, թե ինչպես են իրենց մարզում կատարել գործարանների, ֆաբրիկների շինարարությունը, կոլտնտեսությունների կազմակերպումը, դպրոցի, լիկկայանների, թատրոնների, ակումբների և խրճիթ-ընթերցարանների շինարարությունը: Նա հանրագումարն է տալիս մարզում աշխատավորության համար կատարած բնակարանային շինարարության աշխատանքների և պարզում է, թե ճի՞շտ են ծախսված մարզի միջոցները: Համագումարը միաժամանակ ստուգում է՝ արդյոք տնտեսությունը բավականաչափ աչալուրջ կերպով պահպանվո՞ւմ է թշնամիներից, թե վոչ:

Խորհուրդների համագումարը հանրագումարն է տալիս այն բանի, թե իր մարզը (յերկիրը) ինչքանով է ոգնել ամբողջ խորհրդային յերկրի ժողովրդական տնտեսությանը: Նա քննում ու հաստատում է մարզի (յերկրի) տնտեսական և կուլտուրական շինարարության պլանները:

Մարզային (յերկրային) համագումարը Ռուսաստանում ընտրում է պատգամավորներ հանրապետական (համառուսական) խորհուրդների համագումարի համար:

Գործադիր կոմիտեներ (գործկոմներ). Խորհուրդների համագումարներ հրավիրվում են յերկու տարին մեկ անգամ: Իսկ ո՞վ է այդ ժամանակամիջոցում կառավարում շրջանը կամ մարզը: Այդ ժամանակամիջոցում շրջանի կամ մարզի կյանքը ղեկավարում են գործկոմները: Սրանք ընտրվում են խորհուրդների համագումարներում:

Շրջանային համագումարն ընտրում է շրջանային

գործադիր կոմիտե (շրջգործկոմ), իսկ մարզինը (յերկրինը)՝ մարզային (յերկրային) գործադիր կոմիտե (մարզգործկոմ, յերկրգործկոմ): Գործկոմները խորհուրդների համագումարների առաջ պատասխանատու յեն իրենց կատարած աշխատանքի համար: Իրենց գործունեության մասին նրանք հաշվետվություն են տալիս խորհուրդների համագումարին:

Կենտրոնական իշխանություն. Յուրաքանչյուր խ. հանրապետության մեջ բարձրագույն իշխանությունը պատկանում է խորհուրդների հանրապետական համագումարին:

Խորհուրդների հանրապետական համագումարին գալիս են մասնակցելու քաղաքային և շրջանային (իսկ Խ. Ռուսաստանում նաև մարզային-յերկրային) խորհուրդների համագումարների ներկայացուցիչները: Համագումարը հաստատում է իրեն հանրապետությանը վերաբերող բոլոր որենքները: Նա հաստատում է հանրապետության տնտեսական և կուլտուրական շինարարության պլանները:

Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում, հանրապետության ամբողջ կյանքը ղեկավարելու համար, հանրապետական համագումարն ընտրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտե (Կենտգործկոմ):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ (ԺՈՂԿՈՄԽՈՐՀ) ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐ (ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ)

Յուրաքանչյուր հանրապետության մեջ հետևյալ բարձրագույն որգանը Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն է: Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը նշանակվում է յուրաքանչյուր հանրապետության կենտգործկոմի կողմից՝ հանրապետության ընդհանուր ղեկավարությունը կատարելու համար: Ժողկոմխորհը հրատարակում է իր սեփական որենքները և մասնակցում է

օրենքների մշակման այն աշխատանքներին, վոր կատարում է Կենտգործկոմը:

Իր ամբողջ աշխատանքը Ժողկոմխորհը կատարում է առանձին ժողովրդական կոմիսարիատների միջոցով: Յուրաքանչյուր կոմիսարիատի գլխավորում է ժողովրդական կոմիսարը, վորին նշանակում է Կենտգործկոմը:

Վորպեսզի լավ հասկանանք, թե ինչպիսի աշխատանք է կատարում յուրաքանչյուր ժողկոմատ, ծանոթանանք նրանցից մեկի—Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատի—Լուսժողկոմատի աշխատանքների հետ:

§ 9. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

1918 *թվին ժողովրդական լուսավորության I Համառուսական համագումարում Լենինն ասում եր՝ «այժմ բոլոր հողերը, ֆաբրիկներն ու գործարանները հանձնված են բանվորներին ու գյուղացիներին:*

Բանվորներն այժմ կոչված են վոչ միայն արորի հետևից գնալու, այլև ղեկավարելու կալվածքները և արտադրության միջոցները—ֆաբրիկներն ու գործարանները: Եվ միանգամայն բնական է այժմ այն ձգտումը, վոր արթնացել է բանվորների մեջ դեպի գիտությունն ու դպրոցը, և մեր խնդիրն է տալ նրանց այդ գիտությունը և դպրոցը»:

Այդ խնդիրների իրագործման համար յուրաքանչյուր հանրապետության մեջ կազմակերպվել է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ:

Ցարական և դաշնակցական կառավարությունից մենք ժառանգություն ստացանք այնպիսի ազգաբնակչություն, վորի գերակշռող մեծամասնությունը կատարելապես անգրագետ եր: Լուսժողկոմատի խնդիրն եր ամբողջ բնակչությանը դարձնել գրագետ:

Անգրագիտությունն ընդմիշտ վերացնելու համար հարկավոր եր յերկրում մտցնել ընդհանուր պարտադիր ուսուցում (պարտուս): Անհրաժեշտ եր կազմակերպել մեծահասակ աշխատավորների ուսուցումը բանվորական ֆակուլտետների (բանֆակներ) և բարձրագույն ուսումնական հիմնարկների (ԲՈՒՀ-եր) միջոցով:

Բանվորներին ու աշխատավոր գյուղացիությանը բավական չի միայն հասարակ գրագիտությունը:

Յերկրի ամբողջ կյանքն ինչպես հարկն է ղեկավարելու համար անհրաժեշտ է հենց իրենց աշխատավորներից մասնագետներ պատրաստել:

Մեր յերկիրը ժառանգություն ստացավ վոչ ռուս ազգությունների մեջ համարյա ամբողջովին տիրապետող անգրագիտությունը: Հարկավոր եր կարճ ժամանակում վերացնել այդ ամոթալի ժառանգությունը:

Կինը մեզ մոտ ստացավ տղամարդուն հավասար իրավունքներ: Հարկավոր եր այնպես անել, վոր կինը կարողանար օգտվել այդ իրավունքներից:

Աշխատավոր կանանցից ամենից շատ ժամանակը խլում է յերեխաների խնամքը: Լուսժողկոմատը պետք է կազմակերպի յերեխաների խնամքը: Լուսժողկոմատը պետք է կազմակերպի յերեխաների դաստիարակությունը որորոցից մինչև նրանց դպրոց հաճախելը— մանկապարտեզներ կազմակերպի:

Հին ժամանակ բուրժուազիան գիրքն օգտագործում եր, վորպեսզի աշխատավորության միջև գրգռի ազգային ատելություն, վորպեսզի մթագնի աշխատավորության ուղեղները կրոնական հաշիշով, վորպեսզի պատվաստի աշխատավորությանը՝ հարգելու կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը: Լուսժողկոմատը գրքերի հրատարակությունն իր վրա վերցրեց: Նա աշխատում է ստեղծել այնպիսի գրքեր, վորոնցով աշխատավորները սովորեն նոր կյանք կառուցել:

Մեր յերկիրը, վորն անցել է իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների բովով, ուներ մեծ

Թվով անապաստաններ: Լուսժողկոմատը ձեռք առավ բոլոր միջոցները՝ յերեխաների անապաստանությունը շուտափույթ կերպով վերացնելու համար:

Խորհրդային իշխանությունը մեծ չափով հետաքրքրքրում է այն հարցը, թե ի՛նչ պետք է սովորեցնել մեր դպրոցներում: Լուսժողկոմատը վորոշում է ինչ սովորեցնել, կազմում է ուսումնական ծրագրեր: Վերջապես հարկավոր է լինում դպրոցների համար շարունակ ուսուցիչներ պատրաստելու գործով զբաղվել:

Ահա թե ինչպիսի խնդիրներ ունի Լուսժողկոմատը:

§ 10. Ա. Ս. ԲՈՒԲՆՈՎ

Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետական Լուսավորության Ժողովրդական կոմիսարն է ընկ. Անդրեյ Սերգեյեվիչ Բուբնովը:

Ընկ. Բուբնովը ծնվել է 1883 թ. Իվանովո-Վոզնեսենսկում: Դեռևս 20 տ. պատանի նա արդեն կոմունիստական կուսակցության անդամ էր: Այդ ժամանակվանից էլ նա իրեն անձնուրաց կերպով նվիրում է բանվոր դասակարգի գործին:

Ցարական իշխանությունը կատաղի ատելությամբ հարձակվում է ընկ. Բուբնովի վրա: Տասնյերեք անգամ ձերբակալվում է ընկ. Բուբնովը և 4 տարուց ավելի նստում է բանտերում ու բերդերում: Ցարական իշխանությունները դաժանորեն ծեծի էյին յենթարկում նրան: Փետրվարյան հեղափոխության նախօրեյին նրան աքսորեցին Սիբիր:

Սակայն այս բոլոր հետապնդումները չկարողացան ընկճել ընկ. Բուբնովին—այն ամրակուռ կոմունիստի կամքը, վորն ամբողջովին նվիրվել էր բանվոր դասակարգին: Դուրս պրծնելով ցարական վոստիկանության արյունոտ ճանկերից՝ ընկ. Բուբնովը նորից ու նորից գործի յեր կպչում:

Ընկ. Բուբնովն ակտիվ մասնակցություն է ունեցել

Հոկտեմբերյան հեղափոխության կազմակերպման մեջ: Նա այն հնգյակի անդամն էր, վորին կուսակցությունը վստահել էր ապստամբության կազմակերպման գործը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կուսակցությունն ընկ. Բուբնովին հանձնարարում է ամենից պատասխանատու և դժվարին աշխատանքները: Քաղաքացիական կռիվների ընթացքում ցույց տված իր բացառիկ ծառայությունների համար ընկ. Բուբնովը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:

Մինչև 1929 թիվը ընկ. Բուբնովն աշխատում էր, նախ՝ Համ Կ(բ)Կ կենտկոմում, իսկ հետո՝ Կարմիր բանակում:

Ա. Ս. ԲՈՒԲՆՈՎ

1929 թվից ընկ. Բուբնովը նշանակվում է Լուսավորության Ժողովրդական կոմիսար: Այժմ իր ամբողջ ուժերը նա տրամադրում է այդ գործին:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչպիսի՞ աշխատանքներ է կատարում գյուղխորհուրդը:
2. Ինչպիսի՞ աշխատանքներ է կատարում քաղխորհուրդը:
3. Վո՞րն է բարձրագույն իշխանությունը շրջանում, մարզում (յերկրում) և հանրապետության մեջ:

ԽՍՀՄ գերբը

ԽՍՀՄ-Ը ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՑԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆ Է

§ 11. ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ ԷՐ

160 ազգություններ են բնակվում մեր Խորհրդային Միության մեջ: Խորհուրդների յերկրում ապրում են ռուսներ, ուկրայնացիներ, բելոռուսներ, հրեյաներ, հայեր, վրացիներ, տաճիկներ, թուրքեր, թաթարներ, ուզբեկներ, թուրքմեններ, բաշկիրներ, բուրյատներ, յակուտներ, ոյրատներ և այլ ազգություններ:

Ցարական Ռուսաստանում ռուսները կազմում եյին ամբողջ ազգաբնակչության կեսից պակաս, իսկ մնացած ազգությունները կեսից ավել եյին: Բոլոր այդ բազմաթիվ ազգություններին ամենաբարբարոս կերպով ճնշում եր ցարական կառավարությունը: Նա թույլ չեր տալիս այդ ազգություններին իրենց դպրոցներում մայրենի լեզվով դասավանդել: Խլում եր նրանցից լավ հողերը: Չեր թույլատրում գրքեր ու թերթեր հրատարակել վոչ մի այլ լեզվով, բացի ռուսերենից: Մյուս ազգությունների ժողովուրդներն արհամարհական յեղանակով անվանվում եյին «այլազգիներ»: Այս կոչումով ցարական կառավարությունը ցանկանում եր ընդգծել,

վոր այդ ազգերին նա համարում է ցածր ազգեր, ստորներ:

Ցարական կառավարությունն ատելություն եր սերմանում և թշնամություն եր բորբոքում տարբեր ազգությունների միջև: Նա ատելություն եր ներշնչում դեպի հրեյաները: Նա հայերին լարում եր վրացիների դեմ, թուրքերին՝ հայերի դեմ և այլն: Դրանով ցարական կառավարությունը թուլացնում եր աշխատավորների ուժն ու զորությունը և նրանց ուշադրությունը հեռացնում եր ցարի, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ պայքարելուց: Վոչ ռուս ազգությունների աշխատավորների կյանքն այնքան ծանր եր, վոր ցարական Ռուսաստանը դարձել եր ժողովուրդների բանտ:

Ճնշումն ու հետապնդումը ճնշվող ազգությունների մեջ առաջացնում եր ատելություն դեպի այն ամենը, ինչ վոր ռուսական է: Ճնշված ազգի բանվորն ու գյուղացին սխալվում եյին յերբեմն ատել վոչ միայն ռուս կապիտալիստներին ու կալվածատերերին, այլև անխտիր բոլոր ռուսներին—անկախ նրանից, դիմացինն աշխատավոր է, թե շահագործող: Նրանք չեյին հասկանում, վոր ամեն մի ռուս իրենց թշնամին չէ, այլ կապիտալիստներն ու կալվածատերերն են թշնամիները:

Վոչ ռուս ազգությունների աշխատավորության ճնշման մասին ամենից լավ պատմում են իրենք, այդ ազգությունների աշխատավորները:

Ահա թե ի՛նչ է պատմում գյուղացի Մայորովը Բուրյատ-Մոնղոլիայից. «Առաջ՝ ցրի ժամանակ մեր գյուղըն այնքան հետամնաց եր ու անկուլտուրական, վոր նրա բնակիչները չգիտեյին մինչև, իսկ բացի ռուսներից, ուրիշ այլ ճողովուրդների գոյության մասին: Մինչև խորհրդային իշխանության գալը մեզ մոտ անտեսության մեջ կային միայն փայտե արոր, կամ և գերանդի: Ապրում եյինք մենք կեղտոտ յուրտաներում (քեչայից վրաններ): Հիվանդանում եյինք զանազան հիվանդություններով և աստիճանաբար մեռնում եյինք: Ցարա-

կան իշխանությունը մեզ անասուններից ցածր եր դասում և իր բժիշկներին չեր ուղարկում մեզ մոտ:

Հարուստները—կուլակը, վաճառականը, տերտերը և կալվածատերը մեզ անգութ կերպով շահագործում եյին:

Ցարական իշխանությունը մեզ լուսավորում եր ողիով ու գինետներով:

Ուրյադնիկներ և կուլակներ—ահա մեր իշխանությունը մինչև խորհուրդների գալը»:

Ահա թե ինչ ե պատմում Ոյրաթիայից ընկ. Գուլգին.

«Յես Ոյրաթիայի բնակիչ եմ, այն Ոյրաթիայի, վորը կորած ե մշտնջենական ձյունով ծածկված Ալտայի լեռներում: Չքավորների համար շատ դժվար եր այնտեղ կյանքն, առանձնապես ոյրատների համար: Ռուսները Ոյրաթիայում բնակություն հաստատելով, աստիճանաբար խլում եյին լավ հողերը: Նեղում ու քշում եյին ոյրատներին դեպի կիրճերը և վատ հողերը:

Ցարական կառավարությունը թողել եր մեզ միայն ժայռերն ու քարերը, վորտեղ բոլորովին անհնար եր նստակյաց կյանք վարել: Կուլտուրան ոյրաթների մեջ տարածում եյին տերտերները, ուրյադնիկներն ու վաճառականները, վորոնք կեղեքում եյին բնակչությանը: Դեպքեր եյին լինում, յերբ վաճառականները մի աղյուս թեյի համար վերցնում եյին յեզը, կամ թե մի տուփ ծխախոտի համար գառն եյին վերցնում:

Ոյրատի անունն եր չուն: Յերբ ոյրատը մտնում եր ռուսի տունը, շեմքից այն կողմ նրան չեյին թողնում: Իսկ յեթե ոյրատը բատրակ եր վարձվում, ապա մինչև իր կյանքի վերջը նա չեր կարողանում պոկ գալ կուլակի թաթերից, մնալով նրա անվճարունակ պարտապանը (պարտք ունեցողը): Մենք խոսքով այն ժամանակ վոչ մի տեղ պաշտպանություն գտնել չեյինք կարողանում»:

§ 12. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՎԵՐՋ ՏՎԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ

Խորհրդային իշխանությունը բոլոր ազգություններին իրավապես (իրավունքով) հավասարեցրեց:

160 ազգությունների աշխատավորները մարդկային պատմության ընթացքում առաջին անգամ հնարավորություն ստացան պետություն կառավարելու, նոր կյանք կառուցելու և նոր կուլտուրա ստեղծելու:

1917 թ. նոյեմբերի 2-ին մեր մեծ առաջնորդներ Լենինի ու Ստալինի ստորագրությամբ հրատարակվեց հատուկ վորոշում՝ Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին: Այդ վորոշման մեջ ասվում եր «Խորհրդային ռուսական հանրապետությունը հաստատվում ե ազատ ազգությունների միության հիման վրա, իբրև ֆեդերացիա (միություն) խորհրդային ազգային հանրապետությունների»: Այնտեղ ասվում եր, վոր ազգային ճնշմանը, հետապնդմանը, ջարդերին, թշնամանքի սերմանումին ընդմիշտ պետք ե վերջ տալ:

Նոր, խորհրդային պետության կառուցումը տեղի յեր ունենում կատաղի պայքարում: Զանազան ազգությունների բուրժուազիան վախենում եր բանվորների և աշխատավոր գյուղացիների իշխանությունից և բոլոր ջանքերը գործ եր դնում տապալելու Ռուսաստանը, վորն այժմ դարձել եր խորհրդային յերկիր: Բուրժուազիան ամեն կերպ աշխատում եր բորբոքել վոչ ռուս ազգությունների ատելությունը խորհուրդների իշխանության հանդեպ, վորպես «ռուսական» իշխանության:

Բայց բուրժուազիային չհաջողվեց միմյանց հետ խռովեցնել տարբեր ազգությունների աշխատավորներին: Վոչ-ռուս ազգությունների աշխատավորներն ավելի ու ավելի եյին համոզվում, վոր բուրժուազիայի հետ մի ճանապարհով գնալն իրենց ձեռնտու չի, կորստաբեր ե, և ավելի ուժգին կապվեցին հեղափոխական ռուս բանվորների հետ: Տարբեր ազգությունների ա-

խատավորները հոժարակամ գնում եյին ռուս բանվորների հետ միասին պայքարելու ընդդեմ բուրժուազիայի:

Հինգ տարի (1917—22 թ.թ.) շարունակ տարբեր յերկրների աշխատավորները համերաշխ կերպով պայքարում եյին իրենց թշնամիների դեմ: Նրանք ընդհանուր ուժերով քաղաքացիական կռվում հաղթեցին թշնամուն: Նրանք միասին ստեղծում ու ամրացնում եյին խորհրդային իշխանության օրգանները: Միասին սկսեցին վերականգնել քայքայված տնտեսությունը և բարձրացնել բնակչության գրագիտությունը: Այդ տարբեր ազգությունների աշխատավորների աշխատանքը ղեկավարում եր կոմունիստական կուսակցությունը:

Ահա տարբեր ազգությունների աշխատավորների այդ միատեղ և համերաշխ պայքարն ու աշխատանքը վերացրեց այն մասնակի անվստահությունը, որ ոչ ռուս ազգությունների աշխատավորները որոշ ժամանակ տածում եյին դեպի ռուս բանվորները և գյուղացիները: Դրանով իսկ հնարավոր դարձավ ավելի համախմբվել ընդհանուր աշխատանքի և թշնամու դեմ միատեղ պայքարելու համար: Դրանով էլ հնարավոր դարձավ անցնելու Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծմանը:

Մեր պետությունը կոչվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ, որովհետև նա իրենից ներկայացնում է ինքնուրույն խորհրդային հանրապետությունների կամավոր միություն, մի միություն, որն իր առաջ խնդիր է դրել կառուցել սոցիալիզմ:

ԽՍՀ Միության կազմակերպման մասին որոշումն ընդունված է միության խորհուրդների 1-ին համագումարում, որը կայացավ 1922 թ. դեկտեմբերի 30-ին:

§ 13. ԻՆՉՈ՞Ւ ԶԱՆԱԶԱՆ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԻԱՑԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ ԿԱԶՄԵՑԻՆ

ՌՍՖՍՀ Խորհուրդների 10-րդ համագումարում (1922 թ. դեկտեմբերի 23—27) ԽՍՀՄ կազմակերպման վերաբերյալ զեկուցում տվեց ընկ. Ստալինը: Ընկ. Ստալինը պատմեց, թե ինչո՞ւ զանազան ազգությունների աշխատավորներին անհրաժեշտ է միանալ և միություն կազմել:

Առանձին խորհրդային հանրապետություններն իմպերիալիստական և քաղաքացիական կռիվների հետևանքով ստացել եյին չափից դուրս քայքայված տնտեսություն: Հենց բոլոր աշխատավորների շահերից էլ բխում եր տնտեսության միացումը:

Չեր կարելի նմանապես այնպես անել, որ յերկրի ամբողջ տնտեսական կյանքի յերակը— տրանսպորտը, ամեն մի առանձին հանրապետություն օգտագործեր միայն իր հանրապետության շահերին համեմատ: Այստեղ պետք է ճշտիվ կերպով հաշվի առնվեյին բոլոր հանրապետությունների շահերը:

Աշխարհի միակ խորհրդային յերկրի վրա կարող են հարձակվել օտարերկրյա կապիտալիստները: Այս վտանգը պահանջում է, որ մեր Կարմիր բանակը լինի միասնական:

Բացի այդ, մատնանշում եր ընկ. Ստալինը, ոչ մի րոպե չի կարելի մոռանալ, որ մեզ մոտ խորհուրդների յերկրում իշխանությունը կառուցված է ոչ թե մասնավոր սեփականության վրա, այլ կոլեկտիվ սեփականության, իշխանությունը կառուցված է ոչ թե մարդու կողմից մարդու շահագործման վրա, այլ այդ շահագործման դեմ պայքար մղելու հիմունքով: Այդ ամբողջը դրդում է աշխատավորներին միանալ մի սոցիալիստական ընտանիքի մեջ:

«Մենք ազգային թշնամության, ազգային գժտության և ազգային առանձնացման հակառակորդներ ենք:

Մենք միջազգայնականներ ենք, ինտերնացիոնալիստներ ենք: Մենք ձգտում ենք բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների սերտ միացմանը, և լիակատար միաձուլմանը մի միասնական համաշխարհային խորհրդային հանրապետության մեջ» (ԼԵՆԻՆ):

§ 14. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԵՄՔԸ

Խորհրդային իշխանությունը ձեռք եր առնում և այժմս էլ ձեռք է առնում ամեն միջոցներ, որ վերացվի ԽՍՀՄ ժողովուրդների տնտեսական հետամնացությունը: Յուրաքանչյուր խորհրդային հանրապետություն արդեն ձեռք է բերել այդ ուղղությամբ հսկայական նվաճումներ: Փոխվում է մեր ազգային շրջանների դեմքը:

Օրինակ՝ Կարելիան ոչ հեռու անցյալում հետ ընկած, աղքատիկ և մոռացված յերկիր եր, մի յերկիր, վորտեղ անխտիր. բոլոր կանայք անգրագետ եյին: Շրջապատված եր նա անանցանելի ճահիճներով: Խորհրդային իշխանությունը Կարելիան դարձնում է ծաղկած հանրապետություն: Կարելիայում յերևացին նոր ֆաբրիկներ, գործարաններ, հիդրոէլեկտրոկայաններ: 1929 թ. գործի դրվեց Կոնդոպոժի առաջին թղթի ֆաբրիկը Կարելիայում: Կառուցված են կարտոնի ֆաբրիկներ: Կառուցված է հիդրոկայան Սունա գետի վրա: Ավարտվում է Նեվա գետի վրա կառուցվող (հյուսիսային կարելիա) հիդրոկայանը: Վերակառուցվում է չուգունի ձուլման գործարանը: Բոլորովին նոր ստեղծված է լեռնային արդյունաբերությունը: Վերջին տարիներս կառուցված են 1200 կիլոմետր յերկարությամբ նոր ճանապարհներ: Հազար կիլոմետրի վրա կազմակերպված է ավտո յերթևեկություն: Վերակառուցվում է գյուղատնտեսությունը: Կարելիայի բնակչությունը գլխովին դառնում է գրագետ: Բացված է յերեք բարձրագույն դպրոց: Այսպիսով՝ Կարելիան կիսավայրենական

յերկրից վեր է ածվում նոր կառուցումների և համատարած գրագիտության հանրապետության:

Նույնը և դեռ ավելին կարելի յե ասել Խորհրդային Հայաստանի մասին: Անցյալում Հայաստանը յեղել է ցարական գաղութ: Ցարը, կապիտալիստը և կալվածատերը շահագործում եյին հայ բանվորին ու գյուղացուն: Ցարը չեր թողնում, վոր այնպիսի ծայրերկրներ, ինչպիսին Հայաստանն է, տնտեսապես ու կուլտուրապես զարգանա: Հայաստանը զուրկ եր արդյունաբերությունից, հաղորդակցության ճանապարհներից, ջրանցքներից: Ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը խարխափում եր խավարի ու տգիտության մեջ: Դպրոցների թիվը շատ փոքր եր, այն էլ տարրական դպրոցներ եյին միայն, իսկ միջնակարգ մեկ յերկու դպրոցները հոգևոր դպրոցներ եյին: Ցարից հետո իշխանությունն անցավ հայ բուրժուազիային ու նրա մարտական կուսակցությանը—Դաշնակցությանը: Դաշնակներն իրենց տիրապետության օրոք ավելի քայքայեցին առանց այն էլ քայքայված տնտեսությունը, դպրոցների մեծ մասը փակվեց. յերկրում տիրեցին ազգամիջյան կռիվներ, արյունահեղ կոտորածներ, քաղց:

1920 թ. նոյեմբերի 29-ին բանվորներն ու գյուղացիները Հայաստանում դեն շպրտեցին դաշնակ-մաուզերիստների տիրապետությունը, հաստատեցին խորհուրդների իշխանություն:

Խորհրդայնացումից հետո վերականգնվեց յերկրի տնտեսությունը, կառուցվեցին նոր գործարաններ, ստեղծվեց սեփական արդյունաբերություն: Կառուցվեցին Լենինականի տեքստիլ գործարանը, Լենմեխգործարանը, Յերևանի մեխգործարանը, բամբակազտիչ և ձեթ-օճառ գործարանները Յերևանում, մարմարի գործարանը, Դավալվի ցեմենտի գործարանը, Յերևանի 1-ին կարբիդի գործարանը, փայտամշակման գործարանը, կրի գործարանը, կոնսերվի գործարանները, կարի գործարանը, պեմզաբետոնի գործարանը, մե-

տաքսի, Յերևանի յերկու հիդրոկայանները, Լենինականի յերկու հիդրոկայանները, Ձորագէսը, Ղարաքիլիսայի Քիմկոմբինատը, մի շարք ջրանցքներ և այլ գործարաններ։

Այժմ կառուցվում են՝ կարբիդի 2-րդ գործարանը Յերևանում, Սինտետիկ կաուչուկի համաշխարհային մեծ կոմբինատը, Քանաքեռգէսը, Յերևան—Ադստաֆա յերկաթուղին, կատարվում է ճանապարհների լայն շինարարություն, ստեղծված են բազմաթիվ խորհտնտեսություններ և կոլտնտեսություններ։

Խորհրդայնացումից հետո դպրոցական ցանցն աներևակայելի չափերով լայնացել է։ Ոչ միայն մասսայական դպրոցների ցանցն է տարածվել ամբողջ յերկրում, այլև ստեղծվել են շատ տեխնիկումներ միջնակարգ դպրոցներ, պետական համալսարան, 5 բարձրագույն ինստիտուտներ, մեծ թվով գիտա-հետազոտական հիմնարկներ և այլն։ Նախկին խղճուկ և քայքայված Հայաստանի փոխարեն ստեղծվում է ծաղկած, ինդուստրիալ և կուլտուրական Խորհրդային Հայաստան, վորը դառնում է համատարած գրագիտության յերկիր։

Խորհրդային Կարելիան և Խորհրդային Հայաստանը կենդանի օրինակներ են այն բանի, թե ինչ տվեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը ճնշված ազգություններին։

Բաշկիրյայում նավթ է արտադրվում։ Կազակստանի տափաստաններում ստեղծվում են նստակյաց կոլտնտեսություններ. նույն տափաստաններով անցավ Թուրքսիբի մեծ յերկաթուղին։

Հեռավոր-Արևելքը լեցուն է շինարարության ցանցով։ Սախալինը և Կամչատկան էլեկտրական լույսերով են վողողված։ Անդրկովկասի լեռնային (նախկինում ամայի) կիրճերում կառուցված են մեծ թվով էլեկտրոկայաններ։ Ուկրայնայում կառուցված է աշխարհիս մեծագույն հիդրոկայանը—Դնեպրոգէսը։

Այսպիսով կերպարանափոխվում է մեր ազգային շրջանների դեմքը։

§ 15. ԻՆՉ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄՏՆՈՒՄ ԽՍՀՄ-Ի ՄԻՋ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ մտնում են.

ԽՍՀՄ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍԽԵՄԱՆ



1. Ռուսաստանի սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը—ՌՍՖԽՀ:

2. Ուկրայինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—ՈւՍԽՀ:

3. Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն—ԲՍԽՀ:

4. Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը—ԱՍՖԽՀ:

5. Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—Ուզբ. ՍԽՀ:

6. Թուրքմենական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—Թուրք. ՍԽՀ:

7. Տաջիկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—Տաջ. ՍԽՀ:

Բոլոր այս հանրապետությունները կոչվում են միութենական: Միության հանրապետություններից երկուսը—Ռուսաստանը և Անդրկովկասը—կոչվում են ֆեդերատիվ: Այս երկու հանրապետություններն իրենցից ներկայացնում են մի շարք ժողովուրդների միավորումը:

§ 16. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ-ում իշխանության բարձրագույն օրգանը խորհուրդների Համամիութենական համագումարն է: Համամիութենական Խորհուրդների համագումարի պատգամավորներն ընտրվում են հանրապետական և երկրային (մարզային) համագումարներում:

Խորհուրդների համագումարը քննում ու վճռում է խորհրդային երկրի տնտեսական ու կուլտուրական

կյանքին վերաբերող ամենից կարևոր խնդիրները: Համագումարը վճռում է մեր և կապիտալիստական յերկրների փոխհարաբերություններին վերաբերող հարցերը, լուծում է մեր յերկրի պաշտպանունակության ամրացման հարցերը: Համագումարը վորոշում է, թե ի՛նչ միջոցներ ունի յերկիրը և այդ միջոցներն ինչպես ճշտորեն բաշխել մեր ժողովրդական տնտեսության զանազան մասերի (ճյուղերի) միջև: Խորհուրդների համագումարը փոփոխություններ է մտցնում Սահմանադրության*) (մեր յերկրի հիմնական օրենքի) մեջ: ԽՍՀՄ խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում յերկրում իշխանությունը պատկանում է խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին— Կենտգործկոմին:

Կենտգործկոմ ընտրում է ԽՍՀՄ Խորհուրդների համագումարը: Նա իրավունք ունի ընդունելու և հաստատելու ամեն մի օրենք: Նրա օրենքներն ու կարգադրությունները պարտադիր են ամբողջ միության համար:

---

*)Սահմանադրությունը (հիմնական օրենքը) սահմանում է, վոր յերկրի իշխանությունը պատկանում է խորհուրդներին, վոր այդ խորհուրդներում ղեկավարող դերը պատկանում է պրոլետարիատին, վոր նախկին շահագործողները վոչ մի իրավունքներով չեն օգտվում: Մեր սահմանադրությունը հայտարարում է բոլոր ազգությունների աշխատավորների հավասարությունը: Մեր Սահմանադրության մեջ մատնանշվում է, վոր խորհրդային իշխանության հիմնական խնդիրը և վերջնական նպատակն այնպիսի հասարակության կառուցումն է, վորտեղ գոյություն չի ունենա մարդու շահագործումը մարդու ձեռքով:

§ 17. Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահն է Միխայիլ Իվանովիչ Կալինինը: Նա ծնվել է 1875 թ. Տվերի նահանգի վերին Տրոիցա գյուղում: Միխայիլ Իվանովիչի ծնողներն աղքատ գյուղացիներ էին: Կալինինի ծնողների աղքատիկ վիճակը նրանց ստիպեց Կալինինին հանձնել հարևան կալվածատիրոջ մոտ իբրև տնային աշխատող:

Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

1889 թ. այն կալվածատերը, վորի մոտ աշխատում էր Կալինինը, տեղափոխվեց Պետերբուրգ: Նրա հետ միասին տեղափոխվում է և ընկ. Կալինինը:

1893 թ. Միխայիլ Իվանովիչը մտնում է «Հին զինանոց» կոչվող փամփուշտների գործարանն իբրև աշակերտ: Այդ գործարանում նա աշխատում է յերկու տարի, ապա տեղափոխվում է Պուտիլովյան գործարանը, վորտեղ աշխատում է իբրև տոկար: Հենց այստեղ՝ Պուտիլովյան գործարանում Միխայիլ Իվանովիչն սկսում է մասնակցել հեղափոխական աշխատանքին:

Ցարական կառավարությունը դաժանորեն հետապնդում էր հեղափոխական բանվորներին: Վորոշ ժամանակից հետո Միխայիլ Իվանովիչը ձերբակալվում է ցարական վոստիկանության կողմից, բանտ է նետվում, ապա աքսորվում է Կովկաս: Բանտն ու աքսորը չընկճեցին յերիտասարդ բանվոր-հեղափոխական ընկ. Կալինինին: Կովկասում Միխայիլ Իվանովիչը չդադարեցրեց հեղափոխական աշխատանքը: Նա բանվորության մեջ կազմակերպում էր հեղափոխական խմբակներ, ղեկավարում էր բանվորների գործադուլը: Վոստիկանու-

թյունը նորից ձերբակալում է Կալինին և բանտ նստեցնում:

Կովկասից ընկ. Կալինինին աքսորում են Ռևել քաղաքը: Այստեղ էլ նա նույն համառությամբ շարունակում է հեղափոխական աշխատանքը, վորի համար նրան 1904 թվին աքսորում են Օլոնեցկի նահանգը:

1905 թ. հեղափոխությունից հետո Միխայիլ Իվանովիչն աշխատում է Պետերբուրգի և Մոսկվայի գործարաններում վորպես բանվոր: Այստեղ նա շարունակում է ընդհատակյա հեղափոխական աշխատանքը: 1904 թ. յերբ բռնկեց համաշխարհային պատերազմը, Միխայիլ Իվանովիչը բացատրում էր, վոր պատերազմը հարկավոր է կապիտալիստներին—հարստանալու համար, վոր զինվորները, բանվորներն ու գյուղացիները պետք է շուռ տան իրենց սվինները հարուստների դեմ, վորոնք սարքել են այս պատերազմը, և վոչ թե սպանեն իրենց յեղբայրներին—իրենց նման բանվորներին ու գյուղացիներին:

Միխայիլ Իվանովիչը յեղել է Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակիցը:

1919 թ. մարտին Վ. Ի. Լենինի առաջարկությամբ ընկ. Կալինինն ընտրվում է Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի (Կենտգործկոմի) նախագահ: Ընկ. Լենինն առաջարկեց այդ պաշտոնում հատկապես ընկ. Կալինինին, վորովհետև Կալինինը բանվորա-գյուղացիական կառավարության գլուխն անցնելով՝ ամենից լավ կարող էր ամրապնդել բանվորների ու գյուղացիների դաշինքը: 1923 թ. յերբ արդեն հիմնվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, ընկ. Կալինինն ընտրվեց ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահ:

Անցան շատ տարիներ: Այն Պուտիլովյան գործարանը, վորտեղ աշխատել է Միխայիլ Իվանովիչը, կոչվում է «Կարմիր Պուտիլովյան»: Մինչև հիմա գործարանում պահպանվում է այն դազգյահը (ստանոկ), վորի վրա

աշխատել է ընկ. Կալինինը: Այդ դազգյահի վրա այժմ աշխատում է «Կարմիր Պուտիլովյան» գործարանի լավագույն հարվածայիններից մեկը: Բանվոր—հարվածայինն այժմ պարծենում է, որ աշխատում է այդ դազգյահի վրա: Ովքեր գալիս են գործարան, նա հպարտորեն ցույց է տալիս դազգյահին կպցված տախտակը, որի վրա գրված է՝ «Այստեղ աշխատել է Միխայիլ Իվանովիչ Կալինինը»:

§ 18. ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐԸ

Պետական կառավարման բոլոր գործերը ղեկավարելու նպատակով, Կենտգործկոմն ընտրում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ (Ժողկոմխորհ):

Ժողկոմխորհը ղեկավարում է ժողովրդական կոմիսարիատների աշխատանքը, ինչպես համամիութենական, այնպես էլ միացյալ ժողկոմատներինը: Ժողկոմխորհն իրավունք ունի հրատարակելու իր օրենքները, որոնք ունեն նույնպիսի պարտադիր ուժ, ինչպիսին այն օրենքները, որոնք հրատարակում է ԽՍՀՄ Կենտգործկոմը:

Ժողկոմխորհը կարող է հրատարակել օրենքներ, բայց ոչ ամեն տեսակի:

Այսպես, օրինակ՝ այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք օտարերկրյա պետությունների հետ կընքված ամենակարևորագույն համաձայնությունների ու պայմանագրերի հաստատումն է, նոր հարկերի մուծումը կամ հների ավելացումը, յերկրի յեկամուտների ու ծախսերի (բյուջեյի) հաստատումը, պատերազմ հայտարարելը կամ հաշտություն կնքելը, վճռվում են Կենտգործկոմի կողմից: Ժողկոմխորհի վորոշումները կարող են վերացվել Կենտգործկոմի կողմից:

ԽՍՀՄ Ժողկոմխորհին գլխավորում է նախագահը: Ժողկոմխորհի առաջին նախագահը Լենինն էր: Ներկայումս ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահն է ընկ. Մոլոտովը (Սկրյաբինը):

Հայաստանի Ժողկոմխորհի նախագահն է ընկ. Սահակ Տեր-Գաբրիելյանը:

§ 19. Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովը (Սկրյաբինը) ծնվել է 1890 թ. Վյատկայի նահանգի Կուկարկա կոչվող գյուղում:

Տասնվեց տարեկան պատանի յեր ընկ. Մոլոտովը, որ մտավ կոմունիստական կուսակցության մեջ և այդ ժամանակից իր ամբողջ ուժերը նա տրամադրել է բանվոր դասակարգի գործին:

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ

Տասնինը տարեկան հազիվ դարձած՝ Վյաչեսլավ Միխայլովիչը բանտարկվում ու յերկու տարով աքսորվում է Վոլոգդայի նահանգը: Աքսորում գտնված ժամանակն էլ նա չի դադարեցնում ընդհատակյա հեղափոխական աշխատանքը:

Աքսորից հետո ընկ. Մոլոտովը տեղափոխվում է Պետերբուրգ: Այստեղ նա սկզբում հեղափոխական աշխատանք է տանում ուսանողության մեջ, իսկ 1912 թվից անցնում է աշխատանքի՝ բոլշևիկյան «Պրավդա» թերթում:

Թերթը կոչ էր անում բանվորներին պայքարելու ցարական իշխանության ու բուրժուազիայի դեմ: Ցարական կառավարությունն ավելի ուժգին է սկսում հետապնդել ընկ. Մոլոտովին: 1912 թ. վերջերին Վյաչեսլավ Միխայլովիչն ստիպված էր թաքնվելու և ուրիշ

անվան տակ ապրելու: Բայց այնուամենայնիվ վոստիկանությունը կարողանում է նրան ճանաչել: Ընկ. Մոլոտովը ձերբակալվում է և Պետերբուրգից աքսորվում:

1914 թ. աշնանից Վյաչեսլավ Միխայլովիչը հեղափոխական աշխատանք է տանում Մոսկվա քաղաքում: Բայց մի տարի չանցած, նրան նորից ձերբակալում են և աքսորում Իրկուտսկի նահանգը:

1916 թ. նա փախչում է Իրկուտսկի աքսորից: Նա նորից գալիս է Պետրոգրադ և նորից շարունակում է հեղափոխական աշխատանքը:

Հոկտեմբերյան օրերին ընկ. Մոլոտովը Պետրոգրադում դառնում է Ռազմա-հեղափոխական կոմիտեյի անդամ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընկ. Մոլոտովը կատարում է մի շարք պատասխանատու աշխատանքներ: Նա լինում է Նիժեգորոդի նահանգային գործկոմի նախագահ, կուսակցության Դոնի նահանգկոմի քարտուղար, Ուկրայինայի կոմկուսի կենտկոմի քարտուղար: 1921 թ. ընկ. Մոլոտովը ՀամԿ(բ)Կ կենտկոմի անդամ է: Այդ նույն թվին նա ընտրվեց ՀամԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար: Այդ կարևորագույն պաշտոնում նա մնաց մինչև Ժողկոմխորհի նախագահ նշանակվելը: 1930 թ. դեկտեմբերից ընկ. Մոլոտովը ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահն է:

§ 20. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐ (ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ)

Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության տնտեսությունը շատ բարդ տնտեսություն է: Այդ տնտեսության կառուցման և նրա ղեկավարման դժվարությունները ավելի մեծանում են շնորհիվ այն բանի, որ ԽՍՀՄ շրջապատված է կապիտալիստական յերկրներով:

Հարկավոր է ճիշտ կերպով կարողանալ կազմակերպել առևտուրը կապիտալիստական յերկրների հետ,

նրանց հետ կապ պահպանել, ձգտել, վոր նրանք մեզ հետ իրար վրա չհարձակվելու պայմանագրեր կնքեն:

Յերկրի ներսում հարկավոր է արդյունաբերությունն այնպես կազմակերպել, վոր վոչնչացվի մեր տնտեսական հետամնացությունը, վոր կառուցվի սոցիալիստական տնտեսություն: Հարկավոր է այնպես կարգի բերել գործերը, վոր յերկաթուղիները, փոստը, հեռագիրը կանոնավոր աշխատեն: Հարկավոր է կառուցել նոր ճանապարհներ, վորոնք մեզ հնարավորություն կտան օգտագործել յերկաթուղուց հեռու գտնվող շրջանների հսկայական բնական հարստությունները (հանքեր և այլն): Հարկավոր է անհատական մենատնտեսական գյուղատնտեսությունը դարձնել կոլեկտիվ: Հարկավոր է յուրաքանչյուր կոպեկը խստիվ հաշվի առնել և ճշտիվ ծախսել: Վերջապես հարկավոր է անընդհատ ամրացնել մեր Կարմիր բանակի հզորությունը: Այս բոլոր աշխատանքները, վորոնք ընդհանուր են մեր բոլոր հանրապետություններին, հաջող կերպով կատարելու համար ԽՍՀՄ-ում ստեղծվել են ժողովրդական կոմիսարիատներ:

Ժողովրդական կամիսարիատները յերկու տիպի յեն՝ Համամիութենական ժողկոմատներ և միացյալ ժողկոմատներ: Համամիութենական ժողկոմատները միասնական են ամբողջ Միության համար: Այդպիսի ժողկոմատները համամիութենական են, իսկ առանձին միութենական հանրապետություններում այդպիսիներն իբրև ժողկոմատներ չկան (այլ կան նրանց լիազորությունները): Իսկ միացյալ ժողկոմատները գոյություն ունեն նաև առանձին միութենական հանրապետություններում (տես ԽՍՀՄ ժողկոմատների սխեման):

Կոմիսարիատները գլխավորում են ժողովրդական կոմիսարները, վորոնց նշանակում է ԽՍՀՄ Կենտգործկոմը:

Ծանր արդյունաբերության և Ռազմածովային գործերի ժողկոմատների օրինակների վրա ավելի մանրամասն ծանոթանանք ԽՍՀՄ ժողկոմատների աշխատանքների հետ:

§ 21. ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ (ԾԱՆԱՐԴԺՈՂԿՈՄԱՏ)

Ծանր արդյունաբերության ժողկոմատը կառավարում է մեր յերկրի ամբողջ ծանր արդյունաբերությունը: Ծանր արդյունաբերությունն այնպիսի արդյունաբերություն է, վորն արտադրում է յերկաթահանք, վերամշակում է այն ու դարձնում մետաղ, արտադրում է ածուխ, նավթ, արտադրում է ելկտրականություն, շինում է մեքենաներ և այլն:

Առանց ածխի, նավթի, մետաղի, առանց մեքենաների, չի կարելի զարգացնել արդյունաբերության և վոչ մի ճյուղ: Միայն ծանր արդյունաբերության ամրացմամբ կարելի յե կառուցել և գործի գցել նոր ֆաբրիկներ ու գործարաններ, մատակարարել խորհտնտեսություններին ու կոլտնտեսություններին տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ:

Ծանր արդյունաբերության ժողկոմատը կազմակերպում և ղեկավարում է նոր խոշորագույն գործարանների, ելեկտրոկայանների, հանքահորերի, և այլ շինարարությունը: Նա պետք է ապահովի մեր ֆաբրիկների ու գործարանների սարքավորման վորքան կարելի յե մեծ չափերով արտադրությունը:

Նա պետք է աշխատի, վոր մեզ անհրաժեշտ բոլոր մեքենաները մենք ինքներս արտադրենք, վորպեսզի այն բոլոր մեքենաները, վոր առաջ մենք բերում եյինք արտասահմանից, դրանց արտադրությունն ինքներս հենց մեզ մոտ կազմակերպենք: Իսկ այդ նշանակում է դարձնել մեր յերկիրը կապիտալիստական յերկրներից անկախ յերկիր:

Այդ խնդիրներն իրականացնելու համար, Ծանրարդժողկոմատը մշակում է ծանր արդյունաբերության աշխատանքների պլանը: Նա հետևում է, վոր ծանր արդյունաբերության պլանը կատարվի վոչ միայն ամբողջությամբ, այլև առանձին ճյուղերում և ամեն մի ա-



առանձին գործարանի կողմից: Նա հետևում է, որ ամեն մի գործարան ճիշտ կերպով կազմի իր աշխատանքի պլանը, որպեսզի առանձին գործարանների, էլեկտրոկայանների և հանքահորերի (շախտերի) պլանները միմյանց հետ կապակցված և համաձայնեցված լինեն:

Ծանրարդժողկոմատն օգնում է գործարաններում, էլեկտրոկայաններում, հանքահորերում աշխատող բանվորներին, տեխնիկներին և ինժեներներին, որ լավ ուսումնասիրեն իրենց արտադրության տեխնիկան, որ ինչպես հարկն է ղեկավարեն մեքենաները:

Ծանրարդժողկոմատը հետևում է, որ արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղ, յուրաքանչյուր գործարան և էլեկտրոկայան ճիշտ կերպով ծախսի իրեն տրված միջոցները, խնայողաբար ծախսի հումքը, խնամքով վերաբերվի դեպի հասարակական գույքը և ուշի ուշով պահպանի այդ գույքը դասակարգային թշնամիներից: Նա միջոցներ է ձեռք առնում, որ ծանր արդյունաբերությունը յերկրին տա որքան կարելի յե շատ և բարձր որակի արտադրանք:

Ծանր. արդժողկոմատը հետևում է, որ գործարաններում, հանքահորերում ու էլեկտրոկայաններում աշխատանքը ճիշտ ձևով կազմակերպված լինի, որ յուրաքանչյուր դազգյահի ու մեքենայի մոտ նշանակված լինի մշտապես նրա վրա աշխատող և նրա համար պատասխանատու բանվոր, որ բանվորի աշխատանքն անվտանգ լինի, որ բանվորի նյութական դրությունը բարելավվի:

Յերկրի ամբողջ ծանր արդյունաբերության իսկական տնօրենը դառնալու համար Ծանրարդժողկոմատը պետք է լավ ճանաչի ամեն մի գործարան, էլեկտրոկայան, հանքահոր: Դրա համար Ծանրարդժողկոմատն ուսումնասիրում է տեղական մարմիններից ստացվող հաշվետվությունները, ինքն էլ իր հերթին ուղարկում է իր տեսուչներին՝ տեղերում աշխատանքներն ստուգելու համար, իրեն մոտ կանչում և լսում է ձեռնարկությունների աշխատավորների զեկուցումներն այն մասին, թե ինչպես է ընթանում ձեռնարկության աշխատանքը: Դրա հետ մեկտեղ, Ծանրարդժողկոմատի պատասխանատու աշխատակիցները հաճախ գնում են ձեռնարկությունները, էլեկտրոկայանները և հանքահորերը, ծանոթանում այնտեղի աշխատանքներին և ցույց են տալիս ձեռնարկությանն անհրաժեշտ օգնություն:

Ներկայումս Ծանր արդյունաբերության ժողկոմն է հին բոլշևիկ, փորձված հեղափոխական, Լենինի ու Ստալինի հավատարիմ զինակից Գյորգի Կոնստանտինովիչ Օրջոնիկիձեն (ընկ. Սերգոն—այդ անունով նրան վաղուց գիտեն և սիրում են ԽՍՀՄ բանվորները):

§ 22. ՌԱԶՄԱ-ԾՈՎԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ (ՌԱԶՄԾՈՎԺՈՂԿՈՄԱՏ)

Ռազմծովժողկոմատի հիմնական խնդիրն է կազմակերպել ԽՍՀՄ-ի պաշտպանությունը կապիտալիստական յերկրների հարձակումից: Կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ստեղծել են Կարմիր բանակ, որը միակն է ամբողջ աշխարհում: Ռազմծովժողկոմատն ամեն ջանք պետք է գործ դնի, որ բանակը մարտունակ և ուժեղ լինի: Հարկավոր եր ամեն կերպ աշխատել, որ Կարմիր բանակը քաղաքականապես գրագետ լինի և իմանա, որ ինքը պաշտպանում է քաղաքի և գյուղի բանվորներին ու աշխատավորներին: Հարկավոր է բանակը դարձնել կարգապահ, գրագետ և ռազմական գործին լավ տիրապետած: Հարկավոր եր վերջապես ամբողջ ժամանակ աշխատել, որ ԽՍՀՄ վրա կապիտալիստական յերկրների հարձակման դեպքում, մեր բանակը մատակարարվեր պաշտպանության բոլոր տեսակի զենքերով՝ աերոպլաններ (սավառնակ), տանկեր, գնդացիրներ և այլն:

Արդյո՞ք Ռազմծովժողկոմատը կարողացել է լուծել այդ խնդիրները: Ինչպիսի՞ն է ուրեմն այժմ մեր Կարմիր բանակը:

Այս հարցերին կարելի չէ պատասխանել դրական իմաստով: Մեր Ռազմծովժողկոմատը կարողացել է իրագործել իր առաջ դրված խնդիրները: Մեր Կարմիր բանակն իսկապես այժմ զինված է նորագույն ռազմական տեխնիկայով: Նրա կազմը—կարմիր բանակայինները—գիտակից ու կարգապահ բանվորներ ու գյուղացիներ են: Նրա հրամանատարները նույնպես բանվորներ ու գյուղացիներ են, վորոնք մեծամասամբ քաղաքացիական կռիվների լավագույն մասնակիցներից ու հերոսներից են:

Կարմիր բանակի առաջնորդն է ընկ. Վորոշիլովը:

§ 23. Կ. ՑԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

Ո՞վ է Վորոշիլովը: Ո՞ւմ է կուսակցությունը և խորհրդային իշխանությունը վստահել այդպիսի մեծ և պատասխանատու գործը:

Կլիմենտ Ցեֆրեմովիչ Վորոշիլովը ծնվել է 1881 թ. փետրվարի 5-ին, նախկին Ցեկատերինոսլավի նահանգի Վերխնի կոչվող գյուղում: Նրա հայրը յերկաթուղային պահակ եր: Վորոշիլովի մանկությունն անցել է այն յերկաթուղային բուդկայում, վորտեղ ապրում եր նրանց ամբողջ ընտանիքը:

Մանուկ հասակից Կլիմենտ Ցեֆրեմովիչն իր կաշվի վրա զգաց ցարական Ռուսաստանի պրոլետարի դառը վիճակը: Դեռևս յոթ տարեկան նա մտնում է հանքահորերն աշխատելու, վորտեղ օրական տաս կոպեկով կոլչեդան եր ջոկում: Տաս տարեկան դառնալով՝ նա իր հոր հետ միասին սկսում է արածացնել կալվածատիրոջ հոտը (տավարը, նախիրը): Այնուհետև մի ամբողջ տարի նրան տալիս են վորպես բատրակ կուլակի մոտ, վորը դաժանորեն շահագործում է յերեխային: Տուն վերադառնալով՝ նա դարձյալ մտնում է հանքահորերն աշխատանքի: Մինչև 12 տարեկան հասակը Վորոշիլովն անգրագետ եր: Գավառական դպրոց է նա մտնում այն ժամանակ, յերբ արդեն 13 տարեկան եր: Այստեղ նա սովորում է միայն յերկու ձմեռ: Նա սկսում է շարունակ գրքեր կարդալ, աշխատելով գտնել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանը:

Կ. ՑԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

1896 թվին ընկ. Վորոշիլովը մտնում է աշխատանքի՝ Ալչևսկի գործարանը: Հանքահորերում և գործարաններում տիրում եր կապիտալիստների ու տերերի լիակատար կամայականությունը: Բանվորները գտնվում եյին միանգամայն անօգնական վիճակում: Բանվորական օրը տևում եր 12 ժամից ավելի: Կլիմն սկսում է հասկանալ, վոր բանվորը վոչ մի տեղից օգնության սպասելիք չունի: Մի տարի հետո տեղի յե ունենում Վորոշիլովի առաջին ընդհարումը ցարական վոստիկանության հետ: Անցնելով վոստիկանական պայտի մոտով՝ Վորոշիլովը չի բարևում (գլուխ չի խոնարհում) նրան: Սպառնալիքներով Վորոշիլովի վրա չեն հարձակվում: Սպայի օգնության են հասնում վոստիկանները: Այդ օրվանից Վորոշիլովին սկսում են հետապնդել:

Վոստիկանությունը չի սխալվում, վոր սկսում է հսկել և հետապնդել Վորոշիլովին: Վորոշիլովը ծանոթություն է հաստատում հեղափոխականորեն տրամադրված բանվորների հետ: Ալչևսկում շուտով կազմակերպվում է հեղափոխական խմբակ: Նրա հիմնադիրներից մեկը Վորոշիլովն եր: 1899 թ. Վորոշիլովի ղեկավարությամբ չուգունի ձուլման ցեխում գործադուլ են անում խողովակագործները: Վորոշիլովը ձերբակալ-

վում է։ 1903 թ. Վորոշիլովը Լուգանսկ քաղաքում մըտնում է Գարտմանի գործարանը, սակայն 2—3 ամիս անց, վոստիկանությունը նրան քաղաքից աքսորում է։ Այդ ժամանակները հենց Վորոշիլովը մտնում է բոլշևիկների կուսակցության մեջ։

1905 թ. Վորոշիլովն ակտիվ կերպով մասնակցում է գործադուլներին։ Գործադուլներից մեկի ժամանակ Վորոշիլովին դաժանորեն ծեծի յեն յենթարկում ու բանտ նստեցնում։ 1905 թ. դեկտեմբերին հազարավոր ամբոխը մոտենում է բանտին և պահանջում է ազատ արձակել Վորոշիլովին։ Նրան գրավականով արձակում են. Վորոշիլովը թաքնվում է, նորից ընդհատակյա աշխատանք տանելու նպատակով։ Նորից բանտեր, նորից աքսորներ։

Քաղաքացիական պատերազմի ժամանակ Վորոշիլովը ղեկավարում եր ամբողջ բանակներ։

Ամենապատասխանատու ճակատամասերն եյին ուղարկում Կլիմ Վորոշիլովին։ Վորոշիլովը Կարմիր բանակի կազմակերպիչներից մեկն է։ Ռազմական ծառայությունների համար ընկ. Վորոշիլովը պարգևատրված է Կարմիր դրոշի յերեք շքանշանով և բարձրագույն մարտական ընծայով—պատվավոր զենքով։ 1925 թվից ընկ. Վորոշիլովը ԽՍՀՄ Ռազմածովային ժողկոմն է։

Այս է Կարմիր բանակի առաջնորդի, Լուգանսկի փականագործ (սլեսարի), հին բոլշևիկ, Լենինի լավագույն աշակերտներից մեկի—Կլիմ Վորոշիլովի կյանքի ուղին։

§ 24. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ Ե ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ

Մեր յերկրում պրոլետարիատի դիկտատուրա յե։ Բայց բոլոր բանվորներն իրենց գիտակցությամբ, նոր սոցիալիստական հասարակության համար պայքարելու պատրաստակամությամբ միատեսակ չեն։ Բանվոր դասակարգի ամենից լավ և գիտակից մասը միավորվում

է կոմունիստական կուսակցության մեջ։ Իսկ կոմունիստական կուսակցությունն էլ ղեկավարում է խորհուրդների աշխատանքը։

Հեղափոխական պայքարի փորձը ցույց տվեց, վոր առանց կոմունիստական կուսակցության կողմից խորհուրդները ղեկավարելու, պրոլետարիատի դիկտատուրան իրականացնել չի կարելի։ Այսպես որինակ՝ փետրվարյան հեղափոխությունից հետո, յերբ ցարի իշխանությունը տապալվեց և կապիտալիստներն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին, հենց այդ պահին միաժամանակ դոյություն ունեյին նաև խորհուրդներ։ Բայց այդ խորհուրդներում կոմունիստական կուսակցությունը ղեկավար դեր չեր կատարում։ Մինչև վոր կոմունիստական կուսակցությունը նրանցում չսկսեց ղեկավար դեր խաղալ, նրանք (խորհուրդները) չեյին պաշտպանում բանվորների ու գյուղացիների շահերը, այլ շարժվում եյին կապիտալիստների թելադրանքով։

Կոմունիստական կուսակցությունը բանվորների և գյուղացիների առաջնորդն է՝ նոր սոցիալիստական հասարակություն կառուցելու գործում, ճիշտ այնպես, ինչպես նա նրանց առաջնորդն եր՝ ցարի, կալվածատերերի, կապիտալիստների դեմ մղված պայքարում։ Այս բանը շատ լավ են հասկանում մեր թշնամիները։ Նրանք գիտեն, վոր բավական է միայն կոմունիստներին հեռացնել խորհուրդներից, վորպեսզի խորհուրդները զրկվեն ամեն մի ուժից ու նշանակությունից։ Նրանք հասկանում են, վոր խորհուրդներն առանց կոմունիստների չեն կարող անողոք պայքար մղել ընդդեմ դասակարգային թշնամիների։ Ահա թե ինչո՛ւ խորհրդային իշխանության թշնամիները մեր դեմ պայքար կազմակերպելով՝ լոզունգ չպրտեցին՝

«Թող լինի խորհուրդների իշխանություն, բայց առանց կոմունիստների»։

Այս լոզունգը պաշտպանություն եր գտնում աշխատավորների բոլոր թշնամիների կողմից, վորովհետև

Նրանք այդ կերպ հույս էին տածում, թե կզրկեն աշխատավորներին կոմունիստական կուսակցության ղեկավարությունից, կկարողանան գլխատել խորհուրդները և նրանց հանձնել թշնամիների ձեռքը:

Թե ինչ կերպ է կուսակցությունը ղեկավարում բանվորներին ու գյուղացիներին՝ սոցիալիստական հասարակության համար մղվող պայքարում, այդ մասին խոսվելու յե մեր դասագրքի հաջորդ գլուխներում:

§ 25. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ԵՆ ՄՂՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տասնվեց տարի մեր յերկրում գոյություն ունի խորհուրդների իշխանություն: 16 տարի յե, ինչ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մեր



յերկրի բանվոր դասակարգն աշխատավորներին տանում է դեպի սոցիալիզմ: Իսկ այդ ժամանակամիջոցում կապիտալիստական յերկրներում իշխանությունը շարունակում է մնալ կապիտալիստների ու կալվածատերերի

ձեռքում, վորոնք բանվորներից ու գյուղացիներից ծծում ու քամում են վերջին հյութերը:

Կապիտալիստական յերկրների բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը գնալով ավելի ու ավելի յեն ըմբոստանում իրենց ճնշողների դեմ: Նրանք լի հույսով են նայում դեպի մեր խորհրդային յերկիրը, վորը ցույց տվեց շահագործողներից ազատագրվելու ճանապարհը: Իրենց յերկրի կոմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ նրանք հերոսական պայքար են մղում խորհուրդների իշխանություն հաստատելու, կապիտալիստների ու կալվածատերերի ատելի իշխանությունը տապալելու համար:

Աշխատավորների հերոսական պայքարի օրինակ է հանդիսանում Չինաստանը:

Չինաստանում ավելի քան հարյուր գավառ, տասնյակ միլիոն ազգաբնակչությամբ գտնվում են խորհուրդների իշխանության ներքո: Այժմ յերկու Չինաստան գոյություն ունի. Չինաստան, վորտեղ տասնյակ միլիոնավոր աշխատավորներ սովամահ են լինում, վորտեղ միլիոնավոր գործազուրկներ կան—դա կապիտալիստների ու կալվածատերերի Չինաստանն է:

Կա և մյուս, նոր, խորհրդային Չինաստան: Խորհրդային Չինաստանում կալվածատերերից խլված է հողը և բաժանված է աշխատավոր գյուղացիներին: Մտցված է 8 ժամյա բանվորական օր, բարձրացված է աշխատավարձը: Այս յերկու Չինաստանները մեկը մյուսից տարբերվում են ինչպես գիշերը ցերեկից: Ահա թե ինչու Չինաստանի աշխատավորներն այդպես անձնուրաց կերպով պաշտպանում են խորհուրդների իշխանությունը:

Բուրժուազիայի հարյուր հազարավոր զորքերը, վորոնք սավառնակներ, տանկեր ու հրանոթներ ունեն, պարտություն են կրում խորհրդային Չինաստանի հետ մղած պայքարում: Չինաստանում խորհրդային շրջանների թիվը գնալով ավելանում է:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ վիճակում էին գտնվում վոչ ռուս ազգությունների աշխատավորները ցարի ժամանակ։

2. Ինչո՞ւ չեր ցարական իշխանությունը ձգտում միմյանցից անջատել տարբեր ազգությունների աշխատավորներին։

3. Ի՞նչ է կատարել խորհրդային իշխանությունը մեր յերկրում ազգային ատելությունը վերացնելու համար։

4. Ինչո՞ւ յե կազմակերպվել ԽՍՀՄ։

5. Ի՞նչ խորհրդային հանրապետություններ են մտնում ԽՍՀՄ-ի մեջ։

6. ԽՍՀՄ բարձրագույն իշխնությունն ո՞ւմ է պատկանում։

7. Ինչո՞ւ մեր պետությունը կոչվում է խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն։

8. Ի՞նչ կենտրոնական մարմինների միջոցով է Կենտգործկոմը ղեկավարում մեր յերկրի ամբողջ կյանքը։

9. Ուրիշ վո՞րտեղ կա խորհրդային իշխանություն բացի ԽՍՀՄ-ից։



III ԳԼՈՒԽ

ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ

§ 26. ԽՍՀՄ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ Ե ՄԻԼԻՈՆՆԵՐԻ ԻՂՁԸ

Հանուն սոցիալիզմի իրենց կյանքը նվիրեցին ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ ուսուցիչներ՝ Մարքսը, Ենգելսը, Լենինը և հազարավոր ուրիշ լավագույն մարդիկ։

Սոցիալիզմի հաղթանակի համար կապիտալիստական յերկրներում կախաղան են բարձրանում, աքսորի, տաժանակիր աշխատանքի և բանտարկության են դատապարտվում բանվոր դասակարգի գործի համար տասնյակ հազարավոր մարտնչողներ։ Նույն այդ սոցիալիզմի համար քաղաքացիական կռիվներում իրենց գլուխը

մայր դրեցին հազարավոր լավագույն բանվորներ, վորոնց աշխատավոր մարդկությունը յերբեք չի մոռանա:

Յեվ ահա այն, ինչ վոր համարվում եր միլիոնների իղձը, ձգտումն ու յերազանքը, խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ դառնում ե իրականություն:

Մինչև վոր նախապես բանի ուժով չտապալվեր կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը և չխլվեյին նրանցից հողը, ֆաբրիկները, գործարանները ու յերկաթուղիները և այլն, սոցիալիզմ կառուցել չեր կարելի: Այդ բանը մեզ մոտ բանվորներն ու աշխատավոր գյուղացիները կատարեցին) ՝ թ. հոկտեմբերին:

«Ժողովուրդների պատմությունը—ասում ե ընկ. Ստալինը—գիտե շատ հեղափոխություններ: Դրանք բոլորը զանազանվում են Հոկտեմբերյան հեղափոխությունից նրանով, վոր դրանք բոլորնել միակողմանի յեն յեղել: Շահագործման մի ձևը փոխվում եր մյուսով, բայց ինքը՝ շահագործումը մնում եր: Մի շահագործողը փոխվում եր մի այլ շահագործողի ու կեղեքչի, իսկ իրենք՝ շահագործվողներն ու կեղեքվողները մնում եյին: Միայն Հոկտեմբերյան հեղափոխությունն իրեն առաջ խնդիր դրեց՝ վոչնչացնել ամեն մի շահագործում և վերացնել բոլոր և ամեն կարգի շահագործողներին»:

Այսպես ուրեմն, բանվոր դասակարգը տապալեց ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին և իշխանությունը վերցրեց իր ձեռքը, վորպեսզի կառուցի լավ կյանք՝ բոլոր աշխատավորների համար—կառուցի սոցիալիզմ:

Կապիտալիստների իշխանության որոք մարդկանց մի մասն ունի գործարաններ ու ֆաբրիկներ, տերն ե բոլոր հարստությունների, չնայած վոր այդ մասը չի աշխատում, իսկ մյուս, ավելի մեծ մասն ամեն սեփականությունից զուրկ ե, աշխատում ե ֆաբրիկներում ու գործարաններում, հարստացնելով կապիտալիստներին:

Դա կապիտալիստների դասակարգն ե ու բանվոր դասակարգը:

Սոցիալիզմի ժամանակ վոչնչացվում ե ֆաբրիկների, գործարանների, հողի, հողի մշակման գործիքների, մեքենաների մասնավոր սեփականությունը և հաստատվում ե հասարակական կոլեկտիվ սեփականություն: Իսկ այս նշանակում ե՝ վերջ հարստացմանը, վերջ մարդու ձեռքով մարդու շահագործմանը:

Սոցիալիզմի ժամանակ կոչնչացվեն դասակարգերը: Բոլոր մարդիկ կդառնան սոցիալիստական հասարակության աշխատավորներ:

Ամբողջ տնտեսությունը կղեկավարվի մի միասնական պլանով:

Սոցիալիստական հասարակություն կառուցելու վրա յե, վոր ահա 16 տարի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աշխատում ե խորհուրդների յերկիրը:

§ 27. ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Ե ՊԼԱՆՈՎ

Ամեն մի գործի մեջ, յեթե մենք ուզում ենք հաջողություններ ձեռք բերել, պետք ե աշխատենք պլանով: Վերցնենք, որինակ՝ թեկուզ դպրոցական կյանքից: Յենթադրենք ուսուցիչը վորոշել ե եքսկուրսիա կազմակերպել դեպի խորհրդային տնտեսություն: Վորպեսզի հաջող գնա գործը, հարկավոր ե նախորոք մտածել ու խորհել, ինչ պետք ե հարցնել խորհրդային տնտեսությունում բանվորներից, դիրեկտորից և մոտակա կոլտնտեսության գյուղացիներից—մի խոսքով, հարկավոր ե կազմել եքսկուրսիայի պլանը: Եքսկուրսիայից հետո հարկավոր ե հաշվի առնել, թե ինչ բաներ իմացան եքսկուրսիայում, ի՞նչ արդյունք տվեց եքսկուրսիան, մի խոսքով՝ ինչպես ե կատարված պլանը: Այդ դեպքում միայն աշխատանքն օգտավետ կլինի: Եքսկուրսիա անպատրաստ գնալու դեպքում նրանից օգուտ քիչ կստացվի, իսկ խառնաշփոթությունը շատ:

Իսկ այնպիսի մեծ գործում, ինչպիսին ժողովրդական տնտեսությունն է՝ պլանն առանձնապես անհրաժեշտ է: *Չէ՞ վոր այստեղ արդեն հաշիվը միլիոններով է կատարվում: Միլիոն տոնն, միլիոն մետր, միլիոն հատ, միլիոն ռուբլի և այլն: Այսպես, որինակ՝ հարկավոր է. վոր մեզ հայտնի լինի թե այս տարի կամ այսինչ տարին քանի միլիոն տոնն քարածուխ կամ նավթ, ինչքան շոգեքարշ և ավտոմոբիլ է մեզ հարկավոր: Պետք է իմանալ, թե ինչքան միջոցներ են մեզ հարկավոր նոր ֆաբրիկների ու գործարանների կառուցման համար, հարկավոր է իմանալ, թե վորտեղից պետք է վերցնել այդ միջոցները:*

Կապիտալիստական յերկրներում, վորտեղ իշխանությունը պատկանում է կապիտալիստներին, պլանային տնտեսությունն անկարելի յե:

Կապիտալիստական յերկրներում ֆաբրիկները, գործարանները, հողը գտնվում են առանձին կապիտալիստների ու կալվածատերերի ձեռքում: Ամեն մի կապիտալիստին հետաքրքրում է միայն շահույթը: Նրա համար միևնույնն է, թե ինչ արտադրել, միայն թե ավելի շատ հարստություն դիզել: Կապիտալիստները միմյանց դեմ անողոք պայքար են մղում: Յուրաքանչյուր կապիտալիստ ձգտում է հաղթել և վոչնչացնել մյուսին, վոր ինքն ավելի շատ շահույթ ձեռք բերի:

Միայն խորհրդային յերկիրն է, վոր հնարավորություն ունի իր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը կառուցել նախապես մշակված պլանով:

Այս հնարավոր է դառնում նրա համար, վորովհետև ԽՍՀՄ բանվոր դասակարգը հանդիսանում է ամբողջ յերկրի տերը: Հողը, ֆաբրիկները, գործարանները, արտադրության գործիքները խլված են կապիտալիստներից և պրոլետարական պետության սեփականություն են դարձել: Բանվորներն աշխատում են վոչ թե կապիտալիստների համար, այլ ամբողջ յերկրի ոգտին:

Հենց վոր քաղաքացիական կռիվներն սկսեցին վերջանալ, կոմունիստական կուսակցությունը Լենինի ղեկավարությամբ ձեռնարկեց ժողովրդական տնտեսության պլանը կազմելու գործը:

Ժողովրդական տնտեսության առաջին պլանն է մեր յերկրի ելեկտրիֆիկացման պլանը: կոչվում եր Ռուսասմր, վոր կազմում եր այդ պլանը, կոչվում եր Ռուսաստանի Ելեկտրիֆիկացման Պետական Հանձնաժողով կամ ԳՈԵԼՌՈ (Государственная комиссия по электрификации России).

Այդ պատճառով էլ ելեկտրիֆիկացման այդ լենինյան պլանը կոչվում եր գոելռոյի պլան:

Լենինի ղեկավարությամբ յերկու հարյուր լավագույն գիտնականներ, ճարտարապետներ, պրոֆեսորներ, պլան եյին կազմում, այսինքն ծրագրում եյին, թե ինչքան և ինչպիսի ելեկտրոկայաններ վորտեղ պետք է կառուցել: Աշխատանքը տևեց 10 *ամիս: Վերջապես* 1920 *թ. դեկտեմբերի սկզբներին պլանն արդեն պատրաստ եր: Ռուսաստանի Խորհուրդների* VIII *համագումարը հաստատեց այդ պլանը:*

1928 *թ. խորհուրդների յերկիրը կուսակցության Կենտկոմի և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ նախագծեց ամբողջ յերկրի սոցիալիստական վերակառուցման ուղիները, և կազմեց այդ աշխատանքների պլանը մոտակա հինգ տարիների համար, այսինքն առաջին հնգամյակը:*

§ 28. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԼԱՆՆ Ե

Հնգամյա պլանը հինգ տարվա աշխատանքի պլանն եր մեր յերկրի բոլոր գործարանների ու ֆաբրիկների, պլան եր վոչ միայն գործարան-ֆաբրիկների, այլև մեր քաղաքների, ելեկտրոկայանների, յերկաթուղիների, հանքերի, խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, Մեքենա-տրակտորային կայանների, դպրոցների, գրադարանների, հիվանդանոցների, ամբուլատորիաների հնգամյա աշխատանքների:

Ինչպիսի՞ խնդիրներ եր առաջադրում առաջին հնգամյակը:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր փոխադրել մեր հետամնաց տեխնիկա ունեցող յերկիրը նոր, ամենից առաջավոր տեխնիկայի:

Հիմնական խնդիրն եր՝ ԽՍՀՄ-ը գյուղացիական յերկրից, կապիտալիստական յերկրներից կախում ունեցող յերկրից (մեքենաներ և գործարան-ֆաբրիկների համար սարքավորում այդ ժամանակ ստիպված եյինք մեծ մասամբ բերել արտասահմանից) դարձնել ինդուստրիալ յերկիր, վորն ինքն ե արտադրում իրեն համար անհրաժեշտ բոլոր մեքենաները, վորը ինքնուրույն ե և կապիտալիստական յերկրներից անկախ ե:

Հիմնական խնդիրներն եր՝ մանր, ցիրուցան գյուղատնտեսությունը վերակառուցել և դարձնել խոշոր՝ կոլեկտիվ տնտեսություն:

Հնգամյակի հիմնական խնդիրն եր, ամրացնել մեր յերկրի պաշտպանունակությունը:

Վերջապես հնգամյակի խնդիրն եր, բարձրացնել աշխատավորների կուլտուրական մակարդակը, յերկիրը դարձնել գրագետ և լուսավոր:

Ի՞նչ ե նշանակում ինդուստրացնել յերկիրը:

Յերկիրն ինդուստրացնել նշանակում ե՝ ինքներս արտադրենք այնպիսի մեքենաներ, վորոնց օգնությամբ կարելի յե մեքենաներ պատրաստել: Յեթե մենք շարունակ արտասահմանից բերեյինք բոլոր մեքենաներն ու սարքավորումը, և չմտածեյինք մեր սեփական ուժերով այդպիսիներն արտադրել, այդ դեպքում մեզ սպառնում եր կապիտալիստներին ստրուկ դառնալու վտանգը: Այդ պատճառով ել մենք պետք ե արտադրենք վոչ միայն ավտոմոբիլներ, այլև ավտոմոբիլ արտադրող մեքենաներ, վոչ միայն տրակտորներ, այլև տրակտոր արտադրող մեքենաներ և այլն:

Յերկիրն ինդուստրացնել նշանակում ե՝ ուժեղացնել նավթի, քարածխի, մետաղի և մեքենաների արտա-

դրությունը, նշանակում ե կառուցել տրակտորային գործարաններ, գյուղատնտեսական մեքենաների գործարաններ:

Առանց դրան մեր յերկիրը չի կարելի դարձնել ինքնուրույն և կապիտալիստական յերկրներից անկախ: Առանց դրան չի կարելի մանր, անհատական գյուղացիական տնտեսությունը դարձնել կոլեկտիվ-սոցիալիստական: Այսպիսին եյին առաջին հնգամյակի խնդիրները:

§ 29. ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԽԱՆԳԱՐԵԼ ՄԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր պլանները սոցիալիզմի շինարարության պլաններն են: Այս բանը շատ լավ հաշվի յեն առնում մեր թշնամիները՝ կուլակները, նախկին կալվածատերերը, կապիտալիստները, տերտերները և մյուսները:

Այդ պատճառով ել հենց վոր սկսվեց ժողովրդական տնտեսության պլանների կազմումը, մեր թշնամիները, վորոնք այլևայլ կերպ խցկվել եյին մեր հիմնարկները, ֆաբրիկներն ու գործարանները, աշխատում եյին կազմել այնպիսի պլաններ, վորոնք խանգարեյին մեր սոցիալիստական շինարարությանը: Նրանք կազմում եյին նվազեցրած պլաններ, թաքցնում եյին աշխատավորներից մեր զարգացման հնարավորությունները և աշխատում եյին տալ այնպիսի պլաններ, վորոնց շնորհիվ գյուղում ամրանար կուլակը, իսկ քաղաքում՝ մասնավոր առևտուրը:

Վնասարարներն ամեն կերպ խափանում եյին առանձին գործարանների համար պլաններ կազմելու մեր աշխատանքը: Վնասարարական պլաններն այնպես եյին կառուցվում, վոր, օրինակ՝ ըստ պլանի տրված եր վորոշ թվով տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների արտադրություն, իսկ այդ նույն պլանով համապատասխան քանակությամբ յերկաթի ու պողպատի ձուլումը չեր ապահովվում: Հետևանքը լինում եր պլանի խափանում (վիժում):

Վնասարարների ցուցմունքներով արտասահմանից մեծ գումարներով գնվում էին այնպիսի մեքենաներ, որոնք միանգամայն անպետք էին դուրս գալիս տվյալ ձեռնարկության համար։ Իրենց այդ վնասարարության գործունեության մեջ նրանք օգնություն էին ստանում օտարերկրյա կապիտալիստներից։ Վնասարարները բավականին վնասներ հասցրին մեզ, բայց այնուամենայնիվ նրանց ծրագրերը չիրականացան։ Նրանց դավադիր գործը բացվեց։ Բանվորներն ուշի ուշով հետևում են իրենց թշնամիներին։

Խորհրդային իշխանությունն անողոքաբար պայքարում է մեր թշնամիների ամեն մի փորձի դեմ, որն ուղղված է սոցիալիզմի շինարարությունը խանգարելուն։

§ 30. ԻՆՉՊԻՍԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՐ ՄԵԶ ՄՆԱՑԵԼ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Ցարական Ռուսաստանը գերազանցապես գյուղատնտեսական երկիր էր։ Նա մյուս երկրներն էր արտահանում (դուրս տանում) գյուղատնտեսական մթերքներ, իսկ ներմուծում էր (բերում էր) մեքենաներ և այլ սարքավորում։ Իսկ իր սեփական ուժերով նա մեքենաներ համարյա թե չէր արտադրում։

Ֆաբրիկների, գործարանների, հանքահորերի, էլեկտրակայանների սարքավորում ցարական Ռուսաստանը գլխավորապես ներմուծում էր արտասահմանից։ Գերմանիայում, Անգլիայում, Ամերիկայում, Բելգիայում ու Շվեդիայում էին գնվում գործարանների ու ֆաբրիկների մեքենաները և դազգյահները։ Ցարական Ռուսաստանում ավտոմոբիլներ ու տրակտորներ բոլորովին չէին արտադրվում։

Երկրի ներսում գտնվող հսկայական հարստությունները (քարածուխ, նավթ, երկաթահանք,) շատ քիչ էին մշակվում և օգտագործվում։ Կազախստանի, Արևելյան Սիբիրի, Հեռավոր Արևելքի ընդերքի հարստությունները մարդկային ձեռք համարյա թե չէին տեսել։

Ռուսաստանը, որ իր անտառային հարստությամբ աշխարհումս առաջին երկիրն է և Գերմանիայից 65 անգամ հարուստ, չնայած դրան, Գերմանիայում անտառային արդյունաբերությունն ավելի զարգացած էր, քան ցարական Ռուսաստանում։

Մեքենաներ պատրաստելու համար անհրաժեշտ մետաղը նույնպես բերվում էր արտասահմանից։ Ռուսաստանում գլխավորապես պատրաստվում էր թիթեղ-երկաթ, երկաթալար և այնպիսի մետաղներ, որոնցից պատրաստվում են մեխեր և տնային գործածության առարկաներ։

Բայց նույնիսկ այն արդյունաբերությունը, որ կար ցարական Ռուսաստանում, մեծամասամբ պատկանում էր օտարերկրյա կապիտալիստներին։ Օրինակ՝ Դոնբասի հանքահորերի մեծ մասը պատկանում էր Ֆրանսիայի, Բելգիայի, Անգլիայի և Գերմանիայի կապիտալիստներին։ Խոշորագույն երկաթահանքի ավազանը—Կրիվոյ Ռոգը—համարյա թե ամբողջովին պատկանում էր օտարերկրյա կապիտալիստներին։

Բաքվի խոշորագույն նավթի շատրվաններն ու գործարանները շվեդական կապիտալիստ Նոբելին էին պատկանում։ Մի շարք խոշոր մեքենաշինական գործարաններ նմանապես գտնվում էին գերմանական, անգլիական և ֆրանսիական կապիտալիստների ձեռքում։

Ռուսական կապիտալիստների ձեռքում էր գտնվում գլխավորապես թեթև (մանածագործական) արդյունաբերությունը։

Ցարական Ռուսաստանի տեխնիկան և արդյունաբերությունը շատ ցածր էին։ Օրինակ՝ քարածխի հանույթը կատարվում էր ձեռքով։ Նավթային հանքերում նույնպես ամենահետամնաց տեխնիկան էր գործադրվում։

Արդյունաբերության այսպիսի վիճակը՝ ցարական Ռուսաստանում նրան դարձրել էր կապիտալիստական երկրներից կախում ունեցող երկիր։

Ահա թե ինչպիսի տնտեսություն ստացան բոլշևիկները, յերբ նրանք 1917 թ. հոկտեմբերի 25-ին նվաճեցին իշխանությունը։

§ 31. ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆԸ ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ Ե

Ցարական Ռուսաստանից ժառանգություն ստանալով այսպիսի հետամնաց տնտեսություն, խորհրդային իշխանությունը պետք ե լարեր իր բոլոր ուժերը, վորպեսզի շուտափույթ կերպով վերացներ այդ հետամնացությունը։ Հենց ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը նախագծում եր, թե առաջիկա ժամանակամիջոցում ինչպես հասնել և անցնել կապիտալիստական յերկրներից։

Հնգամյակն իրագործելու համար հարկավոր եր սկսել հիմնականից։

Վո՞րն եր հիմնականը հնգամյա պլանում։

Հնգամյա պլանում հիմնականը հանդիսանում եր ծանր արդյունաբերությունը— արդյունաբերություն, վորն արդյունահանում ե յերկաթահանք և այդ հանքը վերամշակում ե ու դարձնում մետաղ. արդյունահանում ե քարածուխ, նավթ, արտադրում ե ելեկտրականություն, պատրաստում ե մեքենաներ։ Միայն ծանր արդյունաբերություն և առաջին հերթին մեքենաշինարարություն ստեղծելով կարելի յե նոր հիմունքներով վերակառուցել և՛ ամբողջ արդյունաբերությունը, և՛ տրանսպորտը, և՛ գյուղատնտեսությունը։

Ահա թե ինչու հենց ծանր արդյունաբերությունից սկսվեց հնգամյա պլանի իրականացումը։

1929 թվի մայիսի 23-ին վառ լույսերով ողողված ԽՍՀՄ Մեծ Թատրոնի դահլիճում (Մոսկվայում) տեղի յեր ունենում Խորհուրդների Համամիութենական V համագումարի նիստը։ Այդտեղ քննվում եր առաջին հնգամյա պլանը։ Համագումարի պատգամավորների ուշադրությունը բևեռված եր դեպի այն հսկայական քարտեզը, վորը բռնել եր Մեծ Թատրոնի ամբողջ բեմը։

Քարտեզը գծագրված եր բազմաթիվ պայմանական նշաններով—շրջանագծերով, աստղիկներով, քառակուսիներով, շեղագծերով և այլն։

Ահա քարտեզի վրա լուսավորվում են տասնյակ աստղեր—դրանք ապագա նոր հանքահորերի տեղերն են, վորոնք պետք ե ստեղծվեյին (և ստեղծվեցին) Դոնբասում, Կուզբասում, Կարագանդայում և Ընդմոսկովյան ավազանում։ Բոցավառվեցին ու հանգան։ Այդ հանքահորերն այդ ժամանակ դեռ չկային, բայց պետք ե լինեյին և յեղան։

Նոր նշան—քարտեզը լուսավորվում ու զարդարվում ե կարմիր և յերկնագույն շրջանակներով. կարմիրները ելեկտրոկայաններն են, իսկ յերկնագույնը — հիդրոկայանները։ Առանձնապես պայծառ փայլում եյին այն յերկնագույն լույսերը, վորոնք ցույց եյին տալիս ապագա Դնեպրոստրոյը։

Ապա քարտեզի վրա յերևացին տարբեր ուղղություններով շարժվող կարմիր՝ օձանման գծերը—նոր յերկաթուղիները։

— Խնդրում եմ լուսավորել ամբողջ քարտեզը. ցույց տվեք ելեկտրականությունը, վառելանյութերը, տրանսպորտը, մետաղները—ասաց զեկուցողը։

Քարտեզը մի վայրկյանում բոցավառվեց հարյուրավոր գույնզգույն լույսերով, և համագումարի պատգամավորների առաջ իրեն հասակով մեկ կանգնեց մեր յերկիրն այնպիսի տեսքով, ինչպիսին նա պետք ե ստանար հինգ տարի հետո։

Իսկ այդ ժամանակ ամբողջ յերկիրն արդեն պատված եր մեծագույն շինարարությամբ։ Արդյո՞ք կարողացավ մեր յերկիրը կատարել առաջադրված խնդիրը։ Դառա՞վ արդյոք մեր յերկիրն այնպիսին, ինչպիսին

պետք է դառնար նա ըստ հնգամյա պլանի: Հաջորդ լենթադասություններում մենք կգտնենք այդ հարցի պատասխանը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ միայն ԽՍՀՄ-ում է հնարավոր պլանային տնտեսություն:

2. Ինչո՞ւ պլանային տնտեսությունն անհնարին է կապիտալիստական յերկրներում:

3. Ե՞րբ է կազմված ժողովրդական տնտեսության առաջին պլանը: Ո՞վ եր ղեկավարում դրա կազմելու աշխատանքները:

4. Ինչպիսի՞ խնդիրներ եյին դրված առաջին հնգամյակի առջև:

5. Ի՞նչ է նշանակում ինդուստրացնել ԽՍՀՄ-ն:

6. Ինչո՞ւ ցարական Ռուսաստանը համարվում եր գյուղատընտեսական յերկիր:

7. Ինչո՞ւ հնգամյա պլանում հիմնականը համարվում է ծանր արդյունաբերությունը:

---

§ ՈՒՐԱԼ-ԿՈՒԶՆԵՑԿՈՒ ԿՈՄԲԻՆԱՏԸ

> «Մենք ունեյինք միայն մեկ ածխա-մետալուրգիական բազա—Ուկրայինայում, վորին մենք դժվարությամբ եյինք ղեկավարում: Մենք ձգտք բերինք այն, վոր վոչ միայն բարձրացրինք այդ բազան, այլև ստեղծեցինք նոր ածխա-մետալուրգիական բազա Արևելքում, վորը կազմում է մեր յերկրի պարծանքը»:
>
> (ՍՏԱԼԻՆ)

Մետաղից պատրաստվում են տրակտորներ և ավտոմոբիլներ, ինքնաթիռներ և շոգենավեր: Մետաղից պատրաստվում է ֆաբրիկների, գործարանների և ելեկ-

տրոկայանների համար սարքավորում: Առանց մետաղի չկան յերկաթուղիներ: Ամենաբարդ մեքենաները—դազգյահները և պարզ մեխերը նույնպես պատրաստվում են մետաղից: Մետաղն անհրաժեշտ է նաև մեր յերկրի պաշտպանունակությունն ամրացնելու համար:

Այդ պատճառով էլ կուսակցության ցուցմունքներով ամբողջ տարիներ լարված պայքար է տարվել մետաղի համար: Նոր ձևով եյին վերակառուցվում մեր մետալուրգիական (մետաղաձուլական) գործարանները: Բայց միայն հին գործարանների վերակառուցումն անբավարար եր արդեն: Անհրաժեշտ եր միաժամանակ սկսել նոր գործարանների կառուցումը, վորը պահանջում եր ավելի շատ մետաղ և քարածուխ:

Ընկ. Ստալինն այդ հարցն առաջադրում է կուսակցության XVI համագումարին: Նա ասում եր, վոր Ուկրայինայում գոյություն ունեցող միակ ածխամետաղային բազան անբավարար է: Հարկավոր է անմիջապես ստեղծել յերկրորդ ածխա-մետաղային բազան: Այդպիսի բազա պետք է դառնա՝ Ուրալ Կուզնեցկու կոմբինատը: Կուսակցության XVI համագումարը քննարկեց մեր առաջնորդի առաջարկը և վորոշեց առաջին հնգամյա պլանի մեջ մտցնել Ուրալ Կուզնեցկու կոմբինատի կառուցումը:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Ուրալ-Կուզնեցկու կոմբինատը:

Ուրալը հարուստ է մետաղով, իսկ Սիբիրը՝ ածխով: Սիբիրը տալիս է ածուխ Ուրալի մետաղաձուլման համար, իսկ Ուրալը Սիբիրի մետաղաձուլական գործարաններն է ուղարկում իր յերկաթհանքը:

Վագոնները Կուզբասից (Սիբիրից) Ուրալ են տանում քարածուխ, իսկ վերադառնում են այնտեղից յերկաթհանքով բեռնված:

Ուրալ-Կուզնեցկու կոմբինատն իր մեջ է առնում շատ ձեռնարկություններ, բայց դրանցից գլխավորներն

են յերկու գիգանտները—Մագնիտոգորսկու և Կուզնեցկու գործարանները:

Ինչպիսի՞ն են այդ գիգանտները:

Մագնիտոգորսկ. 180 տարի առաջ Ուրալում՝ Մագնիտնայա կոչվող լեռան վրա գտնվել եր յերկաթահանք: Բայց 180 տարի շարունակ այդ լեռը, վորի մեջ կա հարյուրավոր միլիոն տոնն յերկաթ, մնացել եր անձեռնմխելի: Այն ժամանակ վոչ վոք չեր մտածում, վոր ամբողջ սարը թանգարժեք յերկաթահանքերից ե բաղկացած: Միայն խորհրդային իշխանությունը կարողացավ ճիշտ կերպով և արագորեն հետախուզել Մագնիտնայա սարի թանգարժեք հանքերը: Ստուգվեցին հանքաքարերը, վորոնք զանազան խորություններից եյին վերցված: Պարզվեց, վոր Մագնիտնայա լեռան յերկաթահանքերը 300 միլիոն տոննից ավելի յեն:

Ահա այստեղ՝ Մագնիտնայա լեռան մոտ սկսվեց խոշորագույն մետաղաձուլական գործարանի շինարարությունը:

Հարյուր գործարաններից ավելի, վորոնք գտնվում են և՛ Հարավում, և՛ Հյուսիսում, Դնեպրոպետրովսկում, Դոնբասում, Ուրալում, Ուկրայնայում, Հյուսիսային Կովկասում, Մոսկվայի մարզում, Լենինգրադում—դրանք բոլորը Մագնիտոստրոյի համար պատրաստում եյին շենքերի յերկաթյա մասեր, մեքենաներ, մեքենաների մասեր և այլն: Մեր ծովային շոգենավերը Մագնիտոստրոյի համար արտասահմանից բերում եյին մեքենաներ: Լենինգրադում, Նովոռոսիյսկում, Արխանգելսկում մեր բեռնակիրները բեռնաթափ եյին անում (դատարկում եյին) Մագնիտոստրոյի բեռները:

Մագնիտոգորսկի գործարանի կառուցումը մեր վողջ կուսակցության, վողջ բանվոր դասակարգի գործն ե:

Ի՞նչ ե վերջապես արտադրում այդ գործարանը: Ինչո՞ւ ամբողջ յերկիրը և կուսակցությունն այդ շինարարությանը նվիրում են այդքան մեծ ուշադրություն:

Մագնիտոգորսկի հսկա գործարանն արտադրում ե մետաղներ, վոր ծայր աստիճան անհրաժեշտ են մեր յերկրին—չուգուն և պողպատ:

1929 թ. աշնանն սկսվեց այդ հսկա գործարանի կառուցումը, իսկ 1931 թ. շինարարությունը հիմնականում ավարտված եր:

Ստալինյան գիգանտը. Մագնիտոգորսկուց յերկու հազար կիլոմետր հեռու, հեռավոր սիբիրական խուլ անկյունում սկսվեց կառուցվել Ստալինյան (Կուզնեց-

«Կոմյերիտական դոմեն № 2» և նրա լավագույն հարվածայինները

կու) մետաղաձուլական գործարանը: Նրա չորս դոմենյան վառարանները մեր յերկրին ամեն տարի կտան 1.200 հազ. տոնն չուգուն: Նրա 15 մարտենյան վառարաններն ամեն տարի դուրս կտան 1.450 հազ. տոնն պողպատ:

1930 թ. մայիսի մեկին հիմնադրվեց Ստալինյան մետաղաձուլական գործարանի առաջին դոմենյան վառարանը:

Տարի ու կես անց, Հոկտեմբերյան հեղափոխության տասնչորսերորդ տարեդարձին Կուզնեցկու կառուցողները ռապորտ (զեկույց) տվեցին կուսակցությանը և վողջ յերկրին—Կուզնեցկու մետաղաձուլական գործարանի առաջին հերթի ավարտման մասին: Ստալինսկի (Կուզնեցկու) դոմեններն արդեն աշխատում են և վերամշակում են Մագնիտոգորսկի յերկաթահանքը: Ստալինյան գիգանտը փոխում է նախկին աքսորավայր Սիբիրի դեմքը:

Տասնյակ հազարավոր պրոլետարների ձեռքով ստեղծվում է նոր մետաղաձուլական խորհրդային Արեվելք: 50 աստիճան սառնամանիքի, բուքի ու բորանի պայմաններում, հաղթահարելով բոլոր դժվարությունները՝ խորհրդային յերկրի բանվորները կառուցեցին աշխարհիս խոշորագույն գիգանտները: Այդ բանը նրանք կատարեցին չափից դուրս կարճատև ժամանակում:

1930 թ. փետրվար ամսին Մագնիտոստրոյի կառուցողների ժողովը կառուցումը հայտարարում է հարվածային: Ամբողջ կառուցման մասերում ստեղծվում են հարվածային բրիգադներ: Գիշեր-ցերեկ, ամառվա խիստ շոգերին ու ձմռան քառասուն աստիճանի սառնամանիքների ժամանակ տարվում եր աշխատանք: Բանվոր հարվածայինները ցուցաբերում եյին մեծագույն հերոսություն: Առանձնապես աչքի եյին ընկնում այն կոմյերիտականների բրիգադները, վորոնք կառուցեցին Մագնիտոստրոյի պարծանքը կազմող «Կոմյերիտական դոմեն №2»ր: Նրանք աշխատում եյին այնպիսի արագությամբ, վորի նմանը չի տեսնված աշխարհում:

Նույնպես հարվածային աշխատում եյին Ստալինյան մետաղաձուլական գործարանի կառուցողները: Ամբողջ շինարարության ընթացքում Ստալինյանները

մրցության մեջ եյին մտնում Մագնիտոստրոյականների հետ:

Ձմեռ եր: Սառնամանիքն ինչպես կրակ այրում եր մարդկանց դեմքերը. սառը յերկաթն էլ կրակի պես այրում եր ձեռները: Սակայն հարվածայինները վոգևորված իրենց գործով, բաց յերկնքի տակ հավաքում եյին մետաղյա կոնստրուկցիաները (կազմությունները): Մարդիկ պայքարում եյին սառնամանիքի դեմ—պայքարում և հաղթում եյին:

Բայց յեղան միքանի այնպիսի օրեր, յերբ կառուցողները չկարողացան դիմանալ: Դա այն պատմական տագնապալի օրերն եյին, յերբ ջերմաչափների մեջ սնդիկն իջավ մինչև 60 աստիճան ցրտության: Սառնամանիքը ժամանակավորապես հաղթեց: Դրսի աշխատանքները դադարեցին: Սակայն բետոնը չեր կարող սպասել: Սառեցնել, ցրտահար անել բետոնը, նշանակում է փչացնել, ջուրը գցել արդեն կատարված հսկայական աշխատանքը:

Բետոնը վտանգված եր: Սառնամանիքը սեղմում եր:

Այդ պահին սառչող բետոնին է մոտենում Բարիշեվի բրիգադը:

— Բետոնը պետք է տաքացվի. մենք թույլ չենք տա, վոր նա սառչի:

Կամավոր-հարվածայինները յերեք օր շարունակ հերոսաբար պատսպարում եյին բետոնը ցրտից, մինչև վոր սառնամանիքն անձնատուր յեղավ: Բրիգադի անդամներից մեկը, հնոցպան Դերգունովն օրական տասնվեց ժամ մնում եր բետոնի մոտ և չեր հեռանում այն ջերմոցից, վորով պատսպարում եյին բետոնը ցրտահարությունից:

Կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ցուցմունքներն արդեն յերազանք չի, այլ իրականություն է: բինատն արդեն յերազանք չի, այլ իրականություն է: Այնտեղ, ուր դեռ վոչ շատ առաջ միայն ամայի տափաստան եր, այժմ գիգանտ հանքերից արդյունահանվում է

յերկաթահանք, ցրված են վիթխարի գոմեններ, վորոնց հավասարը չկա Յեվրոպայում. այնտեղ ձուլվում է ամեն որ հազարավոր տոններով թանգարժեք մետաղ։

§ 33. ԽՍՀՄ-Ն ԻՐ ԴԱՇՏԵՐԸ ՎԱՐՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆ ՏՐԱԿՏՈՐՈՎ

> «Մենք չունեյինք տրակտորային արդյունաբերություն։ Այժմ այդ արդյունաբերությունը մենք ունենք»։
>
> ՍՏԱԼԻՆ

Ցարական Ռուսաստանում տրակտորային արդյունաբերություն չկար։ Այն 165 տրակտորը, վոր գործում եյին կալվածատիրական հողերի վրա, ամբողջապես բերված եյին արտասահմանից։

Մեր յերկրում առաջին անգամ տրակտոր սկսվեց արտադրվել 1924 թ. Լենինգրադի, «Կրասնի Պուտիլովեց» գործարանում։ Բայց մեր յերկրին, վոր ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցում է նոր ձևով, չեր բավականացնում տրակտորների այն քանակությունը, վոր արտադրում եր և կարող եր արտադրել «Կրասնի պուտիլովեց» գործարանը։ Հարկավոր եր ստեղծել նոր գիգանտ գործարաններ։ Ուստի և կուսակցության ղեկավարությամբ սկսվեց տրակտորային գիգանտների կառուցումը։

Ստալինգրադի տրակտորային գործարանը. 1929 թ. Ստալինգրադ քաղաքի մոտ Վոլգայի ափերին մոտեցան անտառանյութերով բեռնված լաստեր։ Լաստերից իջան մարդիկ, վորոնք այնտեղ եյին ուղարկված կուսակցության կողմից։ Նրանք ցանկապատեցին 520 հեկտար ազատ հողամաս։ Հողի մեջ ցցեցին փայտեր և սկսեցին չափումներ անել, պլանավորել և փորել։ Հրապարակից վերցրեցին ժուրկովո կոչվող ավանը։ Հրապարակի վրա փռվեցին սպիտակ վրաններ։ Շուտով վրանների կողքին աճեցին բարակներ։ Այդտեղ անվանեցին Տրակտորշին։

Առաջներում այս ամայի տեղում խաղում եր միայն

տափաստանի քամին։ Այժմ ամբողջ որերով այստեղ խռնվում, աղմկում ու կառուցման աշխատանք եյին կատարում բանվորները։

Հողափորները, բետոնագործները, փականագործները, գարբինները, ջրմուղի կառուցման վրա աշխատողները—դրանք բոլորն անում եյին իրենց գործը։

Արագորեն աճում եյին յերկաթ-բետոնից կառուցված հսկայական շինությունները։

Ճարտարապետներից վոմանց վախ եր պատճառում աշխատանքի անսովոր արագությունը։

— Սա խելագարություն է,—ասում եյին նրանք։—



Ստալինգրադի տրակտորագործարանը

Չի կարելի այսպես աշխատել։ Կարծես չորրորդ հարկից թռչելիս լինեք. ձեր վիզը կկոտրեք։

Իհարկե՝ նրանց չեյին լսում և աշխատանքից հրաժարական տալով նրանք հեռանում եյին։

Սակայն վոչ միայն ճարտարապետները, այլև հետամնաց բանվորների մի մասը յետ եր նահանջում դժվարություններից և չեր ցանկանում մարտական ձևով աշխատել։

Բայց այդպիսիների թիվը փոքր եր։ Ստալինգրադի տրակտորային գործարանն ամբողջությամբ լի յե հերոսական աշխատողների որինակներով։

Ամերիկյան ճարտարապետները հաշվեցին ու դուրս

բերին, վոր հավաքական ցեխը կարելի յե կառուցել 163 որում: Ռուս ճարտարապետներն ստուգեցին և սահմանեցին ժամկետը 62 որ: Իսկ յերբ բանվորները համերաշխ գործի կպան, հավաքական ցեխը կառուցեցին 28 որում: Ամերիկյան ճարտարապետները չեյին հավատում իրենց աչքերին, նրանց շշմեցրել եր այդ արագությունը, այդ վոգևորությունը:

— Մենք խորհրդային ենք... ծիծաղով ասում եյին բանվորները:

— Մենք չարացած ենք աշխատանքի վրա:

15 մետր բարձրության վրա հարկավոր եր ապակով



խարկովի տրակտորագործարանը

ծածկել շինությունները: Իսկ որերը սառնամանիքային եյին: Աշխատելը շատ դժվար եր: Ապակեգործները հրաժարվեցին: Այն ժամանակ այդ գործը հանձն առան կատարելու յերկու հարյուր կոմյերիտականներ: Ծեր ապակեգործը համաձայնեց ղեկավարել նրանց աշխատանքը: Նրանք բոլորն ել բարձրացան շինությունների վրա: Այդ 200 հոգու մեջ 20 կոմյերիտուհի աղջիկներ կային:

Միայն ժամանակ-առժամանակ նրանք տաքացնում եյին իրենց ձեռքերն ու այնուհետև նորից կպչում եյին գործի: Յերիտասարդ բանվորները վիրավորում եյին իրենց ձեռները, սակայն համառորեն շարունակում եյին ապակիներն անցկացնել սառը յերկաթյա փեղկերի մեջ:

Կոմյերիտականներն ապակեցին քանիվեց հազար քառակուսի մետր, առանց շինություններից վայր իջնելու:

Հերոսական աշխատանքի այսպիսի որինակներ կարելի յեր հազարներով բերել:

Յեվ ահա շինություն-շինության հետևից աճեց տրակտորային գիգանտը (հսկան): Ահա հավաքական ցեխը. նա ձգվում եր 409 մետր: Ահա ձուլման ցեխը: Այս ցեխի վառարաններն որական կուլ են տալու 25 վագոն չուգուն: Ահա դարբնոցային ցեխը: Այդ ցեխում կախված են 28 շոգե-մուրճեր:

Աշխարհիս մեծագույն տրակտորային գործարանը գործի դրվեց 1930 թ. հունիս ամսին:

Սակայն իր աշխատանքի հենց առաջին ամիսներին տրակտորային գործարանն անհանգստություն առաջ բերեց ամբողջ աշխարհում: Գործարանը չեր կատարում իր պլանը: Ջարդվում եյին մեքենաները: Սկսեցին պատճառները փնտրել: Այդ պատճառները շատ եյին, բայց դրանցից գլխավորն այն եր, վոր այն ժամանակ խորհրդային բանվորները, ճարտարապետները, տեխնիկները դեռ չեյին կարողանում ինչպես հարկն է ղեկավարել նոր դազգյահները, մեքենաները, դեռևս տեխնիկայի տեսակետից այնքան գրագետ չեյին, վոր գործն առաջին իսկ որվանից անխափան կերպով առաջ գնար:

Ի՞նչ եր հարկավոր անել:

Հարկավոր եր սովորել: Տեխնիկապես գրագետ դառնալ: Յեվ Ստալինգրադականները կպան սովորելու գործին: Որստորե նրանք սեփական սխալների վրա սովորում եյին նոր տեխնիկային տիրապետել:

Կուսակցության ղեկավարությամբ Ստալինգրադի տրակտորի գործարանը միքանի ամիս խափանումներից հետո դուրս յեկավ դժվարություններից: Իսկ հիմա նա տալիս է որական 150 տրակտոր մեր կոլտնտեսական ու խորհտնտեսական դաշտերի համար:

Խարկովի տրակտորային գործարանը: Ստալինգրա-

դի գործարանի դասերն իզուր չանցան։ Երկրորդ խորհրդային տրակտորագործարանը—Խարկովի գործարանը գիտեր արդեն թե ումնից և ինչ կերպ պետք է սովորել և ինչպիսի սխալներից պետք է խուսափել։

15 ամսվա ընթացքում շինարարությունն ավարտվեց։ 1931 թ. հոկտեմբերի 1-ին Խարկովի գործարանը գործի դրվեց։

Խարկովի տրակտորագործարանը տարեկան մեր յերկրին տալու յե 50 հազար տրակտոր։

Չելյաբինսկի տրակտորագործարանը. 1929 թ. խորհրդային կառավարությունը վորոշեց Ուրալում կառուցել ծանր տրակտորների գործարան։

Վորոշվեց այդ գործարանը կառուցել Չելյաբինսկում։ Այստեղ՝ քաղաքից 18 կիլոմետր հեռու՝ յերկրի խորքում ընկած են գորշ քարածխի մեծ շերտեր։ Չելյաբինսկը յերեք ճանապարհների (Սիբիրի, Սամարայի և Պերմի) միացման հանգույցն է։ Նա ապահովում է կապը Ուրալի, Սիբիրի, Կազակստանի, Մերձվոլգայի և Միջին Ասիայի հետ։ Քաղաքի շրջակայքում յեղած հարթ տափաստանները մեծ հարմարություն են ներկայացնում խոշոր գործարանների կառուցման համար։ Մոխրագույն գրանիտների զանգվածները, գունավոր կավերի շերտերը, ավազի ու կրի շերտերը շինանյութ են ծառայում շինարարության համար։ Հենց այստեղ էլ սկսվեց աշխարհիս խոշորագույն տրակտորային գործարանի կառուցումը։

Աշնանը տափաստան յեկավ բանվորների առաջին խումբը։ Նրանց ավագը՝ Ֆրոլովը, յերբ քաղաքում վարձվում եր այդ շինարարության վրա աշխատելու համար, շատ զարմացավ, յերբ նրան ասացին, վոր շինարարության վայրում դեռ վոչինչ չկա արված։

Եվ իրոք՝ ապագա գործարանի տեղում միայն ամայի տափաստան եր և ուրիշ վոչինչ։

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում Չելյաբինսկի տրակտորագործարանը։ Չելյաբինսկի գործարանը մեկ

ու կես անգամ մեծ է Ստալինգրադի գործարանից։ Նա տարեկան արտադրելու յե 40 հազար մեծ թրթուրավոր «կատերպիլեր» սիստեմի—60 ձիու ուժանոց տրակտոր։ Յուրաքանչյուր 6 րոպեն կոնվեյերից դուրս է գալու մի հզոր տրակտոր։

Կատերպիլեր անգլիերեն նշանակում է թրթուր։ Այդ պողպատյա թրթուրավոր տրակտորների համար սարսափելի չեն վոչ կանավները, վոչ փոսերը, վոչ թանձր ցեխը և վոչ էլ սիբիրական կպչուն կավը։

Չելյաբինսկի տրակտորային գործարանի շինարարությունն ավարտված է։ 1933 թ. մայիսից գործարանն սկսեց արտադրել տրակտորներ։

Չելյաբինսկի տրակտորային գործարանը ավելի մեծ է, քան աշխարհիս ամենամեծ՝ ամերիկյան թրթուրավոր «Կատերպիլեր» տրակտորագործարանը։

Տրակտորային գործարանները նորանոր հազարավոր տրակտորներ են ուղարկում խորհրդային դաշտերը։

Երկիրը լցվում է մեր սեփական տրակտորների աղմուկով։ Հնգամյակով նախատեսված 91 հազար տրակտորի փոխարեն հնգամյակի չորս տարվա ընթացքում ԽՍՀՄ-ում արտադրված է 105.850 տրակտոր։

§ 34. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

«Մենք չունեյինք ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներ արտադրող իսկական և լուրջ արդյունաբերություն։ Իսկ այժմ մենք այդ ունենք»։

(ՍՏԱԼԻՆ

Ավելի շատ մեքենաներ կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների համար։ Այսպես է պահանջում նոր հիմունքներով կատարվող գյուղատնտեսու-

թյան վերակառուցումը: Ահա թե ինչո՛ւ հնգամյա պլանով մեծ տեղ տրվեց գյուղատնտեսական մեքենաներ արտադրող գործարանների շինարարությանը: Ահա նրանցից ամենից կարևորները.

Ռոստովի գյուղմեքենաշինական գործարանը. *Հինգ տարի առաջ այստեղ հենց Ռոստովի (Դոնի վրա) մոտ ընկած եր տափաստան՝ սակավաթիվ բլուրներով: Իսկ այսօր այդ նույն տեղում աճել է մի ամբողջ արդյունաբերական քաղաք: Այժմ նա ունի 35 գործարանային շինություններ (կորպուսներ) և 50 բնակելի շենքեր՝ բանվորների համար: 13 գլխավոր ցեխերը գրավում են 30*



Գյուղատնտեսական մեքենաների Ռոստովի գործարանը

հեկտար տարածություն: Դա մի նոր արդյունաբերական կենտրոն է, որ հայտնի յե ամբողջ յերկրին:

Ըստ պլանի, գործարանը պետք է լիովին գործի դըրվեր 1933 թվին, սակայն կուսակցության կոչին, մեր միության առաջավոր բանվորների կոչին՝ հնգամյակը չորս տարում իրագործելու՝ առաջին հերթին պատասխանեցին Ռոստովի գյուղմեքենաշինի կառուցողները: Դեռ 1930 թվին գործարանի կառուցումը հիմնականում ավարտված եր:

Գյուղատնտեսական մեքենաներ արտադրող գործարանների շարքում առաջին տեղն իրավացիորեն պատ-

կանում է Ռոստովի գործարանին, որը հնգամյակի առաջին ծնունդն է:

1930 թ. գործարկված Ռոստովի գյուղմեքենաշինն արդեն 1932 թ. արտադրել եր 100 հազար գյուղական սայլակների առնիներ՝ իրենց անիվներով, 100 հազար ձիափոցխեր, 30 հազար տրակտորային խոտհար մեքենաներ, 40 հազար տրակտորային խրձակապներ, 30 հազ. տրակտորային սերմացաններ, 100 հազ. տրակտորային գութաններ և տասնյակ հազար զանազան գյուղատնտեսական ինվենտար:

Այդքան չեյին կարողանում արտադրել ցարական Ռուսաստանի 900 մեքենաշինական գործարանները միասին վերցրած: Ահա թե ինչ հաջողություններ ձեռք բերեց Ռոստովի գյուղմեքենաշինը:

Կոմբայնների գործարաններ. *Կոմբայն օտարերկրյա բառ է, որ յեթե թարգմանելու լինենք կնշանակի միացում: Դա միացումն է հնձիչ և կալսիչ մեքենաների:*

Դեռ մինչև այժմս շատ տեղերում հացահատիկը հնձվում է մանգաղով կամ գերանդիով: Հնձվածը խըրձեր է դարձվում ու դիզվում արտում, ապա անցնում է բավականաչափ ժամանակ, մինչև որ տեղափոխում են խրձերը կալսիչով կալսելու համար: Ինչքա՛ն մեծ թվով բանվորական ձեռքեր է պահանջում բերքահավաքը և կալսումը: Յեվ քանի քանի միլիոն ցենտներ հացահատիկ ենք մենք կորցնում այդ ձևի բերքահավաքի ժամանակ:

Կոմբայնը միացրեց բերքահավաքը և կալսումը, ազատելով հազարավոր բանվորական ձեռքեր: Միաժամանակ զգալի չափով պակասեց հացահատիկի կորուստը:

Կոմբայնի հայրենիքն Ամերիկան է: Առաջին անգամ կոմբայնը պատրաստվեց այնտեղ 107 տարի սրանից առաջ:

Առաջին խորհրդային կոմբայնը պատրաստվեց Զապորոժյեյի մեքենաշինական «Կոմունար» գործարանում՝

1929 թ. սեպտեմբերին: Դա առաջին հաղթանակն էր:
Այնուհետև «Կոմունարը» 1930 թ. արտադրեց 347 կոմբայն, իսկ 1931 թվին՝ արդեն 3545 կոմբայն:

Բայց այդ մեզ բավական չէր: Կառավարության վորոշմամբ սկսվեց Սարատովի կոմբայնների հզոր գործարանի կառուցումը: 1931 թ. դեկտեմբերի 31-ին այդ



Կոմբայնների Սարատովի գործարանը

գործարանը գործի գցվեց: Գործարանը տարեկան տալու յե 15–20 հազար կոմբայն: Ընդամենը խորհրդային գործարանների կողմից արդեն արտադրված են 13.500 կոմբայն: Այդ մեքենաների արտադրությամբ մենք գրավել ենք առաջին տեղն ամբողջ աշխարհում:

§ 35. ՅԵՐԿԻՐԸ ԽԼԱՆՈՒՄ Ե ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԱՎՏՈՄԲԻԼՆԵՐԻ ԱԶԴԱՆՇԱՆԻ ՁԱՅՆԵՐԻՑ

«Մենք չունեինք ավտոմոբիլային արդյունաբերություն: Մենք այժմ ունենք այդպիսին»:

(ՍՏԱԼԻՆ

Ցարական Ռուսաստանում ավտոմոբիլային արդյունաբերություն չկար: Այն ութ հազար ավտոմոբիլները, վորոնք յերթևեկում եյին մայրաքաղաքի և մի քանի մեծ քաղաքների փողոցներում, ամբողջովին բերված եյին արտասահմանից:

Մենք ստեղծեցինք յերկու խոշորագույն ավտոմոբիլային գործարաններ:

Գորկու ավտոգործարանը. 1935 թ. մայիսին Գորկի քաղաքից մի քանի կիլոմետր հեռու դրվեց այդ գործարանի առաջին քարը: 17 ամսվա ընթացքում կառուցվեց ամբողջ գործարանը, վորը յերկու և կես անգամ մեծ է Ստալինգրադի և Խարկովի տրակտորային գործարաններից:

Գորկի քաղաքի ավտոգործարանը տալու յե տարեկան 140 հազար ավտոմեքենա, այլ կերպ ասած՝ ավտոներն այնտեղ արտադրվելու յեն ամսական 12 հազար հատ, որական՝ 388 հատ, իսկ ժամը՝ 24 հատ: Ուրեմն, այդ հսկան յուրաքանչյուր 2 և կես րոպեն տալու յե մի ավտոմոբիլ:

Գորկու ավտոգործարանի հարվածային կառուցողները ցույց տվին աշխատանքային հերոսության փայլուն որինակներ:

Ավտոյի պատրաստի մասերն հավաքող ցեխի սարքավորումն ավարտվեց 43 որվա մեջ, այսինքն՝ նշանակված ժամկետից 17 որ առաջ: Ավտոգործարանի կառուցողներին ոգնելու համար Գորկի քաղաքի բանվորները կազմակերպեցին տասնյակ շաբաթորյակներ:

Նշանակված ժամկետին—1931 թ. նոյեմբերի 1-ին գործարանի կառուցումն ավարտվեց: Իսկ 1932 թ. խորհրդային յերիտասարդ ավտոգործարանի բանվորները ռապորտ տվեցին Համկոմկուսի 17-րդ կոնֆերանսին, նվիրելով իրենց արտադրած առաջին 25 ավտոմեքենաները:

Ստալինի անվան գործարանը (նախկին «ԱՄՈ»). Գորկի քաղաքի ավտոգործարանի հետ միաժամանակ Մոսկվայում վոչ մեծ արհեստանոցներից աճեց և բարձրացավ նոր հսկա գործարան, վորը կրում է կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի անունը:

Ահա այդ գործարանի պատմությունը:

1915 թ. մի խումբ կապիտալիստներ ռազմական

գերատեսչության հետ պայմանագիր են կնքում Մոսկվայի ավտոմոբիլային գործարանի կառուցման համար։ Նրանք խոստանում են գործարանը գործարկել գործի գնել 1916 թ. հոկտեմբերին և 1917 թ. մարտին ռազմաճակատ ուղարկել արտադրված ավտոմոբիլների առաջին խումբը։ 1917 թ. մարտին գործարանը դեռևս կիսակառույց վիճակում էր։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո գործարանն անցավ բանվորների ձեռքը։

Ինչ էր իրենից ներկայացնում այդ գործարանը։ Նրա գլխավոր շինությունները կիսակառույց էյին։

Արտասահմանից դուրս գրված սարքավորումը լրիվ չէր ստացվել, իսկ ստացվածն էլ բացօթյա մնալով՝ անձրևի ու ձյունի տակ փչանում էր։

Քաղաքացիական կռիվների ժամանակ բանվորների մի մասը գնաց ռազմաճակատ, իսկ մնացած մասը շարունակում էր ստացված մեքենաների նորոգումը։ Գործարանի բակը լեփլեցուն էր ջարդ ու փշուր յեղած տարբեր տիպի հազարավոր ավտոմեքենաներով։ Այդ աղբակույտից մի կերպ հաջողվում էր հավաքել նոր ավտոմեքենաներ։ Բանվորները հաց չունեյին, իսկ գործարանն էլ՝ վառելիք։ Ամեն որ բանվորների առաջ հարց էր ծագում, փակե՞լ արդյոք գործարանը, թե վոչ։ Բայց գործարանը չեյին փակում։

Գործարանն արտադրում էր յերկաթուղիների համար վորոշ սարքավորում, իսկ ավտոմեքենաների արտադրության մասին այն ժամանակ նա չէր էլ մտածում։

1920 թ. Ամերիկայից վերադարձան մի խումբ բանվորներ, վորոնք այնտեղ էյին գնացել դեռևս հեղափոխությունից առաջ։

Սկսեցին անհեթեթ լուրեր տարածվել, թե այդ «ամերիկացիները» ուզում են խորհրդային իշխանությունից պայմանագրական կարգով վերցնել գործարանը։

Բանվորներն այդ անհիմն լուրից այնքան էյին հուզվել, վոր դիմեցին Վ. Ի. Լենինի ոգնության։

Լսելով նրանց, Լենինը խոստանում է անձամբ գալ գործարան։ Մի անգամ գործարանային ժողովի ժամանակ աննկատելի կերպով ներս է մտնում Լենինը և համեստ կերպով նստում է անկյունում։ Բայց Լենինին ճանաչում են, նրան դիմավորում են աղմուկով։ Նրան լսում են լարված կերպով։ Լենինը խոսում է այն մասին, վոր Կարմիր բանակին հարկավոր են ավտոմեքենաներ, վոր սպիտակներին ոգնում են կապիտալիստները, վորոնք ուղարկում են մեքենաներ, տանկեր... իսկ Կարմիր բանակն ոգնություն է սպասում բանվորներից։

— Յես հույս ունեմ, — ասաց Լենինը, — վոր հինգ տարուց հետո մենք կտեսնենք «ԱՄՈ» գործարանի կողմից բաց թողնված առաջին խորհրդային մեքենան։

1923 թ. վերջին «ԱՄՈ» գործարանում սկսվեց յեռուն աշխատանքը։ Բանվորները վորոշեցին 1924 թ. նոյեմբերի 7-ին տալ առաջին 10 ավտոմեքենան։ «ԱՄՈ»-ցիներն այդ գործում դեռևս փորձ չունեյին, իսկ խոստացած ժամկետը մոտենում էր։

Լարվածությունը գնալով մեծանում էր՝ արդյո՞ք նոյեմբերի 7-ին «ԱՄՈ»-յի 10 մեքենաները դուրս կգան Կարմիր հրապարակ — ահա այս հարցն էր նրանց հուզում։

Ահա, մի անգամ, մութ գիշերին գործարանի ամբողջ վարչությունը հավաքվեց առաջին հավաքված մոտորի մոտ։ Պետք է փորձի գրվեր առաջին խորհրդային մոտորը։ Լցրեցին բենզինը, պտտեցին մոտորի պտտիչը։ Մոտորը ցնցվեց և վստահորեն սկսեց գործել։

Վերջին որերը «ԱՄՈ»-ցիներն աշխատում էյին մինչև գիշերվա ժամը 12-ը։ Առաջադրանքը կատարեցին։ Նոյեմբերի 7-ին «ԱՄՈ-ցիների զորասյունի մեջ հանդիսավոր կերպով շարժվում էյին խորհրդային առաջին 10 ավտոմեքենաները։

Բայց այդ միայն առաջին հաղթանակն էր։ Հարկավոր էր շարունակել կարգի գցել ավտոների արտադրու-

թյունը և միաժամանակ գործարանը նոր ձևով վերակառուցել:

Գործարանի վերակառուցումը սկսվեց 1929 *թ. մայիսից, իսկ* 1931 *թ. հոկտեմբերի* 1*-ին միանգամայն նորոգված նա գործի դրվեց:*

Նորոգված գործարանը տարբերվում է վոչ միայն այն վոչ մեծ արհեստանոցից, վոր թողել եյին կապիտալիստները, այլև այն խոշոր «ԱՄՈ» գործարանից, վորը ստեղծվել եր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո (այդ արհեստանոցների հիման վրա): Հին «ԱՄՈՆ» արժեր 9 *միլ. ռուբլի, նորը՝* 90 *միլ. ռուբլի: Հին «ԱՄՈ»-յում աշխատում եր* 1400 *բանվոր, իսկ նորում՝* 20 *հազար բանվոր: Հինը տարեկան արտադրում եր* 2500 *մեքենա, իսկ նորը տալիս է* 25000, *իսկ հետագայում արտադրելու յե* 50.000 *մեքենա:*

Ահա՛ թե ինչպես փոխվեց հին «ԱՄՈ»-ն: Ահա թե ինչպիսին է ընկ. Ստալինի անվան ավտոգործարանը: Գնալով ավելի և ավելի յեն հաստատվում ընկ. Ստալինի խոսքերը, վորը «մենք դառնում ենք մետաղի յերկիր, ավտոմոբիլի յերկիր, տրակտորի յերկիր»:

§ ԱՃՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԱԾՈՒԽ

«Նավթային մթերքների և ածխի արտադրության տեսակետից մենք կանգնած եյինք վերջին տեղում: Հիմա մենք առաջ ենք շարժվել և գրավում ենք առաջին տեղերից մեկը»:

(ՍՏԱԼԻՆ

Տարեցտարի աճում է գործարաններում ու ֆաբրիկներում գործող մեքենաների թիվը: Մեքենաները, դազգյահները շարժման մեջ դնելու համար անհրաժեշտ է վառելանյութ: Վառելանյութերի հիմնական տեսակներից մեկն է ածուխը:

Հազարավոր գնացքներ են շարժվում յերկաթուղիներով: Ծովերում ու գետերում լողում են շոգենավերը: Նրանք տանում ու բերում են մեքենաներ, շինանյութ, հաց, զանազան ապրանքներ և մարդկանց: Գնացքների ու շոգենավերի շարժման համար անհրաժեշտ է ածուխ:

Մեր գործարանների ու ֆաբրիկների վառարանները սպասում են ածխի: Հանքաքարը յերկաթ դարձնելու համար նմանապես հարկավոր է ածուխ: Ահա դրա համար էլ Լենինն ասել է, վոր մեր արդյունաբերության ածուխը հարկավոր է ինչպես հացը:

Ածուխ կա ԽՍՀՄ-ի բոլոր ծայրերում՝ Ուկրաինայում, Ուրալում, Հեռավոր Արևելքում, Մոսկվայում, Կազակստանում, Սիբիրում, Անդրկովկասում: Դեռևս բոլոր ածխային հարստությունները հետազոտված չեն, իսկ սոցիալիստական շինարարությունն որ-որի վրա ավելի համառորեն պահանջում է ավելի շատ ածուխ:

Թե հիմա և թե հեղափոխությունից առաջ ամենից շատ ածուխ տալիս է Դոնբասը: Իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմներից Դոնբասը դուրս յեկավ միանգամայն քայքայված: Սպիտակները փախչելով Դոնբասից՝ ջրով լցրեցին և կործանեցին շատ հանքահորեր, վոչնչացրեցին սարքավորումը: Հազարավոր հանքափորներ Կարմիր բանակի շարքերում եյին, հարյուրավորներն սպանվեցին սպիտակ բանդիտների կողմից: Հանքահորերում աշխատանքը կանգ եր առել:

Սպիտակները ջարդվեցին ու քշվեցին: Խորհրդային իշխանությունը սկսեց վերականգնել իր տնտեսությունը: Հարկավոր եր սկսել այդ գործը Դոնբասից: Առանց ածխի արդյունաբերությունը կյանք ունենալ չի կարող: Իզուր չի, վոր Դոնբասը կոչվում է «Համամիութենական հնոցարան»:

Դոնբասի ածուխը պետք է շարժման մեջ դներ սառած ու քարացած շոգեքարշները, պետք է վառեր հանգած դոմնաները:

Դոնբասի հանքափորներն աշխատանքի մեջ ցուցաբերեցին մեծագույն հերոսություն: Սոված ու մերկ՝ նրանք

ֆշնում եյին կործանված հանքահորերը: Հաշվի չառնելով ժամանակի տևողությունը, նրանք որ ու գիշեր վերանորոգում եյին սարքավորումը, արդյունահանում եյին ածուխ և կյանք տալիս Դոնբասի խորքերում թաղնված հարստություններին: «Համամիութենական հնոցարանը» վերակենդանանում եր: Վերակենդանանում եր նաև արդյունաբերությունը՝ ստանալով Դոնբասից ածուխ:

Դոնբասի անտեսությանը մեծ վնասներ տվին վնասարարները: Նրանք թաքցնում եյին հարուստ ածխաշերտերի տեղը, ջրով եյին լցնում լավագույն հանքահորերը. այդ հանքահորերը նրանք մտածում եյին պահել իրենց հին տերերի համար, վորոնց գալստյան մասին նրանք մեծ հույսեր եյին տածում: Վնասարարները փչացնում եյին սարքավորումը և ամեն կերպ խանգարում եյին Դոնբասի զարգացմանը:

Սակայն վնասարարներին չհաջողվեց ավերել ու կործանել Դոնբասը: Վնասարարները, շնորհիվ հանքափոր բանվորների աչալրջության, շուտով հայտաբերվեցին: Հանքափոր բանվորներն ամուր կերպով պաշտպանում եյին հանքահորերը:

Մեր աճող արդյունաբերությանը միայն Դոնբասի ածուխը սկսեց չբավականացնել: Այդ իսկ պատճառով ել կուսակցությունը ցուցմունքներ տվեց նոր ածխային ավազաններ ստեղծելու մասին:

Կարագանդի ամայի անապատ տափաստաններում, Սիբիրում (Կուզբաս) սկսվեց նոր հանքահորերի և ածուխը տեղափոխող յերկաթուղիների կառուցումը: Խիստ կլիմայի դժվարին պայմաններում, ճանապարհների և ջրի բացակայության պայմաններում նոր ավազանների կառուցողները հսկայական հաջողություններ ձեռք բերեցին: Այդ նոր ավազաններն արդեն ստեղծված են և տալիս են տասնյակ միլիոն տոնն քարածուխ:

Առանձնապես մեծ են հաջողությունները Կուզբա-

սում, վորը Դոնբասից հետո յերկրորդ ածխային ավազանն ե: Կուզնեցկի ավազանի (Կուզբասի) քարածխի պաշարն ե 400 միլիարդ տոնն: Այդ պաշարը մոտ վեց անգամ ավելի յե Դոնբասի պաշարից: Ներկայումս Կուզբասում գործում են շատ հանքահորեր, վորոնցից ամենից խոշորը Պրոկոպեվի հանքահորն ե: Այդ հանքահորի ածխի շերտի հաստությունը 10-ից 16 մետր ե: Դա համարյա թե յերեք հարականի տան բարձրություն ե:

Ավելի արագ թափով գնում ե յերրորդ ածխային ավազանի շինարարությունը Կարագանդում (Կազակստան):

1930 թ. Կարագանդում հայտնվեցին քարածխի առաջին հետախույզները: Նրանք հայտաբերեցին ածխի հսկայական պաշարներ, վորոնք հասնում են 14 միլիարդ տոննի: Անցավ ընդամենը յերկու տարի. այժմ Կարագանդում կառուցված ե 36 հանքահոր: Կարագանդից անց ե կացված յերկաթուղի: Անապատ տափաստանում աճեց մի ամբողջ բանվորական քաղաք: Կառուցված ե ջրմուղ, ավարտված ե ելեկտրոկայանը և այլն:

Այս ավազանների հետ մեկտեղ ստեղծված ե նաև ածխի ավազան՝ Մոսկվայից վոչ հեռու: Չնայած ընդ-Մոսկովյան ածուխը վաղուց ի վեր հայտնի յեր, բայց նրա արդյունահանումը շատ չնչին եր: Այժմ ընդմոսկովյան ավազանը մեր յերկրին տալիս ե տարեկան մի միլիոն տոնն քարածուխ:

Ածխային արդյունաբերությունն ստեղծելու գործում մենք ձեռք բերինք այսպիսի մեծ հաջողություններ շնորհիվ այն բանի, վոր մենք ամենադժվարին աշխատանքները կատարեցինք մեքենաների ոգնությամբ:

Հին Դոնբասում ածխի հանումը կատարվում եր ձեռքով: Հանքափորը բրիչով (քլունգով) քանդում ու հանում եր միլիոնավոր տոնն քարածուխ: Այդ ածուխը ձեռքով եյին բեռնում վագոնները:

Նոր Դոնբասում տասնյակ հազարավոր հանքափորների փոխարեն ավտոմատ մուրճերի ոգնությամբ մե-

քենական փորիչները քանդում են ածուխը: Կոնվեյերով ածուխը շարժվում է դեպի վագոնետկաները. այստեղ բեռնատար մեքենաները հափշտակում են ածուխը և շպրտում վագոնետկաների վրա: Էլեկտրոքարշերը տանում են ածուխը դեպի վերամբարձ մեքենան: Ածուխը տեսակավորում է մեքենան՝ և մեքենական տեսակավորումից հետո այդ ածուխն ուղարկվում է Խորհրդային Միության բոլոր կողմերը: Բանվորը ղեկավարում է միայն մեքենայի աշխատանքը, հսկում է նրա գործողության վրա: Շնորհիվ մեքենաների գործողության, յուրաքանչյուր բանվորի ածխի հանումն ավելանում է 5—6 անգամ:

§ 37. ՆԱՎԹԻ ՀՆԳԱՄՅԱԿՆ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ Է ՅԵՐԿՈՒ ՅԵՎ ԿԵՍ ՏԱՐՈՒՄ

Ամեն տարի մեր յերկրի ավտոտրակտորային և ավտոմոբիլային գործարաններն արտադրում են հազարավոր տրակտորներ և ավտոմոբիլներ: Մենք կառուցում ենք աերոպլաններ և դիրիժաբլներ:

Հարկավոր է պողպատյա ձիերին ջրել, սնել աերոպլաններին, դիրիժաբլներին, ավտոմոբիլներին և շոգեշարժներին շարժվել: Դրա համար հարկավոր է նավթ: Նավթը մեզ հարկավոր է նաև արտասահման արտահանել (դուրս տանել), փոխարենը մեքենաներ ստանալու համար:

Ի՞նչ էր անցյալում իրենից ներկայացնում մեր նավթային արդյունաբերությունը: Ինչի՞ց պետք էր սկսել:

Անցյալում, մինչև հեղափոխությունը կապիտալիստներն աշխատում էին շուտափույթ կերպով որքան կարելի յե շատ նավթ ստանալ և այդպիսին արտաքին վաճառել: Նավթահորերի դրությունը և աշխատողների վաճառել: Նավթահորերի դրությունը և աշխատողներին բարելավելու մասին նրանք իսկի էլ չէին մտածում:

Նավթը հորերից հանում էին յերկար դույլերով (ժելոնկաներով), վորոնք կախված էին պարանից:

Ամբողջ օրը բանվորները փաթաթում և արձակում էին այդ խոնավ պարանը: Այսպիսի աշխատանքի մեջ բանվորները շատ շուտ էին ծերանում:

Շատ հաճախ էր պատահում, յերբ նավթը վողողում էր բոլոր նավթահորերն ու շատրվանները, հեղեղում էր շրջակայքի վայրերը և խառնվում էր ավազի հետ ու իզուր կորչում: Նավթի շատրվանները շատ հաճախ հրդեհվում էին. հրդեհները տևում էին ամբողջ շաբաթներ:

Այս վիճակում նավթային արդյունաբերությունը անցավ խորհրդային իշխանության:

Քաղաքացիական պատերազմի ժամանակ նավթահորերն ու նավթագործարաններն ամբողջապես համարյա, պապանձեցին: Սակայն հին բանվորները և առաջին հերթին կոմունիստները մնացին իբրև անփոխարինելի պահապաններ խորհրդային վիշկաների (նավթահոր) և գործարանների: Վոչ, քաղցը, վոչ ցուրտը չկարողացան խանգարել նավթարդյունաբերության վերականգնման համար մղվող համառ պայքարին:

Դժվարին էր ժամանակը: Նավթահորերի ու գործարանների քարուքանդ վիճակը մեծապես ազդում էր ամբողջ յերկրի տնտեսական կյանքի վրա:

Այդ ժամանակ Վլադիմիր Իլյիչ Լենինը գրում էր նավթագործ բանվորներին՝ «Թանկագին ընկերներ, յես հենց նոր լսեցի Ազնեֆթի*) մասին համառոտ հաշվետվությունը: Այդ դրության մեջ դժվարությունները քիչ չեն: Ուղարկելով ձեզ իմ ջերմ վողջույնը, խնդրում եմ մոտակա ժամանակներս ամեն կերպ աշխատեք դիմանալ: Հետագայում լավ կլինի: Հաղթությունը մենք պետք է ձեռք բերենք և ձեռք կբերենք ինչ կերպ էլ լինի: Կրկին ուղարկում եմ ձեզ լավագույն կոմունիստական վողջույնները»:

Լենինի այս նամակը թափահարեց նավթագործ բանվորներին: Ծավալվեց հերոսական պայքար նավթի

*) Ազնեֆթ—Ադրբեջանյան նավթ

համար: Ամեն տարի յերկրի խորքից հանվում եր ավելի ու ավելի շատ նավթ: Նավթագործները դիմանալ կարողացան. և վոչ միայն դիմանալ կարողացան, այլև սկսեցին նոր ձևով վերակառուցել նավթահորերը:

Չի կարելի այժմ ճանաչել հին նավթահորերը:

Այժմ այնտեղ աշխատանքը կատարվում ե մեքենաներով: Դույլերի փոխարեն նավթը հանվում ե խորը նասոսներով-խողովակներով: Խողովակների միջով նավթը լցվում ե մեծ նավթամանների (բակերի) մեջ: Բոլոր շատրվանները ծածկված են յերկաթյա ծածկոց-



ներով, վորոնք պաշտպանում են հրդեհներից: Բոլոր հանքահորերը ելեկտրիֆիկացման են յենթարկված: Յեղալի, ցեխի ու խառնիճաղանճության փոխարեն տիրում ե կարգ, կանոն և մաքրություն:

Նավթագործ բանվորները յերկու և կես տարում կատարեցին առաջին հնգամյակը. Ահա թե ինչպես զեկուցեցին բանվոր-նավթայիններն իրենց հաղթանակի մասին՝ «Թույլ չենք տա, վոր տրակտորներն ու գործարանները կանգ առնեն, առանց նավթի մնան: Նավթագործների Բաքվի ջոկատը պատրաստ ե նոր մարտերի, աճում ե Բաքվի հարվածայինների հարվածային զորությունը: Կուսակցության Կենտկոմի ղեկավարությամբ մենք կբերենք նոր հաղթանակներ»:

§ 38. ԴՆԵՊՐՈԳԵՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐԻ ՊԱՐԾԱՆՔՆ Ե

«Ելեկտրական եներգիայի արտադրության տեսակետից մենք բռնում եյինք ամենավերջին տեղը: Այժմ մենք շարժվել և գրավել ենք առաջին տեղերից մեկը»:

(ՍՏԱԼԻՆ

1920 թիվն եր: Յերկիրը գտնվում եր սովի ու քայքայման ճիրաններում: Այդ դաժան որերին կենսուրախ ձայնով հնչեցին Լենինի խոսքերը՝ յերկրի ելեկտրիֆիկացման մասին:

Լենինի Գոելռոյի պլանով նախատեսված եր կառուցել ջրի ուժով աշխատող մի շարք ելեկտրոկայաններ-



Դնեպրոգես

հիդրոկայաններ: Դրանց մեջ եր նաև այն հիդրոկայանը, վորը պետք ե կառուցվեր Դնեպր գետի վրա:

1927 թ. գարնանը Դնեպրի ափերին խփվեց առաջին բահը: Հնչեց գրանիտային ժայռերի առաջին պայթյունի ձայնը: Սկսեց շինարարությունը:

Շինարարության ավարտումը ծրագրված եր 1932 թ. դեկտեմբերի 1-ին:

Դնեպրոստրոյի առաջավոր հարվածայինների կողմից առաջադրվեց հանդիպական պլան՝ այն հաշվով, վոր ամբարտակի շինարարությունն ավարտվի ժամկետից կես տարի առաջ և 1932 թ. մայիսի 1-ին տրվի առաջին ելեկտրական հոսանքը:

1932 թ. մարտի վերջին ամբարտակի վրա լցվում է վերջին բետոնը, իսկ մայիսի մեկից Դնեպրյան ջրային ելեկտրոկայանը սկսում է աշխատել:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Դնեպրյան հիդրոկայանը:

Դնեպրոգեսի ամբարտակի յերկարությունն է 760 մետր, բարձրությունը հասնում է մինչև 60 մետրի, իսկ լայնությունը՝ 40 մետրի: Միայն ամբարտակի վրա ծախսված է յերեք քառորդ միլիոն խորանարդ մետր բետոն և մի միլիոն խորանարդ մետրից ավելի գրանիտային քարեր:

Ահա թե ինչպես կառուցում է կատարված Դնեպր գետի վրա: Ամբարտակը կառուցելու համար հարկավոր եր ջրատ, հորդ, աղմկարար գետից տեղ նվաճել: Դրա համար վարվում եյին հետևյալ կերպ. սարքում եյին գերաններից շատ մեծ վանդակներ, այդ վանդակները լցնում եյին քարերով և իջեցնում գետի հատակը. վանդակները վանդակների կողքին սեղմ իջեցնելով առաջվում եր հաստ պատ: Այս պատերով շրջապատում եյին ջրի վորոշ տարածություն: Շրջապատված տարածությունը նոր ջրի հոսանքից ազատ պահելու համար պատերն ամբողջությամբ ծածկում եյին միմյանց հետ ամրացրած պողպատյա փահաններով: Այնուհետև ելեկտրական ջրահաններով, վոր ժամը 5000 դույլ ջուր եյին հանում՝ դուրս եյին թափում պատերով շրջապատված տարածության ջուրը: Այսպես սկսեցին աշխատանքը յերկու ափերից միաժամանակ և ստիպեցին գետին մեջտեղի ազատ տարածությունից հոսել: Շուտով ծածկեցին նաև մեջտեղը, իսկ գետի ջուրը բաց թողեցին ամբարտակի վերին սանրաձև անցքերից:

Ջուրը բարձրացավ: Գոյացավ լիճ և վողողեց ափերը: Փոթորկալից և աղմկարար Դնեպրը խաղաղվեց Դնեպրն այդ պահից սկսած ծայրեծայր նավարկելի դարձավ:

Ելեքտրոկայանի շենքն աջ ափին է: Այդ

շենքը յերկու հարյուր մետր տարածություն ունի. նա միանում է ամբարտակին և միաժամանակ իրենից ներկայացնում է հաստ (խորը—հատակի մոտ) պարիսպ: Անսովոր մեծ ուժով ջուրը ճնշում է 18 դարպասների վրա, վորոնք բացված են հենց այդ ջրի համար: Դարպասների դիմաց դրված են իննը մեքենա (տուրբիններ)՝ հսկայական ուժի և մի մեքենա՝ ավելի փոքր զորությամբ: Այդ իննը մեծ տուրբիններից յուրաքանչյուրի աշխատանքը հավասար է 90 հազար ձիու աշխատանքի: Իննը տուրբինը տալիս է 810 հազար ձիու ուժի զորություն:

Պավել Որով

Նրանց մեծության մասին գաղափար կազմելու համար բավական է իմանալ այն, վոր մեկ մեծ տուրբինի քաշը 1640 տոնն է:

Տուրբիններից արտադրված ելեկտրականությունը հաղորդվում է 300 կիլոմետր հեռավորությամբ՝ շրջակայքի գործարաններին, հանքահորերին, ֆաբրիկներին, խորհտնտեսություններին և կոլտնտեսություններին: Ելեկտրոկայանի կողքին ավարտվում է յոթ խոշորադույն գործարանների կառուցումը:

Յերբ հարց առաջացավ Դնեպրոստրոյի մասին, աշխատավորության թշնամիները հեգնում եյին և իրար մխիթարում, թե բոլշևիկների մոտ վոչինչ դուրս չի

դա, թե Դնեպրի ուժը նրանք հաղթահարել չեն կարող:

Հաղթահարեցինք. դուրս յեկավ: Դնեպրը հաղթահարված է և այսուհետև խոնարհաբար ծառայելու յե սոցիալիստական տնտեսության կառուցման գործին:

Դնեպրը հաղթահարված է կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աշխատող շինարարների հերոսական ջանքերով: Ահա մեզ Դնեպրոստրոյի կառուցող բազմաթիվ հերոսներից մեկը՝ Պավել Իվանովիչ Որովը: Բանվոր, ջրասույզ: Դնեպրոստրոյում աշխատեց նրա աշխատանքների կազմակերպումից մինչև ավարտումը: Իր աշխատանքների ընթացքում ցուցաբերեց բացառիկ հերոսություն, վորը յերբեմն չատ վտանգում եր կյանքը: Իր կյանքից 1608 ժամ Որովն անց է կացրել ջրի տակ:

Ձմեռ եր: 24 աստիճան սառնամանիք: Աշխատանքները համարյա թե դադարել եյին, իսկ անպարտելի Որովը ջարդում եր սառույցը և աշխատում: Այդպես էլ պետք եր: Այդպես եր պահանջում շինարարությունը:

Հարվածային Պավել Իվանովիչ Որովն անձնուեր աշխատանքի համար, Դնեպրյան ելեկտրոկայանի շինարարության մեջ ցուցաբերած հերոսության համար պարգևատրված է Կարմիր աստղի շքանշանով:

Առաջին հնգամյակի ընթացքում կառուցված է վոչ միայն Դնեպրի հիդրոկայանը, այլև մի շարք ուրիշ խոշորագույն ելեկտրոկայաններ. դրանք են՝

Կաշիրի ելեկտրոկայանը
Գորկու ելեկտրոկայանը
«Կրասնի Օկտյաբր» (Լենինգրադում)
Զուևի ելեկտրոկայանը (Դոնբասում)
Խարկովի ելեկտրոկայանը
Չելյաբինսկի ելեկտրոկայանը
Մագնիտոգորսկի ելեկտրոկայանը.
Կուզնեցկի ելեկտրոկայանը
Բերեզնիկովի ելեկտրոկայանը

Ձորագեսի հիդրոկայանը
Օսինովի հիդրոկայանը (Բելոռուսիայում)
Ստալինգրադի ելեկտրոկայանը
Սարատովի ելեկտրոկայանը
Սամարայի ելեկտրոկայանը

§ 39 ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԱՃՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՏՐԱՆՍՊՈՐՏ

Լենինգրադի գործարաններին հարկավոր է Բաքվի նավթը: Բաքվի նավթարդյունաբերությանը հարկավոր է Սիբիրի անտառը: Ուրալին հարկավոր է Մոսկվայի և Իվանովի մարզերի մանուֆակտուրան: Մոսկվայի և Իվանովի գործարաններին հարկավոր է Ուրալի չուգունը:

Սիբիրց Ուրալ է ուղարկվում Կուզնեցկի ածուխը, իսկ Ուրալից Սիբիր է գնում Ուրալի յերկաթահանքը:

Հացը, ածուխը, բամբակը, նավթը, մետաղը, մեքենաները, անտառանյութը հաճախ պետք է փոխադրել հազարավոր կիլոմետր տարածություններ:

Մի վայրից մյուսը ապրանքներ ու մթերքներ տեղափոխելու համար հարկավոր են յերկաթուղիներ: Բեռների ժամանակին փոխադրելուց մեծ չափով կախված է նաև պլանների ժամանակին կատարումը: Մեզ յերկաթուղիներն անհրաժեշտ են նաև մեր Միության ծայրամասերում և խուլ վայրերում յեղած հսկայական հարստություններն օգտագործելու համար, հարստություններ, վորոնք միանգամայն անձեռնմխելի յեն մնացել:

Յերկաթուղիները հսկայական նշանակություն ունեն նաև մեր յերկրի պաշտպանության համար:

Ահա՛ թե ինչու կուսակցությունը և խորհրդային իշխանությունն այդքան մեծ ուշադրություն են դարձնում տրանսպորտի աշխատանքների վրա: Ահա՛ թե ինչու ընկ. Ստալինը կուսակցության 16-րդ համագումարում ասաց. «Խնդիրն այն է, վոր վերջապես բոլշևիկո-

րեն կպչենք տրանսպորտի գործին և այդ գործն առաջ շարժենք»:

Հնգամյակի ընթացքում մենք մեծ հաջողություններ ձեռք բերինք տրանսպորտի աշխատանքների մեջ: Աճում է տեղափոխվող բեռների թիվը:

Բեռնատար վագոնների թիվն ավելացել է 45 հազարով: Առաջին անգամ մեզ մոտ գործածության մեջ մտան էլեկտրոքարշ գնացքներ: Մենք արտադրում ենք հզոր շոգեքարշեր «ԻՍ» (ԻՈՍԻՖ ՍՏԱԼԻՆ) դրոշմով՝ Կոլոմնայի գործարանում և «ՖԴ» (Ֆելիքս Ձերժինսկի) դրոշմով՝ Լուգանսկի գործարանում:

Մենք կառուցեցինք մի շարք նոր յերկաթուղիներ՝ Թուրքսիբ, Բորովոյե—Ակմոլինսկ, Կարագանդա—Տրոիցկ, Օմսկ և այլն:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կառուցած յերկաթուղիներից ամենախոշորը Թուրքեստան-Սիբիրի (Թուրքսիբի) յերկաթուղին է: Այդ յերկաթուղային ճանապարհով Սիբիրը միանում է միջին Ասիայի հետ:

Այդ ճանապարհով Սիբիրից հաց, անտառանյութ, վառելիք և այլ ապրանքներ են փոխադրվում Միջին Ասիա, իսկ Միջին Ասիայից Սիբիր է փոխադրվում բամբակ: Այսպիսով Միջին Ասիան ազատված է իր դաշտերում հաց ցանելու անհրաժեշտությունից, այն դաշտերում, վորոնք շատ հարմար են իբրև բամբակի պլանտացիաներ:

30 տարի շարունակ ցարական Ռուսաստանում խոսակցություններ էյին լինում Թուրքեստան—Սիբիր յերկաթուղու կառուցման մասին: Այդ ճանապարհը միայն խորհրդային իշխանությունն որով կառուցեց: Ըստ պլանի, Թուրքսիբը պետք է ավարտեր 1931 թ. վերջին: Կառուցողների յեռանդը այդ ճանապարհի կառուցման ժամկետը կրճատեց 17 ամսով: 1930 թ. մայիսի 1-ին ճանապարհի շինարարությունն արդեն ավարտված էր: Ամբողջ 1661 կիլոմետր յերկարությամբ ճանապարհը կառուցվեց 3 տարում:

Միայն Խորհրդային իշխանությունն ըրով էր հնարավոր այդքան կարճ ժամանակամիջոցում միացնել այնպիսի խոշոր ռայոններ, ինչպիսին են Միջին Ասիան և Սիբիրը:

Չնայած իր ունեցած հաջողություններին, տրանսպորտը դեռ յետ է մնում ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումից:

Իսկ ինչո՞ւ. ի՞նչն է պատճառը. ո՞վ է մեղավոր:

Մեր տրանսպորտն ունի հետամնաց տեխնիկա: Մեր շոգեքարշերը բավականաչափ զորեղ չեն: Մեր վագոնների տարողությունը բավարար չէ, անբավարար է և մեր շոգեքարշերի վազքի արագությունը: Մենք էլեկտրոքարշ գնացքներ քիչ ունենք:

Տրանսպորտի աշխատանքներին խիստ հարվածեցին վնասարարները: Նրանք ոչնչացնում էյին գույքը, իբրև լոմ էյին հանձնում միանգամայն առողջ շոգեքարշերը, սարքում էյին գնացքի խորտակումներ, կազմում էյին տրանսպորտի համար կործանիչ պլաններ:

Վնասարար կազմակերպությունների գլուխ կանգնած էյին յերկաթուղիների հին տերերը, վորոնք հույս ունեյին յետ ստանալ այդ ճանապարհները: Վնասարարները ջախջախվեցին, բայց մինչ այդ, նրանք կարողացել էյին մեծ վնաս հասցնել տրանսպորտին:

Տրանսպորտին մեծ վնաս հասցրեց նաև դիմազուրկ յերթևեկությունը: Ի՞նչ է այդ նշանակում:

Ցուրաքանչյուր ճանապարհորդության ժամանակ շոգեքարշի համար նշանակվում էյին զանազան բրիգադներ: Նույնիսկ փոխվում էր բրիգադի կազմը—մեքենավար, հնոցապան և այլն:

Այդ պատճառով էլ շոգեքարշի համար վոչ վոք պատասխանատու չէր: Դրա հետևանքով շոգեքարշերն արագորեն փչանում էյին և գործածությունից հանվում: Տրանսպորտին մեծ վնաս հասցրեց նաև կառավարության (դիսցիպլինայի) անկումը: Ահա, օրինակ՝ Գուսարովկա կայարանից (Դոնեցի յերկաթուղի) ուղարկվում է ապրանքատար գնացք: Ճանապարհի վար-

պետը չի նախազգուշացնում, վոր յերկաթուղու վրա կանգնած է նորոգումների վագոնետկան: Առաջանում է խորտակում: Շոգեքարշը ռելսերից դուրս է ընկնում, ջարդուփշուր են լինում չորս մեծատար ապրանքային վագոններ: Ճանապարհները փակվում են մի քանի ժամ: Շատ գնացքներ ուշանում են, իսկ մի քանիսն էլ չեն ուղարկվում:

Ահա՛ թե ինչու, չնայած խոշոր հաջողություններին, տրանսպորտը դեռևս յետ է մնում ամբողջ ժող. տնտեսության զարգացումից:

§40. ՏՐԱԿՏՈՐԻՆ ՅԵՎ ԱՎՏՈՄՈԲԻԼԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԼԱՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Տրակտորին և ավտոմոբիլին հարկավոր են լավ ճանապարհներ: Լավ ճանապարհներ պետք են և ձիուն:

Ցարական Ռուսաստանը համարյա թե ամբողջովին զուրկ էր ճանապարհներից: Յեղած ճանապարհները, շնորհիվ անասելի ցեխի, գարնանն ու աշնանն անանցանելի էյին դառնում: Յերկաթուղիներից հեռու գտնվող քաղաքներն ու գյուղերը կտրված էյին ընդհանուր կյանքից: Իսկ մեզ մոտ՝ Հայաստանում ճանապարհների պակասն ավելի սուր էր զգացվում:

Խորհրդային յերկրում առաջին հնգամյակի տարիներին անց են կացված հարյուր հազարավոր կիլոմետր նոր խճուղային և այլ ճանապարհներ, կառուցված են հազարավոր նոր կամուրջներ: Այնուամենայնիվ մեզ մոտ լավ ճանապարհները բավական չեն: Իսկ վատ ճանապարհը, չսարքված կամուրջները խանգարում են հացի, բամբակի, կանեփի տեղափոխությանը կոլտնտեսական և խորհտնտեսական դաշտերից: Այդ խանգարում է նաև գյուղ ուղարկվելիք ապրանքների տեղափոխությանը:

Վատ ճանապարհները, չսարքված կամուրջներն ոժանդակում են տրակտորների, ավտոների, սայլերի ջարդվելուն, ձիերի վնասվելուն և այլն: Ճանապարհի

բացակայությունը աշխատավոր գյուղացիությանը կտրում է քաղաքից–կուլտուրայից:

Ահա՛ թե ինչու մեր յերկրում մեծ ուշադրություն է դարձվում լավ ճանապարհների շինարարության վրա:

§ 41. ՀՆԳԱՄՅԱԿԸ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽԵՑ ՅԵՐԿՐԻ ԴԵՄՔԸ

Անցավ վոչ թե հինգ տարի, այլ միայն չորս տարի և ահա՛ մեր առջև է ԽՍՀՄ–ի նույն քարտեզը: Բայց վորքան փոխվել է յերկրի դեմքը: Աստղիկները, քառակուսիները, յեռակյունիները, ոձաձև գծիկները վեր են ածվել յերկաթբետոնային, պողպատյա, քարե հսկաների:

Կարմիր ոձաձև գծիկների փոխարեն քարտեզի վրա նոր ռելսերով վազեցին հանքերի, ածխի, հացի, մեքենաների հեղեղներ և հենց այն ուղղությամբ ու այնտեղից, ուր նրանց ուղեգիր էր տրված: Բարձրանում է հսկայական յերկիրը, վոր հագել է քար, բետոն ու պողպատ:

Ահա խուլ, անանցանելի Սիբիրը: Այստեղ ցցվել է ընկ. Ստալինի անվան հսկա մետաղաձուլական գործարանը: Մենք հնգամյակը թևակոխեցինք 62 գործող դոմնաներով, իսկ հնգամյակի վերջում գործում է 102 դոմնա:

ԽՍՀՄ–ը չուգունի ձուլմամբ այժմ գրավում է Յեվրոպայում առաջին, իսկ աշխարհում՝ յերկրորդ տեղը:

Առաջին հնգամյակի հիմնական վառելիքային բազան է Դոնբասը: Այժմ նախկին Դոնբասն անճանաչելի յե: Այստեղ վոչ միայն կառուցված են տասնյակ նոր հանքահորեր, այլև հին հանքահորերը վերակառուցված են: Միաժամանակ նոր հանքահորեր են աճել Կուզբասում, Կարագանդում, Մոսկվայի մոտ ավազանում և այլ տեղերում:

Նավթի հնգամյակն իրագործվեց յերկու և կես

տարում: Նավթահանման գծով մենք աշխարհում գրավեցինք յերկրորդ տեղը:

Ելեկտրոկայանները հիմնական միջոցներ են ամբողջ տնտեսությունը նոր ձևով վերակառուցելու գործում: Չորս տարում կառուցված են 17 նոր ելեկտրոկայանները, նրանց թվում նաև Լենինի անվան Դնեպրի ելեկտրոկայանը:

Կուսակցության 14-րդ համագումարն ընկ. Ստալինի զեկուցման առթիվ ցուցմունք տվեց վերակառուցել յերկրի տնտեսությունն այնպես, վոր ԽՍՀՄ-ը մեքենաներ ներմուծող յերկրից վերածվի մեքենաներ արտադրող յերկրի:

Յերկիրն ամուր մտաբերում եր այդ ցուցմունքը:

ԽՍՀՄ-ում ստեղծված են հսկայական մեքենաշինական գործարաններ: Մենք սովորեցինք ինքներս կառուցել հզոր շոգեքարշեր, մեծ բեռնատար վագոններ: Մենք սովորեցինք կառուցել տրակտորներ և ավտոմոբիլներ: Մեր տրակտորային գիգանտները (հսկաները)—Ստալինգրադի, Խարկովի և Չելյաբինսկի տրակտորային գործարաններն աշխարհում չունեն իրենց հավասարը: Մենք ինքներս սկսեցինք կառուցել կոմբայններ: Գյուղատնտեսական մեքենաշինությամբ մենք գրավեցինք առաջին տեղն աշխարհում:

Այժմ չկա այնպիսի մեքենա, վոր անհնար լիներ կառուցել խորհրդային գործարաններում — խորհրդային նյութերից:

Առաջին հնգամյակը կատարված ե չորս տարում: Այս ամբողջը բանվոր դասակարգի հերոսական աշխատանքի արդյունքն ե, վորին ղեկավարում ե կոմունիստական կուսակցությունը և նրա առաջնորդ ընկ. Ստալինը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ նշանակություն ունի Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը մեր արդյունաբերության զարգացման համար:

2. Առաջին հնգամյակի ընթացքում մեր յերկրում ինչպիսի տրակտորային, ավտոմոբիլային և գյուղատնտեսական մեքենաշինության գործարաններ են կառուցված:
3. Ի՞նչ նվաճումներ են ձեռք բերված առաջին հնգամյակում ածխային արդյունաբերության մեջ:
4. Ի՞նչ նվաճումներ ունի նավթարդյունաբերությունն առաջին հնգամյակում:
5. Ի՞նչ հաջողություններ են ձեռք բերվել առաջին հնգամյակում յերկրի ելեկտրիֆիկացման գործում:
6. Ի՞նչ հաջողություններ են ձեռք բերել առաջին հնգամյակում տրանսպորտի ասպարեզում:

§ 42. ԱՆԸՆԴՀԱՏ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Ե ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք կարող ենք պարծենալ վոչ միայն արդյունաբերության բնագավառում ձեռք բերած հաջողություններով, այլև բանվորների նյութական պայմանների բարելավման տեսակետից:

Խորհրդային յերկրում իսպառ վերացված ե գործազրկությունը:

Մեր բանվորներն արդեն մոռացել են գործազրկության մասին, մոռացել են այն անվստահության մասին, թե վաղն արդյո՞ք աշխատանք կունենան, թե՞ վոչ:

Մեր յերկրի բանվորներն արդեն գիտեն, վոր վաղվա որը նրանց վիճակված ե կատարելապես մեծ աշխատանք— նոր՝ ավելի խոշոր ֆաբրիկներ ու գործարաններ կառուցել: Առաջիկայում նույնպես սպասվում ե բնակարանների, ակումբների, դպրոցների, հիվանդանոցների, մանկապարտեզների, մսուրների և այլն կառուցում: Դա խոշոր նվաճում ե, վորի մասին կապիտալիստական յերկրների բանվորները յերազել անգամ չեն կարող:

Մեզ մոտ վոչ միայն գործազրկություն չկա,

այլև ամեն մի ընտանիքում ավելանում է աշխատավոր ձեռքերի թիվը: Վորոշ ընտանիքներում, ուր առաջ աշխատում եր մի մարդ, այժմ աշխատում են յերկուսը—յերեքը: Հետևաբար, բարելավվում ե յուրաքանչյուր առանձին ընտանիքի նյութական դրությունը:

Ցարական Ռուսաստանում բանվորներն աշխատում եյին որական 10—12 ժամ: Հոկտեմբերյան հեղափոխությունն անմիջապես սահմանեց ութժամյա բանվորական որ: Առաջին հնգամյակի վերջում մեր փաբրիկների ու գործարանների բանվորներն արդեն աշխատում են որական 7 ժամ:

Բարձրացել է բանվորների աշխատավարձը. 1928 թ. բանվորների տարեկան միջին աշխատավարձը կազմում եր 703 ռ., իսկ 1932 թվին՝ 1356 ռ. (ըստ հնգամյակի, նա պետք ե դառնար միայն 994 ռ.): Այսպիսով հնգամյակն աշխատավարձի բարձրացման գծով գերակատարված ե:

Աշխատավարձը տրվում ե անմիջապես բանվորի ձեռքը: Սակայն, բացի դրանից, մեր յերկրում գոյություն ունեն մի շարք լրացուցիչ միջոցներ, վորոնք նրմանապես տրամադրվում են հոգուտ բանվորների նյութական դրության բարելավման:

Վերցնենք սոցիալիստական ապահովագրությունը. Յերբ բանվորը հիվանդանում ե, սոցապահովագրական բաժինը վճարում ե նրա աշխատավարձը: Սոցապգանձարկղը կազմակերպում ե հանգստյան տներ, կուրորտներ, սանատորիաներ, վորտեղ ամեն տարի գնում են հարյուր հազարավոր բանվորներ, ծառայողներ և կոլտնտեսականներ: Իսկ վորքա՞ն բուժարաններ, դեղատներ, հիվանդանոցներ ձրիաբար սպասարկում են բանվորներին, ծառայողներին և աշխատավոր գյուղացիներին: Այս ամենը բարելավում ե աշխատավորների նյութական դրությունը:

Ցարական Ռուսաստանում բանվորների սոցիալական ապահովագրություն ամենևին չկար:

Այն աննշան նպաստները, վոր բանվորները ստա-

նում եյին, գոյանում եր նրանց իսկ սեփական աշխատավարձի մուծումներից:

Իսկ մեզ մոտ տարեցտարի ավելի և ավելի շատ միջոցներ են բաց թողնվում սոցիալական ապահովագրության համար: Վերջին յոթ տարվա ընթացքում սոցիալական ապահովագրության ծախսերն ավելացել են հինգ անգամ:

Խորհրդային պետությունը տասնյակ միլիոն ռուբլիներ ե բաց թողնում աշխատանքի պաշտպանության համար: Փաբրիկներում և գործարաններում կառուցված են հզոր քամհարներ (օդափոխ մեքենաներ), մեքենաների տակն ընկնելուց պաշտպանող կառուցումներ և զանազան հարմարություններ, վորոնք աշխատանքը դարձնում են անվտանգ: Դրա հետևանքով դժբախտ պատահարների թիվը մեծ չափով իջնում ե:

Մեր օրենքները հատուկ ուշադրություն են դարձնում կանանց աշխատանքի պաշտպանության վրա: Յերեխայի ծննդի ժամանակ կինն ազատվում ե չորս ամսվա արձակուրդով: Յերեխային կերակրելու համար մոր որական յերկու անգամ վորոշ ժամանակով ազատ են թողնում աշխատանքից:

Խորհրդային օրենքները միանգամայն արգելում են 16 տարեկանից ցածր տարիք ունեցողների աշխատանքը: 16—18 տարեկան բոլոր անչափահասներն աշխատում են որական 6 ժամ: Անչափահասներին միանգամայն արգելված ե գիշերային, արտաժամյա և ստորերկրյա բոլոր տեսակի աշխատանքները:

Վիթխարի յեն մեր հաջողությունները նաև բանվորների բնակարանային շինարարության ասպարեզում: Դոնբասում, Բաքվի և Գրոզնու նավթային արդյունաբերության մեջ աճել են նոր քաղաքներ:

Առաջին հնգամյակի ընթացքում խոշորագույն գործարանների և ելեկտրոկայանների շուրջը կառուցված են մի քանի տասնյակ միանգամայն նոր քաղաքներ. դրանք են՝ Մագնիտոգորսկը, Նոր Զապորոժյեն, Ստալինսկը, Կարագանդը և ուրիշները: 85 քաղաքնե-

րում կառուցված է ջրմուղ: 16 քաղաքներում անց է կացված տրամվայ (ելեկտրոքարշ):

Մեր նվաճումներն այնքան մեծ են, որ մինչև անգամ մեր թշնամիները չեն կարողանում չնկատել այս:

Ահա՛ թե ինչպես է նկարագրում մեր բնակարանային շինարարությունը ֆրանսիական թերթում մի ֆրանսիացի կապիտալիստ, որ այցելել եր ԽՍՀՄ.

«Քաղաքի փողոցներում ավտոմոբիլով տասը րոպեյի պտույտը բավական է համոզվելու համար, որ ԽՍՀՄ մայրաքաղաքն ունի մեծ կառուցումի կերպարանք: Ամենուրեք բարձրանում են ամերիկյան տիպի կառուցումներ, վորոնք իսկույն հագել են բետոն:

Մոսկովյան այդ տեսքը կրկնվում է ամբողջ Միության վիթխարի տերիտորիայում՝ Խարկովից Սևաստոպոլ, Յալթա, Բաթում, Թիֆլիս, Վլադիկավկազ, Ռոստով, Ստալինգրադ, Սարատով, Լենինգրադ, յեթե խոսենք միայն այն քաղաքների մասին, որ յես կարողացել եմ տեսնել: Ամենուրեք աճում են նոր շենքեր»:

Աշխատավորների նյութական դրությունը բարելավում է նաև հասարակական սնունդը:

Այն, ինչ հնգամյակում ծրագրված եր հասարակական սնունդի համար, գերակատարված է վեց անգամ: Ամբողջ յերկրում յուրաքանչյուր 100 բանվորից հասարակական ճաշարաններում կերակրվում է 70 հոգի: Սակայն չե՞ որ բանվորից զատ, ճաշ կամ նախաճաշ են ստանում նաև նրա յերեխաները, վորոնք սովորում են դպրոցներում, կամ գտնվում են մանկապարտեզներում և մսուրներում:

Պատմում են բանվորները. Մոսկվայի «Դինամո» գործարանի բանվորները, համեմատելով իրենց դրությունը կապիտալիստների որոք և խորհրդային իշխանության որոք, ասում են.

«Վաղուց անցել են հին Սիմոնովկայի*) ժամանակները — տասնյակ խղճուկ փայտաշեն տնակներով, անանցանելի ցեխով, պանդոկներով, հարբեցողությամբ, ծեծով և Սիմոնովկայի յեկեղեցու զանգակների ղողանջներով:

*) Սիմոնովկան բանվ. ավան եր Մոսկվայի ծայրամասում:

Ցերեկասարդությունը քիչ բան գիտի այդ ժամանակների մասին: Այս հիշողություններն ապրում են միայն ծերունիների գլխում: Իսկ հիշելու շատ բան կա:

Դժվար եր բանվորների կյանքը Սիմոնովկա ավանում նախքան հեղափոխությունը—հոգնատանջ 12—14 ժամյա բանվորական որ, աշխատանքի ցածր վարձատրություն, մեծ ընտանիք, ընտանիքում մի աշխատավոր ձեռք:

Իսկ վոր գլխավորն է, մոտերքում կար պանդոկ և յերկու-յերեք գարեջրատուն: Բանվորն այնտեղ եր անցակցնում իր ազատ ժամանակը:

Դրանք եյին բանվորական Սիմոնովկայի ամբողջ հաճույքի վայրերը:

Կիրակի օրերը զվարճանում եյին հարբեցողությամբ, կամ թե սրբերի կյանքից նկարներ ցույց տալով: Բանվորներին ամեն միջոցով գրավում եյին դեպի յեկեղեցի:

Սիմոնովկայի փոխարեն այժմ գոյություն ունի Լենինյան սոցավան:

Լենինյան սոցավան նոր բանվորական քաղաք է: Ամենուրեք ասֆալտած փողոցներ, վորոնք խաչաձևվում են տրամվայի գծերով: Ցերթևեկում են ավտոբուսներ, վորոնք կառուցված են մեր հարևան գործարանում՝ ընդ. Ստալինի անվան գործարանում: Իսկ չե՞ որ հին ժամանակ այդ բոլորը չկար: Մութն ընկնելուն պես այստեղ խավարն եր պատում: Իսկ հիմա ամենուրեք եվրոպական ճաշեր են մատուցում:

Գործարանի շուրջն այժմ բարձրացել են հինգ-վեց հարկանի բանվորական բնակելի շենքեր:

Սիմոնովկայի յեկեղեցու տեղ այժմ կառուցված են կուլտուրայի պալատի շենքերը: Այդ պալատում գործում է յերեք հազար մարդու տարողություն ունեցող կինո-թատրոնը:

Բանվորների համար կառուցված է Մոսկվայի լավագույն բաղնիքը, որ ունի լողանալու համար հատուկ ավազան:

Կառուցված է մեխանիկական լվացքատուն, սարքված է մեծ հրապարակ՝ ստադիոն՝ 5–6 հազար մարդու համար: Շինված է սեփական ջրակայան: Ունենք ամառային թատրոն, բազմահարկ խանութներ: Բացվել են ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցի ուսումնական շենքերը և արհեստանոցները, ուր այժմ սովորում են 2500 հոգի: Կառուցված է դըպրոց 3 հազար յերեխայի համար:

Գործարանն այժմ ունի յերկու կաթնատնտեսական ֆերմա, անասնապահական տնտեսություն, խոզաբուծական տնտեսություն, մեծ ճագարաբուծական տնտեսություն, ունի իր ագարակները:

Գործարանային ճաշարաններում ամեն օր կերակրվում է 11·500 մարդ:

Որ կողմ նայես, տեսնում ես, որ մենք աճում ենք: Աճել է մի ամբողջ քաղաք, իսկ այնտեղ ստեղծվել է մի նոր բանվորական կյանք»:

Բանվոր Ժուկովը հետևյալն է պատմում Դոնբասի կյանքից. — «Տասնինը տարեկան եյի, յերբ յես այստեղ յեկա և ընդունվեցի № 1 հանքահորն իբրև սահնակապան: Այդ հանքահորն այն ժամանակ պատկանում եր Ստեբելևին, մեկը, որին ամբողջ կյանքում մտաբերելու յեմ:

Նա տզրուկի պես բանվորներից քամում եր նրանց ամբողջ ուժը:

Սահնա՞կ ... Այժմյան յերիտասարդությունն իսկի հասկացողություն էլ չունի, թե ինչ բան է սահնակը: Վերջին տարիները նրանք բոլորովին անհետացել են Դոնբասից. կարծես գետնի տակն են անցել: Այժմ դրանց փոխարեն ածուխը փոխադրում է մեքենայական կոնվեյերը, իսկ առաջ մարդիկ իրենք եյին քաշում տանում, դրա համար էլ ամենից շատ սահնակապանների

կարիք կար հանքահորերում: Դա սպանիչ, ուղղակի դժոխային, տանջալից աշխատանք եր:

Օրական 12 ժամ եյինք աշխատում: 12-ժամյա բանվորական օրից հետո գնում ես «տուն»—խոնավ, ցածր, հեղձուցիչ գետնափոր տնակը: Քնում եյինք յերկհարկանի կեղտոտ տախտակամածների (նառերի) վրա, կամ թե գետնի վրա, ինչպես հարմար եր լինում: «Շան քաղաք» — այսպես եյին անվանում հանքափորներն իրենց հանրակացարանը:

Հանքափորն ստանում եր ամսական 22 ռ.: Այդ գումարով նա պիտի թե՛ ինքն ապրեր, և թե իր ընտանիքին կերակրեր: Մութ ու դառն եր հոսում կյանքը:

— Այժմ մեր բանվորական իշխանության ժամանակ այլ է կյանքը: Հիմա հեշտ է:

Այնտեղ, ուր մեր ժամանակ հեհեսյով, կռացած, մինչև մահ քաշում եյին սահնակապանները, այժմ, որհնվի մեքենան, նա ինքն է անում: Աշխատում ենք միայն 6 ժամ: Աճել ու բարձրացել են նոր բանվորական ավաններ՝ լուսավոր բնակարաններով, բաղնիքներով, ճաշարաններով, ակումբներով, հիվանդանոցներով, դպրոցներով ու կուլտուրայի պալատներով:

Հանքափորներն իրենց արձակուրդն անց են կացնում առողջարաններում և հանգստի տներում:

Կապիտալիստների օրոք իր վարած կյանքի մասին հիշում ու պատմում է Կարագանդի բանվոր կոզակ Նուխան Սեդոյինովը.

— Ապրում ու սողում եյի գետնի տակ — ասում է նա — վճարում եյին ինձ օրական 20—40 կոպեկ: Յերբեմն հասարակ բլուզ չեր լինում, որ ուսերիս գցեմ: Ձմեռը ոտաբոբիկ եի ման գալիս:

Նուխան Սերդոյինովն այժմ 56 տարեկան է. նա հարվածային է. իր լեզվով նա խոսում է լավ և համոզեցուցիչ, իսկ ռուսերեն վատ է խոսում: Նա գրագետ չէ, ոչ ռուսերեն, ոչ էլ կազակերեն:

— Այդ չեմ հասցրել: Մինչև հեղափոխությունն

ինձ գետնի տակ էյին պահում. այն ժամանակ լիկկայան չկար: Այդ հիմա չէ, որ լիկկայան կա:

— Այժմ սովորում եմ: Ճիշտ է, դժվար է, ծեր եմ — ժպտում է Սերգոլինովը — բայց վոչինչ, կսովորեմ: Իմ տղան լավ է սովորում: Նա մեխանիկ է դառնում: Նա ձրիաբար է սովորում, իսկ մեր ժամանակ դպրոցն ավարտելու համար հարկավոր էր յեզների մի ամբողջ նախիր ունենալ: Սովորում էյին միայն հարուստների յերեխաները, իսկ բանվորների ու աղքատների յերեխաները հնարավորություն չունեյին.

Հիմա Կարագանդում սովորում են թե՛ յերեխաները և թե մեծահասակները:

Դնեպրոգեսի կողքին բարձրացավ մի նոր քաղաք. Հարյուրավոր գեղեցիկ բազմահարկ քարաշեն տներ [illegible]ում են ժամանակավոր բարակներին (ժամա- կ[illegible] չենքերին):

Նախկին ամայի, մերկ տափաստանն անճանաչելի յե դառել: Քանոնի պես ուղիղ փողոցները ծածկվում են կոկիկ ասֆալտով: Մայթերի մեջտեղով անց է կացված գանդրավոր ծառ[illegible] և ն[illegible] կանաչազարդ չերտ: Տների միջև յեղած տարածություններում սարքված են փոքրիկ պարտեզներ՝ ծառերով, կանաչով և ծաղիկներով: Ստեղծված են նոր կինո և թատրոններ: Ֆաբրիկ-խոհանոցը օրական տալիս է 8 հազար ճաշ: Բայց չէ՞ որ միայն հինգ տարի առաջ այս գետափերին ավազներից, ժայռերից ու նապաստակներից բացի ուրիշ վոչինչ չեյին տեսնում:

Ահա և նոր Բաքուն — կարմրադրոշ պրոլետարիատի քաղաքը. Բաքվի բանվորներին ցարական իշխանությունից ծանր ժառանգություն մնաց:

Թրքական բնակչությունը համարյա թե ամբողջովին անգրագետ էր: Բանվորների բնակարանները կեղ-

տոտ ու իրար վրա կուտակված տնակներ էյին: Չկար վոչ ջրմուղ, վոչ էլ կոյուղի:

Պրոլետարական գրող Մաքսիմ Գորկին, վոր առաջին անգամ Բաքվում յեղել է 1892 թ., այսպես է նկարագրում այն ժամանակվա Բաքուն:



Նոր բանվորական ավան Բաքվում

«Յես մարդկային բնակարանների շուրջը յերբեք չեյի տեսել այնքան շատ կեղտ ու թափթփուկ, սենյակներում այնքան առանց ապակու պատուհաններ և այդքան վողորմելի աղքատություն, սենյակներ, վորոնք նման էյին քարայրերի:

Պատուհաններում վոչ մի ծաղիկ, իսկ շրջակայքում վո՛չ մի կտոր հող, վոր ծածկված լիներ խոտով, վոչ մի ծառ, վոչ մի թփուտ:

Ցավալի յեր նայել կիսամերկ յերեխաներին, վորոնք վոտքերով տրորում էյին ճահճացած տիղմը, կամ թե թմբած նստած էյին բնակարանների շեմքերին»:

Բաքվի բանվորները դառնալով քաղաքի տերը՝ փոխեցին քաղաքի ամբողջ կերպարանքը և նրան դարձրին անճանաչելի: Ընդմիշտ անհետացավ Բաքվի այն տեսքը, վոր նկարագրել էր Մաքսիմ Գորկին: Նավթահորերի մոտերքում, կանաչ պարտեզներում աճեցին բանվորական նոր ավաններ՝ լուսավոր և լայնարձակ բնակարաններով: Այդ բնակարաններում ապրում են նավթագործ բանվորները, նրանք, վոր կատարեցին հնգամյակը յերկու և կես տարում:

Ավաններում անց ե կացված ջրմուղ, կոյուղի և տրամվայ։ Ելեկտրական յերկաթուղին միացրել ե Բաքուն նավթահորերի հետ։ Բաքվի փողոցները ծածկված են ասֆալտով։ Սքանչելի ասֆալտած ճանապարհները Բաքու քաղաքը միացնում են նավթահորերի հետ։ Կառուցված են ֆաբրիկ-խոհանոցներ, հացի գործարաններ։

Դպրոցական հասակի բոլոր յերեխաները սովորում են դպրոցներում. մեծահասակ բնակչությունն ամբողջովին գրագետ ե դարձել։ Կառուցված են կուլտուրայի լավ սարքավորված տներ, ակումբներ։ Բաքվում մինչև հեղափոխությունը կար մի ԲՈՒՀ (բարձրագույն ուսումնական հաստատություն), իսկ այժմ կա տասն և հինգ բարձրագույն դպրոց։

Մեր հաջողությունները ուրախություն են պատճառում կապիտալիստական յերկրների բանվորներին։

Ահա՛ թե ինչ ե ասում Բելգիայից մեզ մոտ՝ ԽՍՀՄ յեկած բանվորների պատգամավորությունը.

— Մենք հիացած ենք այն հսկայական շինարարությամբ, որ տեսանք մեր ճանապարհորդության ժամանակ։

Մոսկվայում, ինչպես և Մակեևկայում, Գորլովկայում, Խարկովում, Լենինգրադում մենք կարողացանք տեսնել, թե ինչպիսի՛ վոգևորությամբ են այնտեղ աշխատում։

Բոլոր մեքենաները նորագույն կառուցվածքի յեն։ Գործարաններում մաքրություն ե, առատ ոդ և լույս։ Մենք տեսանք, թե ինչպես ԽՍՀՄ-ում բանվորներին տրվում ե բժշկական ու սանիտարական ոգնություն։

Բանվորական բնակարանները կառուցված են գործարաններին մոտիկ։ Բանվորական ավաններում կազմակերպված են դպրոցներ ու մսուրներ, յերեխաներին ցույց ե տրվում ամենաուշադիր խնամք։ Մենք կարողացանք տեսնել հին և նոր կառուցված գործարանների, հին և նոր բնակարանների զանազանությունը։

Այն ամենն, ինչ մենք տեսանք, մեզ տվեց պարզ պատկերացում աշխատավորության հսկայական ուժի մասին, աշխատավորություն, վոր կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կառուցում ե նոր հասարակություն։

Մենք ԽՍՀՄ-ում տեսանք կուլտուրական մեծ վերելք այն ժամանակ, յերբ ուրիշ յերկրներում տիրում ե անկում բոլոր բնագավառներում, տիրում ե գործազրկություն։

Մենք կարողացանք տեսնել, թե ի՛նչ սարսափելի դժվարությունների յեն հանդիպում խորհրդային աշխատավորներն իրենց ճանապարհին։ Մենք դրանով ավելի՛ յենք հասկանում այն պարծանքը, վորով նրանք մեզ ցույց են տալիս իրենց հաղթանակը։ Մենք համոզված ենք, վոր նրանք կհաղթահարեն բոլոր խոչընդոտները։

§ 43. ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԴԵՊԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Չնայած աշխատավորության նյութական դրության բարելավման գործում մենք ձեռք ենք բերել հսկայական նվաճումներ, բայց և այնպես մենք դեռ չենք հասել այն բանին, վոր լրիվ բավարարենք մեր յերկրի բանվորների ու գյուղացիների պահանջները։ Մենք դեռ լրիվ չենք կարող բավարարել աշխատավորների հագուստի, կոշիկի և այլ պահանջները։ Մեզ մոտ դեռ զգացվում ե մսի, ճարպերի և այլ մթերքների պակաս։

Իսկ ինչո՞ւ յե այդ այդպես։

Նրա համար, վոր մենք պետք ե առաջին հերթին մեր յերկիրը դարձնեյինք կապիտալիստական յերկըրներից անկախ։

Մի մասն այն միջոցներից, վոր մենք ծախսում եյինք կապիտալիստական յերկրներից մեքենաներ ու գործարանային սարքավորում գնելու վրա, մեր գի-

ցանտ գործարանների կառուցման վրա, կարող էյինք, իհարկե, ծախսել տեքստիլ և կոշկի ֆաբրիկներ կառուցելու վրա, արտասահմանից բամբակ, կաշի, բուրդ ներմուծելու վրա: Մենք այն ժամանակ կունենայինք ավելի՛ շատ չիթ, կոշիկ, հագուստ:

Բայց այն ժամանակ մենք չէյինք ունենա վոչ տրակտորային և վոչ էլ ավտոմոբիլային արդյունաբերություն: Մենք չէյինք ունենա մետաղաձուլական գործարաններ, հետևաբար չէյինք ունենա մետաղներ՝ տրակտոր ու մեքենաներ պատրաստելու համար: Դրա հետևանքով էլ մենք կմնայինք կապիտալիստական յերկրներից կախում ունեցող յերկիր:

Տրակտորային արդյունաբերության, գյուղատնտեսական մեքենաշինության գործարանների բացակայությունը մեզ կզրկեր գյուղատնտեսությանը տրակտորներ և գյուղատնտեսական մեքենաներ մատակարարելու հնարավորությունից: Այդպիսով մեր գյուղատնտեսությունն առաջվա պես կմնար հետամնաց. այլ կերպ ասած՝ մենք կմնայինք առանց հացի:

Առանց ծանր արդյունաբերության մեր Կարմիր բանակը յերկրի պաշտպանության համար կմնար բարձր սպառազինությունից զուրկ: Ամեն րոպե կապիտալիստները կարող էյին մեզ տրորել, արյան մեջ թաղել մեր բոլոր նվաճումները և դաժանորեն ճնշել բանվորներին ու գյուղացիներին:

Ահա՛ թե ինչու մեր յերկրի աշխատավորները չգնացին այդ ճանապարհով, այլ ընտրեցին ինդուստրացման ուղին՝ վորը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղին: Ահա՛ թե ինչու, չնայած դժվարություններին, չնայած սպառման այս կամ այն ապրանքի պակասին, մեր յերկրի աշխատավորները հերոսական պայքար են մղում հանուն մեր տնտեսության նորանոր հաղթանակների:

Մեր յերկրի բանվորները լավ գիտեն, վոր այն հսկայական ծրագիրը, վոր իրագործում են իրենք իրենց իսկ սեփական հարազատ գործն է:

Նրանք տեսնում են, վոր միայն խորհրդային իշխանության ժամանակ է տարեցտարի բարելավվում աշխատավորների նյութական դրությունը, վոր հենց իրենցից է կախված այդ բարելավումը:

Նրանք գիտեն, վոր հեռու չէ այն ապագան, յերբ մեր յերկրի աշխատավորները վոչ մի բանի պակաս չեն զգա:

Այդ չի նշանակում, թե մեր յերկիրը աշխատավորներին լայն սպառման առարկաներ մատակարարելու գործում վոչ մի նվաճում չի ունեցել: Մենք արտադրում ենք շատ ավելի չիթ, կոշիկ, հագուստ, քան ցարական Ռուսաստանը: Բայց բանվորների ու կոլտնտեսականների պահանջը նույնպես շատ և շատ է բարձրացել, դրա համար էլ արտադրվող ապրանքները դեռ չեն բավականացնում:

Աշխատավորների մատակարարումը շատ մեծ չափով կախված է այն բանից, թե ինչպե՛ս են աշխատում մեր կոոպերատիվները, կարողացե՞լ ենք արդյոք կոոպերացիայից դուրս անել անհարազատ մարդկանց, վորոնք այնտեղ են մտել մի նպատակով, այն է՝ գողանալ ավելի մեծ կտոր և քայքայել աշխատավորության մատակարարումը: Աշխատավորները պետք է աչալուրջ հսկեն մատակարարման որգանների (հիմնարկների) աշխատանքի վրա և անխնա դուրս վռնդեն այնտեղից մեզ ոտար մարդկանց:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպիսի նվաճումներ ունենք աշխատավորների նյութական դրության բարելավման գործում:

2. Ինչո՞ւ կուսակցությունը և խորհրդային իշխանությունն առաջին հերթին զարկ էյին տալիս ծանր և վոչ թե թեթև արդյունաբերության զարգացմանը:

IV ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

§ 44. ԻՆՉ ԹՈՂԵՑ ՄԵԶ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Ցարական Ռուսաստանը մեր յերկրին ժառանգություն թողեց 16 միլիոն մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսություն:

Գյուղացիներն ունեյին փոքրիկ հողամասեր և հաճախ այդ հողամասը մշակում եյին պապական յեղանակով–փայտյա չութով:

Ամենավատ տեսակի հողը պատկանում եր գյուղացիներին: Լավագույն հողամասերը պատկանում եյին կուլակներին, կալվածատերերին և իրեն՝ ցարին: Գյուղացիներին տրվում եյին ամենաանհարմար հողերը–գյուղից ու ջրերից հեռու: Քիչ գյուղացի յեր պատահում, վորի ամբողջ հողամասը մի տեղում լիներ: Գոյություն ուներ այնպիսի դրություն, յերբ գյուղացու ունեցած 1–2 հեկտար հողը ցրված եր 10–15 տեղ, ուր նա պետք եր առանց այն էլ փոքրիկ հողամասը միջնակներով (թմբերով) առանձնացներ ուրիշի հողամասից:

Այս պատճառով էլ փոքրիկ հողամասն էլ, ավելի եր փոքրանում: Իզուր կորչում եր վարելու համար պիտանի հողը: Այդ թմբերը լափում եյին հարյուր հազարավոր հեկտար հողեր:

Բայց այդ հողամասից էլ ամեն գյուղացի չուներ: Շատ գյուղացիներ բոլորովին չունեյին իրենց սեփական հողամասը և ժամանակավորապես վերցնում եյին կուլակից կամ կալվածատիրոջից:

Հողից ոգտվելու վարձը շատ բարձր եր: Ակամա ստիպված եյին լինում պարտքերի մեջ խրվել:

Քիչ եր պատահում, վոր գյուղացու հացը բավականացներ ամբողջ ձմեռը: Ուր՞ գնալ: Նորից կալվածատիրոջ և կուլակի մոտ: Ցարական Ռուսաստանի գյուղացիական բնակչության 60% կազմում եյին չքավորները: Իսկ չքավորներն այնպիսի մարդիկ են, վորոնք համարյա թե միշտ էլ չեն ունեցել կամ ձի, կամ գութան կամ, սերմացու: Այդ բոլորի համար նրանք ստիպված եյին լինում դիմել կուլակին:

Իսկ յերբ գյուղացին հավաքում եր բերքը և հաշվում պարտքերը, պարզվում եր, վոր համարյա թե ամբողջ հացահատիկը պետք ե տեղափոխի կալվածատիրոջ կամ կուլակի շտեմարանը: Ցեվ ստիպված՝ նորից եր պարտքի մեջ խրվում:

Հետևաբար՝ դուրս եր գալիս, վոր գյուղացիներն աշխատում եյին վոչ թե իրենց համար, այլ հոգուտ կապիտալիստների, կալվածատերերի և կուլակների գրպանի: Աշխատում եյին վաղ առավոտից մինչև ուշ գիշեր և ապրում եյին կիսաքաղց:

Միայն չքավորը չեր, վոր վատ եր ապրում. ցարի ժամանակ միջակների մեծ մասը նմանապես ապրում եր կարիքի ու խեղճության մեջ:

§ 45. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԳՅՈՒՂԻՆ ՏԱՆՈՒՄ Ե ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունը վերացրեց կալվածատիրական հողատիրությունը: Հողը գրավվեց և հայտարարվեց պրոլետարական պետության սեփակա–

նություն ու հանձնվեց աշխատավոր գյուղացիներին՝ ոգտագործելու։ Շատ գյուղացիներ, վոր առաջ հողազուրկ եյին, այժմ հող ստացան։ Յերևան յեկան բազմաթիվ նոր՝ մանր տնտեսություններ։ Գյուղացիական տնտեսությունների թիվն աճեց ու հասավ 25 միլիոնի։

Բանվորները ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին տապալեցին, վոր նոր, ավելի լավ կյանք՝ սոցիալիզմ կառուցեն։

Բայց մի՞թե կարելի յե սոցիալիզմ կառուցել, ա-

Այսպես եր հնում

ռանց միլիոնավոր մանր գյուղացիական տնտեսությունների վերափոխման։ Իհարկե՝ վոչ։

Հնարավոր չեր, վոր քաղաքում կառուցվեր սոցիալիզմ, քաղաքում լուսավորեր ելեկտրականությունը, կառուցվեյին նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, արտադրվեյին մեքենաներ ու ավտոմոբիլներ, իսկ գյուղում մնար հին՝ մանր, փոշիացած, գյուղացիական տնտեսությունը։

Ֆաբրիկներին հարկավոր է հումք։ Քաղաքի բանվորներին հարկավոր են պարենային մթերքներ։ Մանր տնտեսությունն ի վիճակի չեր ֆաբրիկներին տալու բավականաչափ հումք, իսկ բանվորներին՝ բավականաչափ պարեն։

Մանր գյուղացիական տնտեսություններն անզոր են աղքատությունից դուրս բարձրանալ։ Նրանք չեն կարող գործադրել գյուղատնտեսական խոշոր մեքենաներ, տրակտորներ։ Նույնիսկ այն գործիքներն ու քաշող ու-

ժը, վոր կան մանր գյուղացու տնտեսության մեջ ու լիովին չեն ոգտագործվում։ Որինակ, ձին այնտեղ կատարում է միայն մեկ չորրորդն այն աշխատանքի, վոր կարող եր կատարել խոշոր տնտեսության մեջ։ Գյուղացիական մենատնտեսական մանր տնտեսությունների դաշտերի մեծ մասում հողը հոգնած է, գործիքները վատ են, անասունն անպետք է։

Հողը մեզ մոտ պատկանում է պետությանը, բայց ոգտագործում են գյուղացիները։ Յեթե գյուղացին տիրում է իր առանձին հողամասին, այդ դեպքում նրան չի հետաքրքրում մյուս հողամասի վիճակը։ Նա աշխատում է, վորքան կարելի յե, շատ հացահատիկ ստանալ, վոր ավելցուկը ծախի շուկայում։

Յեթե իր հարևան մյուս գյուղացին վատ բերք ունենա, այդ ավելի լավ իր համար, վորովհետև նա իր հացը թանկ գնով կծախի։ Հետևյալ տարին նա կաշխատի ցանել ավելի շատ հողամաս։

Յերբ միայնակ գործը գլուխ չի բերում, նա բատրակ է վարձում։ Յեվ շատ հաճախ բատրակ է ընդունվում այն գյուղացին, վոր վատ բերք եր ստացել, վոր կիսաքաղց վիճակի հետևանքով պարտքերի մեջ է խրվել։ Իսկ առաջին գյուղացին հարստանում է ու դառնում կուլակ։

Բայց այդպիսիների թիվը փոքր է։ Գյուղացիության մեծ մասը քայքայվում է և ընկնում կուլակի լծի տակ։ Ընչազուրկների բանակը մեծանում է։

Յեվ յեթե այս բոլորն այսպես թողնվեր, ապա չեր կարելի սոցիալիզմ կառուցել։ Նորից պետք է ամեն ինչ դեպի հինը դառնար։

«Վորպեսզի թույլ չտրվի վերականգնելու կապիտալիստների իշխանությունը—ասում է Լենինը—դրա համար հարկավոր է, վոր առանձին մարդիկ չհարստանան ի հաշիվ մնացածների, դրա համար հարկավոր է, վոր բոլոր աշխատավորները համախմբվեն պրոլետարիատի հետ և կազմեն կոմունիստական հասարակություն»

Բայց կապիտալիստները կառուցում են գործարաններ ու ֆաբրիկներ։ Ֆաբրիկներին անհրաժեշտ է հումք։ Հարկավոր է կերակրել նաև քաղաքային բնակչությանը։ Իսկ մանր տնտեսությունն այդ ամբողջը տալ չի կարող։ Այդ պատճառով կապիտալիզմի օրոք էլ գյուղատնտեսությունը խոշորանում է։

Կապիտալիզմի օրոք ինչպես է ստեղծվում խոշոր գյուղատնտեսություն։



Քայքայված Ամերիկյան ֆերմերը գնում է քաղաք։
Նրա տունը վաճառվում է աճուրդով

Կապիտալիզմի ժամանակ յուրաքանչյուր խոշոր գյուղատնտեսություն ստեղծվում է մեծ թվով մանր տնտեսությունների կործանման ու քայքայման ճանապարհով։ Ամենից ունևոր գյուղացիները, հարստանալով չքավորների ու միջակների աշխատանքի հաշվին, դառնում են կուլակ, իսկ չքավոր ու միջակ տնտեսությունները քայքայվում են։

Քայքայված, սնանկացած գյուղացին ստիպված է թողնել իր մի կտոր հողը, կամ կուլակի կեղեքմանը հանձնվել և կամ թե քաղաք գնալ՝ ֆաբրիկում կամ գործարանում վարձվելու փորձելու բանվոր։

Կապիտալիստների մոտ գյուղատնտեսությունը չի կարող այնպես արագ զարգանալ, ինչպես մեզ մոտ է։

Արտասահմանում շատ կան տրակտորներ ու կոմբայններ։ Բայց մանր տնտեսությունները դրանից զուրկ են։ Ամերիկայում կա մի միլիոն տրակտոր, 45 հազար կոմբայն, հարյուր հազարավոր ամեն տեսակի բարդ մեքենաներ։ Բայց տրակտորն ու կոմբայնը պատկանում են միայն հարուստ Ամերիկացիներին։ Ամերիկայում տնտեսությունների չորս հինգերորդական մասը զուրկ է այդ տրակտորներից։

Բայց այն տնտեսությունները, վորոնք տրակտորներ ունեն, չեն կարողանում այդ մեքենաները լրիվ օգտագործել։ Տնտեսությունների մեծ մասում ամբողջ տարվա ընթացքում տրակտորն աշխատում է 400–600 ժամ։ Դա մի ձիու տարեկան աշխատանքի տևողությունից մի քիչ է ավելի։ Իսկ մեզ մոտ տրակտորն ունի տարեկան 2500– 3000 ժամ բեռնվածություն։

Ինչու՞ չէ այդ այդպես։ Վորովհետև Ամերիկայում տրակտորները պատկանում են հարուստ հողատերերին, իսկ մեզ մոտ՝ կոլտնտեսություններին ու խորհտնտեսություններին։ Ամերիկայում խոշոր տնտեսություններն ունեն 100–200 հեկտար հող, և միայն աննշան թվով ամենից հարուստ տնտեսություններն են, վոր ունեն հազարավոր հեկտար հողամաս։ Մինչդեռ մեր կոլտնտեսություններն աշխատում են հազարավոր հեկտար տարածություն ունեցող դաշտերում, իսկ խորհտնտեսությունները—տասնյակ հազարավոր հեկտար դաշտերում։ Խոշոր՝ սոցիալիստական դաշտերում տրակտորը շատ արձակ տարածություն ունի։

Կապիտալիստական յերկրներում կալվածատերերն ու կուլակները դաժանորեն շահագործում են աշխատավոր գյուղացիներին։ Աղքատացումը և կիսաքաղց կյանքը կապիտալիստական յերկրների չքավոր-միջակների մշտական ուղեկիցն է։ Վերջին չորս տարվա ընթացքում քայքայված տնտեսությունների թիվն անսովոր չափե-

րով մեծացավ, վորովհետև կապիտալիստական բոլոր յերկրները ճգնաժամ (կրիզիս) են ապրում:

Գյուղատնտեսական մթերքների գները շատ ցածր են: Այնինչ պետք ե հարկեր վճարել: Հարկավոր ե վճարել նաև կալվածատիրոջ հին պարտքը, վորից գյուղացին գնել եր իր մի կտոր հողը: Հարկերը միշտ բարձրանում են, իսկ վճարելու համար միջոց չկա:

Վերջիվերջո մի գեղեցիկ օր գալիս են իշխանության ներկայացուցիչները, ցուցակագրում գույքը և վաճառքի հանում: Մնալով առանց օթևանի, առանց աշխատանքի (քանի վոր ճգնաժամի ժամանակ վոչ քաղաքում և վոչ ել գյուղում չի կարելի գործ գտնել) միլիոնավոր աշխատավոր գյուղացիներ իրենց ընտանիքներով, մանր յերեխաներով թափառում են մի վայրից մյուսը՝ բաց յերկնքի տակ:

Աղքատացում, միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների քայքայում, մշտական կիսաքաղց վիճակ, յերբեմն ել սով—այսպես ե աշխատավոր գյուղացիության վիճակը կապիտալիստական յերկրներում:

Միայն բանվորների իշխանությունը կարող ե բարելավել գյուղացիների դրությունը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպես ե մեր յերկրի բանվոր դասակարգը գյուղին առաջնորդում դեպի սոցիալիզմ:

2. Ի՞նչպիսի դրության մեջ ե աշխատավոր գյուղացիությունը կապիտալիստական յերկրներում:

---

§ 47. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆԸ Ի՞ՆՉՊԵՍ ՏԱՐԱՆ ԴԵՊԻ ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Քաղաքներում բոլոր ֆաբրիկների տերն ու տիրականը բանվորական պետությունն ե: Այդ տերը կարող ե իր ֆաբրիկներում ու գործարաններում աշխա-

տանքը տանել պլանով, կազմակերպված ձևով: Իսկ գյուղում շատ տերեր կան:

Կապիտալիզմի տապալումից հետո քաղաքներում ֆաբրիկներն ու գործարաններն անցան ամբողջ բանվոր դասակարգի ձեռքը, իսկ գյուղում պահպանվեց մասնավոր սեփականությունը: Գյուղացին մասնավոր սեփականատեր ե, նա մենատնտես ե, միակ տերն ե իր գյուղատնտեսական գործիքների, իր ձիու: Նա դարեր շարունակ սովորել ե կառչել իր մի կտոր հողին: Նրա համար դժվար ե բաժանվել իր սեփականությունից:

Այդ դեռ բոլորը չե, այստեղ նրան վախեցնում ե նաև կուլակը. «Կգնաք կոլտնտեսություն, ամեն ինչ ձեզանից կխլեն և այլևս ազատվելու միջոց չեք ունենա»:

Կուլակները գիտեն, վոր գյուղի սոցիալիստական կարգերն իրենց մահ են բերում: Դրա համար ել նրանք գյուղացիներին յետ են քաշում, խանգարում են գյուղում սոցիալիզմ կառուցելուն:

Այս բոլորը խոչընդոտ եր դառնում գյուղացիական տնտեսությունը սոցիալիստականորեն վերափոխելու ճանապարհին:

Բայց գյուղացին աշխատավոր ե: Նա ապրում ե իր աշխատանքով: Նա, ինչպես և բանվորը, կապիտալիզմի օրոք շատ նեղ ու դժվարին կյանք եր վարում: Գյուղացին, ինչպես և բանվորը, շահագրգռված ե նրանով, վոր վերջ տրվի ամեն մի շահագործման, վերջ տրվի գյուղի աղքատությանն ու հետամնացությանը, ցարական Ռուսաստանից մնացած այդ ժառանգությանը:

Շահագործումը վոչնչացնել, գյուղի աղքատությանն ու հետամնացությանը վերջ տալ կարելի յե միայն մանր, կտոր-կտոր յեղած գյուղացիական տնտեսությունից սոցիալիստական խոշոր տնտեսության անցնելու միջոցով: Լենինն ասում եր. «Հողի արտելային մշակությունը, գյուղացիների ընկերությունը— ահա՛ վորն ե փրկությունը մանր տնտեսության անձեռնտվությունից, ահա վորն ե տնտեսության բարձրացման

ու բարելավման, ուժերի խնայողության, կուլակության, տզրուկների ու շահագործման դեմ պայքարելու միջոցը»:

Խորհրդային իշխանությունն էլ հենց նպատակ է դրել մանր գյուղացիական տնտեսությունը, վորտեղ այն վարվում է հին ձևով, վորտեղ դեռ աշխատում էյին արորով, վորտեղ տիրում էյին միջնակները—փոխարինել խոշոր՝ կոլեկտիվ տնտեսությամբ:

Հողի հանրային մշակմանն անցնելը կարող եր լինել միայն հոժարակամ-կամավոր ձևով. իսկ հարկադրական անցում վոչ մի դեպքում չեր կարելի թույլ տալ: «Այստեղ հարկավոր է,—ասում եր Լենինը,— վոր պրոլետարիատը վերադաստիարակի, սովորեցնի գյուղացիության մի մասին, քաշի իր կողմը նրանց, վորոնք աշխատավոր-գյուղացիներ են, վորպեսզի վոչնչացնի դիմադրությունը այն գյուղացիների, վորոնք հարուստներ են և հարստանում են մնացածների կարիքի հաշվին»:

Հարկավոր եր համոզել գյուղացիներին, վոր միացնեն կամ, ինչպես ասում են, կոոպերացնեն իրենց մանր տնտեսությունները և կոլտնտեսություն կազմեն: Դրա համար հարկավոր եր գործել որինակով, ցույց տալ խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության առավելությունն ու ոգտավետությունը: Անհրաժեշտ եր սոցիալիստական արդյունաբերության ոգնությունը գյուղին:

Լենինյան կուսակցությունն իր առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ կարողացավ գյուղացիությանը տանել Լենինի մատնանշած ուղիով: Դրան ապացույց կարող են ծառայել մեր կոլտնտեսական շինարարության հաջողությունները:

§. 48. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԻՆ

Առանց մեքենաների, առանց մեր յերկրում զարգացած խոշոր արդյունաբերություն ստեղծելու չեր կարելի նույնիսկ մտածել գյուղատնտեսությունը սոցիալիստական ուղիով զարգացնելու մասին:

Լենինը միշտ ընդգծում եր, վոր գյուղատնտեսության կոլեկտիվացումը կարող է իրագործվել միայն այն դեպքում, յերբ գյուղին ոգնության հասնի սոցիալիստական արդյունաբերությունը:

Նա ասում եր. «Այդ կարելի յե ստանալ, յերբ ունես ուժեղ՝ խոշոր արդյունաբերություն: Յերբ մենք կարողանայինք վաղը տալ 100 հազար առաջնակարգ տրակտոր, մատակարարելով նրանց բենզին, մեքենավարներ, այն ժամանակ գյուղացին կասեր «յես կոմունայի», այսինքն՝ կոմունիզմի կողմնակից եմ»:

Չէ՞ վոր յեթե տրակտոր կա, ապա նրանով 2-3 հեկտար հողամաս վարելն անհնար է:

Յեթե տրակտոր կա, ուրեմն անպետք են և թմբերը, միջնակները, փոքրիկ հողամասերը:

Չէ՞ վոր կոմբայնն իր մծությամբ բռնում է այնքան տարածություն, վորքան հողամաս ունեյին ցարի ժամանակ շատ ու շատ գյուղացիներ: Դեռ չեյիր կարողանում տեղից շարժվել, արդեն թումբն եր, այս տնտեսատիրոջ հողամասը վերջանում եր և սկսում եր մյուս հողամասը:

Գնալով Լենինի ուղիով՝ մեր կուսակցությունը համառ պայքար է մղում արդյունաբերության զարգացման համար: Մեր յերկրում հարյուրավոր գործարաններ են աշխատում կոլտնտեսային գյուղի համար: Ամեն որ նրանք դեպի կոլտնտեսությունները են ուղարկում տասնյակ գնացքներ՝ բեռնված տրակտորներով, կոմբայններով, ավտոմոբիլներով, գութաններով, շարքացաններով և այլն:

ԽՍՀՄ-ն իր գյուղատնտեսությանն ավելի շատ մեքենաներ է տալիս, քան աշխարհում մի այլ յերկիր:

Ահա՛ թե ինչ է ստացել գյուղը խորհրդային գործարաններից առաջին հնգամյակում.



Յեվ գյուղատնտեսական ուրիշ շատ-շատ մեքենաներ:

Ահա՛ այսպես է օգնում Խորհրդային պետությունն աշխատավոր գյուղացիությանը՝ վերակառուցելու նրանց կյանքը:

§ 49. ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՄՍԻ, ԲՐԴԻ ՈՒ ԲԱՄԲԱԿԻ ՖԱԲՐԻԿՆԵՐ

Ի՞նչ ֆաբրիկներ են դրանք: Դրանք մեր խորհտնտեսություններն են:

Տասնյակ հազարավոր խորհրդային տնտեսություններ են կազմակերպվել մեր անծայրածիր Միության տարբեր յերկրներում: Միջին Ասիայում, Անդրկովկասում մենք վարել ու վոռոգել ենք անապատներն ու տափաստանները, կառուցել ենք բրնձի ու բամբակի ֆաբրիկներ:

Կազակստանի սոված տափաստանը մենք վեր ենք

ածում ծաղկած հարթավայրի և այնտեղ կառուցում անասնապահական խորհտնտեսություններ — մսի ֆաբրիկներ:

Հյուսիսային Կովկասում ու Կազակստանում մենք վարում ենք տափաստանները և ստիպում վայրի խոտերին յետ նահանջել ցորենի ու վարսակի ճնշման տակ:

Հսկայական ամայի տարածություններ, վորոնք ընկած են մեր Միության հյուսիսում ու հարավում, և վորոնք դարերով մնացել են անձեռնմխելի, խոպանացած հողեր, վորտեղ շրջում եր միայն քամին և շատ հազվադեպ յերևում եյին քոչվորները, այժմ դառնում են կանաչազարդ արոտավայրեր:

Առաջին հնգամյակի ընթացքում մենք յուրացրինք 15 միլիոն հեկտար հողի տարածություն, վորն առաջներում ամենևին չեր մշակվել: Այժմ այդ հողերի վրա մենք կառուցում ենք մսի, բրդի, բամբակի, կանեփի, յուղի, ձվի և այլ ֆաբրիկներ:

Խորհտնտեսությունները յերկրին տալիս են միլիոնավոր տոնն հացահատիկ, հարյուր հազարավոր տոնն բամբակ, կանեփ և այլ գյուղատնտեսական մթերքներ:

ԽՍՀՄ խորհտնտեսություններից ամենից խոշորը փռված է Հյուսիսային Կովկասի դաշտերում:

Դա «ԳԻԳԱՆՏ» խորհտնտեսությունն է:

Հյուսիսից հարավ յոթանասուն յերեք կիլոմետր և արևմուտքից արևելք քառասուն կիլոմետր տարածվում են «ԳԻԳԱՆՏ»-ի դաշտերը:

Աշխույժ մեքենաները տասնյակ մետաղյա ձեռքերով — տրակտորներով, կոմբայններով ծածկել են «ԳԻԳԱՆՏ»-ի հողերը:

Խորհտնտեսության մեջ ամբողջ աշխատանքը կատարվում է մեքենաներով: Տրակտորների պողպատյա զորասյուները փոխարինել են հին Ռուսաստանի պապական խղճուկ արորին:

Անցել է այն ժամանակը, յերբ մանգաղն ու գերանդին հնձի միակ գործիքներն եյին, իսկ կամը՝ հացա-

Հունձ կալսելու միակ գործիքը: «ԳԻԳԱՆՏԻ» դաշտերում շարժվում են այնպիսի մեքենաներ, վորոնցից յուրաքանչյուրը փոխարինում է հարյուրավոր մանգաղների, գերանդիների ու կամերի: Դրանք կոմբայններն են:

«ԳԻԳԱՆՏ»-ի դաշտերում քաղ անողն արտահագուստ (մասնագիտական հագուստ) հագած մեքենավարն է՝ պաշտպանական ակնոցներով, յուղոտ ու սևացած ձեռքերով:

Նա կանգնած է գետնից վերև՝ իր մեքենայի—կոմբայնի վրա: Նա իր ձեռքում ունի սուլիչ: Սուլիչով նա հրամաններ է տալիս ղեկի մոտ կանգնածին:

Մեքենան միանգամից յերեք գործ է կատարում — հնձում է, կալսում ու հատիկը մաքրում: Կոմբայնները դաշտում վազում են այնպես, ինչպես զորախումբը թեք գծով. առաջինն առջևից, յերկրորդը նրա յետևից և մի քիչ ձախ, իսկ յերրորդը յերկրորդի յետևից և ավելի ձախ, վոր միմյանց չխանգարեն: Նրանցից յուրաքանչյուրը քաշում — հնձում է 5 մետր լայնությամբ շերտ: Անծայրածիր ցորենի դաշտերը, վոր ձգված են տասնյակ կիլոմետր լայնությամբ, հնձելու, խուրձեր կապելու և կալսելու համար հարկավոր եյին հազարավոր մարդիկ: Իսկ այստեղ այդ բոլորն անում են կապույտ արտահագուստ հագած միքանի մեքենավարներ: Կոմբայնի յուրաքանչյուր մարդը հավասար է ձեռքի սովորական գործիքներ ունեցող՝ առանց կոմբայնի, հարյուր մարդու:

«ԳԻԳԱՆՏ»-ի գյուղատնտեսական բանվորներն ապրում են վո՛չ թե խոտի տանիքներով ծածկված խրճիթներում, այլ ելեկտրիֆիկացված և ռադիոֆիկացված բնակարաններում: «ԳԻԳԱՆՏ» բանվորական ավանում յերեխաների համար կազմակերպված է դպրոց, իսկ մեծահասակների համար՝ համալսարաններ ու դասընթացներ: Վոչնչացվում է ցարական Ռուսաստանին հատուկ անկուլտուրականությունը:

Դաշտում, աշխատանքում և առհասարակ ամեն բանում խորհտնտեսության բանվորի կյանքն ավելի լավ է ու կուլտուրական, քան մենատնտեսատեր գյուղացու կյանքը: «ԳԻԳԱՆՏ»-ի դաշտերում տարածված են վագոններ՝ բանվորների համար: Այդ վագոններում դուք կգտնեք թե հասարակական ճաշարան, թե ընթերցարան և թե ռադիո:

Գիշերը, աշխատանքից հետո բանվորների համար



Կոմբայն

կազմակերպվում են զեկուցումներ, դասախոսություններ, կինո և այլն:

Վորպեսզի աշխատանքի ղեկավարները — գյուղատնտեսները, վարպետները և այլն իմանան, թե ինչ է կատարվում դաշտային աշխատանքի այս կամ այն վայրում, նրանք կարիք չունեն ժամանակ կորցնելու, վազվզելու մի բրիգադից մյուսը: «ԳԻԳԱՆՏ»-ի ամբողջ դաշտերում անց են կացված դաշտային հեռախոսալարեր: Յուրաքանչյուր բրիգադ միշտ կարող է հեռախոսել յուր ղեկավարների հետ:

Ամեն տարի «ԳԻԳԱՆՏ»-ը յերկրին տալիս է հարյուր հազարավոր ցենտներ հացահատիկ:

Բերքահավաքն սկսվելուն պես ամեն օր կայարանից

Հացահատիկով բեռնված յերկաթուղային գնացքներ են մեկնում:

Հացահատիկի բեռնումը վոչ մի րոպե չի դադարում:

Ցերեկով լիքը պարկերը կայարան են բերում տրակտորային ու ավտոմոբիլային գնացքներով:

Կայարանում պարկերը ածում են գնացքի վագոններին և ուղարկում մեր Միության այն շրջանները, վորտեղ հացահատիկ քիչ է ցանվում: Յերբ շարժվում է գնացքը, շոգեքարշի սուլոցը տարածվում է լայնարձակ դաշտի հեռուները::

Շատ մարդիկ են գալիս տեսնելու «ԳԻԳԱՆՏ»-ի աշխատանքները: Նույնիսկ ուրիշ յերկրներից էլ են գալիս: «ԳԻԳԱՆՏ» եր յեկել ամերիկայի գիտնական պրոֆեսոր ՎԻԼՄՈՆԸ, վորը տեսնելով աշխատանքներն ասել եր.

— Այսպիսի աշխատանք դեռ չե տեսել աշխարհը:

Խորհտնտեսություններ մենք կառուցում ենք վոչ միայն նրա համար, վոր նրանք տալիս են մեր յերկրին գյուղատնտեսական մթերքներ ու արդյունաբերությանը՝ հումք: Խորհտնտեսությունները ոգնել են և այժմ էլ ոգնում են շրջակա գյուղացիներին՝ վերակառուցելու իրենց տնտեսությունը:

Մեր խորհտնտեսությունները լավագույն ագիտատորներն են գյուղի կոլեկտիվացման: Տեսնելով խորհտնտեսությունը, գյուղացիները համոզվում են խոշոր տնտեսության ոգտավետության մեջ:

Ահա՛ թե ընկ. Ստալինն ինչպես է բնորոշել գյուղում խորհտնտեսությունների առաջատար դերը:

«Առջևից կգնան խորհտնտեսությունները, վորպես գյուղի հին ուկլադի (տնտեսաձևի) վերափոխման ղեկավար ուժեր: Նրանց հետևից կգան բազմաթիվ կոլտնտեսություններ, իբրև նոր շարժման հենակետեր: Այդ յերկու սիստեմների (խորհտնտեսությունների և

կոլտնտեսությունների) միացյալ աշխատանքը պայմաններ կստեղծի ԽՍՀՄ բոլոր մարզերի լիակատար կոլեկտիվացման համար»:

§ 50. ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհտնտեսությունները ստեղծվում են պետության միջոցներով: Դրանք, ինչպես և քաղաքի ֆաբրիկ գործարանները, պատկանում են պետությանը:

Խորհտնտեսության ինչպես ֆաբրիկի և գործարանի, գլուխ է կանգնած դիրեկտորը, վորին նշանակում է պետությունը: Խորհտնտեսությունների բանվորները ֆաբրիկ-գործարանային բանվորների պես ստանում են աշխատավարձ:

Կոլտնտեսությունները գյուղացիների կամավոր միավորումներ են: Գյուղացիները միացնում են իրենց մեքենաները, բանող անասունը և վարում իրենց տնտեսությունը՝ պետությանը պատկանող հողի վրա: Կոլտնտեսության տերն իրենք՝ կոլտնտեսականներն են:

Կոլտնտեսության գլուխ է կանգնած վարչությունը, վորն ընտրվում է կոլտնտեսական ընդհանուր ժողովում: Կատարելով պետության հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները, պահելով ցանելու սերմացուն (սերմֆոնդը), կոլտնտեսականներն ստացված յեկամուտը բաշխում են կոլտնտեսության բոլոր անդամների միջև: Ով շատ է աշխատել, նա շատ էլ ստանում է:

§51. ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐ

ՄՏԿ-ն Մեքենատրակտորային Կայանն է:

Նրանք կազմակերպվում են գյուղը սոցիալիստականորեն վերափոխելու համար:

Վեց տարի առաջ Ուկրայինայում՝ Շևչենկո գյուղում ծնունդ առավ Միության մեջ առաջին տրակտորային խումբը: Արտասահմանյան տասներեք «Ֆորձոն»

տրակտորներ — ահա նրա ամբողջ տրակտորային պար-
կը: ՄՏԿ-ն պայմանագիր կնքեց մոտակա գյուղերի
հետ: Պայմանագիրն այսպես էր.

«Գյուղացիները միացնում են իրենց բոլոր դաշտերը
և դարձնում մի կոլեկտիվ դաշտ, իսկ ՄՏԿ-ն պարտա-



ՇԵՎՉԵՆԿՈՅԻ անվան ՄՏԿ

վորվում է գյուղացիներին տրամադրել տրակտորներ և
իր բոլոր գյուղատնտեսական մեքենաները»:

Այդ ձևով գյուղացիներն աշխատեցին մի տարի և
ի՞նչ պարզվեց:

Հողի մշակման ծախսերը պակասեցին. առաջ մեկ
հեկտար հողի մշակման համար հարկավոր էր ծախսել
20 ռ., իսկ ՄՏԿ-ին վճարվեց միայն 14 ռուբլի:

Գյուղացու մեկ հեկտարից ստացված յեկամուտը
52 ռուբլուց բարձրացավ 83 ռուբլու:

Գյուղացիները համոզվեցին, վոր միացյալ ուժե-
րով և խոշոր մեքենաներով աշխատելը շատ ավելի ոգ-
տավետ է ու ձեռնտու:

Ահա՛ թե ինչպիսի նամակ ուղարկեցին նրանք
«Պրավդա» թերթին, յերբ վերջացրին իրենց աշխա-
տանքները.

«Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում

Խորհրդային իշխանությանն այն հսկայական օգնության
համար, վոր ցույց տվեց մեզ:

Մեզնից մեծ մասը չքավոր էր, ձիազուրկ, ա-
ռանց գործիքների: Մենք չէյինք կարողանում մշակել
մեր հողերը և ստիպված էյինք այդպիսին հանձնել կու-
լակին՝ բերքի մի մասն ստանալու պայմանով: Բերքը
շատ վատն էր ստացվում, քանի վոր, ինչպես հայտնի
յէ, կուլակն ուրիշի հողը լավ չի մշակի:

Այս տարի մեզ առաջարկեցին տրակտորներով մշա-
կել մեր հողերը: Մենք բոլորս համաձայնեցինք:

Ի մեծ ուրախություն մեզ և ի կատաղություն կու-
լակների, տրակտորները վարեցին ամբողջ հողը —
նույնիսկ խոպանը: 5—6 անգամ վարում էյին ու հեր-
կում՝ մոլախոտերից մաքրելու համար:

Վերջապես ամբողջ դաշտերը ցանեցին մաքուր տե-
սակի ցորենով:

Այս տարի մեր շրջանում անձրևների բացակայու-
թյան պատճառով գյուղացիները համարյա թե աշնա-
նացան չարին: Այն հողերը, վոր ցանված են, ծիլեր
չեն տվել: Իսկ մեր դաշտերում կանաչել է հարյուրավոր
հեկտար առաջավոր ցորենը:

Տրակտորների կատարած աշխատանքը տեսնելուց
հետո մենք այլևս չենք ուզում չքավորական մանր տն-
տեսություն: Մենք վորոշեցինք կազմակերպել հան-
րայնացված տնտեսություն, ուր չեն լինի գյուղացիա-
կան առանձին հողամասերի գաճաճ ցանքսեր:

Շևչենկոյի անվան, Կրասինի անվան, «Ձերվոնա
Զիրկա», Կալինի անվան, «Վոսխոդյաշչեյե սոլնցե».
խուտորների գյուղացիներ: 1927 թ.»:

Տարեցտարի մեծանում էր ՄՏԿ-ների թիվը: Իսկ
ներկայումս 2446 ՄՏԿ տարածված են մեր խորհրդային
դաշտերում: Յեվ ամենուրեք, ուր յերևում էյին տրակ-
տորային զորասյուները, վոչնչացվում էյին միջնակնե-
րը—թմբերը:

Վերափոխվում էյին մանր տնտեսությունները:

Վոչ մի հեկտար հող չեր մնում չցանված։
Մեքենատրակտորային կայաններն սկսվում են ղե-
Մեքենատրակտորային կայաններն սկսվում են ղե-
կավարել շրջանի ամբողջ կյանքը։ Նրանք գյուղ են
մտցնում և տարածում կուլտուրա ու գիտություն։
Վերցնենք Թեկուզ Շեվչենկոյի անվան ՄՏԿ-ն։ Դա
այժմ ունի 500 վոչ Թե ներմուծված, այլ մեզ մոտ արտա
դրած տրակտորներ։
Այն շրջանը, վորտեղ գտնվում ե ՄՏԿ-ն, ամբողջո-
պես կոլեկտիվացված ե։ ՄՏԿ-ին կից կառուցված ե



ՄՏԿ-ների աճը

նեկտորկոյան։ ՄՏԿ-ի յուրաքանչյուր բանվորի բնա-
կարանում կա լուսավորություն։ Շրջանն ամբողջովին
ելեկտրիֆիկացած ու հեռախոսային ցանցով ե պատ-
ված։
ՄՏԿ-ին կից կա փոստ-հեռագրատուն։
Կառուցված ե ակումբ 500 հոգու համար։
Ավարտվում ե հնչուն և խոսող կինո-Թատրոնի կա-
ռուցումը։ Կառուցված ե նոր ճաշարան 250 մարդու հա-
մար։ ՄՏԿ-ում աշխատում են մոտ 100 գյուղատնտես
ու գիտական աշխատակից։
ՄՏԿ-ները պայքարում են գյուղի կոլեկտիվացման
համար և ամրացնում են արդեն ստեղծված կոլտնտե-
սությունները։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Սոցիալիստական արդյունաբերությունն ինչպիսի ոգնություն ե ցույց տալիս գյուղի կոլեկտիվացմանը։

2. Ինչ տարբերություն կա խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների միջև։

3. Ինչ ե ՄՏԿ-ն և ինչի համար են դրանք կազմակերպվում։

4. Խորհտնտեսություններն ու ՄՏԿ-ներն ինչպիսի ոգնություն են ցույց տալիս գյուղացիական մենատնտեսությունները կոլեկտիվ տնտեսությունների վերափոխելու գործում։

§ 52. ԽՍՀՄ-Ն ԱՄՈՒՐ ԿԱՆԳՆԱԾ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ

Կուլակները ձեռք եյին առնում ամեն տեսակի միջոցներ, վոր աշխատավոր գյուղացիները չմտնեն կոլտնտեսություն։ Եվ ինչ վնասներ ասես, վոր չեյին հասցնում կուլակները։ Հրդեհում եյին կոլտնտեսական



Ինչպես եր աճում կոլեկտիվացումը գյուղում

ցանքսերը։ Սպանում եյին լավագույն կոլտնտեսական կազմակերպիչներին։ Փչացնում եյին կոլտնտեսական մեքենաներն ու գույքը։

Բայց կուլակները դրանով չկարողացան աշխատավոր գյուղացիությանը վախեցնել։

Խորհտնտեսությունների օրինակի վրա համոզվելով, վոր աշխատանքը խոշոր տնտեսության մեջ ավելի գյուրին ե, Խորհրդային իշխանությունից — ՄՏԿ-ների ու խորհտնտեսությունների միջոցով — ստանալով օգնություն՝ գյուղացիները գնացին կոլտնտեսություն, գնացին ամբողջ գյուղերով ու շրջաններով: Չքավորի հետևից կոլտնտեսություն գնացին և միջակները: Յեթե 1927 թվին կոլտնտեսություններում եր գտնվում ամբողջ գյուղացիական տնտեսությունների միայն 1.1 տոկոսը, ապա 1933 թ. սկզբին աշխատավոր գյուղացիության տնտեսությունների 62,5 տոկոսը միավորված ե կոլտնտեսությունների մեջ:

Հնգամյա պլանով մենք յենթադրում եյինք կոլտնտեսությունների մեջ ներգրավել գյուղացիական աշխատավորական տնտեսությունների միայն 20 տոկոսը, հնգամյակի վերջում պարզվեց, վոր մենք հնգամյակը գերակատարել ենք 3 անգամ ավելի:

Մենք կառուցել ենք 5.000 խորհտնտեսություն: Խորհրդային Միության դաշտերի յերեք քառորդը մշակում են խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները:

Յերբ մենք կազմեցինք գյուղատնտեսության հնգամյա պլանը, վորով յենթադրվում եր, թե 1932 թ. վերջում պետության հացի 40 տոկոսը կտան խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները, այն ժամանակ մեր թշնամիները ծիծաղում եյին մեզ վրա: Նրա՛նք ասում եյին, թե իբր մեր հնգամյակը ցնորք ե (անիրականանալի պլան ե):

Իսկ ի՞նչ դուրս յեկավ: Դուրս յեկավ այն, վոր դեռ 1931 թ. հնգամյակը մենք գերակատարեցինք 2 անգամից ավելի: Դեռևս 1931 թ. խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները յերկրին տվին հացի 85 տոկոսը:

Մեր յերկիրը դարձավ աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրը:

Ձեռք բերած հաջողությունների հիման վրա մենք գյուղում ջախջախեցինք կուլակին: Մենք նրան զրկեցինք հողից ազատորեն օգտվելու իրավունքից: Խլեցինք նրա գույքը, մեքենաները, անասունը, ամեն տեսակի շինությունները և հանձնեցինք կոլտնտեսությունների օգտագործմանը:

Կուլակը ձեռք եր բերել հարստություն, վորովհետև նա շահագործել եր չքավորներին, բատրակներին և միջակ գյուղացիներին: Դրա համար ել օրենքով նրա ամբողջ գույքը պատկանում ե աշխատավոր գյուղացիներին:

Կուլակաթափ յեղած կուլակներին Խորհրդային իշխանությունը վտարում ե կոլտնտեսական գյուղերից, վոր նրանք չխանգարեն կոլտնտեսությունների շինարարությանն ու ամրացմանը:

«Մենք հանդուրժում եյինք այդ արյունարբուներին ու սարդերին — ասում ե ընկ. Ստալինը — և միջոցներ եյինք ձեռք առնում, վոր նրանք չշահագործեն աշխատավորներին: Մենք հանդուրժում եյինք, վորովհետև վոչնչով չեյինք կարող փոխարինել կուլակային տնտեսությունը: Այժմ մենք կարող ենք ամենայն համարձակությամբ նրանց տնտեսությունը փոխարինել մեր խորհտնտեսություններով ու կոլտնտեսություններով: Այսուհետև ել հանդուրժել այդ սարդերին ու արյունարբուներին, նշանակում ե գնալ ընդդեմ բանվորների ու գյուղացիների շահերին: Դրա համար ել կուլակության, իբրև դասակարգի, վերացնելու քաղաքականությունը պետք ե տարվի այն ամբողջ հաստատակամությամբ, վորին ընդունակ են բոլշևիկները»:

Մեր յերկրի աշխատավոր գյուղացիության կյանքը շատ և շատ լավացել ե: 3–4 տարի առաջ մեր յերկրում կար 15 միլիոն չքավոր: Իսկ հիմա բոլոր այդ չքավորները կոլտնտեսության մեջ են: Նրանք ընդմիշտ ազատվել են կուլակային կեղեքումներից ու լծից:

1933 թ. փետրվարին Մոսկվայում տեղի ունեցավ

լավագույն հարվածային կոլտնտեսականների համագումարը։ Այդ համագումարին մասնակցում էր 1.500 պատգամավոր։ Նրանք բոլորը խոսում էին այն մեծ նվաճումների մասին, վոր մենք ձեռք եյինք բերել գյուղում։

Ահա՛ թե ինչ էր պատմում Ռյազանի կոլտնտեսականների կյանքի մասին հարվածային կոլտնտեսական ընկ. Բլոխինը։

— «Դուք յերևի լսած կլինեք նախկին Ռյազանի նահանգի գյուղացիների մուրացիկ կյանքի մասին։ Ահա մենք այդ նահանգից ենք...— ասում էր նա համագումարին։

Մինչև հեղափոխությունը մեր գյուղում միջին հաշվով ծխին հասնում էր մի հեկտար հողից վոչ ավելի։ Շատ չքավորներ բոլորովին զուրկ եյին հողից։

Իսկ այժմ կոլտնտեսության մեջ յուրաքանչյուր ծխին ընկնում է հինգ հեկտար հող։

Մեր գյուղում կային այնպիսի չքավորներ, վորոնք խրճիթել չունեյին։ Նրանք ապրում եյին ինչպես խլուրդներ — գետնափորներում։

Այժմ կոլտնտեսությունը նրանց տեղավորել է լավագույն կուլակային տներում։ Իսկ վոմանց ել տվել են աղյուս, գերաններ, վոր իրենց համար նոր տներ կառուցեն։

Մենք բոլորս, վոր առաջ տրեխներով եյինք ման գալիս, հիմա միանգամայն կերպարանափոխվել ենք։ Ի՞նչ է քկարծում, առաջ վորքան կոշիկ կար մեր գյուղում։ Ինչքան կուլակ կար, այնքան ել կոշիկ կար։ Իսկ այժմ մենք բոլորս կոշիկ ու կիսակոշիկ ունենք հագած, հագնում ենք նաև կրկնակոշիկներ...

Կոլեկտիվ տնտեսության ոգտավետությունը միլիոնավոր աշխատավոր գյուղացիներն ստուգեցին իրենց սեփական փորձով։ ԽՍՀՄ-ն ամուր հանգնած է սոցիալիստական կոլտնտեսական հողի վրա։

§ 53. Ի՞ՆՉ ՍՏԱՑԱՆ ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Ահա՛ թե ինչպես են նկարագրում իրենց կյանքը Դեմյան Բեդնու անվան կոլտնտեսության կոլտնտեսուհիները «Պրավդա» թերթին ուղարկած իրենց նամակում։

«Մեզնից՝ գեղջկուհիներից յուրաքանչյուրը լավ հիշում է, թե ինչ էր ասում մեզ կուլակը, ինչպես էր նա մեզ վախեցնում.

—Յեթե կոլտնտեսություն մտնես,— ասում էր կուլակը,— յերեխաներդ մսուր կտանեն և այնտեղից ել Մոսկվա կուղարկեն։ Նրանց կչարչարեն ու սովամահ կանեն։

Մեզնից շատերն անգրագետ եյին, խավար ու փակված եյին, ուստի և նրանց հավատացին։

Իսկ իրականում մենք գեղջկուհիներս ի՞նչ ենք ստանում կոլտնտեսությունից։

Կոլտնտեսության մեջ առաջին հերթին ձեռք են առնվում բոլոր միջոցները՝ ազատելու մեզ տնային գործերի բեռից, վոր մենք կարողանանք ազատ, մյուսների հետ միասին, աշխատենք կոլտնտեսական դաշտերում։

Մեր կոլտնտեսության մեջ կազմակերպված են մսուր և մանկապարտեզ։ Յերեխաները միշտ մաքուր են ու բլացված։ Նրանք այնտեղ ուրախ են։ Ղեկավարը նրանց սովորեցնում է նկարչություն ու յերգեցողություն։ Յերեխաները պարում, յերգում են. այնպես վոր սիրտդ ուրախանում է։

Մենք էլ աշխատանքի վայրում անհանգիստ չենք լինում։ Գիտենք, վոր յերեխաներին լավ են նայում, նրաք կուշտ են ու լավ հագնված։

Առաջներում մարդ իրեն մասին չէր կարողանում մտածել, ժամանակ չկար, իսկ հիմա նայում ես՝ բոլոր կոլտնտեսուհիները լիկկայան են գնում — վերացնում են իրենց անգրագիտությունը։ Անցյալ տարի շատ կանայք գրագիտություն սովորեցին։

Շատ հաճախ, յերեկոները մեզ մոտ՝ կոլտնտեսությունում զրույցներ են կազմակերպվում այն մասին, թե ինչպես ավելի լավ վարել գյուղատնտեսությունը, թե ինչպես խնամել կովին, վոր նա ավելի շատ կաթ տա, ինչպես կոլտնտեսությունում գործն ավելի կարգի բերել:

Տղամարդի հետ հավասար՝ կոլտնտեսուհիներն աշխատում են դաշտում, հավասարապես մասնակցում են կոլտնտեսության հասարակական կյանքին, առաջ են քաշվում տնտեսական գործերում:

Կին տրակտորիստ

Մեր կոլտնտեսությունում Վասիլիսա Պեգանովան աշխատում է իբրև 40 մարդու բրիգադիր: Դեմյանովա Կլավդիան տրակտորիստ է դարձել: Վարչության կազմում նույնպես կանայք կան:

Ահա թե ինչ ենք ստանում մենք գեղջկուհիներս կոլտնտեսությունից: Յերբ գրագետ ենք դառնում, կարծես մառախուղն անցնում է մեր աչքերից: Կոլտնտեսության մեջ մենք լրիվ իրավազոր տերեր ենք: Մենք սովորում ենք պետություն կառավարել:

Ցիգանովա Մարիա, Կարպովա Յեվդոկիա, Բալանդինա Աննա, Ֆեոդորովա Մարիա: Նովոաննենի շրջան, Ներքին Վոլգա, Դեմյան Բեդնու անվան կոլտնտեսություն»:

Կոլտնտեսությունն ընդմիշտ վոչնչացնում է կնոջ անհավասարությունը: Հարվածային կոլտնտեսականների համագումարում ընկ. Ստալինը՝ դիմելով կոլտնտեսուհիներին, ասաց.

«Ինչ վերաբերում է իրենց՝ կոլտնտեսուհիներին,

ապա նրանք պետք է հիշեն, թե ինչ ուժ ու նշանակություն ունեն կոլտնտեսությունները կանանց համար, պետք է հիշեն, վոր միայն կոլտնտեսությունում նրանք հնարավորություն ունեն հավասարվելու տղամարդուն: Առանց կոլտնտեսությունների անհավասարություն է, կոլտնտեսություններում՝ իրավունքների հավասարություն:

Թող այդ բանը հիշեն ընկեր կոլտնտեսուհիները և թող նրանք պահպանեն կոլտնտեսական կարգերը, ինչպես իրենց աչքի լույսը»:

§ 54. ՔՈՉՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ յերկրում, հետամնաց ազգային շրջաններում, ուր դարերով կեղեքվում եյին աշխատավոր ժողովուրդներն, աճում ու ամրանում են կոլտնտեսությունները:

Ուկրայնայի, Բելոռուսիայի, Թաթարիայի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի աշխատավոր գյուղացիները կառուցում են կոլտնտեսական գյուղ—մանր, կտորտված (կտորկտոր յեղած) անհատական տնտեսությունից անցնում են խոշոր՝ կոլեկտիվ տնտեսության:

Կազակստանի, Կիրգիզիայի և Ալտայի քոչվորները, վորոնք դարերով քոչում եյին, միանալով, կոլտնտեսություններ կազմելով, անցնում են նստակեցության:

Ահա Տաջիկստանը. այստեղ դարերով իշխում ու տնօրինում եյին Բեգերը (կուլակները): Բեգերին վերջ տրվեց: Աշխատավոր գյուղացիությունը, վոր անցյալում մութ, փակված և մշտապես կեղեքման վիճակում եր, այժմ կառուցում է նոր կյանք: Գյուղացիության կեսից ավելին մտել է կոլտնտեսություն:

Տասնյակ տրակտորային զորասյուներ աշխատում են Տաջիկստանի դաշտերում: Մինչև կոլտնտեսությունների կազմակերպումն, ամբողջ հանրապետու-

թյան մեջ ցանվում եր 1700 հեկտար հող, իսկ այժմ ցանքսերի տարածությունը ավելացել ու հասել է 124 հազար հեկտարի. Տաջիկստանում ցանվում է աշխարհի լավագույն յեգիպտական բամբակը: Բամբակի ցանքսերը բռնում են 24 հազար հեկտար տարածություն:

Տաջիկստանի գետերը, վորոնք սկիզբ են առնում մշտնջենական ձյուներից ու սառցադաշտերից, շատ ջրառատ են: Իսկ դաշտերը մնում եյին առանց ջրի: Մենք սովորում ենք արագավազ գետերին ջուր հասցնել կոլտնտեսական ու խորհտնտեսական դաշտերին: Այժմ Տաջիկստանում կառուցվում է հզոր Վախշստրոյը (ջրանցք), վոր վոռոգելու յե 100 հազար հեկտար բամբակի հողեր:

Այսպես է դրությունը վոչ միայն Տաջիկստանում, այլև մյուս ազգային հանրապետություններում:

§55. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՈՒՐ ՀԵՆԱՐԱՆՆ Է ԳՅՈՒՂՈՒՄ

Առաջներում խորհրդային իշխանությունը գյուղում հենվում եր չքավորի վրա: Չքավորի կյանքը ցարի ժամանակ ամենից ծանր եր, այդ պատճառով ել նա հենց սկզբից մոտ եր կանգնած խորհրդային իշխանության:

Միջակը տատանվում եր: Ունենալով ձի, վորոշ գործիքներ, մեքենաներ—գութան, կամ և այլն՝ նա հույս ուներ, վոր յերբևե կհարստանա: Նա շարունակ մտածում եր՝ գնա՞լ արդյոք խորհրդային իշխանության հետևից, թե՞ յետ դառնալ դեպի կապիտալիստները:

Բայց միջակն աշխատավոր է, նա ել ցարի ժամանակ վատ եր ապրում: Նա ել յենթարկվում եր կալվածատերերի ու կուլակի շահագործմանը: Հարկավոր եր միջակին մեր կողմը քաշել: Այդ պատճառով ել միջակի հետ խորհրդային իշխանությունը սերտ միություն եր պահպանում:

Այժմ, յերբ բազմամիլիոն չքավորական ու միջակային մասսաները տեսնելով կոլտնտեսությունների առավելությունները՝ բռնել են կոլտնտեսական ուղին, իսկ կուլակությունը ջախջախված է վորպես դասակարգ—գյուղում խորհրդային իշխանության ամուր հենարանը հանդիսանում է կոլտնտեսական գյուղացիությունը:

Այժմ արդեն կոլտնտեսություն չմտած գյուղացիներից վոչ բոլոր չքավորներն ու միջակներն են հանդիսանում բանվոր դասակարգի դաշնակիցը: Այն մենատնտեսատեր չքավոր կամ միջակը, վոր ոգնում է կուլակին պայքարելու կոլտնտեսությունների դեմ, դրանով իսկ խանգարում է կոլտնտշինարարությանը, ուստի և չի կարող դաշնակից կոչվել, առավել ևս չի կարող խորհրդային իշխանության հենարան կոչվել: Քանի վոր նա ոգնում է կուլակին, նշանակում է նա կուլակի դաշնակիցն է:

Կոլտնտեսությունների մեջ նոր անդամներ ընդունելիս պետք է շատ խիստ վերաբերվել: Կոլտնտեսություն պետք է ընդունել միայն այն մենատնտեսատեր գյուղացիներին, վորոնք մթերումները հանձնելու տեսակետից բարեխղճորեն կատարում են պետության հանդեպ իրենց ունեցած բոլոր պարտավորությունները և վորոնք կատարում են հողի մշակման վերաբերյալ բոլոր սահմանված կանոնները:

Մենատնտեսատերերի մեջ, իհարկե, կան այնպիսի գյուղացիներ (և նրանք մեծ մասն են կազմում), վորոնք կդառնան կոլտնտեսականներ: Այս մենատնտեսատերերի մասին չի կարելի մոռանալ:

Նրանցից վոմանք դեռ տատանվում են, դեռ չեն համոզվել կոլտնտեսական ուղու ճշմարիտ լինելու մեջ, դրա համար ել չեն մտնում կոլտնտեսություն: Կա և մի այլ պատճառ, վոր խանգարում է մենատնտեսատեր գյուղացիներին կոլտնտեսություն մտնելու: Վորոշ կոլտնտեսականներ՝ հիշելով այն, թե վորքան ծաղրի ու վիրավորանքի յենթարկվեցին իրենց մենատնտեսա-

տեր գյուղացիների կողմից, չեն ուզում նրանց կոլտնտեսություն ընդունել:

Ընկ. Ստալինը հարվածային կոլտնտեսականների համագումարում ցույց տվեց, թե ինչպես պետք է վերաբերվել դեպի մենատնտեսատեր գյուղացիները

«Եթե դուք ուզում եք լինել ղեկավարներ, ապա դուք պիտի կարողանաք մոռանալ այն վիրավորանքը, որ հասցրել են ձեզ առանձին մենատնտեսատերերը:

Ես դեմ չեմ, որ կոլտնտեսություն ընդունվողներին ընտրեն, ջոկեն: Բայց ես դեմ եմ այն բանին, որ անխտիր բոլոր մենատնտեսների համար փակվի ճանապարհը դեպի կոլտնտեսություն: Դա մեր, դա բոլշևիկյան քաղաքականությունը չի: Կոլտնտեսականները չպետք է մոռանան, որ նրանք իրենք մոտիկ անցյալում մենատնտեսատեր էյին»:

Պետք է մենատնտեսատեր գյուղացուն հաստատակամորեն ապացուցել, որ կոլտնտեսություն մտնելը հետաձգելու ամեն մի օր վնասում է հենց իրեն: Հարկավոր է նրան բացատրել, որ կոլտնտեսությունից դուրս նրա կյանքը կլինի շատ վատ, քանի որ նա կոլեկտիվ տնտեսության բոլոր առավելություններից օգտվելու հնարավորությունից զուրկ է:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ հաջողություններ ձեռք բերեց մեր երկիրը գյուղը սոցիալիստականորեն վերափոխելու գործում:

2. Ի՞նչ է նշանակում վերացնել կուլակությունը որպես դասակարգ:

3. Ինչո՞ւ միայն կոլտնտեսականն է խորհրդային իշխանության իսկական ու հաստատուն հենարանը գյուղում:

---

§ 56. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՑ ԻՐԵՆՑԻՑ Է ԿԱԽՎԱԾ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻ ԲԱՐՎՈՔՈՒՄԸ

Մեր երկրում կոլտնտեսականները դեռ տարբեր ձևով են ապրում:

Պատահում է, երբ մի քանի կիլոմետր իրարից հեռու ապրող կոլտնտեսականների կյանքը մեծ չափով միմյանցից տարբերվում է: Ոմանք լավ են ապրում, ոմանք էլ՝ վատ:

Այսպես օրինակ՝ Օդեսայի շրջանում կա երկու կոլտնտեսություն Մեկը Պավլովյան կոլտնտեսությունն է, իսկ մյուսը «Պերեմոժեց» կոլտնտեսությունը:

Շրջանն ունի արգավանդ հողեր: Այդ արգավանդ հողերի վրա ձգված են կոլտնտեսական դաշտերը: Կոլտնտեսություններին սպասարկում է ՄՏԿայանը: Հետևաբար կոլտնտեսություններն ունեն թե մեքենա և թե հող ու կարող են լավ ապրել:

Պավլովյան կոլտնտեսությունում ապրում են լավ: Աշխատանքը կազմակերպված է ճիշտ ձևով, եկամուտները բաշխվում են ճշտորեն:

Իսկ կողքին, «Պերեմոժեց» կոլտնտեսությունում կոլտնտեսականները վատ են ապրում: Պատճառն այն է, որ այդտեղ կոլտնտեսականները վատ են աշխատում: Կոլտնտեսությունն ունի 300 աշխատունակ տղամարդ, իսկ դաշտերում իսկապես աշխատանք կատարում էր միայն 100 մարդ: Լոդրերի դեմ պայքար չի տարվում: Կոլտնտեսականներն աչալուրջ չէյին, և կոլտնտեսություն էր խցկվել դասակարգային թշնամին ու քայքայում էր աշխատանքը: Դրա համար էլ «պերեմոժեց» կոլտնտեսությունում վատ են ապրում:

Նույնը կարելի յե ասել նաև մեր՝ Հայաստանի կոլտնտեսությունների մասին: Օրինակ՝ Վաղարշապատի «Անաստված» կոլտնտեսությունը օրինակելի տնտեսություն է, այնտեղ գործը լավ է կազմակերպված, իսկ

Բասարգեչարի Զաղալու կոլտնտեսությունը վատ է աշխատանքը կազմակերպել:

Նայած թե կոլտնտեսականներն ինչպես են աշխատում և ինչպես են պայքարում դասակարգային թշնամու դեմ, դրանից էլ կախված է նրանց կյանքի լավ կամ վատ լինելը:

§ 57. ՄԵՐ ԽՆԴԻՐՆ Է՝ ԲՈԼՈՐ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՆ ԴԱՐՁՆԵԼ ՈՒՆԵՎՈՐ

Երեք-չորս տարի առաջ մեր յերկրում կար 15 միլիոն չքավոր: Այդ 15 միլիոն բնակչությունը, վոր առաջ ապրում եր կիսաքաղց, կուլակային լծի տակ, հողը փորփրում եր արորով,—յեկել է կոլտնտեսություն: Նրանք դարձել են խոշոր կոլեկտիվ տնտեսության տերեր, ունեն իրենց ձիերը, մեքենաներն ու տրակտորները: Նրանք վերջնականապես ազատագրվել են կուլակային լծից:

Առաջներում հարստանում եյին առանձին մարդիկ՝ ի հաշիվ ուրիշ շատ-շատերի: Հարստանում եյին ու բարձրանում կուլակները, աղքատանում եյին ու մուրացիկ դառնում չքավորները՝ ընկնելով կուլակների լծի տակ: Այժմ այդ հնարավորությունը վերացված է: Այժմ հարստանում են կոլտնտեսությունները, հարստանում են և բոլոր կոլտնտեսականները:

Կոլտնտեսություն մտնելով, օգտվելով լավ հողով, տրակտորներով ու մեքենաներով, միլիոնավոր չքավոր գյուղացիներ սկսել են ապրել միջակներից վոչ պակաս ու վոչ վատ:

«Մենք հասանք այն բանին,—ասում է ընկ. Ստալինը, վոր, շնորհիվ կոլտնտեսությունների, չքավորներին բարձրացրինք միջակների մակարդակին: Դա շատ լավ է: Բայց դա քիչ է: Մենք հիմա պետք է աշխատենք ձգտել այն բանին, վոր ելի մի քայլ անենք առաջ ու օգնենք բոլոր կոլտնտեսություններին—և՛ նախկին չքավորներին, և՛ նախկին միջակներին—բարձրանալու ունե-

վորների մակարդակին: Այդ բանին կարելի յե հասնել և այդ բանին մենք պետք է հասնենք, ինչ կերպ էլ ուզում է լինի»:

Առաջներում ունեվոր դառնալու համար հարկավոր եր զրկել ու կտրել ուրիշ գյուղացիներից: Հարկավոր եր վորևե բան նրանց վաճառել թանկ գնով և գնել նրանցից ավելի եժան: Հարկավոր եր աշխատել վոչ թե մենակ, այլ վարձել բատրակ ու նրան շահագործել: Այժմ, վորպեսզի կոլտնտեսականները դառնան ունեվորներ, իսկի էլ պետք չի շահագործել և ուրիշի աշխատանքով հարստանալ:

«Վորպեսզի կոլտնտեսականները դառնան ունեվորներ,—ասում է ընկ. Ստալինը,—դրա համար այժմ հարկավոր է մի բան՝ կոլտնտեսությունում աշխատել ազնվորեն, ճիշտ օգտագործել տրակտորներն ու մեքենաները, ճիշտ օգտագործել բանող անասունը, պահպանել կոլտնտեսական սեփականությունը»:

«Յեթե մենք,—ասում է նա,—աշխատենք ազնվաբար, աշխատենք մեզ համար, մեր կոլտնտեսությունների համար, ապա մենք կհասնենք այն բանին, վոր ինչ վոր 2–3 տարվա ընթացքում կբարձրացնենք բոլոր կոլտնտեսություններին—և նախկին չքավորներին ու նախկին միջակներին—ունեվորների մակարդակին, այնպիսի մարդկանց մակարդակի, վորոնք օգտվում են մթերքների առատությամբ և վարում են միանգամայն կուլտուրական կյանք»

§ 58. ԱՄՐԱՑՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԳԼԽԱՎՈՐ ՁԵՎԸ—ԱՐՏԵԼԸ

Գյուղացիների միացումը կոլեկտիվ աշխատանք կատարելու համար կոչվում է կոլտնտեսություն: Բայց կոլտնտեսությունները տարբեր են լինում: Գոյություն ունի կոլտնտեսությունների յերեք ձև—հողոգտագործական ընկերություն, գյուղատնտեսական արտել, կոմունա:

Հողագործական ընկերությունը միացյալ ուժերով հող մշակող ընկերություն ե։ Մենատնտեսական գյուղացիներն աշխատանքի ժամանակամիջոցում միացնում են իրենց լծկանները, ձիերը, մեքենաներն ու կոլեկտիվ ձևով մշակում են հողը։ Այդ դեպքում նրանք մնում են իրենց լծկանների ու մեքենաների տերը։ Իսկ բերքը բաշխելու ժամանակ հաշվի յեն առնվում ոչ միայն գյուղացու աշխատանքը, այլև նրա հողի քանակն ու նրան պատկանող՝ բանող անասունը, մեքենաները։ Ով շատ հող, բանող անասուն ու մեքենա ունի, նա էլ մեծ բաժին ե ստանում բերքից։

Գյուղատնտեսական արտելում գյուղացիները վերջնականապես վերացնում են իրենց դաշտերի միջնակները (թմբերը)։ Հողը դառնում ե ընդհանուր—հասարակական։ Ընդհանուր են դառնում և բանող անասունը, մեքենաները, տնտեսական շինությունները, որոնք անհրաժեշտ են կոլեկտիվ տնտեսություն վարելու համար։

Արտելում կոլտնտեսականի յեկամուտը կախված ե նրանից թե, նա ի՛նչքան ե աշխատել և ի՛նչպես ե աշխատել։

Սակայն արտելում ամեն ինչ ընդհանուր—հանրային չի դառնում։ Յուրաքանչյուր կոլտնտեսական ընտանիք պետք ե ունենա օժանդակ—լրացուցիչ տնտեսություն՝ մի կով, տնամերձ պարտեզ, մանր անասուն, տնային թռչուն։ Այն կոլտնտեսականները, որոնք չունեն կով, կոլտնտեսությունը պետք ե օգնի, որ նրանք ձեռք բերեն այդ կովը։

Կոմունան արտելից տարբերվում ե նրանով, որ կոմունայում հանրայնացվում ե գյուղացիների ողջ տնտեսությունը։ Կոմունարները չունեն իրենց օժանդակ տնտեսությունը։

Մեր կոլտնտեսականների ամենից մեծ մասը միավորված ե գյուղատնտեսական արտելում։ Իսկ ինչո՞ւ յե այդպես։

Գյուղացին սովոր ե ունենալ իր սեփական տնտեսությունը։ Դրա համար էլ հարկավոր ե որոշ ժամանակ, որ գյուղացին վերադաստիարակվի։ Այդ բանը միանգամից տեղի չի ունենում։ Արտելը հնարավորություն ե տալիս զուգակցելու կոլտնտեսականի կոլեկտիվ աշխատանքը նրա մասնավոր տնամերձ տնտեսության հետ։ Ահա դրա համար էլ արտելը տվյալ էտապում կոլտնտեսությունների հիմնական ու գլխավոր ձևն ե։ Ուստի պետք ե ամրապնդել արտելը։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ ե պահանջվում այն բանի համար, որ մեր բոլոր կոլտնտեսականները ունևոր դառնան։

2. Ի՞նչ տարբերություն կա հողագործական ընկերության ու արտելի միջև։

3. Ի՞նչ տարբերություն կա գյուղատնտեսական արտելի ու կոմունայի միջև։

4. Ինչո՞ւ արտելը հանդիսանում ե կոլտնտեսությունների հիմնական ու գլխավոր ձևը։

---

§ 59 ԱՇԽԱՏԵԼ ԱԶՆՎՈՐԵՆ։ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵԿԱՄՈՒՏԸ ԲԱՇԽԵԼ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Ով չի աշխատում կամ թե վատ ե աշխատում, նա տեղ չունի կոլտնտեսական աշխատավորական ընտանիքում։ Ով չի աշխատում, նա ցանկանում ե ապրել ուրիշի հաշվին այնպես, ինչպես ապրում եր կուլակը։ Դրա համար էլ նա խորհրդային իշխանության հենարանը չի, այլ մեր թշնամու— կուլակի հենարանն ե։

Մեր կոլտնտեսություններում դեռ կան ծույլեր (ծույլեր, աշխատանքից խուսափողներ)։ Ցերբեմն կոլտնտեսականների մեջ լինում են մարդիկ, որոնք

Հենց վոր գարունը գալիս է, յերբ արդեն պետք է ցանել, չքանում են, նրանց չես տեսնի. ամառը, յերբ հարկավոր է բերքը հավաքել, նորից նրանք չկան, իսկ յերբ մոտենում է աշունը, նրանք են հայտնվում պատրաստի հացի մոտ: Կոլտնտեսությունում չարերը դեռ աշխատանքին նայում են վորպես ուրիշի— օտարի աշխատանքի: Աշխատում են մի կերպ— քաշ տալով: Հաճախ դրանով նրանք խանգարում են մյուս կոլտնտեսականների աշխատանքը: Որինակ, կոլտնտեսության մի բրիգադը հողը լավ է վարում, նրանից հետո յեկող բրիգադը հերկը վատ է կատարում, և ստացվում է վատ բերք: Ուրեմն, նրանք, վորոնք վատ աշխատեցին, դրանով փչացրին նաև լավ աշխատողների աշխատանքը: Կան նաև կոլտնտեսականներ, վոր իրենք նստում են տանը, իսկ կոլտնտեսությունում աշխատելու ուղարկում են իրենց յերեխաներին:

ԽՍՀՄ-ի Կենտգործկոմն որենք է հրատարակել, վորի համաձայն կոլտնտեսություններում աշխատանքից հրաժարվելու դեպքում առաջին անգամ տուգանում են, իսկ յերկրորդ անգամ հրաժարվելու դեպքում լոդըրներին վտարում են կոլտնտեսությունից: Կոլտնտեսությունները իրապես ամրապնդելու համար հարկավոր է այդ որենքն իրագործել ամենայն խստությամբ:

Յեկամուտը հարկավոր է բաշխել վոչ թե բոլորին հավասարապես, ըստ շնչերի, այլ ըստ կատարած աշխատանքի չափի: Նա, ով շատ է աշխատում, պետք է շատ ստանա:

Կոլտնտեսություններում աշխատանքը գնահատվում է աշխորերով (աշխատանքային որերով): Յուրաքանչյուր աշխատանքի համար մշակված ու սահմանված է, թե ինչքան պետք է գործ կատարվի:

Որինակ՝ վար անողն որական պետք է վարի 1,2 հեկտար հող, ցանք անողը պետք է ցանի 2,5 հեկտար հող և այլն: Այս կոչվում է աշխատանքային նորմա:

Սակայն աշխատանքները տարբեր են լինում. մեկը դժվար է լինում, մյուսն ավելի պարզ: Վար ու ցանք անողների աշխատանքն ավելի պարզ է ու հեշտ, քան թե կոմբայնի ղեկավարի աշխատանքը: Դրա համար էլ սահմանված աշխատանքային նորմայի համար վարողին և ցանողին հաշվում են մեկ աշխոր, իսկ կոմբայնի ղեկավարին՝ 2 աշխոր:

Վորոշ կոլտնտեսություններում աշխորը վորոշվում էր արևով: Որը բաժանում եյին չորս մասի: Յեթե կոլտնտեսականն աշխատում էր ամբողջ որը, նրա գրքույկում գրում եյին մեկ աշխոր: Իսկ յեթե նա գալիս էր ճաշից հետո և աշխատում էր մինչև յերեկո, նրա գրքույկում գրում եյին ¾ աշխոր և այլն: Այսպիսով բոլորն ստանում եյին միատեսակ, թե՛ ամենաբացահայտ լոդըրը, վոր աշխատանքի վայրում վոչինչ չէր անում և թե՛ նա, վոր շատ լավ էր աշխատում:

Աշխորները պետք է գրանցվեն վո՛չ թե ըստ այն բանի, թե կոլտնտեսականը վորքան ժամանակ է անցկացրել աշխատանքի վայրում, այլ ըստ այն բանի, թե ինչքան ու ինչպիսի աշխատանք է նա կատարել:

Որինակ, աշխատում է վար անողը. նրա համար աշխատանքի նորման սահմանված է որական 1,2 հեկտար: Յեթե նա վարի այդքան, կստանա մի աշխոր, իսկ յեթե վարի 1,8 հեկտար, կստանա 1,5 աշխոր:

Սակայն հարկավոր է հաշվի առնել նաև աշխատանքի վորակը: Յեթե բրիգադը լավ է աշխատել ու նրա դաշտում բերքը ստացվել է միջինից բարձր, ապա այդ բրիգադի կոլտնտեսականները պետք է ստանան վորոշ հավելում — բարձր բերքի համար: Դա կհրահրի վատ աշխատող կոլտնտեսականներին լավ աշխատելու: Այլապես, շատ աշխորեր ստանալու համար, կոլտնտեսականները կշտապեն ու վորակը կմոռանան՝ հողը վատ կվարեն, սերմը նոսր կցանեն:

Վատ կատարած աշխատանքը բրիգադավարները չպետք է ընդունեն: Նրանք պետք է ստիպեն հանձնարած աշխատանքը կատարել լավ:

Տարեվերջին, կատարելով պետության հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները, ցանքի համար պահելով սերմացու, կոլտնտեսականները մնացած հացն ու բերքը բաշխում են իրենց միջև՝ ըստ աշխատած աշխորերի չափի: Նա, ով վատ է աշխատել և ունի շատ աշխորեր, կստանա ավելի յեկամուտ:

Յեթե վոչ վոք չհաշվի կատարված աշխատանքը, կարելի՞ յե արդյոք ճիշտ հաշվի առնել, թե ո՛վ է աշխատում, ո՛վ չի աշխատում, ո՛վ է վատ աշխատում, ո՛վ լավ: Իհարկե՝ վոչ: Իսկ հաշվառման գործը մեզ մոտ՝ կոլտնտեսություններում դեռ վատ է դրված: Շատ հաճախ աշխորերն ամենօրյա գրանցման չեն յենթարկվում, այլ հետագայում հիշողությամբ են գրանցվում: Այդ դեպքում կոլտնտեսականը, վորքան հաշվողին համոզի, վերջինս ել այնքան աշխոր կգրանցի:

Կոլտնտեսականը լավ կաշխատի միայն այն ժամանակ, յերբ համոզված լինի, վոր իր կատարած աշխատանքը վճարվելու յե: Հարկավոր է կոլտնտեսականի աշխատանքային գրքույկում վո՛չ պակաս քան հինգ որը մեկ անգամ գրանցել, թե ի՛նչ աշխատանք է նա կատարել և ի՛նչքան աշխոր է հասնում այդ աշխատանքի համար: Հաշվողներ և հաշվետարներ պետք է նշանակել ազնիվ և ստուգված մարդկանց:

§ 60. ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԸ: ՊԱՀՊԱՆԵԼ ՈՒ ՃԻՇՏ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՐԱԿՏՈՐՆԵՐՆ ՈՒ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Վորպեսզի հողը լավ մշակվի, պետք է կոլտնտեսականների աշխատանքը ճիշտ կազմակերպել:

Յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է մտնի մի բրիգադի մեջ: Բրիգադը պետք է լինի մշտական: Կոլտնտեսականները չպետք է հաճախակի մի բրիգադից մյուսը տեղափոխվեն:

Յուրաքանչյուր բրիգադ պետք է ունենա իր մշտական հողամասը: Բրիգադը պետք է լիովին ու ամ-

բողջովին պատասխանատու լինի իր հողամասերի համար, իր աշխատանքի ու բերքի համար:

Կոլտնտեսությունները բրիգադներին տալիս են անհրաժեշտ մեքենաներ: Մեր յերկրում կան շատ և շատ կոլտնտեսություններ, վորոնք հիանալի կերպով կարողանում են գործածել մեքենաները: Բայց կան նաև կոլտնտեսություններ, վորոնք չեն կարողանում մեքենաների հետ վարվել այնպես, ինչպես հարկն է: Մեքենաներն ու տրակտորները վատ են ոգտագործվում: Մեքենաների ամրացումը վորոշ բրիգադների կբարելավի մեքենաների ոգտագործումը, վորովհետև յուրաքանչյուր մեքենայի համար բրիգադը պատասխանատու կլինի կոլտնտեսության վարչության առաջ: Մեքենաների լավ ոգտագործումը կբարձրացնի յուրաքանչյուր կոլտնտեսականի յեկամուտը:

§ 61. ՊԱՅՔԱՐԵԼ ԱՄՈՒՐ, ԼԱՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՁԻՈՒ ՅԵՎ ՅԵԶԱՆ ՀԱՄԱՐ

Գյուղատնտեսության մեջ ձիուն և յեզանը փոխարինելու յե գալիս տրակտորը: Սրանից ել վորոշ կոլտնտեսականներ այն կարծիքին են գալիս, թե իբր ձին ու յեզը հիմա այլևս մեզ պետք չեն: Այդ սխալ է:

Ձին ու յեզը մեզ հարկավոր են: Տրակտորը լիովին չի կարող փոխարինել ձիուն ու յեզանը: Առանց ձիու ու յեզան անհնար է գյուղատնտեսություն ունենալ: Ինչքան ել տրակտորներ բերենք, ձին ու յեզը գյուղատնտեսության մեջ ել՛ անհրաժեշտ են: Ձին մեզ անհրաժեշտ է նաև փոխադրությունների համար: Մենք դեռ այնքան շատ, ամեն տեղ [illegible] չունենք, ուստի այս դեպքում ել ձին ու յեզը դեռ մեծ անելիք ունեն: Առանձնապես ձին մեզ անհրաժեշտ է նաև յերկրի պաշտպանության համար:

Իսկ ձիու բանն այժմ մեզ մոտ լավ չե: Այս բանում մեզ շատ վնասեցին մեր թշնամիները: Կուլակներն ամեն

կերպ լուրեր տարածեցին, թե քանի վոր կոլտնտեսություններում տրակտորներ պետք է լինեն, ուստի այլևս ձին պետք չի և ձիու մասին մտածելու կարիք չկա: Կուլակներն ու վնասարարներն ամեն կերպ ջանք եյին գործ դնում, վոր քայքայեն մեր ձիաբուծական տնտեսությունը: Վնասարարները մեր ձիերին պատվաստում եյին մենինգիտ կոչվող հիվանդությունը (ուղեղի բորբոքում): Կուլակները խցկվում եյին կոլտնտեսությունները, հաջողեցնում եյին ձիապանի պաշտոն ձեռք բերել



և այդ միջոցով տանում եյին իրենց վնասարարական աշխատանքը:

Մի շարք կոլտնտեսություններ ընկան կուլակների ու վնասարարների ազդեցության տակ. վատ եյին խնամում ձիերին. դրանով իսկ նրանք ոգնում եյին կուլակին:

Այս ամենը հասցրեց այն բանին, վոր մեր յերկիրը կորցրեց մի քանի միլիոն ձի: Շատ ձիեր վոչնչացան— վոչնչացրին թե՛ կուլակը և թե՛ նրանք, ովքեր լսեցին կուլակին:

Կուսակցությունը դիմակազերծ արեց (հայտաբերեց) կուլակներին ու վնասարարներին: Շատ կոլտնտեսություններ ձիաբուծական տնտեսության բարելավ-

ման գործում արդեն ձեռք են բերել մեծ հաջողություններ: Հարվածային կոլտնտեսականները մարտականորեն ձեռնամուխ յեղան ամուր, լավ, կոլտնտեսական ձի ունենալու գործին:

Ի՞նչ է հարկավոր ձիաբուծական տնտեսությունը բարելավելու համար:

Հարկավոր է ձիերին լավ խնամել: Պետք է յամագույն կոլտնտեսականները խնամեն ձիուն և ընդհանրապես բանող անասունին: [illegible], վոր աշխատավորները մշտական լինեն և վոչ թե ամեն օր փոփոխվեն: Աշխատավորը պետք է վարձատրվի համաձայն այն բանի, թե ինչքա՞ն է նրա ձին կամ բանող անասունը խնամված, կուշտ ու առողջ:

Հարկավոր է ճիշտ կազմակերպել կեր և ջուր տալու գործը: Լավ կոլտնտեսության ախոռը պետք է ցուրտ չլինի, և ձին ու յեզն էլ մաքուր պահվեն:

§ 62. ՃՇՏՈՐԵՆ ՈՒ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղացիությունը կոլտնտեսական ուղիով տանելու համար հարկավոր էր մեր յերկիրը դարձնել արդյունաբերական: Հարկավոր էր կառուցել տրակտորային գործարաններ, գյուղատնտեսական մեքենաշինական գործարաններ, վորպեսզի գյուղացիությանը մատակարարեյինք տրակտորներ ու մեքենաներ:

Ովքե՞ր են կառուցում գործարանները: Բանվորները: Խորհրդային յերկիրը հարկավոր է պաշտպանել կապիտալիստական յերկրների հարձակումից: Հարկավոր է Կարմիր բանակ: Բանվորներին և կարմիր բանակայիններին հարկավոր են հաց և այլ գյուղատնտեսական մթերներ:

Գործարաններ ու ֆաբրիկներ կառուցելու համար հարկավոր են մեքենաներ, հարկավոր է մետաղ և դրանք գնելու համար միջոցներ:

Մեր ամբողջ տնտեսությունը կառուցվում է միասնական պլանով: Պլանում առաջադրվում է կառուցել այսքան գործարաններ, ֆաբրիկներ, էլեկտրոկայաններ, խորհտնտեսություններ, ՄՏԿ-ներ. արտադրել այսքան մեքենաներ, տրակտորներ և այլն:

Պլանում ամեն բան հաշված է ու մեկը մյուսի հետ համարեցրած՝ թե ի՛նչքան պետք է ծախսել և ինչի՛ վրա: Հաշված է, թե վո՛րտեղից պետք է վերցնել այդ միջոցները: Հաշված է, որ այսքան յեկամուտ կտան ֆաբրիկներում ու գործարաններում աշխատող բանվորները, այսքան կտան խորհտնտեսություններն ու ՄՏԿ-ները, այսքան հաց պետք է տան կոլտնտեսականներն ու մենատնտեսատեր գյուղացիները, վորպեսզի պահպանեն իրենց յերկիրը:

Իսկ յեթե կոլտնտեսականներն ու մենատնտեսատեր գյուղացիները չկատարեն իրենց պարտավորությունները և ժամանակին չտան պետության հարկը — ի՞նչ կլինի: Այն ժամանակ չի իրագործվի նաև մեր հնգամյակը:

Իսկ կարելի՞ յե թույլ տալ, վոր մեր հնգամյակը չիրագործվի: Իհարկե՝ վոչ: Կոլտնտեսական շինարարության հաջողությունները կախված են մեր վողջ յերկրի հաջողություններից: Դրա համար էլ հենց վոր բերքը հավաքվում է, կոլտնտեսականները պարտավոր են առաջին հերթին հանձնել պետության հարկը:

Կուլակներն ամեն կերպ ձգտում են խափանել հացի հանձնումը պետությանը: Մի շարք շրջաններում կուլակները կոլտնտեսություններին դրդում եյին ցանել միայն իրենց սեփական կարիքների համար, իսկ պետությանը հաց չտալ: Նրանք համոզում եյին գյուղացիներին հացը թանկ գնով շուկայում ծախել, իսկ պետությանը հաց չհանձնել: Անգիտակից գյուղացիներից վոմանք ընկնում եյին կուլակների վորոգայթը: Ուկրայինայում, որինակ՝ 1932 թ. դեկտեմբերին 2 տասնօրյակի ընթացքում հայտաբերվել էր 11.300 տոնն հացահատիկ, վորը թաքցված եր կուլակների ու վնասարարների դրդմամբ:

Կոլտնտեսականներն ու մենատնտեսատեր աշխատավոր գյուղացիները, վոր վաղվա կոլտնտեսականներն են, պետք է հիշեն, վոր նրանց համար լավագույն կյանք բերում է միայն Խորհրդային իշխանությունը, և յեթե նրանք իրենք չամրացնեն իրենց իշխանությունը, ապա այդ կյանքը ձեռք բերել չեն կարող:

§ 63. ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՉՔԻ ԼՈՒՅՍԻ ՊԵՍ

Մենք գյուղում ջախջախեցինք կուլակությանը: Բայց կուլակը դեռ մինչև վերջ չի ջախջախված: Իսպառ չվերացած թշնամիները գործ են դնում ամեն միջոց՝ խանգարելու սոցիալիստական շինարարությանը գյուղում: Կուլակները ներս են խցկվում կոլտնտեսությունները, խորհտնտեսություններն ու ՄՏԿ-ները և այնտեղ ամեն կերպ վնասում գործին:

Մեր թշնամիները շատ լավ են հասկանում, թե ինչ նշանակություն ունեն տրակտորն ու մեքենան կոլտնտեսային գյուղի համար: Նրանք ձգտում են խցկվել ՄՏԿ-ները, տրակտորավարների շարքերը, կամ այնտեղ են ուղարկում իրենց մարդկանց, վորպեսզի կամացուկ, ծածուկ ու աննկատելի կերպով փչացնեն տրակտորներն ու մեքենաները, կազմակերպեն հաճախակի խափանումներ:

Միջին-Վոլգյան յերկրի Կանուեկա կոչվող գյուղում բարդ կալսող մեքենան յերկու տարի շարունակ չեր գործում: Կարգի եյին գցում, բայց յերկրորդ որը նորից փչանում եր: ՄՏԿ-ից շատ շատ անգամ գալիս եյին մեխանիկներ, տեխնիկներ, քանդում եյին մեքենան, նորից հավաքում. կարծես ամեն ինչ կարգին եր, բայց նորից ու նորից մեքենան չեր գործում:

Կուլակները գյուղում լուրեր եյին տարածում, թե

«կալսող մեքենան վատ է աշխատում, որովհետև քաղաքում բանվորները մեքենաները վատ են պատրաստում»։

Իսկ հետո պարզվեց, որ կալսող մեքենայի մոտ, խորև բրիգադիր, աշխատում էր ամենայերդվյալ կուլակը և նա դիտմամբ փչացնում էր մեքենան։

Այսպիսի դեպքերը քիչ չեն։ Պետք է տրակտորը աչքի լույսի պես պահպանել։ Տրակտորավարներ պետք է նշանակել հավատարիմ, ստուգված մարդկանց։

Ոչ շատ առաջ Պետքաղվարչությունը հայտաբերեց վնասարարական կազմակերպություն, որի մեջ մտնում էյին նախկին կալվածատերերի ու կապիտալիստների զավակներ, սպիտակ գվարդիականներ ու կուլակներ։

Վնասարարներն ուզում էյին քայքայել մեր կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները։ Այդ կազմակերպությունն ամենուրեք նշանակում էր իր մարդկանց ու նրանց հրահանգում փչացնել մեքենաներն ու տրակտորները, վոչնչացնել ձիերը, յեզները ,կովերը, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների դաշտերում տարածել մոլախոտեր։ Մեր թշնամիները ցանկանում էյին սովի միջոցով վոչնչացնել բանվորներին ու գյուղացիներին։ Նրանք այդ միջոցով ցանկանում էյին վերադարձնել կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը։

Վնասարարներն ամեն կերպ ջանք էյին գործ դնում, որ կործանեն մեր ձիաբուծական տնտեսությունը։ Հյուսիսային Կովկասում՝ Ռոստովից 65 կիլոմետր հեռու կա ձիաբուծական խորհտնտեսություն, վորն ունի 3500 ձի։ Կարճ ժամանակամիջոցում խորհտնտեսությունում սատկեց 833 մատակ։ Բացի այդ, 300 մատակ բոլորովին ուժասպառ յեղան։ Ձիերին յերեք ո-րով չէյին կերակրում ու չէյին ջրում։ Պարզվեց, վոր խորհտնտեսությունում աշխատում էր 102 կուլակ։ Նույնիսկ կուսբջջի մեջ էյին խցկվել 7 նախկին կուլակ։

Սողոսկելով կոլտնտեսության մեջ, կուլակներն աշխատում են ավելի մոտիկ գտնվել կոլտնտեսական բարիքներին ու հեշտությամբ ցիր ու ցան անել այն։ Նրանք աշխատում են այնտեղ դառնալ կշռող, մառանապետ, հաշվող, հաշվետար և այլն։

Միչևի շրջանի «Աշխատանք» կոլտնտեսությունում կուլակը ձեռք էր բերել հաշվետարի պաշտոն և այնպես էր շփոթել գործերը, վոր նրա գողացած 8 ցենտներ հացահատիկը գրքերով վոչ մի կերպ պարզել չէր կարելի։

Կոլտնտեսականների մեջ կան նաև մարդիկ, վորոնք կոլտնտեսական գույքին նայում են խորթ աչքով, կարծես դա իրենցը չի, այլ ուրիշի գույքն է։

Կարելի՞ յե այդպիսի դրությունն այսուհետև ևս հանդուրժել։ Կարելի՞ յե թույլ տալ, վոր հետագայում էլ այն, ինչ ստեղծված է կոլտնտեսականների աշխատանքով, փչացվի ու գողացվի։ Իհարկե չի կարելի։

Կապիտալիստներն ամեն կերպ պահպանում էյին իրենց ֆաբրիկներն ու գործարանները, վորպեսզի ըստ ամենայնի շահագործեն բանվորներին ու գյուղացիներին։

Մեր յերկրի բանվորներն ու կոլտնտեսականները պետք է պահպանեն յուրաքանչյուր կոպեկ, յուրաքանչյուր իր. պետք է պահպանեն իրենց տնտեսությունը աչքի լույսի պես, վորովհետև դրանով կբարելավվի նրանց կյանքը։

Պետք է կանոնավոր հաշվի առնել կոլտնտեսության բարիքներն ու գույքը։ Յերբ կոլտնտեսությունում լավ չի հաշված լինում, թե նա ինչքան մեքենաներ, հացահատիկ և այլն բարիքներ ունի, այդ դեպքում հեշտանում է գողի ու ավազակի գործը։ Պ՛տի կոլտնտեսության գույքն ուշի ուշով պահպանել։ Մեզ մոտ ամենուրեք լավ չի պահպանված գույքը։ Քիչ չեն դեպքերը, յերբ կոլտնտեսության գույքի պահպանման մասին վոչ վոք չի մտածում։

Լուբենսկի շրջանի Պեսկի կոչվող գյուղում «Հոկտեմբերի 13 տարվա» անվան կոլտնտեսությունում կոլտնտեսական ընկ. Յուխիմ Կովալը լավագույն օրինակը ցույց տվեց այն բանի, թե կոլտնտեսականն ինչպե՛ս պետք ե վերաբերվի հանրային գույքին:

Ընկ. Կովալը նշանակված եր շտեմարանի պահակ, իսկ շտեմարանում պահված եր ցանքի հացահատիկը:

Կուլակները վաղուց մտադրվել եյին թալանել կոլտնտեսության շտեմարանը: Յեվ ահա, յերբ առավոտյան պետք ե ցանքսն սկսվեր, կուլակները, վորպեսզի գրավեն Կովալի ուշադրությունը, մարտի 1-ի գիշերը հրդեհում են նրա խրճիթը:

Ընկ. Կովալն առաջինն ե նկատում հրդեհը: Նա տեսնում ե, թե ինչպես դեպի մութ յերկինքն են բարձրանում կարմիր բոցերը:

Հրդե՜հ... Տանը փոքրիկ յերեխաներ... Բայց ընկ. Կովալը չի թողնում իր պոստը: Նա շարունակում ե հսկել ու պահպանել սերմացուով լիքը շտեմարանը, մինչև վոր գալիս են նրան փոխարինելու մյուս կոլտնտեսականները:

Հերոսական վարմունքի և դեպի կոլտնտեսական գույքը սոցիալիստական վերաբերմունք ցուցաբերելու համար ընկ. Կովալին տվեցին նոր խրճիթ և 600 ռ., վորպեսզի նա վերականգնի իր տնային տնտեսությունը: Նրա յերեխաներին հագցրին, իսկ իրեն՝ ընկ. Կովալին պարգևատրեցին գովասանագրով, իբրև լավագույն հարվածայինի:

Ահա այսպիսի տերերի մոտից գողի համար դժվար ե գողություն անել:

§ 64. ՄՏԿ-ՆԵՐԻՆ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՆ ՔԱՂԲԱԺԻՆՆԵՐ

Կոլեկտիվ տնտեսությունն ամուր կերպով նստել ե գյուղը: Վերադարձ դեպի հինը այլևս չկա: Բայց կարելի՞ յե արդյոք այլևս չմտածել գյուղի մասին: Վոչ,

չի կարելի: Ընդհակառակը, գյուղի վերաբերյալ մեր հոգսերն ավելի մեծանում են:

Առաջ գյուղացին աշխատում եր մի փոքրիկ հողամասի վրա: Նա լավ գիտեր իր հողը, ուներ մի գութան ու մի ձի կամ յեզ: Աշխատում եր որ ու գիշեր: Ապրում եր մի կերպ՝ մի որ կուշտ, մի որ քաղցած: Նա ինքն եր հոգ տանում իր տնտեսության մասին: Նա ինքն եր իր առաջ պատասխանատու դրա համար: Յեթե բերքը վատ եր լինում, գյուղացին մեղքն իրենից բացի վոչ վոքի վրա չեր կարող գցել: Նա ինքն եր մտածում ու հոգս տանում ցանքի, բերքահավաքի և այլի մասին:

Այլ կերպ ե գործը կոլտնտեսությունում: Կոլեկտիվ տնտեսություն վարել առանց պլանի չի կարելի: Առաջ մենատնտեսատեր գյուղացին առանձնապես հաշվելու բան չուներ — ամեն ինչ հիշողությամբ եր, բոլորն աչքի առաջ եր: Իսկ կոլտնտեսությունը մի՞թե կարելի յե կառավարել առանց հաշվառման, առանց հաշվի: Կոլտնտեսությունն առանց հաշվառքի նույն ե, տունն առանց դռների— մտիր ու գողացիր:

Կոլտնտեսությունների աշխատանքն արագորեն ու լավ կարգի գցելու համար, մեր թշնամիներին հայտաբերելու և այնտեղից դուրս քշելու համար մեր կոմունիստական կուսակցությունը 1933 թվին գյուղ ե ուղարկել 15.000 լավագույն կոմունիստներ ու կոմյերիտականներ՝ ՄՏԿ-ներում ու խորհտնտեսություններում աշխատելու համար: Ուղարկված կոմունիստներից ՄՏԿ-ներին ու խորհտնտեսություններին կից կազմակերպված են քաղբաժիններ, վորոնք ղեկավարում են կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կյանքն ու աշխատանքը:

Ո՞ւմ ե կուսակցությունն ուղարկել գյուղ: Ահա այդ կոմունիստներից մեկը— ընկ. Զեսնոկովը, վոր ուղարկված ե Ուկրայնայի Կանցերովի ՄՏԿ-ի քաղբաժնի պետ:

Մանկությունը— մինչև տաս տարեկան հասակը— ընկ. Զեսնոկովն անց ե կացրել գյուղում՝ չքավորական

ընտանիքում: Տաս տարեկան հասակում նրան տալիս են կուլակին՝ իբրև բատրակ: Կուլակի մոտ նրա կյանքն անցնում էր մշտական ծեծի, ծաղր ու ծանակի պայմաններում:

Սկսվեց իմպերիալիստական պատերազմը: Եվ ահա ընկ. Չեսնոկովը դառնում է ցարական բանակի զինվոր: Մի անգամ նա Կիևում փողոցով անցնելիս չի նկատում դիմացից յեկող գնդապետին և «պատիվ» չի տալիս: Դրա համար նրան մարմնական պատժի յեն յենթարկում, զարկում են քսանուհինգ ճիպոտ...

1917 թ. ընկ. Չեսնոկովը Հոկտեմբերյան հեղափոխության ակտիվ մասնակիցն է դառնում: 1918 թ. հունվարի 1-ին նա մտնում է կոմունիստական կուսակցության մեջ:

Քաղաքացիական կռիվներին ընկ. Չեսնոկովը ղեկավարում է մի ամբողջ գունդ: Նա պատերազմում կռվում էր սպիտակ գվարդիականների դեմ: Վիրավորվում է:

Յերբ վերջանում են քաղաքացիական կռիվները, կուսակցությունն ընկ. Չեսնոկովին ուղարկում է կուսակցական աշխատանքի: Սկսվում է Դնեպրոստրոյի (Դնեպրոշինի) կառուցումը: Կուսակցությունն ընկ. Չեսնոկովին ուղարկում է այդ շինարարության վրա աշխատելու:

Այժմ Դնեպրոշինը դարձել է Դնեպրյան հիդրոկայան: Նոր խնդիրն է՝ բարելավել կոլտնտեսական գյուղի աշխատանքը: Կուսակցությունը, յելնելով այդ նոր խնդրից, լավագույն կոմունիստ ընկ. Չեսնոկովին ուղարկում է այդ կարևորագույն աշխատանքի բնագավառը:

—Ի՞նչ խնդիր ունեմ յես իմ առաջ նոր աշխատանքում,—ասում է ընկ. Չեսնոկովը:

— Հարվածային կոլտնտեսականներից, բրիգադիրներից ստեղծել կոլտնտեսական ակտիվ և այդ ակ-

տիվի միջոցով ղեկավարել կոլտնտեսության աշխատանքը:

— Պայքարել բերքատվության բարձրացման համար:

—Համառորեն պայքարել, վորպեսզի կոլտնտեսությունները կատարեն պետության հանդեպ ունեցած պարտավորությունները:

— Ե՛լ ավելի բարելավել կոլտնտեսականների կյանքը:

Վերջնապես քշել ու արմատախիլ անել կուլակության մնացորդները:

— Իմ խնդիրն է— ասում է ընկ. Չեսնոկովը— գյուղում պարզորոշ ու հաստատակամորեն անցկացնել կուսակցության քաղաքականությունն ու մեր առաջնորդ և ուսուցիչ ընկ. Ստալինի ցուցմունքները: Նոր աշխատանքի գնում եմ բարձր տրամադրությամբ: Հավատացած եմ, վոր կարդարացնեմ կուսակցության վստահությունը:

Ահա թե կուսակցությունն ինչպիսի կոմունիստներ է ուղարկել կոլտնտեսական գյուղում աշխատանքներն ուժեղացնելու համար:

Քաղբաժինները վաղուց չի, ինչ աշխատում են, բայց արդեն զգալի նվաճումներ ունեն իրենց աշխատանքներում:

§ 65. ՊԻՈՆԵՐՆԵՐՆ ՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻՆ

Խորհուրդների յերկրի յերեխաները չեն կարող ակտիվորեն չմասնակցել գյուղի վերակառուցմանը:

Պիոները, դպրոցական աշակերտը, վորոնց ծնողները դեռ կոլտնտեսության մեջ չեն, պետք է աշխատեն իրենց ծնողներին կոլտնտեսության մեջ ներգրավելու համար:

Պիոներներն ու աշակերտները պետք է մասնակցեն կոլտնտեսության աշխատանքներին:

Վերցնենք թեկուզ գարունը: Ցարի ժամանակ պատահում էր, որ դեռ ձյունը դաշտերից չհալված, գյուղում արդեն փակվում էին դպրոցները, գյուղական երեխաները՝ թե՛ մեծերը և թե մանուկներն իրենց ծնողների հետ գնում էին դաշտերը:

Մեր բանվորագյուղացիական կառավարությունն արգելել է ուսումից զրկել աշակերտներին, ինչ աշխատանք էլ որ լինի:

Բայց այդ չի նշանակում, թե աշակերտներն ու պիոներները բոլորովին չպետք է մասնակցեն կոլտնտեսության աշխատանքներին: Դպրոցն ու պիոներական կազմակերպությունը պետք է ակտիվ մասնակցություն ցույց տան ցանքի կամպանիային:

Աշակերտների մասնակցությունը գարնանացանին պետք է այնպես կազմակերպվի, որ դպրոցում դաս մի ուսումնական օր չկորչի: Պետք է աշխատանքն այնպես կազմակերպել, որ օգնելով կոլտնտեսականներին՝ աշակերտները նաև ձեռք բերեն որոշ գիտելիքներ: Գյուղական պիոներներն ու աշակերտները մեծ օգնություն կարող են ցույց տալ՝ մասնակցելով սերմի տեսակավորմանն ու արծնմանը: Օգնությունը կարող է լինել նաև տրակտորներն ու մեքենաները կարգի բերելու գծով: Երեխաներն այդպիսով կծանոթանան, թե ինչպես է կատարվում սերմի տեսակավորումն ու արծնումը, ինչպես է կատարվում մեքենաների նորոգումը և, իրենց ուժերի ներածին չափ, կմասնակցեն այդ աշխատանքներին:

Քաղաքի պիոներներն ու աշակերտները պետք է միշտ կապված լինեն գյուղական դպրոցի ու պիոներ կազմակերպության հետ:

Պիոներներն ու դպրոցական աշակերտները ոչ մի րոպե չպետք է մոռանան, որ նրանք պետք է պայքարեն կոլտնտեսության բոլոր թշնամիների դեմ:

§ 66. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Քանի դեռ գյուղացիները կոլտնտեսություններում միացած չէին, նրանք քիչ ավելցուկներ ունեին իրենց տնտեսության մեջ: Նրանց հացը և միսը հազիվ իրենց էր բավարարում և բավականացնում էր պետության պարտավորությունները կատարելու համար:

Այժմ, երբ գյուղացիները միացած են կոլտնտեսությունների մեջ, հնարավորություն կա ավելի շատ հող մշակել և մշակումն ավելի լավ ձևով կատարել: Դրա հետևանքով նրանք ստանում են ավելի շատ բերք և տնտեսության մեջ էլ ավելցուկները շատ են լինում: Բացի կոլեկտիվ տնտեսությունից, կոլտնտեսական գյուղացին ունի նաև օժանդակ տնտեսություն—մի կով, տնային թռչուններ, տնամերձ պարտեզ: Այն, ինչ կոլտնտեսականն ստանում է կոլտնտեսությունից և իր օժանդակ տնտեսությունից, ոչ միայն բավարարում է իր ընտանիքին, այլև ավելցուկներ են մնում:

Աճեցին ու ամրացան կոլտնտեսությունները: Նրանք տարեցտարի պետությանը տալիս են ավելի ու ավելի շատ հաց, միս և այլ մթերքներ:

Կոլտնտեսություններին նրանց ավելցուկները վաճառելու հնարավորություն տալու համար, քաղաքային բնակչությանը հաց, միս, յուղ, կաթնամթերքներ, ու բանջարեղեն ավելի լավ մատակարարելու համար, խորհրդային իշխանությունը ծավալում է կոլտնտեսական առևտուրը:

Այն կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին ու մենատնտեսատեր գյուղացիներին, որոնք կատարում են պետության հանդեպ ունեցած պարտավորությունները, իրավունք է տրվում շուկաներում և կոլտնտեսական հրապարակներում ծախել հաց, խոշոր անասուն, խոզ, թռչուն և իրենց տնտեսության այլ մթերքները:

Կոլտնտեսական առևտուրը շահագրգռում է կոլ-

տնտեսականից ավելի լավ աշխատելու կոլեկտիվ տնտեսությունում: Իմանալով, վոր իր ավելցուկը կարող է շուկայում կամ կոլտնտեսական կրպակում վաճառել, կոլտնտեսականը կսկսի ավելի լավ աշխատել, վոր շատ աշխօր և յեկամուտ ձեռք բերի, իսկ կոլտնտեսականի լավ աշխատանքն իր հերթին կամրապնդի կոլտնտեսությունը:

Առաջ կուլակն առևտրի միջոցով հարստանում և դրանով ե՛լ ավելի յեր շահագործում գյուղացիներին: Նա ինքը չեր աշխատում, իսկ ուրիշներին ստիպում եր իրեն համար աշխատել:

Կոլտնտեսությունում բոլորը պետք է աշխատեն: Միայն նա յե յեկամուտ ստանում, ով աշխատում է: Առևտրից ստացված կոլտնտեսության յեկամուտը կծախսվի կոլտնտեսությունը բարելավելու համար: Իսկ առևտրից ստացված կոլտնտեսականի յեկամուտը նրան հնարավորություն կտա ավելի լավ ապրելու, լավ ուտելու, լավ հագնվելու ու իր յերեխաներին լավ հագցնելու:

Վորպեսզի կոլտնտեսականներն ու մենատնտեսատեր գյուղացիներն իրենց ավելցուկներից ավելի շատ բերեն վաճառելու, կոլտնտեսական շուկաներում արդյունաբերական ապրանքներ վաճառող նոր խանութներ ու կրպակներ են բացվում: Վաճառելով իրենց մթերքները՝ կոլտնտեսականները դրա փոխարեն կարող են գնել իրենց համար անհրաժեշտ՝ քաղաքի ապրանքներ—կոշիկ, հագուստեղեն և այլն:

Կոլտնտեսական առևտուրը բարելավում է քաղաքային բնակչության սննդամթերքների մատակարարումը: Յուրաքանչյուր աշխատավոր, բացի իր կոոպերատիվում յեղած մթերքներից, կարող է մթերքները գնել նաև շուկայում:

Այսպիսով, կոլտնտեսական առևտրի մեջ շահագրգռված են թե քաղաքները և թե կոլտնտեսականները: Կոլտնտեսական առևտրի միջոցով ե՛լ ավելի յե ամրապնդվում բանվորների ու գյուղացիների դաշինքը:

Կոլտնտեսական առևտրի միջոցով ամեն կերպ ձգտում են օգտվել և հարստանալ առևտրականներն ու սպեկուլյանտները: Նրանք աշխատում են գյուղացիներից գնել նրանց բերած մթերքներն ու ավելի թանգ գնով վերավաճառել: Կենտգործկոմն օրենք է հրատարակել, վորի համաձայն սպեկուլյանտներն ու վերավաճառողները խստորեն պատժվում են— նրանք ձերբակալվում են ու կալանքի տակ պահվում հնգից տաս տարի ժամանակով:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպես պետք է կոլտնտեսության յեկամուտը բաշխվի կոլտնտեսականների միջև:
2. Ի՞նչ պետք է անել կոլտնտեսությունում, վորպեսզի կոլտնտեսականների աշխատանքը ճիշտ կազմակերպվի:
3. Ի՞նչ է հարկավոր անել, վոր կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում ունենանք ամուր և առողջ ձի ու բանող անասուններ:
4. Ինչո՞ւ կոլտնտեսականներն իր ժամանակին պետք է կատարեն պետության հանդեպ ունեցած պարտավորությունները:
5. Ի՞նչ կերպ է կուլակը ընդդիմանում գյուղը կոլտնտեսական ուղիով վերակառուցելու գործին:
6. Ինչո՞ւ կոլտնտեսականներն ու խորհտնտեսության բանվորները պետք է պահպանեն հանրային սեփականությունն իրենց աչքի լույսի պես:
7. Ինչո՞ւ յեն գյուղում քաղբաժիններ կազմակերպվել:
8. Ինչո՞ւ յե խորհրդային իշխանությունը ծավալում կոլտնտեսական առևտուրը:



ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

§ 67. ԽՍՀՄ-Ը ԴԱՌՆՈՒՄ Ե ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՐԿԻՐԸ

Ցարական Ռուսաստանի կապիտալիստներն ու կալվածատերերը գիտեյին, որ աշխատավորները որքան խավար ու անկուլտուրական լինեն, այնքան հեշտ է նրանց շահագործելը և հնազանդության մեջ պահելը: Նրանք գիտեյին, որ գրագետ բանվորներն ավելի հեշտությամբ կհամախմբվեն ընդդեմ կեղեքիչների՝ միասնական պայքար մղելու համար: Դրա համար ել նրանք ամեն ջանք գործ եյին դնում, որ աշխատավորությունը խավարի ու տգիտության մեջ պահեն:

Ցարական Ռուսաստանում ազգաբնակչության յուրաքանչյուր հարյուր մարդուց 77-ը անգրագետ եր: Ցարական Ռուսաստանում դպրոցի վրա գրոշներ եյին միայն ծախսվում: Յեթե Անգլիայում տարրական դպրոցի վրա ծախսվում եր 2 ռ. 84 կ., Ֆրանսիայում՝ 2 ռ. 11 կ., Ռուսաստանում ծախսվում եր միայն 21 կոպեկ:

Իշխանությունը նվաճելու հենց առաջին որից, խորհրդային յերկրի բանվորներն ու գյուղացիները

կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ անողոք պայքար սկսեցին անկուլտուրականության դեմ:

Ցարական Ռուսաստանում աշխատավորների յերեխաների համար վոչ միայն անմատչելի եյին բարձրագույն ու միջնակարգ դպրոցները, այլև տարրական դպրոցը նրանցից քչերն եյին ավարտում:

Խորհրդային իշխանությունն աշխատավորության յերեխաների համար լայնորեն բաց արեց դպրոցի դռները:

Լայնորեն ծավալվեց մեծահասակների անգրագիտության վերացման աշխատանքը: Ամբողջ յերկրում կազմակերպվեցին անգրագիտությունը և կիսագրագիտությունը վերացնելու հազարավոր դպրոցներ:

Տասնհինգ տարվա ընթացքում խորհրդային իշխանությունը հասել է այն բանին, որ հիմնականում անգրագիտությունը մեր յերկրում վերացված է:

Սակայն ընդմիշտ անգրագիտության վերջ տալու համար այնպես, որ նա յերբեք նորից չկրկնվի, հարկավոր եր, որ բոլոր յերեխաները անպայմանորեն պարտադիր կարգով սովորեյին դպրոցում. Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, առաջին տարիներին մենք չկարողացանք բոլոր յերեխաներին միանգամից ընդգրկել դպրոցական ուսուցման ցանցի մեջ: Մեզ անհրաժեշտ եյին շատ միջոցներ, որ կարողանայինք վերականգնել մեր քայքայված տնտեսությունը, դրա համար ել մենք ստիպված եյինք նույնիսկ դպրոցական ծախսերի մեջ ևս տնտեսել:

Բայց արդեն 1929 թ. կուսակցության XVI համագումարում ընկ. Ստալինը կուսակցության առաջ դրեց ընդհանուր նախնական ուսուցման անցնելու հարցը: Կուսակցության XVI-րդ համագումարը վորոշեց յերկրում մտցնել ընդհանուր պարտադիր նախնական ուսուցում:

Այժմ մեր ամբողջ յերկրում մտցված է քառամյա պարտադիր ուսուցում, իսկ քաղաքներում ու փաբրիկ-գործարանային ավաններում — յոթնամյա ուսուցում: *Ծավալվում ու զարգանում են տասնամյա ուսուցման դպրոցները:*

Խորհրդային իշխանությունը մի շարք միջոցներ է կիրառում, վոր բանվորների, կոլտնտեսականների ու գյուղական չքավորության յերեխաները կարողանան սովորել:

Դպրոցական աշակերտներին մատակարարում են կոշիկ՝ առաջին հերթին, միաժամանակ, յերեխաների կոշիկները նորոգելու համար, կազմակերպում են կոշկակարական արհեստանոցներ: Ավելի կարիքավոր յերեխաները կոշիկ ու հագուստ են ստանում ձրիաբար: Նրանց նմանապես դպրոցում ձրիաբար տրվում է տաք նախաճաշ: Ձրի յեն ստանում նաև դասագրքեր, տետրեր, մատիտներ:

Հեռու ապրող յերեխաների համար դպրոցներին կից ստեղծվում են հանրակացարաններ: Իսկ նրանց, ովքեր տանը հարմարություն չունեն պարապելու, հատկացվում են հատուկ սենյակներ՝ դասերը պատրաստելու նպատակով: Սովորողների քանակով մենք վոչ միայն հասել ենք այնպիսի յերկրների, ինչպիսին են Ամերիկան, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, այլև նրանցից անցել ենք առաջ:

Մեր յերկրի բանվորներին ու գյուղացիներին լոկ գրագիտությունը բավական չէ: ԽՍՀՄ-ում աճում են հսկա փաբրիկներ ու գործարաններ, խորհտնտեսություններ ու Մեքենա-Տրակտորային Կայաններ (ՄՏԿ): Աճում է դպրոցների թիվը: Բանվորական պետությանը հարկավոր են ճարտարապետներ, տեխնիկներ, գյուղատնտեսներ, ուսուցիչներ: Այսպիսի մասնագետներ մեզ համար պատրաստում են մեր տեխնիկումները, ԲՈՒՀ-երը, ԲՏՈՒՀ-ները, ակադեմիաները: Ցարի ժամանակ կար միայն 91 բարձրագույն ուսումնական հաս-

տատություն, *իսկ հիմա այդպիսիների թիվը* մեզ մոտ 600 է:

Մեր տեխնիկումներն ու ԲՈՒՀ-երն առաջին հերթին ընդունվում են բանվորները, կոլտնտեսականներն ու նրանց յերեխաները: Բարձրագույն դպրոցը բանվորներին և աշխատավոր գյուղացիներին մատչելի դարձնելու համար ԽՍՀՄ-ում կազմակերպված են բանվորական ֆակուլտետներ (բանֆակներ): Բանֆակներում ուսանում են բանվորներն ու կոլտնտեսականները, վորոնք պատրաստվում են ԲՈՒՀ-եր ընդունվելու համար:

Ցարի ժամանակ Ռուսաստանում աշխատավորության մանուկների համար բոլորովին չկային մանկամսուրներ ու մանկապարտեզներ: ԽՍՀՄ-ում առաջին հնգամյակի վերջում արդեն հիմնված է 8 հազար մսուր և մոտ 30 հազար մանկապարտեզներ: Այդտեղ ընդգրկված են յերկու միլիոն մանուկներ: Հարյուր հազարա*վոր մայրեր ազատվում են յերեխաների հոգսերից և գնում աշխատանքի, կամ դպրոցում սովորում:*

Մենք հրատարակում ենք այնքան գիրք, վորքան չեն հրատարակում Անգլիան, Գերմանիան ու Ամերիկան *միասին վերցրած: Յուրաքանչյուր չորս մարդու համար — հաշվելով թե՛ ծերերին, թե՛ յերեխաներին — մեզ մոտ հրատարակվում է մի թերթ: Այդպիսի բան գոյություն չունի աշխարհիս և վոչ մի յերկրում:*

Ցարի ժամանակ բանվորներին ու գյուղացիներին մատչելի չեյին ակումբները, գրադարանները, կինոն ու թատրոնը: Մեր թատրոնները, մեր կինոները աշխատավորների համար են: ԽՍՀՄ-ում կառուցված են հազարավոր նոր ակումբներ բանվորների համար և հազարավոր խրճիթ-ընթերցարաններ — կոլտնտեսականների համար: *Ամբողջ յերկրում կառուցվում են ռադիոկայաններ: Աճում է գրադարանների թիվը թե քաղաքում և թե գյուղում: Մեր միության ամենահեռավոր ծայրերը մուտք են գործում գիրքը, կինոն և ռադիոն:*

Հետամնաց, խավար յերկրից խորհուրդների յերկիրը դառնում է աշխարհի ամենաառաջավոր, ամենակուլտուրական յերկիրը:

Աշխարհում չկա մի ուրիշ յերկիր, վորտեղ լիներ այնպիսի ուժեղ ձգտում դեպի կուլտուրան, գիտելիքներն ու գիտությունը, ինչպես մեզ մոտ ԽՍՀՄ-ում է: Յեվ չկա այնպիսի կառավարություն, վորն այնպես ընդառաջեր դեպի գիտությունը յեղած այդ ձգտումներին, ինչպես ընդառաջում է մեր բանվորա-գյուղացիական կառավարությունը:

§ ԱՃՈՒՄ Է ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ցարական Ռուսաստանում ամենից հետամնացն էր ազգային շրջանների բնակչությունը: Ազգաբնակչության մեծամասնությունը անգրագետ էր: Խորհրդային իշխանությունը հետամնաց ազգային շրջանները դարձնում է համատարած գրագիտության շրջաններ: *Ցարական կառավարության կողմից ճնշված ու կեղեքված* Կազակստանը *դարձել է համարյա համատարած գրագիտության յերկիր: 1931 թ. Կազակստանում անց է կացվել ընդհանուր նախնական ուսուցում:*

Ուզբեկստանը, *վոր նախկին ցարական գաղութ է, հաջող կերպով վերացնում է իր կուլտուրական հետամնացությունը: Վերջին ութ տարվա ընթացքում ուսման մեջ են ներգրավվել 400 հազար ուզբեկ յերեխաներ:*

Միայն վեց տարի առաջ Ուկրայնայի բնակչության կեսն անգրագետ էր: Դպրոցական հասակի յերեխաների միայն կեսն էր դպրոցներում սովորում: Ներկայումս համարյա ամբողջ ազգաբնակչությունը՝ մինչև 35 տ. հասակը դարձել է գրագետ: Անց է կացված ընդհանուր նախնական ուսում: Մտցվում է յոթնամյա պարտադիր ուսուցում:

Հյուսիսային Կովկասը *խայտաբղետ բազմազգի*

մի յերկիր է. սակայն բոլոր տարբեր լեռնային ազգությունները մի բանում նման էյին, վոր մինչև հեղափոխության նրանք բոլորը գրագուրկ (գիր ու գրականություն չունեցող) էյին և մեծամասնությամբ անգրագետ: Խորհրդային իշխանությունը Հյուսիսային Կովկասը դարձրեց համարյա համատարած գրագիտության յերկիր: Քսանութ ազգությունների յերեխաները սովորում են իրենց մայրենի լեզվով: Հյուս. Կովկասում մտցված է պարտադիր նախնական ուսուցում: Այս տարի մտցվում է նաև պարտադիր յոթնամյա ուսուցում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա սա ևս նախկինում ցարական Ռուսաստանի գաղութն էր: Ցարի ժամանակ Հայաստանում դպրոցների թիվը շատ քիչ էր և բոլորը համարյա թե տարրական դպրոցներ էյին: Հայկական միջնակարգ դպրոցները միայն հոգևոր թեմական դպրոցներն էյին: Իսկ բարձրագույն դպրոցների մասին խոսք անգամ լինել չէր կարող: Դաշնակների տիրապետության օրոք այդ դպրոցների թիվը շատ ու շատ կրճատվեց, դպրոցները փակվեցին. յերկիրը խարխափում էր խավարի ու տգիտության մեջ:

Խորհրդայնացումից հետո մեզ մոտ, Հայաստանում բացվեցին բազմաթիվ տարրական ու միջնակարգ դպրոցները, տեխնիկումներ: Բացի այդ, խորհրդայնացումից հետո հիմնվեցին մի շարք բարձրագույն դպրոցներ՝ մասնագիտական ԲՈՒՀ-եր, Պետական Համալսարան և այլ գիտա-հետազոտական ինստիտուտներ: Այնուհետև հիմնվել են շատ թատրոններ (պետական, Չըջիկ և պատանեկական), թանգարաններ, ոպերա և գիտության ու արվեստի բազմաթիվ այլ հիմնարկներ:

Այսպես է համարյա թե բոլոր ազգային շրջաններում: Հետամնաց, մոռացված ժողովուրդներն արթնացել են դարավոր քնից, դեն են շպրտել այն անողոք ճնի լուծը, վոր նրանց վրա յեր դրել կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը:

§ 69. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ

Կապիտալիստների մոտ դպրոցն ամեն կերպ աշխա-
տում է բանվորների ու գյուղացիների յերեխաներից
դաստիարակել կապիտալիստների ու կալվածատերերի
համար հլու, հավատարիմ ստրուկներ: Նա յերեխանե-
րին սովորեցնում է, թե կյանքի ամենալավ կարգերը
կապիտալիստական կարգերն են:

Կապիտալիստներին հարկավոր են հավատարիմ,
լուռ ու յենթարկվող ստրուկներ: Նրանց հարկավոր են
այնպիսի ստրուկներ, վորոնք հնազանդ կերպով իրենց
մեջքերը ծռեն և բոլորովին չմտածեն առանց կապիտա-
լիստների ու կալվածատերերի կյանք վարելու մասին:
Կապիտալիստները չեն ուզում, վոր յերեխաները մեծա-
նալուց հետո դառնան հեղափոխականներ և կոմունիստ-
ներ: Նրանք յերեխաներին ներշնչում ու համոզում են,
թե նրանց ամենասարսափելի թշնամիները կոմունիստ-
ներն են:

Կապիտալիստները ձգտում են իրենց ոգտակար
ձևով մշակել յերիտասարդությանը, նրանց գլուխը
լցնել ամեն տեսակ անհեթեթություններով ու անճիշտ
մտքերով:

Բոլոր կապիտալիստական դպրոցները հանձնված
են տերտերների հսկողությանը: Բոլոր դպրոցներում
ավանդում են կրոն և արգելում են ավանդել այն ամենը,
ինչ վոր հակասում է կրոնին: Պատմություն, գրակա-
նություն և մյուս դասագրքերը մանուկներին ուսուցա-
նում են հավատալ աստծուն, սիրել ու լսել հարուստնե-
րին: Նույնիսկ մարմնամարզություն (ֆիզկուլտուրա-
յի) դասերը սկսվում ու վերջանում են աղոթքով: Յեր-
գեցողության դասերին նմանապես աղոթքի յերգեր են
յերգվում:

Կապիտալիստների մոտ դպրոցը մի ազգության յե-

րեխաներին ուսուցանում է արհամարհել ու ատել մյուս
ազգության յերեխաներին:

Ամերիկայից պիոներուհի Բերտա Կացը գրում է.

«Մեզ մոտ Ինդիանա—Գորբոր քաղաքում ապրում
են շատ նեգրեր: Տերտերները մեզ ասում են, վոր նեգ-
րերը վատ տեսակի մարդիկ են և սպիտակ յերեխաները
չպետք է նրանց հետ մտերմություն ունենան: Քաղա-
քում նույնիսկ կառուցված է առանձին դպրոց նեգր յե-
րեխաների համար: Տերտերներն ու բուրժուաները ջան-
քում են անպայման ատելություն սերմանել սպիտա-
կամորթ և սևամորթ մանուկների միջև ու պառակտել
(բաժանել) նրանց, վոր նրանք չկարողանան միասին
պայքարել»:

Բոլոր կապիտալիստական յերկրներում չլսելու հա-
մար յերեխաներին ծեծում են, վորպեսզի նրանցից
պատրաստեն հավատարիմ ծառաներ: Առանձնապես
ծանր է այնտեղ պիոներների վիճակը:

Այսպիսին է դպրոցը կապիտալիստական յերկրնե-
րում, այդպիսին է յեղել նաև Ռուսաստանում — ցարի
ժամանակ:

Մեր դպրոցը խորհրդային դպրոց է: Խորհրդա-
յին իշխանությունը դպրոցից պահանջում է, վոր նա
յերեխաներին տա շատ գիտելիքներ, վոր նա յերեխանե-
րից պատրաստի սոցիալիստական հասարակության լավ
կառուցողներ:

Խորհրդային դպրոցը մանուկներին սովորեցնում է
ատել ամեն տեսակի շահագործումը, սոցիալիստորեն
վերաբերվել դեպի աշխատանքը, լավ սովորել և խնամ-
քով վերաբերվել դեպի հասարակական գույքը, կարո-
ղանալ աշխատել կոլեկտիվում, լինել կարգապահ:

Խորհրդային դպրոցն ինտերնացիոնալ դպրոց է:
Մեր դպրոցական յերեխաները գիտեն, վոր բոլոր յեր-
կրների աշխատավորները յեղբայրներ են, վոր նրանք
պետք է բոլորը միասին, միացյալ ուժերով պայքա-
րեն իրենց թշնամիների — շահագործողների դեմ: Մեր

դպրոցում պայքար է մղվում անցյալի բոլոր մնացորդների դեմ — ազգային ատելության, դեպի մյուս ազգության մարդկանց նկատմամբ յեղած անվստահ վերաբերմունքի դեմ, մյուս ազգության մարդու վրա իբրև «ոտարի» նայելու դեմ: Մեր դպրոցական յերեխաները կապ են պահպանում կապիտալիստական յերկրների աշխատավորների յերեխաների հետ և իրենց ոգնությունն են ցույց տալիս նրանց: Մեր դպրոցում բոլոր ազգությունների յերեխաներին սովորեցնում են իրենց մայրենի լեզվով: Իրենց մայրենի լեզվով նրանք ավելի հեշտ են տիրապետում գիտելիքներին:

Մեր դպրոցը պոլիտեխնիկական դպրոց է: Նա աշակերտներին ծանոթացնում է արտադրության բոլոր գլխավոր ճյուղերին: Մեր դպրոցում աշակերտներին ուսուցանում են վոչ միայն մայրենի լեզու, մաթեմատիկա, աշխարհագրություն, հասարակագիտություն, պատմություն և այլն, այլև սովորեցնում են աշխատել: Դրա համար ել մեր բոլոր դպրոցներն ամրացվում (կցվում) են վորոշակի գործարանների, ֆաբրիկների, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների, ելեկտրոկայանների: Այնտեղ սովորողները պետք է ձեռք բերեն վորոշակի աշխատանքային ունակություններ, վորոշակի տեղեկություններ՝ տվյալ արտադրության մասին:

§ 70. ՊԱՅՔԱՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Առանց գիտելիքների նոր կյանք չի կարելի կառուցել: Այդ բանը լավ պետք է հիշեն Խորհրդային յերկրի յերեխաները: Գիտությունը ուժ է: Դրա համար ել կապիտալիստներն ու կալվածատերերն իրենց յերեխաներին լավ են սովորեցնում և շատ բաներ, իսկ բանվորների ու գյուղացիների յերեխաներին աշխատում են քիչ բան սովորեցնել:

Խորհրդային յերկրի յուրաքանչյուր դպրոցական աշակերտ պետք է ունենա ամուր կամք աշխատանքի և

գիտության մեջ: Լենինը հաստատապես համոզված եր, վոր մեր յերիտասարդ սերունդը կաճի վորպես ուժեղ ու գիտուն սերունդ և նա իրեն հայրերի ու մայրերի սկսած գործը կտանի մինչև վերջնական հաղթանակ:



ՄԻՐԶՈՅԵՎԱ ՖԱԹՄԱ
հարվածային աշակերտուհի
(Յերևան, Մ. Գորկու անվան դպրոց)

ԳԵՂԱՄ ԱԼԱՅԱՆ
հարվածային աշակերտ
(Ղարաքիլիսա)

Լավ կառուցողներ դառնալու համար, դպրոցական աշակերտները պետք է լավ սովորեն, տիրապետեն գիտելիքներին:

«Մեր առաջ կանգնած է ամրոց — ասում եր ընկ. Ստալինը ՀամԼԿՅԵՄ 7-րդ համագումարում — այդ ամրոցը կոչվում է գիտություն՝ իր գիտելիքների բազ-

մաթիվ տապարեզներով: Այդ ամրոցը մենք ինչ գնով էլ լինի պետք է նվաճենք: Այդ ամրոցը յերիտասարդությունը պետք է վերցնի, յեթե նա ուզում է դառնալ նոր կյանքի կառուցողը, յեթե նա ուզում է դառնալ հին գվարդիայի իրոք փոխարինողը»:

Այժմ մեզ մոտ ամենուրեք կատարվում է հզոր գործարանների շինարարություն, գյուղի կոլեկտիվացում: Այժմ հարկավոր է կարողանալ նոր ձևով տնտեսություն վարել, շատ բան իմանալ: Հարկավոր է տիրապետել տեխնիկային: Հարկավոր է տիրապետել գիտելիքներին:

Հարկավոր է պայքարի միջոցով ձեռք բերել գիտելիքներ: Չպետք է բավականանալ միայն նրանով, ինչ վոր դասարանում ուսուցիչն է ասում. վոչ միայն պետք է լսել ուսուցչի ասածը և դասերը պատրաստել, այլև պետք է շատ կարդալ, ոգտվել գրադարանային գրքերից: Հարկավոր է սովորել զանազան տեղեկատուներից ոգտվելուն, պատի թերթին հոդվածներ գրել: Աշխատանքի ընթացքում պետք է օգնել մեկ մեկու, բացատրել այն ընկերներին, վորոնք չեն հասկացել: Հարկավոր է պայքարել ուսման մեջ լավագույն հարվածայիններ դառնալու համար:

Բուրժուական դպրոցում մտրակի կարգապահություն է: Մեզ մոտ գիտակցական կարգապահություն է: Աշակերտները պետք է օգնեն ուսուցչին՝ դպրոցում կարգ ու կանոնին հետևելու և անկարգապահության դեմ պայքարելու:

Պիոներ—աշակերտները ուսման մեջ, գիտակցական կարգապահության համար մղվող պայքարում, պետք է օրինակ ծառայեն բոլոր յերեխաների համար:

Համկոմկուսի Կենտկոմը լսելով կազմակերպության աշխատանքների մասին զեկուցումը, մատնացույց արեց, վոր պիոներները պետք է ձգտեն այն բանին, վոր «յուրաքանչյուր պիոներ» ամեն տեղ — դպրոցում, ընտանիքում, փողոցում, պիոներ ակումբում, պիոներ

ճամբարում (լագերում) և այլն «օրինակ ծառայի բոլոր յերեխաների համար»:

Պիոներները պետք է բոլոր յերեխաների առաջնորդները լինեն նաև հասարակական աշխատանքում. լավ սովորելով՝ նրանք պետք է օգնեն լավ սովորելու նաև մնացած բոլոր յերեխաներին:

§ 71. ՀԱԿԱՀԱՐՎԱԾ ՏԱԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ

Մեր թշնամիները—կուլակները, տերտերներն ու մնացորդներն ամեն կերպ աշխատում են խանգարել մեր սոցիալիզմի կառուցմանը: Ոգտվելով դեռևս գյու-

Կնքում են սոցմրցման պայմանագիր

ղում յեղած վորոշ աշխատավորների խավարամտությունից, կուլակներն ամեն տեսակի սուտ լուրեր են պտտեցնում ու վորոշ անգիտակից գյուղացիների գրգռում խորհրդային իշխանության դեմ:

Դասակարգային թշնամին մուտք է գործում նաև դպրոցի ներսը: Շարուրով գյուղում մի վոմն կուլակ խցկվել էր դպրոցի վարչի պաշտոնով: Նա վատ էր նա-

յում կուլտուսականների երեխաներին ու պիոներնե-
րին, խանգարում էր նրանց հասարակական աշխատան-
քը։ Երբ այդ կուլակի դիմակը պատռվեց, նա այրեց
այն դպրոցը, որ նոր էր կառուցվել։

Դասակարգային պայքարն արտահայտվում է նաև ուրիշ ձևերով։ Աշխատավորների երեխաներին Խորհրդային իշխանության դեմ տրամադրելու նպատակով, դասակարգային թշնամիներն իրենց երեխաներին սովորեցնում են զանազան լուրեր տարածել ընդդեմ Խորհրդային իշխանության։

Պերմ քաղաքի դպրոցներից մեկում ստեղծված էր մի ամբողջ կազմակերպություն, որը կոչվում էր «պիոներների թշնամիների ավազակախումբ»։ Այդ խմբակը զբաղվում էր ակտիվ երեխաներին ու պիոներներին ծեծելով։ Խումբը ղեկավարում էր նույն դպրոցի մի աշակերտուհի, որն առևտրականի աղջիկ էր։

Սվերդլովսկ քաղաքի № 11 յոթնամյա դպրոցում, ընդհանուր ժողովի ժամանակ, մի խումբ աշակերտներ կտրատեցին էլեկտրական լարերը, բացեցին ջրմուղի ծորակները։ Դպրոցը լցվեց ջրով։

Տագիլ քաղաքի № 5 յոթնամյա դպրոցում մի կիսամյակի ընթացքում փչացված է 13 նստարան, 7 աթոռ, պատռոտված է 11 աշակերտի հագուստ. խուլիգանները հաճախ ջարդ ու փշուր են անում ապակիներն ու թանաքամանները։

Վերխնետուսկի գործարանի դպրոցներում յերկու ամսվա ընթացքում խուլիգանության պատճառով դասերի խանգարման 18 դեպք է յեղել։

Դպրոցում խուլիգանության դեմ վճռական պայքար է տարվում։ Խորհրդային դպրոցը մեծ աշխատանք է տանում խուլիգանությամբ զբաղվող աշակերտներին վերադաստիարակելու ուղղությամբ, նրանց ներգրավում է հասարակական աշխատանքի մեջ։ Բայց յերբ այդ չի օգնում, անուղղելիներին դպրոցը հեռացնում է,

վոր նրանք մյուս աշակերտներին չխանգարեն սովորելու ինչպես հարկն է։

Դասակարգային թշնամին ուզում է մեզ խանգարել՝ աշխատավորների յերեխաներից սոցիալիստական հասարակության կայուն և գիտակից կառուցողներ պատրաստելու գործում։

Հարկավոր է ուշի ուշով հետևել, վոր թշնամին չխցկվի դպրոցի ներսը, հարկավոր է թշնամուն ժամանակին դիմակազերծ անել։

Դասակարգային թշնամուն դիմակազերծ անելու և նրա դեմ պայքարելու համար պետք է լավ սովորել, տիրապետել գիտելիքներին, մասնակցել հասարակական աշխատանքներին, ամրացնել դպրոցական կարգապահությունը դպրոցում։

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ինչո՞ւ կապիտալիստներին ու կալվածատերերին ձեռնտու յե աշխատավորների հետամնացությունը և խավարամտությունը։

2. Ի՞նչ նվաճումներ ունի մեր յերկիրը կուլտուրական ֆրոնտում (ճակատում)։

3. Ի՞նչ տարբերություն կա մեր խորհրդային դպրոցի և բուրժուական դպրոցի միջև։

4. Ինչպե՞ս պետք է պիոներներն ու աշակերտները պայքարեն դպրոցի աշխատանքների բարելավման համար։

VI ԳԼՈՒԽ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

§ 72. ՄԵՆՔ ԿԿԱՌՈՒՑԵՆՔ ԱՆԴԱՍԱԿԱՐԳ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին հնգամյակում Խորհրդային իշխանությունը հսկայական նվաճումներ ձեռք բերեց թե քաղաքում և թե գյուղում: Մեր յերկիրը դարձավ ինդուստրիալ յերկիր: Մեր գյուղատնտեսությունն աշխարհի ամենախոշորն է: Մենք դուրս վանեցինք մասնավորին արդյունաբերության բնագավառից, ջախջախեցինք գյուղի կուլակությանը: Մեր յերկիրը դառնում է աշխարհի ամենից կուլտուրական յերկիրը: Մենք վերջնականապես ապահովեցինք սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում: Մենք կառուցեցինք սոցիալիստական հասարակության պատվանդանը (ֆունդամենտը):

Առաջին հնգամյակի հաջողությունները կոմունիստական կուսակցությանը և խորհրդային իշխանությանը հնարավորություն տվին յերկրորդ հնգամյակի խնդիր դարձնել սոցիալիստական անդասակարգ հասարակության կառուցումը:

Յերկրորդ հնգամյակում մենք վերջնականապես կվերացնենք կուլակությունը գյուղում և մասնավորին՝ քաղաքում: Այդ նշանակում է, վոր մեր յերկրում չեն լինի մարդիկ, վորոնք ապրեին ուրիշի աշխատանքի հաշվին: Ընդմիշտ կվերացվի մի մարդու կողմից մյուսին շահագործելը:

Մեր յերկրի բանվորները հանդիսանում են այն

ֆաբրիկների ու գործարանների տերերը, վորտեղ նրանք աշխատում են: Բայց մեր բոլոր բանվորները դեռ իրենց գիտակցությամբ, նոր, լավագույն կյանքի համար մղվող պայքարի պատրաստականությամբ միատեսակ չեն: Սոցիալիստական շինարարության մեջ մասնակցելը վերադաստիարակում է բանվորներին, հետզհետե ավելի ու ավելի մեծ թվով բանվորներ դառնում են սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողները: Յերկրորդ հնգամյակի վերջում մեր յերկրի բոլոր բանվորները կդառնան սոցիալիստական հասարակության ակտիվ ու գիտակից կառուցողներ:

Յերկրորդ հնգամյակում մեր յերկրի ամբողջ աշխատավոր գյուղացիությունը կկազմակերպվի կոլտնտեսությունների մեջ: Կոլտնտեսությունում յուրաքանչյուրը տնտեսությունը վարում է վոչ թե առանձին հողամասում, այլ ընդհանուր, հասարակական հողի վրա: Այնտեղ չկա արտադրության միջոցների մասնավոր սեփականություն, այնտեղ ընդհանուր աշխատանք է: Կոլտնտեսություններում յեկամուտ է ստանում նա, ով աշխատում է: Աշխատելով ընդհանուրին պատկանող հողի վրա, մեքենաների ու տրակտորների օգնությամբ, մեքենա-տրակտորային կայանների օգնությամբ, կոլտնտեսականները գյուղի խավար, հետամնաց ու ծեծված աշխատավորներից, ինչպես նրանք առաջ եյին, դառնում են սոցիալիստական հասարակության գիտակից կառուցողներ: Գյուղում գիտակից ու ակտիվ՝ սոցիալիզմ կառուցողների շարքերը մեծանում են: Յերկրորդ հնգամյակի վերջում բոլոր կոլտնտեսականները կդառնան սոցիալիստական հասարակության ակտիվ ու գիտակից կառուցողներ:

Հետեվաբար յերկրորդ հնգամյակում մենք կոչընչացնենք վոչ միայն կուլակներին ու մասնավորներին, այլև կվերջացնենք ընդհանրապես դասակարգերը:

Մեր յերկրի բոլոր աշխատավորները կդառնան

սոցիալիստական հասարակության աշխատավորները՝ նրա գիտակից ու ակտիվ կառուցողները:

Մեքենան ու տրակտորն ավելի ու ավելի յեն մուտք գործում գյուղ: Միմիայն 1933 թ. ընթացքում գյուղը պրոլետարական պետությունից ստացել ե 60 հազար տրակտոր: Մեքենան փոխում ե գյուղատնտեսական բանվորի և կոլտնտեսականի աշխատանքը: Իսկ դա գյուղի և քաղաքի հակադրության վերացման կարեվորագույն պայմաններից մեկն ե: Բացի դրանից, կուսակցությունը գյուղին ոգնություն ե հասցնում, այնտեղ ուղարկելով լավագույն բանվոր հարվածայիններ, լավագույն կոմունիստներ: Այսպես որինակ՝ 1927 թ. գյուղում աշխատելու համար ուղարկվեցին 25 հազար լավագույն բանվորներ, իսկ 1931 թ. գյուղ ուղարկվեց 15 հազար կոմունիստ: Ֆաբրիկների ու գործարանների աշխատանքի կազմակերպման գծով ձեռք բերված նվաճումները նրանց միջոցով փոխադրվում են գյուղ: Նրանք գյուղ են տանում կուլտուրա: Մեր յերկրում ավելի ու ավելի շատ յերկաթուղիներ ու հեռախոսներ են անցկացվում, ավելի լայն չափերով են ոգտագործվում հեռագիրն ու ռադիոն: Այս ամենը քաղաքը սերտորեն միացնում ե գյուղի հետ, գյուղ ե տանում կուլտուրա և դրանով իսկ վերջ ե դնում գյուղի հետամնացությանը:

Տարեցտարի քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրությունը կսկսի պակասել: Յերկրորդ հնգամյակում մենք պայմաններ ենք նախապատրաստում քաղաքի և գյուղի միջև հակադրությունների իսպառ վերացնելու համար:

Դասակարգային թշնամիներն ամեն միջոց ձեռք կառնեն խանգարելու մեր յերկրում սոցիալիստական հասարակության կառուցմանը: Կուլակները, բուրժուազիայի նախկին սպասավորները, նախկին առևտրականներն ամեն կերպ կաշխատեն հափշտակել հասարակական սեփականությունը, քայքայել աշխատանքային կարգապահությունը— գործարաններում, ֆաբրիկ-

ներում, կոլտնտեսություններում՝ այդ նպատակի համար ոգտագործելով հետամնաց բանվորներին ու կոլտնտեսականներին:

Մեզ մոտ դեռ բոլոր բանվորներն ու կոլտնտեսականները սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ չեն: Դեռ քիչ են նաև այնպիսիները, վորոնք ձգտում են քիչ աշխատել, բայց մեծ պատառ կորզել:

Դեռ շատ բան պետք ե անել, վորպեսզի դաստիարակվեն գյուղացի-կոլտնտեսականները և սովորեն պահպանել կոլտնտեսական սեփականությունը, վորպեսզի ժամանակին ու բարեխղճորեն կատարեն բանվորական պետության հանդեպ ունեցած պարտավորությունները:

Դեռ շատ ե հարկավոր աշխատել այն բանի վրա, վոր մեր յերկրի բոլոր բանվորներն ու կոլտնտեսականները կիրառեն խստագույն կարգապահություն:

Դասակարգային թշնամիներին ամեն կերպ կաշխատեն պաշտպանել արտասահմանի կապիտալիստները:

Յերկրորդ հնգամյակի խնդիրը հաջողությամբ կատարելու համար, հարկավոր ե ամեն կերպ դիմակազերծ անել դասակարգային թշնամուն, ամրացնել մեր Կարմիր բանակը և ամեն կերպ ամրացնել խորհուրդների իշխանությունը:

§ 73. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Յուրացնել կառուցված ֆաբրիկները, գործարանները, ելեկտրոկայանները—սա հիմնական խնդիր ե: Առաջին հնգամյակի ընթացքում հսկայական աշխատանք ե կատարված մեր յերկրում: Կառուցված են մեծ թվով խոշոր գիգանտ գործարաններ, վորոնց նմանն աշխարհը չի տեսել: Միանգամայն նոր ձևով վերակառուցված են մեծ թվով հին գործարաններ:

Յերկրորդ հնգամյակում պետք ե յուրացնել բոլոր այդ գործարանները:

Ի՞նչ ե նշանակում այդ:

Յուրացնել նշանակում է կարողանալ, տիրապետել նորերս կառուցվող գործարանների, ֆաբրիկների ու ելեկտրոկայանների նոր մեքենաներին:

Այդ նշանակում է հասնել այն բանին, որ այդ գործարանները, ֆաբրիկները, ելեկտրոկայանները լիովին և առանց խափանումների կատարեն իրենց պլան-



Չուգունի ձուլման աճը



Ելեկտրոեներգիայի արտադրության աճը

ները: Այդ նշանակում է այնպես անել, որ մեր ֆաբրիկներն ու գործարանները որքան կարելի յե շատ և լավորակ արտադրանքներ տան:

Յուրացնել նշանակում է վերցնել գործարաններից, ֆաբրիկներից, ելեկտրոկայաններից, հանքահորերից այն ամենն, ինչ որ նրանք կարող են տալ:

Իսկ մեզ մոտ գործերը դեռ ամբողջովին լավ չեն: Մեր դոմնաները դեռ չեն տալիս այնքան չուգուն, որքան նրանք կարող են տալ: Մեր հանքահորերը դեռ չեն տալիս այնքան ածուխ, որքան կարող են տալ: Մենք դեռ միշտ չէ, որ կարողանում ենք մեքենաները ճիշտ օգտագործել: Մեր ֆաբրիկներում ու գործարաններում բրակը (փչանոցը) շատ է: Մեր ելեկտրոկայանները դեռ լիովին չեն օգտագործվում:

Ահա՛ թե ինչու կուսակցությունը յերկրորդ հնգամյակում կարևորագույն խնդիր է դրել լիովին յուրացնել բոլոր նոր կառուցված ֆաբրիկները, գործարաններն ու ելեկտրոկայանները:

Ավելի շատ մեքենաներ, ավելի շատ մետաղ. Յերկրորդ հնգամյակում մենք պետք է ավարտենք ամբողջ ժողովրդական տնտեսության այնպիսի վերակառուցու-



Քարածխի արդյունահանման աճը



Նավթի արդյունահանման աճը

մը, որ մեզ մոտ ամեն տեղ, մեր տնտեսության բոլոր մասերում մեքենաներ լինեն:

Մեզ մոտ որքան շատ մեքենաներ լինեն, այնքան մեր յերկիրն ուժեղ և հարուստ կլինի: Մեքենաների արտադրությունը մենք կավելացնենք 3–3½ անգամ:

Խորհրդային միությունը մետաղի արտադրությամբ յերկրորդ հնգամյակին աշխարհում կգրավի առաջին տեղերից մեկը:

Ավելի շատ մեքենաներ արտադրելու համար մեզ հարկավոր է միլիոնավոր տոնն մետաղ: Յերկրորդ հնգամյակում մեծապես կավելանա չուգունի, պողպատի արտադրությունը: Կաճեն ու կբարձրանան նոր դոմնաներ: Յերկրորդ հնգամյակի առաջին տարում մենք արտադրելու յենք 22 միլ. տոնն չուգուն:

Ավելի շատ ելեկտրականություն. *Միլիոնավոր մեքենաները գործի գնելու համար հարկավոր է ելեկտրականություն: Ահա թե ինչու մեքենաներ կառուցելով, մենք դրա հետ միասին յերկիրն ավելի ու ավելի յենք ելեկտրիֆիկացման յենթարկում:*

Ելեկտրականության արտադրությամբ մենք զգալի չափով կանցնենք Գերմանիայից, Ֆրանսիայից ու Անգլիայից և համարյա թե կհասնենք ՀԱՄՆ-ին:

Ավելի շատ ածուխ և նավթ. *Խորհրդային Միությունը քարածխի ու նավթի հսկայական պաշարներ ունի: Դեռևս առաջին հնգամյակի ընթացքում շատ բան է արված ածխի ու նավթի արդյունահանման տեսակետից:*

Յերկրորդ հնգամյակում ածխի արդյունահանումը 1932 թ. համեմատությամբ կավելանա 2½ անգամ, իսկ նավթի արդյունահանումը 2½—3 անգամ:

Պետք է բարելավենք յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը. *Մեզ մոտ դեռևս տրանսպորտը հետ է մնում ժողովրդական տնտեսության մյուս մասերից: Սակայն չէ՞ որ չկա ժողովրդական տնտեսության այնպիսի մասնիկ, որը կախված չլիներ յերկաթուղային ճանապարհների աշխատանքից: Յերկաթուղիների վատ աշխատանքը խանգարում է Դոնբասի, Ուրալի, Սիբիրի աշխատանքներին: Յերկաթուղիների վատ աշխատանքն ազդում է նաև մեր խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների վրա, որոնք սպասում են գյուղատնտեսական մեքենաներով, քիմիական պարարտանյութերով բեռնված գնացքների:*

Դրա համար էլ կուսակցությունը և խորհրդային իշխանությունը յերկրորդ հնգամյակում նախատեսել են արմատական ձևով վերակառուցել յերկաթուղային տրանսպորտը:

Պետք է գործարկվեն հզոր շոգեքարշեր, մեծ տարողության վագոններ:

Ելեկտրոքարշը շոգեքարշից ավելի ձեռնտու յե:

Շոգեքարշը ելեկտրոքարշով փոխարինելը նշանակում է վառելանյութի ծախսումը կրճատել 3 անգամ: Ելեկտրական տրանսպորտը միաժամանակ մեծացնում է շարժման արագությունը: ԽՍՀՄ-ում կան մի շարք վայրեր՝ Ուրալ, Անդրկովկաս, որտեղ, շնորհիվ մեծ բարձունքների, առանց ելեկտրաքարշերի դժվար է կատարել բեռների փոխադրություններ: Այսպես օրինակ՝ Անդրկովկասում Սուրամի լեռնանցքը սովորական գնացքով բարձրանալու համար, ստիպված են լինում գնացքը բաժանել յերկու մասի և յերեք հզոր շոգեքարշերի օգնությամբ մի ժամում կտրել միայն 10–12 կիլոմետր ճանապարհ:

Թիֆլիս—Բաթում գծի արագ գնացքը մեծ բարձունք ունեցող գծամասերից մեկում շարժվում է յերկու շոգեքարշով, իսկ յերրորդն էլ հրում է հետևից: 200 կիլոմետր տարածությունն այդ գնացքն անցնում է 8 ժամում, միջին հաշվով ժամում կտրելով 25 կիլոմետր ճանապարհ: Այդ նույն գծամասերում նույն մեծության գնացքը յերկու ելեկտրոքարշով կտրում է մի ժամում 60 կիլոմետր ճանապարհ:

Այսպիսով միայն այդ գծամասերի ելեկտրիֆիկացումը կարող է ապահովել գնացքների նորմալ շարժումը:

Իհարկե, միանգամից մենք ի վիճակի չենք լինի ելեկտրիֆիկացնել բոլոր յերկաթուղիները, սակայն մի շարք յերկաթուղային ճանապարհներում յերկրորդ հնգամյակում ելեկտրիֆիկացումը պետք է կատարվի:

Յերկրորդ հնգամյակում նոր յերկաթուղիներ են կառուցվելու այնպիսի շրջաններում ու ազգային հանրապետություններում, որոնք անցյալում տրանսպորտի կողմից շատ քիչ եյին սպասարկվում:

Զարգացնենք թեթև արդյունաբերությունը. *Յերկրորդ հնգամյակի ընթացքում խորհրդային յերկրի ազգաբնակության մթերքների սպառումը պետքե ավելանա 2–3 անգամ: Իսկ դա նշանակում է, որ պահանջվե-*

լու յե ավելի շատ Մանուֆակտուրա, կոշկեղեն, շաքար և այլն:

Առաջին հնգամյակի մեր հաջողությունները ծանր արդյունաբերության, չուգունի, ածխի, մեքենաշինության բնագավառում մեզ թույլատրում են ուժեղացնելու թեթև արդյունաբերության շինարարությունը, այսինքն՝ այն ֆաբրիկների և գործարանների կառուցումը, վորոնք արտադրում են սպառման ու սննդի մթերքներ, մանուֆակտուրա, հագուստեղեն, կոշկեղեն, պահածոներ (կոնսերվ), շաքար:

Առաջ մենք պետք է առաջին հերթին կառուցենք տրակտորային ու պողպատ ձուլող գործարաններ, յերկաթուղիներ, հանքահորեր, նավթային վիշկաներ, այժմ դրան մենք կարող ենք ավելացնել տեքստիլ ու կոշկեղենի ֆաբրիկներ:

Յերկրորդ հնգամյակում կսկսեն աշխատել յերկու հսկա ֆաբրիկ՝ միջին Ասիայում ու Սիբիրում: Ավելի կընդարձակվի Իվանովի տեքստիլ արդյունաբերությունը: Կառուցվելու յեն տասնյակ նոր հզորագույն ֆաբրիկներ՝ բամբակագործականը միջին Ասիայում, Կազակստանում և Արևմտյան Սիբիրում, վուշինը՝ Հեռավոր Արևելքում, Արևելյան Սիբիրում, Հյուսիսային Յերկրում, Բելոռուսիայում:

Մեծ թվով շաքարի գործարաններ են կառուցվելու Կազակստանում, Սիբիրում, Կիրգիզիայում, Անդրկովկասում, դրանցից մեկը կառուցվում է Հայաստանում (Լենինական):

Յերկրորդ հնգամյակի ընթացքում կառուցվելու յեն մեծ թվով մսի կոմբինատներ: Հզորագույն կոմբինատներ արդեն կառուցում են Մոսկվայում, Լենինգրադում, Որսկում, Սամարայում, Ռոստովում, Բաքվում: Մսի խոշոր կոմբինատ արդեն կառուցվում է նաև Հայաստանում (Լենինական): Այս ամենը հնարավորություն են տալիս որեցոր բարելավել մեր յերկրի աշխատավորների կյանքը:

Յերկրորդ հնգամյակի վերջում մեր յերկիրը դառնալու յե ամենից առաջավոր, տեխնիկապես զարգացած յերկիր: Դա նրան առաջ կմղի տեխնիկայի տեսակետից առաջին տեղը Յեվրոպայում:

Յերկրորդ հնգամյակը վերջնականապես կապահովի խորհուրդների յերկրի համար կապիտալիստական յերկրներից տնտեսապես և տեխնիկապես անկախ լինելը:

74. ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐԵԼԱՎԵԼ ՎՈՐԱԿԸ:

Աշխատանքի մեջ հարկավոր է կարգ ու կարգապահություն:

Ճորտատիրական շրջանում կալվածատերն աշխատանքի մեջ կարգ եր պահպանում փայտի ու մտրակի ոգնությամբ: Կապիտալիստը նմանապես ստիպում եր բանվորին աշխատել սովամահության սարսափի ոգնությամբ: Ուզած րոպեյին նա կարող է հեռացնել բանվորին, նրան ու նրա ընտանիքին առանց հացի թողնել: Խորհրդային յերկրում, ուր տերն իրենք բանվորներն են, հարկավոր եր աշխատանքի մեջ սահմանել նոր ընկերական՝ գիտակցական կարգ ու կարգապահություն:

Հարկավոր եր այնպիսի կարգեր ստեղծել, վոր բանվորներն առանց մտրակողների ձգտեյին վորքան կարելի յե լավ աշխատել ու մտածեյին ընդհանուր ոգուտի մասին:

Այդ խնդիրը հեշտ չէ: Հին ստրկական սովորույթները մի որում չեն վերանում: Լենինը շատ եր ասում այն մասին, թե ինչպես պետք է նրանց վերափոխել, վերադաստիարակել, թե ինչպես պետք է նոր ձևով աշխատել: Նա գրում եր.

«Փողերի հաշիվը տար բարեխղճորեն ու ճշգրիտ կերպով, տնտեսավարիր խնայողաբար, լոդրություն մի՛ արա, աշխատանքի մեջ պահպանիր խստագույն կարգապահություն» —ահա թե Լենինն ինչպես եր սովորեցնում աշխատել:

"Հարկավոր է հասնել այն բանին, վոր յուրաքանչյուր կոլտնտեսությունում, խորհտնտեսությունում, յուրաքանչյուր կոոպերատիվում, ինչպես այդ ձևով աշխատանք տարվի:

Մեր յերկրի աշխատավորներն այժմ նոր ձևով են կառուցում կյանքը: Ընդհանուր ջանքերով նրանք աշխատում են մեծացնել յուրաքանչյուր մեկի արտադրանքը—բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ավելի շատ կարգ ու կանոն են մտցնում գործի մեջ, բարելավում են իրենց արտադրանքի վորակը:

Մեր յերկրի աշխատավորները բոլորովին այլ կերպ են աշխատում, քան մտրակի ու իմպերիալիստական լծի տակ գտնվող բանվորները: Նրանք մրցում են աշխատանքի մեջ, կազմակերպում են հարվածային բրիգադներ: Մեզ մոտ աշխատանքն անպատիվ ու ծանր բեռ լինելուց, վորպիսին եր նա անցյալում, դարձել է պատվի, փառքի գործ, արիության ու հերոսության գործ:

Առաջին հնգամյակի ընթացքում մենք ունեցանք նշանակալից նվաճումներ, աշխատանքի արտադրողականության բարձրացման գործում: Մենք շատ օրինակներ գիտենք, յերբ բանվորները մրցման մեջ մտնելով մեծապես բարձրացնում են արտադրանքը: Դա մեզ հնարավորություն տվեց մի շարք խոշորագույն գործարանների կառուցումն ավարտել ժամկետից շուտ: Դա մեզ հնարավորություն տվեց, հնգամյակը կատարել չորս տարում:

Սակայն մեզ մոտ դեռ շատ պակասություններ, բացեր կան: Մեզ մոտ դեռ հաճախ են պատահում և՛ վատ աշխատանք, և՛ գողություն, և՛ պարապուրդներ (պրոգուլներ):

Մեր Ֆաբրիկներում ու գործարաններում դեռ շատ անպետք արտադրանք կա: Արտադրած արդյունքները հաճախ լինում են վոչ բոլորովին լավորակ, իսկ յերբեմն էլ բոլորովին վատորակ: Մեզ մոտ դեռ կան հին ձևով աշխատելու սովորություններ: Դա խանգարում է մեր շինարարությանը:

Դրա համար էլ կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը մեր յերկրի բանվորների ու կոլտնտեսականների առաջ դրել են վորպես գլխավոր խնդիր՝ բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել ֆաբրիկների ու գործարանների արտադրանքի արժեքը, բարելավել նրա վորակը:

§ 75. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ ՄԵՆՔ ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵՆՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

Մենք կշարունակենք խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների կառուցումը: Մենք զարգացնելու և ամրացնելու յենք կոլտնտեսությունները: Ծրագրված է, վոր 1934 թ. բոլոր կոլտնտեսությունները ընդգրկելու յեն մեքենա-տրակտորային կայանների ցանցի մեջ:

Յերկրորդ հնգամյակի ընթացքում խորհտնտեսական և կոլտնտեսական դաշտերն են ուղարկվելու նոր՝ հարյուր հազարավոր տրակտորներ ու ավտոմոբիլներ, հարյուր հազարավոր կոմբայններ: Դրանք արտադրվելու յեն մեր տրակտորային, ավտոմոբիլային և գյուղատնտեսական մեքենաշինության գործարաններում: Սիբիրի տայգաները, Կիրգիզիայի տափաստանները—ամենուրեք մուտք են գործելու ավտոմոբիլն ու տրակտորը:

Մի շարք դաշտերում մենք կունենանք ելեկտրական մեքենաներ: Ելեկտրական գութանները կվարեն հողը: Ելեկտրական կոմբայնները կհավաքեն բերքը: Ելեկտրական ավտոմոբիլներով կերթևեկեն բանվորները: Սակայն այս բոլոր նվաճումները չպիտի նվազեցնեն ձիու ու յեզան նշանակությունը:

Ձիու ու յեզան նշանակությունը յերկրորդ հնգամյակում ավելի մեծ է լինելու: Ձին պակաս դեր չի խաղում գյուղատնտեսության մեջ և մեր յերկրի պաշտպանության գործում».

Մեզ հարկավոր է շատ հաց: Մեզ հարկավոր է շատ բամբակ, վուշ.— *Յերկրորդ հնգամյակի ընթացքում մեր յերկրի աշխատավորության նյութական դրությունը կբարելավվի 2–3 անգամով:*

Իսկ այդ նշանակում է, վոր պահանջվելու յե ավելի շատ հաց մեր ֆաբրիկների համար, վորոնք արտադրում են արդյունաբերական ապրանքներ, պահանջվելու յե ավելի շատ հումք՝ բամբակ, վուշ, ճակնդեղ և այլն: Յերկրորդ հնգամյակի վերջին մեր կոլտնտեսական և խորհտնտեսական դաշտերը նշակալից չափով ավելի հաց են տալու քան նրանք տալիս եյին առաջին հնգամյակում: Բամբակի, վուշի արտադրանքի չափը պետք է կրկնապատկվի, իսկ շաքարի ճակնդեղինը նույնիսկ յեռապատկվի:

Ի՞նչ կերպ կարելի յե դրան հասնել: Ի՞նչ միջոցներով կարելի յե ավելի շատ վուշ, բամբակ և հաց ստանալ:

Մինչև հիմա հացի և տեխնիկական կուլտուրաների արտադրությունը գլխավորապես մեծացնում եյինք ցանքսերի տարածությունները մեծացնելու միջոցով:

Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրն է խորհտնտեսական և կոլտնտեսական դաշտերի բերքատվության բարձրացումը:

Մենք պետք է հասնենք այն բանին, վոր մեր դաշտերը տան բարձր բերք և վոչ թե նախկինի նման աղքատիկ բերք:

Խորհտնտեսային և կոլտնտեսային դաշտերն ունեն զորեղ՝ դաշնակից քիմիան. *Անբերրի հողի վրա հնարավոր չէ հաց բուսցնել, հողն էլ կարելի յե հանքային պարարտանյութերի կիրառմամբ դարձնել բերրի ու արգավանդ:*

Հիմա արդեն շատ տեղերում խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների հողը տալիս է 2–3 անգամ ավելի քան հարեվան մենատնտես գյուղացիական հողերը:

Ի՞նչու յե այդ այդպես:

Վորովհետև խորհտնտեսությունները ու կոլտնտեսությունները հողը մշակում են մեքենաներով և պարարտացնում են իրենց դաշտերը քիմիական նյութերով:

Գիտնականներն ապացուցել են, վոր ամենուրեք կարելի յե ստանալ ավելի բարձր բերքատվություն, քան այն, ինչ մենք հիմա ունենք:

Ցարական Ռուսաստանը համարյա թե բոլորովին քիմիական գործարաններ չուներ: Մենք սովորեցինք կառուցել և գործի գցել քիմիական գործարաններ: 1933 թ. մենք արտադրելու յենք մեր դաշտերի համար 12 միլիոն տոնն պարարտանյութ: Յերկրորդ հնգամյակում քիմիական պարարտանյութերի արտադրությունն աճելու յե մի քանի անգամ:

Հարյուրավոր գնացքներ տեղափոխելու յեն պարարտանյութ մեր դաշտերի համար, վոր մեր դաշտերի սնունդ է լինելու: Մեր դաշտերն այլևս չեն սովելու, չեն մնալու առանց պարարտանյութերի:

Քիմիան վոչնչացնելու յե դաշտերի մակաբույծներին: Դաշտային վնասատուներին վոչնչացնելու համար մեր ինքնաթիռները ցանքսերը սրսկելու յեն քիմիական նյութերով, և վե՛րջ դաշտային մկներին, մորեխին ու մյուս վնասատուներին:

Մենք կոչնչացնենք յերաշտը. *Մեր ցանքային տարածությունների համարյա թե մեկ յերրորդական մասը գտնվում է յերաշտների շրջաններում: Դրանք են՝ Անդրվոլգյան շրջանը, Կազակստանը Ուկրայինայի Ս.Խ.Հ-ի, Ուրալի, Արևմտյան Սիբիրի և Կովկասի տափաստանային մասերը:*

Յերաշտը մշտապես հարվածում է այդ շրջանների գյուղատնտեսությանը: Յուրաքանչյուր յերեք-չորս տարուց մեկը խիստ յերաշտի տարի յե լինում: 11 տարվա ընթացքում (1921–1932 թ.) յեղել են յերաշտի չորս տարիներ: Այդ չորս տարիներին մեր յերկիրը կորցրել է 45 միլիոն տոնն հացահատիկ:

Ցարական Ռուսաստանը չէր կարողանում և չէր ուզում կռվել յերաշտի դեմ:

Հին կարգերի ժամանակ յերաշտը քայքայում էր չքավոր–միջակային զանգվածների տնտեսությունները և միլիոնավոր մարդկանց մատնում սովի ու մահացության: Սակայն կալվածատերերի ու կուլակների համար, վորոնք հացահատիկի մեծ պաշար ունեյին, յերաշտի տարիներն ամենից շատ հարստանալու տարիներ եյին:

Մի փութ հացահատիկի դիմաց կալվածատերերն ու կուլակները գյուղացուց վերցնում եյին նրա վերջին անասունը, իրենց լծի տակ եյին առնում գյուղացուն և իրենց ձեռքի տակն էր նրա հողամասը:

Միայն խորհուրդների յերկրում կարող է տեղի ունենալ կազմակերպված պայքար՝ ընդդեմ յերաշտի: Սակայն քանի դեռ գյուղացիական տնտեսությունները մնում եյին իբրև մենատնտեսություններ, մենք չեյինք կարող յերաշտի դեմ պայքար ծավալել:

Այժմ, յերբ մեր յերկիրը հիմնականում ավարտել է համատարած կոլեկտիվացումը, մենք յերաշտի դեմ կարող ենք և ծավալում ենք վճռական պայքար:

Ինչպե՞ս հաղթահարել յերաշտը:

Մեր դաշտերը շատ հաճախ լեփ լեցուն են լինում մոլախոտերով: Առանց այն էլ սակավ խոնավությունը ծծում են այդ միանգամայն անպետք մոլախոտերը: Հարկավոր է վոչնչացնել այդ մոլախոտերը, հարկավոր է ժամանակին և ճշգրիտ ձևով կատարել ցանքսերի քաղհանը և ծուխ տալը: Հարկավոր է հերթափոխությամբ ցանել խոտը և կուլտուրաներն այնպես, վոր հողը քիչ ուժասպառվի:

Յերկրորդ հնգամյակում յերաշտների շրջաններում մենք պետք է ձգտենք ցանել այնպիսի կուլտուրաներ, վորոնք յերաշտից քիչ են տուժում:

Դրա համար մենք կկառուցենք սելեկցիոն կայաններ, վորտեղ կաճեցվեն մեզ անհրաժեշտ կուլտուրաների նոր սերմեր և վորտեղ կկատարվի լավ սերմերի ընտրություն:

Այդ սելեկցիոն կայաններում, մեծ ջերմոցներում, վոր վողողվելու յեն գիշերները (իսկ ձմեռ ժամանակ նաև ցերեկները) ելեկտրական լուսավորության հոսանքով, հնարավոր կլինի տարեկան 3—4 բերք ստանալ:

Հենց այդ կայաններում հատուկ շինություններում, մենք կսովորենք ստուգել, թե վո՛ր բույսերն են վտանգվում յերաշտից, և վորոնք վոչ: Հարյուրավոր գյուղատնտեսներ են զբաղվելու այդ գործով:

Ջուր կրերենք մեր դաշտերը. Մենք դեռ չենք կարողանում ստիպել բնությանը մեզ անձրև տալու այն ժամանակ, յերբ դա մեզ անհրաժեշտ է: Սակայն մենք կարողանում ենք հիդրոկայաններ կառուցել: Մենք կարողանում ենք վոռոգող ջրանցքներ փորել, վորոնց ջուրը հոսում է մեր դաշտերը:

Յերկրորդ հնգամյակում մենք հսկայական աշխատանք ենք կատարելու յերաշտի շրջանները վոռոգելու ուղղությամբ:

Մենք վոռոգելու յենք տափաստանները և ստիպելու յենք դրանց ամեն տարի լավ բերք տալ:

1932 թ. մայիսի 22-ին Ժողկոմխորհը և Համկ (բ)Կ Կենտկոմը վորոշեցին կառուցել Անդրվոլգայում՝ Կամիշինի շրջանում հիդրոկայան: Այդ կայանը պետք է ապահովի 4 միլիոն 300 հազար հեկտար ցանքսերի տարածության վոռոգումը:

Շինարարության ավարտման ժամկետը նախատեսված է 1937 թիվը:

Դրա հետ մեկտեղ վորոշված է շարունակել Սամարայի հիդրոկայանի հարցի մշակումը:

Բրդի, մսի մորթու, յուղի, ձվի փաբրիկներ. Սակայն, հացից բացի, մեր ֆաբրիկների համար անհրաժեշտ է կաշի, բուրդ, իսկ աշխատավորների համար՝ միս, յուղ և ուրիշ շատ բաներ: Այդ ամենը մեզ հարկավոր է նրա համար, վոր ավելի լավ հագնվենք ու սնվենք: Այդ ամենը մեզ հարկավոր է նաև նրա համար, վոր ավելացնենք մեր ավելցուկների վաճառքն արտասահմանում:

Յերկրորդ հնգամյակում մենք կառուցելու յենք վոչ միայն հացահատիկի ֆաբրիկներ: Մենք կառուցելու յենք մեծ թվով անասնապահական նոր խորհտնտեսություններ, իսկ կոլտնտեսություններին կից ստեղծելու յենք անասնաբուծական ֆերմաներ:

Բացի խոշոր յեղջյուրավոր անասունների, խոզերի, վոչխարի ու թռչունների զարգացումից, յերկրորդ հնգամյակում մենք զարգացնելու յենք ձիաբուծությունը, յեղջերուաբուծությունը, ուղտաբուծությունը և ճագարաբուծությունը: Անասուններ ու թռչուններ աճեցնելու յեն վոչ միայն խորհտնտեսություններն ու կոլտնտեսական ֆերմաները: Յերկրորդ հնգամյակում մենք պետք է ձգտենք այն բանին, վոր ամեն մի կոլտնտեսական ունենա իր կովը, մանր անասունը և թռչունը: Դրա համար էլ կուսակցությունը ցուցմունք տվեց բոլոր կոլտնտեսություններին ու խորհտնտեսություններին՝ ոգնել կով և մանր անասուն չունեցող կոլտնտեսականներին անձնական կարիքների համար մատղաշ գնելու և աճեցնելու գործում:

§ 76. ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՆ Է

Բոլոր հաղթանակները, վոր ձեռք է բերել մեր յերկիրը, անխզելի կերպով կապված են լենինյան կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի անվան հետ:

Լենինը 1917 թ. հոկտեմբերին մեր յերկրում բանվոր դասակարգին տարավ դեպի հաղթանակ: Նրա ղեկավարությամբ տապալվեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը: Մեր յերկրում նոր կյանք է կառուցվում: Ընկ. Ստալինը միշտ էլ յեղել է Լենինի ամենամոտիկ և ամենավստահելի ոգնականը: Նա միշտ էլ առանց տատանումների ընթանում եր Լենինի հետ ձեռք ձեռքի տված:

Լենինը մեռավ այն ժամանակ, յերբ մեր յերկիրը դեռ վերականգնում եր իմպերիալիստական ու քաղա-

քացիական պատերազմների հետևանքով քայքայված տնտեսությունը: Ծանր եր կորուստը:

Լենինյան կուսակցությունը փորձված բոլշևիկ ընկ. Ստալինի ղեկավարությամբ շարունակում է Լենինի գործը: Նրա ղեկավարությամբ խորհուրդների յերկիրը հաջողությամբ կառուցում է սոցիալիզմ:

Ընկ. Ստալինի անվան հետ է կապված մեր յերկրի ինդուստրացումը: Ֆաբրիկների, գործարանների, էլեկտրոկայանների վիթխարի շինարարությունը տեղի յեր ունենում ընկ. Ստալինի անմիջական ղեկավարությամբ:

Հետամնաց գյուղատնտեսությամբ սոցիալիզմ կառուցել չի կարելի — այսպես եր մեզ սովորեցնում Լենինը: Ընկ. Ստալինը այն հարցն է առաջադրում, վոր անհրաժեշտ է մանր ու մանրագույն գյուղատնտեսությունը վերափոխել և դարձնել խոշոր՝ սոցիալիստական — ստեղծել խորհտնտեսություններ և կոլտնտեսություններ: Ընկ. Ստալինի իսկ ցուցմունքով սկսեցինք մեր յերկրում խորհտնտեսություններ կազմակերպել:

Ընկ. Ստալինի ղեկավարությամբ հին՝ ցարական Ռուսաստանի փոխարեն (վորը աչքի յեր ընկնում իր հետամնաց արդյունաբերությամբ, բանվորների ու գյուղացիների բարբարոսական շահագործմամբ), այժմ աճում է նոր՝ սոցիալիստական յերկիր, իր արդյունաբերական գիգանտներով, մի յերկիր, վորը սոցիալիստական հիմունքներով վերակառուցում է իր գյուղատնտեսությունը:

Իզուր չէ, վոր բոլոր բանվորներն ու կոլտնտեսականները ընկ. Ստալինին համարում են յերկրի լավագույն հարվածայինը:

Վերջերս Մոսկվայում տեղի ունեցած հարվածային կոլտնտեսականների համագումարում Խարկովի մարզի, Կուպյանսկի շրջանի «Բոլշևիկ» կոլտնտեսության նախագահ ընկ. Մասը, մատնանշելով գյուղի կոլեկ-

տիվացման գործում ընկ. Ստալինի կատարած հսկայական դերը, իր կոլտնտեսության կողմից ընկ. Ստալինին հանձնեց հարվածային կոլտնտեսականի գրքույկը: Փոթորկալից, յերկար ժամանակ չդադարող ծափերով և «ուռա» աղաղակներով դիմավորեցին այդ յելույթը համագումար յեկած 1500 լավագույն հարվածային կոլտնտեսականները:

Ընկ. Ստալինն անդուլ կերպով ու անողոք պայքար է մղում մեր յերկրի բոլոր դասակարգային թշնամիների դեմ: Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում ձեռք բերած հաջողությունների հիման վրա, ընկ. Ստալինն առաջադրեց կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու խնդիրը:

Այդ նա յեր, վոր նախազգուշացրեց բոլոր կոմունիստներին, բանվորներին ու կոլտնտեսականներին, վոր այժմ դասակարգային թշնամուն — կուլակներին, նախկին առևտրականներին, բուրժուազիայի նախկին սպասավորներին պետք է փնտրել վոչ թե ֆաբրիկներից, խորհտնտեսություններից ու կոլտնտեսություններից դուրս, այլ նրանց մեջ, վոր մեր թշնամիները խցկվել են այնտեղ և վնասում են մեր շինարարությանը:

Կոլտնտեսական հարվածայինները համագումարում այդպես էլ հայտարարեցին, վոր

— Մեզ համար միայն այն ժամանակ պարզվեցին կուլակների բանսարկությունները, յերբ մենք թերթում կարդացինք ընկ. Ստալինի ճառը:

Ամենայն վճռականությամբ ընկ. Ստալինը բանվորների ու կոլտնտեսականների առաջ դնում է աշխատանքի արտադրողականության բարձրացման, աշխատանքային կարգապահության ամրացման, պրոգուլ անողների, լոդրների դեմ պայքարելու հարցը:

«Մեզ, վերջապես, հարկավոր է կամպանիա տանել — ասում ընկ. Ստալինը — ֆաբրիկներում ու գործարաններում պրոգուլների վոչնչացման համար, մեր ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, աշխատանքային կարգապահության ամրացման համար: Շնորհիվ պրոգուլների, արդյունաբերությունից կորչում են տասնյակ և հարյուր հազարավոր բանվորական որեր: Դրա հետևանքով տասնյակ հազարավոր և միլիոն ռուբլիներ են կորչում ի վնաս արդյունաբերության, ի վնաս ինդուստրիայի»:

Աշխատել ազնվորեն, պայքարել պրոգուլ անողների և լոդրների դեմ—այսպիսի խնդիր է դրել ընկ. Ստալինը մեր յերկրի բանվորների ու կոլտնտեսականների առաջ:

Առաջնորդի կոչին ի պատասխան մեծանում են հարվածայինների, սոցիալիզմի գիտակից ու ակտիվ շինարարների շարքերը:

Մեր յերկրի յուրաքանչյուր կոմունիստը, յուրաքանչյուր գիտակից բանվորն ու կոլտնտեսականը մեծ սիրով է արտասանում ընկ. Ստալինի անունը: Ընկ. Ստալինի անունը հայտնի յե աշխարհի բոլոր հեռավոր վայրերում: Նա վոչ միայն մեր յերկրի բանվոր դասակարգի, այլև համաշխարհային ամբողջ պրոլետարիատի առաջնորդն է:

Ընկ. Ստալինի ամբողջ կյանքն անդուլ պայքար է յեղել բանվորների ու գյուղացիների գործի համար,

1929 թ. դեկտեմբերի 20-ին լրացավ ընկ. Ստալինի ծննդյան հիսնամյակը:

Այդ հիսնամյակի առթիվ ամբողջ աշխարհի կոմունիստական կուսակցություններից և ԽՍՀՄ-ի աշխատավորներից ստացված բազմաթիվ ողջույններին պատասխանելիս ընկ. Ստալինը գրում է՝

«Կարող եք չկասկածել, ընկերներ, որ ես պատրաստ եմ առաջիկայում էլ բանվոր դասակարգի գործին, պրոլետարական հեղափոխության և համաշխարհային կոմունիզմի գործին նվիրել ուժերս, իմ բոլոր կարողությունները և, եթե հարկ լինի, իմ ամբողջ արյունը —կաթիլ առ կաթիլ»:

Լենինի գործը գտնվում է վստահելի ձեռքերում:

Սիրելի առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ ԽՍՀՄ-ը հաջողությամբ կատարեց առաջին հնգամյակը, նրա ղեկավարությամբ մեր յերկրի բանվորները ու կոլտնտեսականները հաջողությամբ կկատարեն նաև յերկրորդ հնգամյակը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ է նշանակում կառուցել անդասակարգ սոցիալիստական հասարակություն:

2. Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը յերկրորդ հնգամյակում ի՞նչ հիմնական խնդիրներ են դրել արդյունաբերության առաջ:

3. Ի՞նչ է նշանակում յերկրորդ հնգամյակում յուրացնել կառուցված ֆաբրիկները, գործարանները և էլեկտրոկայանները:

4. Ինչո՞ւ յերկրորդ հնգամյակում հիմնական խնդիրը հանդիսանում է աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արտադրանքի որակի բարելավումը:

5. Ի՞նչպես ենք մենք վերակառուցելու գյուղատնտեսությունը յերկրորդ հնգամյակում:

VII ԳԼՈՒԽ

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

§ 77. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿԻՐԸ

Հարյուրավոր տարիներ յերկրագնդի վրա իշխանությունը պատկանում եր կապիտալիստներին ու կալվածատերերին: Հարյուրավոր տարիներ կապիտալիստներն ու կալվածատերերը ճնշում, կեղեքում եյին ամբողջ աշխարհի բանվորներին ու գյուղացիներին: 16 տարի առաջ, մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, վորի գլուխն եր կանգնած Լենինը, քշեցին կապիտալիստներին ու կալվածատերերին և իրենց մոտ կազմակերպեցին իրենց իշխանությունը — խորհուրդների իշխանությունը: Պատմության մեջ առաջին անգամ յերկրագնդի մեկ վեցերորդական մասում ստեղծվեց բանվորական պետություն: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո վողջ աշխարհը բաժանվեց յերկու մասի — հին՝ իմպերիալիստական, և նոր՝ կառուցվող սոցիալիզմի աշխարհի:

Կապիտալիստական յերկրներում իշխանությունը պատկանում է կապիտալիստներին։	Խորհուրդների յերկրում կապիտալիստների իշխանությունը տապալված է յեվ փոխարինված է բանվորների իշխանությամբ։
Կապիտալիստական յերկրներում ֆաբրիկները, գործարանները, հանքահորերը, յերկաթուղիները, հողերը գտնվում են կապիտալիստների ձեռքում։	Խորհուրդների յերկրում ֆաբրիկները, գործարանները, հանքահորերը, յերկաթուղիները, հողերը խլված են կապիտալիստներից յեվ հանձնված բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության հասարակական սեփականությանը։
Կապիտալիստական յերկրներում բանվորները շահագործվում են, կեղեքվում կապիտալիստների կողմից։ Նրանք իրենց համար չեն աշխատում. նրանք այնտեղ աշխատում են կապիտալիստների համար։	Խորհուրդների յերկրում բանվորները հանդիսանում են յերկրի տերը։ ԽՍՀՄ բանվորները աշխատում են վոչ կապիտալիստների համար։ Նրանք աշխատում են իրենց համար, իրենց պրոլետարական պետության համար։

Յերկու տարբեր աշխարհներ են դրանք։ Այդ յերկու աշխարհների միջև տեղի ունի անհաշտելի պայքար։ Ո՞վ ում կհաղթի։ ԽՍՀՄ-ն աճում և ամրանում է օրեցօր։ Զարանենդ է դառնում համաշխարհային բուրժուազիան։ Վոչնչացնել, ջնջել յերկրի յերեսից բանվորների ու գյուղացիների յերկիրը — ահա բուրժուազիան այսպիսի խնդիր եր դրել և այժմ էլ դնում է։ Բայց մեծանում է դեպի Խորհրդային Միությունը տածած համակրանքը կապիտալիստական յերկրների աշխատավորության կողմից։ Ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները վոտքի յեն յելնում պայքարելու իրենց կեղեքիչների — կապիտալիստների և կալվածատերերի դեմ։ Յեվ արդեն մոտ է այն ժամանակը, յերբ բանվորներն ու գյուղացիները կհաղթեն բուրժուազիային ամբողջ յերկրագնդի վրա։

§ 78. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿԻՐԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԻԶՄ

Խորհրդային Միությունն աշխույժ ու հաստատուն կերպով շարժվում է դեպի սոցիալիզմ։ Լենինի դրոշի ներքո, կոմունիստական կուսակցության և սիրելի առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ Խորհրդային Միության աշխատավորները ձեռք են բերում հաղթանակը հաղթանակի յետևից։ Մեր յերկրի բանվորներն ու գյուղացիներն իրենց ձեռքերով կառուցում են ֆաբրիկներ ու գործարաններ, ելեկտրոկայաններ, կամուրջներ ու ջրանցքներ, ճանապարհներ։ Խորհրդային յերկրում գիգանտը գիգանտի (հսկա գործարաններ) յետևից է աճում։ Գործի յեն դրվել հարյուրավոր նոր ֆաբրիկներ, գործարաններ և ելեկտրոկայաններ։ Բոցավառվում են նոր դոմնաներ։ Խորհրդային յերկիրն ունի իր սեփական գործարանները, վորոնք արտադրում են մեքենաներ։ Հսկայական յերկիրը, վորն ուներ շատ թույլ արդյունաբերություն, դարձել է ինդուստրիալ յերկիր։

Մեր գյուղատնտեսությունն այն չէ, ինչ վոր առաջ եր։ 15 միլիոն գյուղացիական տնտեսություններ ապրում են նոր կյանքով, կոլտնտեսական կյանքով։ Խորհրդային Միության դաշտերում բարձրանում են հացահատիկի, մսի, յուղի, ֆաբրիկներ։ ՄՏԿ-ների տրակտորային զորասյուները (շարքերը) ճեղքում են խորհրդային դաշտերի հողերը։ Դարերով ձեռք չտված խոպան հողերը վեր են ածվում հացի, բրնձի, բամբակի դաշտերի։ ԽՍՀՄ-ը դարձել է աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրը։

Հարվածայինների հզոր զորասյուները պայքարում են նոր ֆաբրիկների, գործարանների ու ելեկտրոկայանների կառուցման և արդեն կառուցվածների յուրացման համար, մետաղի, ածխի ու նավթի համար։ Մեր դաշտերի հարվածայինները պայքարում են հանուն

խորհրդային, բոլշևիկյան կոլտնտեսության, հանում բարձր բերքի։

Խորհրդային Միությունն աշխարհի միակ յերկիրն ե, ուր գործազրկություն չկա։ Կապիտալիստների մոտ բանվորներն որական աշխատում են 10—12 ժամ։ Խորհրդային յերկրի բանվորներն աշխատում են որական 7 ժամ։ ԽՍՀՄ աշխատավորության կյանքն որավուր բարելավվում ե։

ԽՍՀՄ աշխատավորները հաջողությամբ կատարեցին իրենց առաջին հնգամյակը։ Նույնպիսի հաջողությամբ կատարվում ե նաև յերկրորդ հնգամյակը։ Մեր յերկրում սոցիալիզմի և կապիտալիզմի մեծ պայքարում հաղթանակը սոցիալիզմի կողմը յեղավ։ Սոցիալիզմը հաղթանակեց և՛ քաղաքում, և՛ գյուղում։ Աճում ու ամրանում ե աշխարհի միակ խորհուրդների յերկիրը։

§ 79. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՃԳՆԱԺԱՄ Ե

Կապիտալիստների մոտ վերելքի փոխարեն անկում ե։ Կապիտալիստական յերկրներում փակվում են ֆաբրիկները, գործարանները, հանգչում են դոմնաները։ Դադարեցվում են հանքահորերի աշխատանքները։ Արդյունաբերությունը շարունակ ավելի ու ավելի պակաս արտադրանք ե տալիս։

Ամերիկայում 1929 թ. սկսած՝ 1732 թ. համեմատությամբ արտադրանքը կրճատվել ե յերկու անգամ։ Յեղած 307 դոմնաներից գործում են միայն 60-ը, Ավտոմոբիլային գործարանները համարյա թե դադարեցրել են աշխատանքը։

Անգլիայում 400 դոմնաներից գործում են միայն 60-ը։ Արդյունաբերական արտադրանքը կրճատվել ե մեկ յերրորդականի չափով։ Անգլիայում նավաշինական արդյունաբերությունը միանգամայն կանգ ե առել,

վերֆերը*) փակվել են։ Անգլիայի խոշորագույն նավաշինական ընկերություններից մեկը՝ «Արդրոսեի Դոկ—Յարդ»-ը գոյություն ուներ 100 տարուց ավելի։ Իսկ հիմա այդ ընկերությունն իր վերֆը վաճառել ե կոտրատելու համար։

Ինչո՞ւ յեն փակվում ֆաբրիկներն ու գործարանները։ Ինչո՞ւ յեն կապիտալիստները կրճատում արտադրությունը։

Այդ կատարվում ե, վորովհետև բոլոր կապիտալիստական յերկրները ապրում են ճգնաժամ։ Ֆաբրիկներն ու գործարաններն արտադրել են շատ-շատ ապրանքներ։ Դաշտերում արտադրված ե շատ-շատ հաց, բամբակ, բրինձ, սուրճ և այլն։ Այս բոլոր ապրանքներն ստեղծվում են բանվորների աշխատանքով, բայց այդ բոլորը յուրացնում են կապիտալիստները։ Յուրաքանչյուր կապիտալիստ աշխատում ե, վորքան կարելի յե շատ շահույթ ստանալ։ Յուրաքանչյուր կապիտալիստ աշխատում ե արտադրել ավելի շատ ապրանքներ։ Ավելի շատ հարստանալու համար յուրաքանչյուր կապիտալիստ աշխատում ե անցնել մյուսից, մյուսի առաջը կտրել։ Յեվ հանկարծ ստեղծվում ե այնպիսի դրություն, վոր ապրանքները վաճառել չի լինում։ Չե՞ վոր ապրանքների գլխավոր գնորդ աշխատավորներն են. սակայն նրանք այնքան աղքատ են, վոր չեն կարողանում այդ ապրանքները գնել. այսպիսով ստացվում են ապրանքների հսկայական ավելցուկներ։ Կապիտալիստները ստիպված են լինում կրճատել իրենց արտադրությունը։

Բանվորների մի մասն անգործ ե մնում։ Նրանց փողոց են շպրտում։ Նրանք դառնում են գործազուրկներ։

Կապիտալիստները կրճատում են արտադրությունը, իսկ ապրանքներն այնուամենայնիվ շատ են լինում,

*) Վերֆեր—Նավերի կառուցման ու նորոգման շինություններն են։

դրանք եժանանում են: Դա ձեռնտու չէ կապիտալիստներին. Եվ կապիտալիստներն սկսում են այնպիսի բաներ անել, որի համար մեր յերկրում (այդպես անողին) գժանոց կուղարկեյին: Նրանք շոգեքարշերի հնոցներում այրում են ցորեն, վարսակ, յեգիպտացորեն և սուրճ: Բրազիլիայում կապիտալիստները ծովը թափեցին 2 միլիոն պարկ սուրճ: Գերմանիայում միքանի հարյուր տոնն վարսակը տվեցին խոզերին, բոլոր յերկրներում կապիտալիստներն աշխատում են այն ուղղությամբ, որ գյուղացիները քիչ ցորեն, բամբակ և այլ բաներ ցանեն: Չգիտեն, թե ինչ անեն ապրանքները, իսկ դրա հետ միասին միլիոնավոր մարդիկ սոված են:

§ 80 Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Կապիտալիստական յերկրներում կա 50 միլիոն գործազուրկ: Ընտանիքների հետ միասին՝ գործազուրկների թիվը հասնում է 150 միլ. մարդու: Գործազրկությունն աճում է օրավուր, աղքատությունն ու սովը ընդգրկում են նորանոր հարյուր հազարավոր աշխատավորների: Մեծանում է սովից մահացողների թիվը:

Չինաստանում և Հնդկաստանում 1932 թ. ընթացքում սովամահ է յեղել 2 միլիոն մարդ: Աշխարհի բոլոր նավահանգստներում տարիներով ընկած ու փթում են միլիոնավոր տոններով ապրանքներ: Իսկ այդ նույն պահին միլիոնավոր աշխատավորներ սովամահ են լինում:

Կապիտալիստական քաղաքներում դատարկ ու չբնակված են մնացել տասնյակ հազարավոր սքանչելի տաք բնակարաններ: Այդ նույն պահին հազարավոր գործազուրկներ պատսպարվում են հավաքներում, գիշերն անց են կացնում ստորերկրյա յերկաթուղիների զուգարաններում (արտաքնոցներում), թաքնվում են նավահանգիստների աղբի կույտերի մեջ, պատսպարվում են կառուցվող ջրմուղի խողովակների մեջ և այլն:

Գերմանիայում 1½ միլիոն աշխատավորներ ապրում են առանց բնակարանի: Քիչ չեն անտուն գործազուրկները նաև ՀԱՄՆ-ում: Գործազուրկների ամբողջ ընտանիքներ գիշերում են փողոցներում ու քաղաքային պարտեզներում: Նրանք բախտավոր են, յերբ նրանց հաջողվում է անպետք իրերից վորջեր կառուցել «Հուվերյան քաղաքում»: Հուվերի (հանրապետության նախկին նախագահի) անունով բանվորները կոչում են իրենց բնակության վայրերը: Այդպիսի միքանի «քաղաքներ»



«Հուվերյան քաղաք»

կան հենց Նյու-Յորքի մոտ: Դրանցից մեկը կառուցված է նախկին ջրմուղի պահեստարանի հատակում: Իսկ Անգլիայում մի միլիոն ընտանիքից ավելի ապրում են նկուղներում:

Ահա միքանի պատկերներ կապիտալիստական յերկրների բանվորների և նրանց ընտանիքների կյանքից:

ՀԱՄՆ: Նյու-Յորկ քաղաք: Գորշ, ցուրտ առավոտ: Տեղում է անձրև: Ցուրտը սրի պես կտրում է: Մի տան առաջ հերթի յեն կանգնած հազարավոր յերեխաներ:

Գունատ, վտիտ դեմքեր: Նրանք այստեղ են յեկել վաղ առավոտից, վոր դպրոց գնալուց առաջ մի կտոր հաց ստանան: Մի մեծ մարդ ռետինե դագանակը ձեռքին կարգ ե պահպանում:

Հերթը հասնում ե փոքրիկ նեգր յերեխային: Մեծահասակ մարդը վրա յե պրծնում նրան և դագանակի հարվածներով ծեծում նեգր յերեխային՝ մինչև ուշաթափություն: Պարզվում ե, վոր նեգրերի յերեխաները զրկված են նույնիսկ այդ վողորմությունից: Նեգրերի յերեխաները վոստիկանության կողմից հեռացվում են խոհանոցների առաջ կանգնած հերթերից: Նրանք միայն վերջին հերթին կարող են ստանալ այդ վողորմությունը:

Գերմանիա. Համբուրգ քաղաք. փոքրիկ, լուռ փողոց: Ցածրիկ տանը բնակվում են բանվորներ: Հանկարծ աղմուկով բացվում ե դուռը: Բացված դռան միջից դուրս են թափվում կեղտոտ կապոցներ— բարձ, մանկական մահճակալ: Տնից դուրս ե գալիս մի կին՝ հետը յերեք յերեխա՝ 3 տարեկան աղջիկ, յերկու տղաներ՝ մեկը հինգ տարեկան իսկ մյուսը տասնյերեք: Մայրը կռանում ե ու սալահատակին ցրված իրերը հավաքում: Նա լաց ե լինում, լաց են լինում և յերեխաները: Ավագ յերեխան չի լալիս, չե վոր նա արդեն բոլորովին մեծացել ե: Այն պահից, յերբ վոստիկանները նրա հորը բանտ նետեցին, նա ընտանիքի միակ պահողն ե: Նա արդեն յերկու տարի աշխատել ե ծխախոտի ֆաբրիկում: Ֆաբրիկը փակեցին: Այժմ թե մայրը և թե վորդին աշխատանք չունեն: Բնակարանից նրանց վտարեցին (դուրս արին), վորովհետև բնակարանի վարձը չեյին կարողանում վճարել: Նրանք փող չունեն: Իսկ այժմ նրանք չունեն նաև բնակարան:

Լեհաստան. Լոձ քաղաք: Բնակարանում սարսափելի աղքատություն ե տիրում: Այստեղ ապրում ե մի ընտանիք, վոր ունի հինգ յերեխա: Հայրը մահացել ե, իսկ 16–23 տարեկան վորդիները գործազուրկ են: Ո՞վ ե

ուրեմն պահում ընտանիքը: Ընտանիքում միակ աշխատողը 14 տարեկան աղջիկն ե: Նա աշխատում ե ֆաբրիկում և ստանում ե օրական մի զլոտի (22 կոպեկ): Բայց յերեկվանից այլևս ֆաբրիկը չի աշխատում: Վ՞որտեղ ե աղջիկը, Բամբակեղենի խոշոր ֆաբրիկի առաջ կանգնած են մի քանի անչափահասներ: Նրանցից մեկն այդ աղջիկն ե: Յուրաքանչյուրի վզից կախված ե մի պլակատ: Պլակատի վրա խոշոր տառերով գրված ե «գործադուլ»: Լոձի ֆաբրիկայի բանվորուհիների աշխատորը նորից յերկարացրել են, իսկ աշխատավարձը կրճատել: Բանվորուհիները թողել են աշխատանքը: Աղջիկները շատ են սոված, ուտել են ուզում: Նրանցից վոմանք յերկու օր ե, ինչ բան չեն կերել: Բայց նրանք հաստատակամ են. վճռել են չհեռանալ իրենց դիրքից և չվիժեցնել գործադուլը: Իրենց պլակատներով նրանք նախազգուշացնում են գործազուրկներին— «մենք գործադուլ ենք անում: Մի՛ վիժեցնեք մեր գործադուլը: Մի վարձվեք այս գրծատիրոջ ֆաբրիկում: Մենք զիջումներ ձեռք կբերենք, ինչ գնով ել ուզում ե լինի»:

Մի գուցե աշխատողներն են լավ ապրում: Վոչ, նրանք նույնիսկ ի վիճակի չեն կերակրել ու հագցնել իրենց յերեխաներին: Աշխատանքի մեջ գտնվողների աշխատավարձը կրճատվել ե 30–50 տոկոսով: Աշխատանքի տևողությունը մեծացել ե 2–3 ժամով: Համարյա բոլոր ընտանիքներում կան գործազուրկներ: Ամենուրեք կարիք ու աղքատություն ե:

Նույնիսկ ծանր դրության մեջ են գտնվում կապիտալիստական յերկրների գյուղատնտեսական բանվորներն ու աշխատավոր գյուղացիները: Գյուղացուն խեղդում են հարկերն ու տուրքերը: Գյուղատնտեսական մթերքների գները սոսկալի ցածր են: Պարտքերը վճարելու համար գյուղացիները ստիպված են անչափ ցածր գներով ծախել իրենց հացը:

Վաճառքից ստացված գումարը չի բավականացնում պարտքերը վճարելու համար: Այդ ժամանակ

գյուղացու տնտեսությունն աճուրդով վաճառվում և անցնում է կուլակների, խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների ձեռքը: Վերջում ավերված գյուղացին գնում է ու լրացնում գործազուրկների բանակը:

Չինաստանում սովում է ավելի քան 30 միլիոն մարդ: Շենսի նահանգում սովամահ յեղավ 3 միլիոն մարդ, վորոնց մեջ առանձնապես կային շատ յերեխաներ: Շենսին վեր է ածվել մահվան թագավորության: Սովյալների թիվը 7 միլիոն մարդուց ավելի յե: Այստեղ վաղուց ի վեր ծիծաղի ձայն չի լսվում, ուրախություն չի յերեվում: Ծանր կարիքը խմբերով հնձում և մահվան գիրկն է առնում բանվորների ու գյուղացիների մանուկներին: Ամենուրեք նիհար ու վտիտ դեմքեր են:

Սովալլուկ գյուղացիները վաճառում են իրենց վերջին ունեցվածքը և վերջնականապես քայքայվում: Գյուղացին սկսում է գյուղատնտեսական գործիքները վաճառել, իսկ վերջում հերթը հասնում է յերեխաներին: Անհրաժեշտությունը, աղքատությունն ու սովը ստիպում են ծնողներին կատարել զարհուրելի քայլ՝ յերեխաներին վաճառել: Շենսի նահանգում կան հատուկ շուկաներ, ուր կատարվում է յերեխաների վաճառք: Նահանգական կառավարությունը հատուկ հարկ է նշանակել այդ վաճառքի վրա: Նա արդեն կարողացել է այդ զազրելի գործարքներից հավաքել 3 միլիոն չինական դոլար:

Այսպես են բանվորներն ու գյուղացիները ապրում կապիտալիստական յերկրներում—քաղցի ու սովի աշխարհում:

Նրանց մոտ՝ կապիտալիստների մոտ ճգնաժամ է. փակվում են ֆաբրիկներն ու գործարանները: Նվազում է ցանքերի տարածությունը:	Մեզ մոտ՝ ՍՍՀՄ-ում, վերելք է: Հաջողությամբ ավարտված է առաջին հնգամյակը:
Նրանց մոտ, կապիտալիստների մոտ աշխատավորների կյանքը սաստիկ վատթարանում է: Նվազում է աշխատավարձը: Աճում է գործազրկությունը: Տասնյակ միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ մատնված են սովի, աղքատության ու մահացության,	Մեզ մոտ՝ ՍՍՀՄ-ում, գնալով ավելի ու ավելի յե բարելավվում աշխատավորների կյանքը: Բարձրանում է աշխատավարձը: Ընդմիշտ վերացված է գործազրկությունը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչպես են ապրում բանվորներն ու գյուղացիները կապիտալիստական յերկրներում:

2. Ինչո՞ւ կապիտալիստական յերկրներում տեղի ունի ճգնաժամ:

§ 81. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԻՑ ՅԵԼՔ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ

Կապիտալիստները ցանկանում են ճգնաժամից դուրս գալ բանվորների ու գյուղացիների հաշվին: Նրանք ե՛լ ավելի յեն շահագործում բանվորներին: Կրճատվում է աշխատավարձը: Յերկարացվում է աշխատօրը: Համարյա թե բոլոր յերկրներում դադարեցվում են գործազուրկներին տրվող նպաստի վճարումները: Փակվում են հիվանդանոցային գանձարկղները: Մեծահասակ բանվորների փոխարեն կապիտալիստները վարձում են յերեխաներին ու կանանց: Վերջիններիս նրանք ավելի քիչ են վճարում, քան մեծահասակ տղամարդ բանվորին: Բայց աշխատեցնում են մեծահասակներին համահավասար:

Չինաստանում, Շանհայ քաղաքում լուցկու շատ ֆաբրիկներում մայրերի հետ միասին աշխատում են 6–7 տարեկան յերեխաները: Ճապոնիայում վերջերս հետազոտված եյին 800 հազար բանվորուհիներ: Պարզվել եր, վոր նրանցից 115 հազարը տասներկուսից տասնհինգ տարեկան հասակ ունեն:

Բանվորների և աշխատավոր գյուղացիների անո–

զոք չահագործումը վերջ չտվեց ճգնաժամին: Ապրանքներ շատ կան, բայց վաճառելու տեղ չկա: Հարկավոր են շուկաներ: Յեվ ամեն մի կապիտալիստական յերկիր աշխատում է նոր շուկաներ գտնել ապրանքները վաճառահանելու համար: Իսկ աշխարհում այլևս չկան անձեռնմխելի մնացած հողեր, որ հեշտությամբ հնարավոր լիներ բնիկներից խլել: Բոլոր հողերն էլ բաժանված են կապիտալիստների միջև: Ստիպված՝ պետք է այդ հողերը խլեն այն կապիտալիստներից, որոնք արդեն գրավել են, իսկ դրա համար կապիտալիստներին հարկավոր է իմպերիալիստական նոր պատերազմ: Յեվ ահա, բոլոր յերկրների կապիտալիստները պատերազմի յեն պատրաստվում:

Կապիտալիստները պատերազմի մեջ են տեսնում միակ յելքը: Այդ պատերազմով կապիտալիստները հույս ունեն ձեռք գցելու նոր շուկաներ, ուր նրանք կկարողանան վաճառել իրենց ապրանքները: Ամեն մեկն ուզում է ձեռք բերել նոր գաղութներ, որտեղ լինեն կապիտալիստներին անհրաժեշտ հումքի (հում նյութ) առատ աղբյուրներ, որտեղ կարելի լինի բնիկներին էժան գնով աշխատեցնել կապիտալիստների օգտին:

Պատերազմի ժամանակ կապիտալիստները հույս ունեն բոլոր կուտակված ապրանքները վաճառել: Նրանք հույս ունեն, թե պատերազմը հնարավորություն կտա նորից գործի գցել ֆաբրիկներն ու գործարանները: Գործարանները կպատրաստեն թնդանոթներ, արկեր, գնդացիրներ, տանկեր, ինքնաթիռներ: Կապիտալիստները կսկսեն զենքի առևտուր անել և հարստանալ բանվորների արյան գնով:

Պատերազմը կոչնչացնի գործազուրկ բանվորների ու գյուղացիների միլիոնավոր բանակները: Այդ մասին բացահայտ է խոսում բուրժուազիան: Ամերիկյան պրոֆեսոր Ռուայտր հայտարարեց՝ «կարելի յե համարձակ ասել, որ կապիտալիզմը կարիք ունի պատերազմի: Պատերազմը կոչնչացնի ապրանքների ավելցուկները և կըկոտորի գործազուրկների բանակները»:

Բուրժուական կառավարությունները միլիարդ ռուբլիներ են ծախսում ռազմական արդյունաբերության վրա: Չնայած ճգնաժամին, ռազմական արդյունաբերությունը կապիտալիստական բոլոր յերկրներում լրիվ կերպով գործում է: Կապիտալիստների մոտ կազմ ու պատրաստ են՝ ավիոնները, զենքերը, հեղձուցիչ գազերը: Գազանային դաժանությամբ նրանք պատրաստ են այդ բոլորը գործածել աշխատավորության դեմ, ծով ու ովկիանոս են իջեցնում ավելի ու ավելի շատ նորանոր զրահանավեր, ռազմանավեր, սուզանավեր:

Ճապոնիան առաջինը փորձ արեց ճգնաժամից դուրս գալ պատերազմի միջոցով: Առանց պատերազմ հայտարարելու ճապոնական կապիտալիստներն իրենց զորքերը Չինաստան ուղարկեցին: Ճապոնիայի պատերազմը Չինաստանում ահա յերեք տարի յե, ինչ շարունակվում է: Ամբողջ քաղաքներ ավերվում ու վեր են ածվում ավերակույտերի: Կտրվում ու այրվում են անտառները: Կործանվում են հազարավոր բանվորներ ու գյուղացիներ: Իսկ Յեվրոպայի և Ամերիկայի կապիտալիստները աշխատում են մեկը մյուսից անցնել ճապոնական իմպերիալիզմի ռազմական պատվերներ ստանալու գործում:

§ 82. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԽՍՀՄ ԴԵՄ

Մեր միության հողերը հեքիաթային չափերով հարուստ են: Կապիտալիստները վաղուց ի վեր յերազում եյին իրենց ձեռքը գցել մեր հարստությունները: Նրանք յերազում ու ձգտում են ոչնչացնել խորհրդային իշխանությունը և ստիպել իրենց օգտին աշխատելու միլիոնավոր նոր աշխատավորների: Իր յերկրում սոցիալիզմ կառուցելով, ԽՍՀՄ-ն ամբողջ աշխարհի բանվորներին ու գյուղացիներին ցույց է տալիս կապիտալիստների դեմ պայքարելու ուղին: Կապիտալիստները զգում են այդ և սպառազինվում: Դրա համար է, որ

րանք ամենից առաջ պատերազմ են պատրաստում խոր-
հուրդների յերկրի դեմ:
Շուկաների համար մղվող պայքարի պատճառով
մի յերկրի կապիտալիստները ատում են մյուս յերկրների
կապիտալիստներին: Ֆրանսիայի բուրժուան ատում
է Անգլիացուն, Անգլիացին Ամերիկացուն, Ամերիկացին
— Ճապոնացուն և այլն: Բայց նրանք բոլորը միասին
ավելի շատ ատում են խորհուրդների յերկիրը: Իրենց
ընդհանուր թշնամուն: Այդ պատճառով էլ նրանք աշ-
խատում են միանալ՝ ԽՍՀՄ-ը վոչնչացնելու համար:
Աշխարհի բոլոր աշխատավորների համակրանքը
Խորհրդային Միության կողմն է. բոլոր յերկրներում
հեղափոխական շարժման աճումը մեր աճումն է— ահա
այն պատճառը, վոր մինչև հիմա յետ է պահում կապի-
տալիստներին մեր վրա հարձակում գործելուց:
Բուրժուազիան ամեն որ անդադար ստահոդ լուրեր
է տարածում ԽՍՀՄ-ի վերաբերյալ: Կապիտալիստները
ճգնում են համոզել իրենց յերկրի բանվորներին, ու
գյուղացիներին, վոր իբր թե ԽՍՀՄ-ում բանվորներն
ու գյուղացիներն ավելի վատ են ապրում, քան կապի-
տալիստական յերկրներում: Նրանք լուրեր են պատեյ-
նում, թե իբր ԽՍՀՄ-ում գոյություն ունի ստրկական
աշխատանք և այլն:
Նրանք այդպես են անում, վորպեսզի բուրժուական
յերկրների աշխատավորության մեջ անվստահություն
սերմանեն դեպի մեր միության բանվորների հաջողու-
թյունները, վորպեսզի իրենց աշխատավորությու-
թշնամաբար տրամադրեն դեպի ԽՍՀՄ-ը:
1929 թ. կապիտալիստները փորձ արին մեզ պա-
տերազմի մեջ քաշելու: Նրանք կազմակերպեցին Չինա-
կան սպիտակ բանդիտների (ավազակների) ռազմական
արշավը Չին-Արեվելյան յերկաթուղու վրա: Նրանք
անցան մեր սահմանը: Սակայն մեր Կարմիր բանակն
այնպիսի ուժգին հակահարված տվեց չինական գենե-
րալներին, վորից նրաք յերկար ժամանակ խելքի չեյին

գալիս: Մեր հեռավոր արևելյան Կարմիր բանակը կա-
պիտալիստներին ցույց տվեց իր սվինի ուժն ու սրու-
թյունը: Կարմիր բանակը— աշխատավոր ժո-
ղովրդի զավակները ցույց տվեցին, թե ինչպես
նրանք կարողանում են պաշտպանել իրենց պրոլետարա-
կան պետությունը, նրանցից յուրաքանչյուրը պատ-
րաստ էր իր կյանքը զոհելու բանվոր դասակարգի գոր-
ծի համար: Քիչ չեյին այնպիսի դեպքերը, յերբ ան-
կուսակցական կարմիր բանակայինները մարտի գնալով
իրենց հրամանատարին ասում եյին՝ «ընկեր հրամանա-
տար, մարտի դաշտ գնալով՝ յես ազնվորեն կպաշտպա-
նեմ Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները և,
յեթե ինձ սպանեն, յես կուսակցական չլինելով, խըն-
դրում եմ ինձ համարեք կուսակցական, վոր մեռավ
բանվոր դասակարգի գործի համար»:
Չինական գեներալների հարձակումը լիակատար
անհաջողություն կրեց: Քշելով մեր սահմաններից բա-
սպիտակ բանդիտներին (ավազակներին)՝ մեր Կարմիր
բանակը դադարեցրեց իր առաջխաղացումը: Դրանով
մենք ցույց տվինք ամբողջ աշխարհին, վոր մենք ու-
րիշի հողը չենք ուզում, բայց և մեր հողից վոչ վոքի
չենք տա:
Կապիտալիստների կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձա-
կում պատրաստելու հանգամանքը շատ ցայտուն ու
պարզ կերպով յերևաց վնասարարների դատավարու-
թյան պրոցեսում :«Արդյունաբերական կուսակցու-
թյուն» կոչվող վնասարարական կազմակերպությունը
նախապատրաստում էր Խորհրդային իշխանության
տապալումը: Վնասարարները ցանկանում եյին յերկի-
րը հասցնել տնտեսական քայքայման աստիճանին և ա-
պա, կապիտալիստների օգնությամբ կազմակերպել
հարձակում ԽՍՀՄ-ի վրա: Վորոշված եյին նույնիսկ
հարձակման ժամկետները. Նախ 1930թ. ապա, յեթե
այդ չհաջողվեր, ծրագրվեց հարձակում կատարել
1931թ.

ՀԱՄՆ-ում կապիտալիստների կողմից արդեն գրնված էին ԽՍՀՄ-ի վրա հարձակվող բանակի մատակարարման համար կես միլիարդ դոլլարի պարենավորման մթերքներ. գնված մթերքները պատրաստի պահվում էին Ատլանտյան օվկիանոսի նավահանգիստներում: ԽՍՀՄ-ն ամբողջ աշխարհի առաջ դիմակազերծ արեց ներքին ու արտաքին թշնամիների այդ դավադրությունը:

Սակայն կապիտալիստները չեն վհատում: Նրանք ամեն գնով ուզում են ԽՍՀՄ-ին պատերազմի մեջ քաշել:

1932թ. մայիսին ամբողջ աշխարհով մեկ արձագանքեց Ֆրանսիայի հանրապետության նախագահ Դումերգի սպանության գործը: Նրան սպանեց ռուսական սպիտակ գվարդիական Գորգուլովը: Կապիտալիստները ձգտում էին համոզել, թե Գորգուլովը խորհրդային կոմունիստ է, որին իբր Կոմինտերնն է ուղարկել այդ սպանությունը կատարելու: Բայց խորհրդային Միության և մեր արտասահմանյան բարեկամներն ապացուցեցին, որ Գորգուլովը ռուս սպիտակ գվարդիական է, խորհրդային իշխանության թշնամին է: Նա ցանկանում է, որ Ֆրանսիան պատերազմի ԽՍՀՄ-ի դեմ:

Դատարանում իր ցուցմունքներում մարդասպանը հայտարարեց՝ Ես սպանեցի Դումերգին, որպեսզի ֆրանսիային ստիպեմ պատերազմել խորհուրդների դեմ»:

Կապիտալիստները ցանկանում են մեզ ստիպել, որ իրենց հետ պատերազմ սկսենք: Այն ժամանակ նրանք իրենց երկրների աշխատավորներին կասեն, որ իրենք չսկսեցին պատերազմը, այլ խորհրդային Միությունն սկսեց:

Ճապոնիայի պատերազմը Չինաստանի դեմ միաժամանակ պատերազմի նախապատրաստում է ԽՍՀՄ-ի դեմ: Կապիտալիստները սկզբում ցանկանում էին խեղդել հեղափոխությունը Չինաստանում: Նրանք ուզում են ջախջախել չինական Կարմիր բանակը, ոչնչացնել

խորհուրդները, դառնալ Չինաստանի լիակատար տերը և ապա շարժվել խորհուրդների երկրի վրա:

Կապիտալիստները պատերազմ են բորբոքում հարստանալու համար: Մենք միմյանց վրա չհարձակվելու պայմանագրեր ենք կնքում: Մեզ հարկավոր է խաղաղություն՝ սոցիալիստական շինարարությունն ամրացնելու համար: Մենք պատերազմ չենք ուզում, բայց մենք պատրաստ ենք պաշտպանելու մեր երկիրը:

Քաղաքացիական կռիվներում խորհրդային երկրի բանվորներն ու գյուղացիները համարյա անզեն, սոված, կիսամերկ վիճակում կարողացան ջարդել սպիտակ բանդիտների բանակները, որոնց լավ զինել էին Ֆրանսիայի և Անգլիայի կապիտալիստները: Այժմ Խորհուրդների Միությունն ունի լավ սպառազինված բանակ: Յեվ յեթե մեզ վրա հարձակվեն կապիտալիստները, մեր փառապանծ Կարմիր բանակը կկարողանա պաշտպանել իր երկրի ազատությունը:

83. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատրաստելով համաշխարհային պատերազմ՝ կապիտալիստներն իրենց երկրների աշխատավորներից թաքցնում են այդ բանն ու նրանց խաբում խաղաղության մասին զրույցներով: Նրանք սարքում են զանազան միջազգային համագումարներ ու կոնֆերանսներ, որտեղ քննում են պատերազմի դեմ պայքարելու, խաղաղության և նույնիսկ ընդհանուր զինաթափության հարցերը: Ճապոնական կապիտալիստներն արդեն սկսել են պատերազմը, իսկ բուրժուական մինիստրները շարունակում են ճառել խաղաղության մասին: Արևելքում տեղի ունեցող թնդանոթների որոտի տակ Ժնևում շարունակվում է զինաթափման կոնֆերանսը:

Բուրժուական մինիստրները ասում են, նրանք խո-

սում են խաղաղության մասին նրա համար, որ աշխատավորները չնկատեն, թե բուրժուազիան ինչպես ուժգին կերպով պատերազմի յե պատրաստվում:

Մեր կոմունիստական կուսակցությունը բացատրում է ամբողջ աշխարհի աշխատավորներին կապիտալիստների մասին յեղած ճշմարտությունը: Մեր խորհրդային պատգամավորությունն արտաքին գործերի ժողկոմ ընկ. Լիտվինովի գլխավորությամբ կապիտալիստներին առաջարկեց ոչ թե խոսքով, այլ գործով անցկացնել լիակատար և ընդհանուր զինաթափություն: Սակայն այդ առաջարկությունը մերժվեց բուրժուական պատգամավորների կողմից: Այն ժամանակ մեր պատգամավորությունն առաջարկեց զինաթափվել գեթ մասնակիորեն: Սակայն այդ առաջարկն էլ չընդունվեց:



Ռազմական գործարանների աճը

Կապիտալիստները խոսքով ուրիշ բան են ասում, իսկ գործով ուրիշ բան են անում: Ժնևում խոսակցություններ են տեղի ունենում, մինչդեռ այդ նույն պահին կապիտալիստական յերկրներում աճում է սպառազինություն:

Բուրժուական կառավարությունները գնալով ավելի ու ավելի շատ փողեր են բաց թողնում ռազմական ծախսերի համար: Ֆրանսիայում 1934 թ. ծախսվելիք միջոցների համարյա կեսը ռազմական նպատակների համար է տրված: ՀԱՄՆ-ում բոլոր ծախսերի մի յերրորդական մասը գնում է ռազմական նպատակների համար: Ճապոնիայում՝ համարյա թե կեսը: Ցեվ այդպես կապիտալիստական բոլոր յերկրներում:

Կապիտալիստները զինաթափման կոնֆերանսի ծածկոցի տակ պատրաստում են թալանչիական նոր պատերազմ: Միայն խորհրդային միությունն է իսկական պայքար մղում հօգուտ խաղաղության:

§ 84. ԿՈՐՉԻ՛Ր ՊԱՏԵՐԱԶՄԸ: Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈ՛ՒՆ ԽՍՀՄ-Ի

Ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորներն ու գյուղացիները դեմ են դուրս գալիս պատերազմին: Նրանք դուրս են գալիս հօգուտ ԽՍՀՄ-ի պաշտպանության: «Կորչի նոր իմպերիալիստական պատերազմի պատրաստությունը: Ձեռներդ հեռու Խորհրդային Միությունից: Ձեռներդ հեռու Չինական հեղափոխությունից» —ահա կապիտալիստական յերկրների հեղափոխական բանվորների ու գյուղացիների լոզունգները:

Գերմանիայում՝ Էլբֆերդ քաղաքում, կապիտալիստ Դիտարիցի քիմիական խոշոր գործարանում, բանվորները ռազմական բեռներին դիտմամբ սխալ հասցեներ եյին կպցնում: Լայպցիգում յերկաթուղայինները ռազմական բեռներ հայտնագործելով՝ վոչնչացրին այդ բեռների մի մասը: Մակդեբուրգում բանվորները հրաժարվեցին կատարել Ճապոնական կապիտալիստների ռազմական պատվերները: Շվեդական Գետաբուրգ նավահանգստում «Գերմանդ» ավիանոսային նավի վրա բեռնում եյին զենքեր և ռազմական այլ հանդերձանք Ռումինիայի համար: Նավի անձնակազմը պահանջեց դադարեցնել բեռնումը:

Նավի անձնակազմի այդ պահանջը չկատարվեց: Այդ ժամանակ անձնակազմն ափ իջավ և ցույց կազմակերպեց ընդդեմ պատերազմի:

Մեր յեղբայրական կոմունիստական կուսակցությունները սնդադրում պայքար են մղում ընդդեմ իմպերիալիստական պատերազմի:

Այն ժամանակ, յերբ Ճապոնական կապիտալիստները ներս խուժեցին Չինաստան ու գրավեցին մի շարք քաղաքներ, Ճապոնիայի կոմունիստական կուսակցու-

թյունը դիմեց ճապոնական զինվորներին, բանվորներին ու գյուղացիներին հետևյալ կոչով՝ «ընկերնե՛ր, դաշն կնքեք չինական բանվորների ու գյուղացիների հետ և հեղափոխական պայքարի յելեք: Պահանջեցեք անմիջապես յետ կանչել ճապոնական բանակն ու ռազմանավերը Չինաստանից ու Մանջուրիայից: Մի փոխադրեցեք և վոչ մի զինվոր: Ընդդիմադրեցեք կապիտալիստների ռազմական բոլոր գործողություններին: Օժանդակություն ցույց տվեք Կարմիր բանակին: Ի պաշտպանությո՛ւն ԽՍՀՄ-ի: Կորչի իմպերիալիստական Ճապոնիան: Հանուն խորհրդային Ճապոնիայի»:

Այդ լոզունգները թռուցիկների միջոցով տարածվում եյին գործարաններում, զորանոցներում, գյուղերում: Արձագանքելով կոմունիստական կուսակցության կոչին՝ շատ զինվորներ հրաժարվեցին պատերազմել:

Մանջուրիայում պատերազմելուց հրաժարվելու համար գնդակահարվեցին մի ամբողջ վաշտ զինվոր: Շանհայում 1932 թվի փետրվարի ութին ճապոնական զինվորները հրաժարվեցին պատերազմական ճակատ գնալ: Այդ զինվորները զինաթափ արվեցին և զրահապատ նավով հետ ուղարկվեցին Ճապոնիա: Նրանցից հարյուր մարդ տեղում գնդակահարվեց:

1932 թվի գարնանը ճապոնական ռազմական սավառնորդներից մեկը, վոր ուղարկված եր ռմբակոծելու չինական դիրքերը, աերոպլանով բարձրացավ և փոխանակ ռումբեր նետելու, յերկնքից թափեց կոմունիստական կոչեր ու թռուցիկներ՝ ընդդեմ պատերազմի: Այդ թռուցիկները ճապոնական ու չինական լեզուներով կոչ եյին անում ճապոնական զինվորներին հրաժարվելու չինական բանվորների վրա կրակելուց: Կատարելով իրեն առաջադրած խնդիրը՝ սավառնորդն անհետանում ե: Սավառնորդը ճապոնական կոմունիստական կուսակցության անդամ եր:

1932 թ. օգոստոսին Հոլանդիայի Ամստերդամ քաղաքում ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորները

հրավիրել եյին միջազգային հակապատերազմական կոնգրես (համագումար): Համագումարին ներկա եյին 2195 պատգամավորներ: Նրանք հավաքվել եյին աշխարհի բոլոր կողմերից: Միայն Խորհրդային Միության պատգամավորները ներկա չեյին այդ համագումարին: Չնայած Խ.Ս.Հ.Մ. բանվորների ու գյուղացիների և բոլոր յերկրների հեղափոխական բանվորների բողոքին, կապիտալիստները ԽՍՀՄ պատգամավորությանը թույլ չավին իրենց յերկիրը մտնել՝ համագումարին մասնակցելու համար:

Համագումարն ամբողջ աշխարհի բանվորներին ու գյուղացիներին կոչ ուղղեց: Այդ կոչում համագումարը կոչ ե անում ամբողջ յերկրագնդի կեղեքվողներին՝ համերաշխ կերպով դուրս գալ ընդդեմ կապիտալիստների, վորոնք պատերազմ են պատրաստում: Համագումարն ստեղծեց պատերազմի դեմ պայքարող կոմիտեներ (պայքարի կոմիտեներ): Համագումարի պատգամավորները յերդում տվին բոլոր ուժերով ու միջոցներով պայքարել ընդդեմ պատերազմի և պաշտպանել խորհուրդների յերկիրը:

Ամբողջ աշխարհի աշխատավորները սկսում են հասկանալ, վոր միայն համաշխարհային Խորհրդային Միության համար մղվող պայքարը կարող ե վոչնչացնել ստրկությունն ու աղքատությունը: Յերկրագնդի աշխատավորության կողմից դեպի ԽՍՀՄ-ը տածած համակրանքն աճում ե:

«Հսկայական ժայռի պես,— ասում ե ընկ. Ստալինը,— կանգնած ե մեր յերկիրը, շրջապատված բուրժուական պետությունների օվկիանով: Ալիք ալիքի հետևից գլորվում են ժայռի վրա, սպառնալով նրան տակովն անել ու քշել: Իսկ ժայռը միշտ մնում ե անսասան: Վորն ե նրա ուժը: Վոչ միայն այն, վոր մեր յերկիրը հենվում ե բանվորների ու գյուղացիների դաշինքի վրա, վոր նա ներկայացնում ե ազատ ազգությունների միությունը, վոր նրան պաշտպանում ե Կարմիր բանակի ու Կարմիր նավատորմի հուժկու ձեռքը: Մեր յերկրի ուժը, նրա ամ-

բությունը, նրա հաստատությունը կայանում է նրանում, որ նա ունի խորը համակրանք և անխախտելի օժանդակություն՝ ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների սրտերում:

Ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները ցանկանում են պահպանել խորհուրդների հանրապետությունը որպես թշնամիների թիկունքին Լենինի արձակած նետ, որպես շահագործումից ու թշնամիների կեղեքումից փրկող հենարան, որպես ազատության ուղին ցույց տվող հավատարիմ փարոս: Նրանք ուզում են պահպանել այն և նրանք թույլ չեն տա իմպերիալիստներին ու կալվածատերերին քայքայելու այն: Դրանում է մեր ուժը: Դրանում է ամբողջ աշխատավորների ուժը: Դրանում է ամբողջ աշխարհի բուրժուազիայի թուլությունը:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. *Ինչո՞ւ կապիտալիստներին հարկավոր է իմպերիալիստական նոր պատերազմ:*

2. *Ինչո՞ւ կապիտալիստները պատերազմ են պատրաստում ամենից առաջ ԽՍՀՄ-ի դեմ:*

3. *Ինչո՞ւ կապիտալիստները թաքցնում են պատերազմի պատրաստությունը:*

4. *Ինչո՞ւ յեն պայքարում կապիտալիստական յերկրների բանվորները նոր պատերազմի պատրաստության դեմ:*

---

§ 85. ՏԵՐՈՐԸ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԴԵՄ

Կապիտալիստական յերկրներում բոլոր միջոցները գործադրվում են կոմունիստների ու հեղափոխական բանվորների դեմ: Վայրենի ու սանձարձակ հետապնդումն է այնտեղ տիրում: Ստոր զրպարտությունները,

հանկարծակի ու խորհրդավոր սպանություններ: Տաժանակրության դատավճիռներ: Բանտերում խոշտանգումներ, գնդակահարություններ: Կոմունիստներին ու հեղափոխական բանվորներին առաջին հերթին են հեռացնում աշխատանքից: Նրանց գրանցում են սև ցուցակներում: Դրանից հետո վոչ մի գործարան, վոչ մի ֆաբրիկա այլևս նրանց վոչ մի աշխատանքի չի ընդունում: Նրանց ընտանիքները դատապարտվում են աղքատության ու սովի: Համարյա բոլոր յերկրներում կոմունիստական կուսակցությունները գտնվում են ընդհատակյա վիճակում, այսինքն՝ արգելված են:

1925 *թ. կապիտալիստական յերկրներում ձերբակալվածների և տաժանակիր աշխատանքների ուղարկվածների, ընդմիշտ խեղանդամ դարձածների, անդամահար արվածների, մահվան դատապարտվածների թիվը հասնում էր* 120 *հազարի, իսկ* 1931 *թ. այդպիսիների թիվը մեծանում ու հասնում է* 1.100 *հազարի: Դրանցից* 370 *հազար մարդ սպանված են առանց դատվելու:*

Կոմունիստների դեմ բուրժուազիայի պայքարի յեղանակներից մեկն էլ կոմունիստներին զրպարտելու յեղանակն է:

1931 *թ. Բուդապեշտից Վիեննա մեկնող գնացքը Բիա–Գորբուլթ կայարանի մոտ պայթեցվեց:* 26 *մարդ հենց տեղում սպանվեցին: Վոստիկանությունը հայտարարեց, թե աղետի վայրում գտնված է նամակ: Այդ նամակում իբր ասված էր, թե պայթյունը կազմակերպել էին կոմունիստները, վորպեսզի գործազուրկների համար աշխատանք ստեղծվի:*

Հունգարիայում սկսեցին կոմունիստներին վայրենի հետապնդման ու հալածանքների յենթարկել: Շուտով պարզվեց, վոր պայթունը կազմակերպել է վոստիկանական գործակալ Մատուշկան: Այդ չարագործին բուրժուազիան առավ իր հովանավորության տակ (պաշտպանեց) և հայտարարեց նրան ցնորված (գժված, խելքը կորցրած):

1933 թ. փետրվարի 28-ին Գերմանիայի Բեռլին քաղաքում գերմանական Ռայխստագի շենքում հրդեհ բռնկվեց: Վոստիկանությունը լուրեր տարածեց, վոր իբր թե այդ տունը հրդեհել է «կոմունիստ» Վանդեր-Լյուբբեն: Կոմունիստական կուսակցությունները դիմակազերծ արին կապիտալիստների զրպարտությունը: Վանդեր-Լյուբբեն խոստովանեց, վոր յերբեք ինքը կոմունիստ չի յեղել: Նա յեղել է կոմունիստական կուսակցությունների թշնամի:

Իսկ ում եր հարկավոր այդ հրդեհը: Ռայխստագի հրդեհումը հարկավոր եր կապիտալիստներին, վորպես նոր պատրվակ՝ կոմունիստներին հալածելու և հետապնդելու համար: Գերմանական ֆաշիստների առաջնորդ Հիտլերը ժամանելով հրդեհի վայրը, հայտարարում է— «Սա Աստծու կողմից տրված ազդանշան է: Այժմ մեզ վոչինչ չի խանգարի կոմունիստներին յերկաթյա բռունցքներով ճնշել»:

Սկսվեց Գերմանական կոմունիստական կուսակցության ճնշումը: Կարլ Լիբկնեխտի անվան տունը, վորտեղ տեղավորված եր գերմանական կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և կոմունիստական «Ռոթե Ֆանե» թերթի խմբագրությունը, գրավվեց վոստիկանության կողմից: Խուզարկությունից հետո վոստիկանությունը հայտարարեց, վոր այնտեղ գտնված փաստաթղթերի մեջ յերևան է հանված կոմունիստական ապստամբության պլանը, և իբր թե այդ պլանի համաձայն Ռայխստագի հրդեհումն ապստամբության առաջին քայլն եր լինելու: Հեղափոխական բանվորները դիմակազերծ արեցին կապիտալիստների վարձկանների նաև այդ զրպարտությունը: Պարզվեց վոր այդ կեղծ փաստաթուղթը տպված է յեղել վոստիկանության կողմից դեռևս 1931 թ.:

Այդ բանը չխանգարեց գերմանական կապիտալիստներին շարունակել կոմունիստներին ու հեղափոխական բանվորներին վայրենաբար հետապնդել:

Կապիտալիստները բանտ նետեցին հազարավոր կոմունիստների: Գերմանական քաղաքների փողոցներում բանվորներին դիմավորում են գնդացրային կրակով: Գերմանական կոմկուսակցության առաջնորդ ընկ. Թելմանը բանտ է նստած: Վոստիկանական դահիճների բարբարոսությունն այն աստիճանի յե հասել, վոր նրանք բանտ են նետում հեղափոխականների յերեխաներին:

Գերմանական կապիտալիստները չբավականացան իրենց յերկրի կոմունիստների հալածանքով: Նրանք լ՚ալ հալածանք են սկսել նաև Խորհրդային Միության դեմ:

Կապիտալիստները ցանկանում են իրենց յերկրի աշխատավորներին նախապատրաստել ԽՍՀՄ դեմ պատերազմելու համար:

Ռայխստագի հրդեհի որը Գերմանիայում կապիտալիստները ուղղելով բանվորներին ու գյուղացիներին կոչ եյին անում պայքարելու բոլշևիկների դեմ:—«Վողջ Գերմանական ժողովուրդը պետք է միահամուռ կերպով վոտքի յելնի Մոսկովիտների դեմ»—ասում եյին նրանք:

Ահա այսպիսի ծանր պայմաններում են ապրում ու պայքարում հեղափոխական բանվորներն ու գյուղացիները կապիտալիստական յերկրներում: Չնայած վայրենի հալածանքին, կոմունիստական կուսակցություններն աճում են ամբողջ աշխարհում:

§ 86. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԻԱԿ ՅԵԼՔՆ Է ՃԳՆԱԺԱՄԵՐԻՑ

Չնայած բուրժուազիայի հետապնդումներին, չնայած նրա կողմից հեղափոխականներին դաժանորեն հալածելուն, բանվորական շարժումը բոլոր յերկրներում գնալով աճում է: Բանվոր դասակարգի հեղափոխական պայքարը ղեկավարում են կոմունիստական կուսակցությունները: Կոմունիստական կուսակցություն

գոյություն ունի ամեն մի յերկրում: Կոմունիստական Ինտերնացիոնալը (Կոմինտերնը) միավորում է բոլոր յերկրների կոմունիստական կուսակցություններին, վորպես միասնական համաշխարհային կոմունիստական կուսակցություն: Կոմինտերնը հանդիսանում է համաշխարհային հեղափոխական շարժման առաջնորդն ու կազմակերպիչը: Կոմինտերնի ղեկավարությամբ բոլոր յերկրների պրոլետարիատը միաձուլում է իր ուժերն ընդդեմ կապիտալիստների:

Գնալով ավելի ու ավելի հաճախ են տեղի ունենում բանվորների ու գյուղացիների հեղափոխական յելույթները: Բոլոր յերկրներում աճում է գործադուլների թիվը: Լեհաստանում միայն 1932 թ. գործադուլ են արել 280 հազար լեռնագործ, տրամվայի վրա աշխատող և մանածագործ բանվորներ:

Անգլիայում, Իսպանիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում, Լեհաստանում և մյուս կապիտալիստական յերկրներում կոմունիստական կուսակցությունները կազմակերպում են հեղափոխական բանվորների հզոր ցույցեր: Ամերիկայում կոմունիստական կուսակցությունը կազմակերպել է գործազուրկների մի շարք արշավներ: Գործազուրկները պահանջում էյին «հաց և աշխատանք»: Բանվորների ու վոստիկանության միջև գնալով ավելի հաճախակի յեն դառնում արյունալի ընդհարումները:

Գերմանիայում, չնայած կոմունիստների ու հեղափոխական բանվորների նկատմամբ կապիտալիստների կողմից գործադրած դաժան ճնշմանը, բանվորական թաղերում համարյա ամեն օր տեղի յեն ունենում բանվորների ցույցեր: Չնայած այն բանին, վոր Բեռլինի ամբողջ վոստիկանությունը վոտքի յե հանված, քաղաքի զանազան մասերում տներից կախվում են հեղափոխական լոզունգներ, ցանկապատերին ու պատերին փակցվում են կոմունիստական թռուցիկներ: Բանվորները պայքար են մղում բոլոր բանտարկված բանվորներին

և կոմունիստական կուսակցության առաջնորդ ընկ. Թելմանին ազատելու համար, կոմունիստների հալածանքին վերջ տալու համար: Ընդհատակ քշված կոմունիստական կուսակցությունը չի թուլացնում իր աշխատանքը և ղեկավարում է հեղափոխական բանվորների պայքարը:

Աշխատավոր գյուղացիները նմանապես պայքարի յեն յելնում ընդդեմ կապիտալիստների ու կալվածատերերի: Գնալով ավելի հաճախակի յեն դառնում զինվորների յելույթները:

Աճում ու ծավալվում է հեղափոխական պայքարը Չինաստանում: Չինական բուրժուազիան իր բոլոր ջանքերն է գործադրում, վորպեսզի վոչնչացնի Չինաստանի խորհրդային դարձած շրջանները: Սակայն այդ նրան չի հաջողվում: Խորհրդային Չինաստանի Կարմիր բանակն աննկուն կերպով պաշտպանում է իր նվաճումները: Չինական գեներալ Չան-Կայ-Շին չորս արշավանք կազմակերպեց խորհրդային շրջանների վրա: Սակայն հաղթանակը մնաց չինական Կարմիր բանակի կողմը: Հանդիպելով Կարմիր բանակին՝ Չան-Կայ-Շիյի բանակի զինվորներն ամբողջ գնդերով ու դիվիզիաներով անցնում էյին Խորհրդային իշխանության կողմը: Մի տարի առաջ խորհուրդների իշխանությունը տիրում էր Չինաստանի 70 գավառներին: Ներկայումս չինական խորհուրդների կառավարման ներքո գտնվում են 190 գավառներ:

Գործազուրկների յերեխաների ցույցը ՀԱՄՆ-ում

Հնդկաստանում, որն Անգլիայի գաղութն է, պրոլետարիատը կատարում է համառ, մասսայական գործադուլներ:

Այդ ամբողջ պայքարը ղեկավարում են մեր յեղբայրական կոմունիստական կուսակցությունները: Կոմինտերնի շուրջը համախմբվում են աշխատավորների նորանոր միլիոնավոր զանգվածներ (մասսաներ):

Հայրերի ու մայրերի մղած հեղափոխական պայքարին մասնակցում են նաև յերիտասարդությունը, յերեխաները: Կապիտալիստական բոլոր յերկրներում աճում են լենինյան կոմունիստական յերիտասարդական միությունն ու պիոներական կազմակերպությունը: Յերեխաները մեծերին օգնում են թռուցիկներ փակցնելու, կոմունիստական թերթեր ու գրականություն տարածելու գործում: Բոլոր յերկրներում յերիտասարդությունը մեծահասակների հետ միատեղ դուրս է գալիս ցույցերի:

Ամերիկայում 1932 թ. դեկտեմբերին հարյուր հիսուն յերեխաներ, գործազուրկների զավակներ, Ամերիկայի զանազան քաղաքներից ժամանեցին Վաշինգտոն: Հինգ մանուկ, որպես պատգամավորություն, որն ընտրվել եր միտինգում, ցանկանում եյին մտնել այն տունը, որտեղ գտնվում է Ամերիկայի կառավարությունը, և նախագահ Հուվերին (Ամերիկայի այն ժամանակվա նախագահը) հայտնել սովյալ յերեխաների պահանջները:

Յերեխաները յեկել եյին պահանջելու՝ աշխատանք իրենց հայրերին, դպրոցում ձրի սնունդ, մանկան աշխատանքի արգելում, նեգր յերեխաների հալածանքի վերացում:

Սակայն յերեխաներին դիմավորեց գազային ռումբերով և ատրճանակներով զինված 250 հոգուց բաղկացած ոստիկանական ջոկատը: Թե յերեխաները և թե նրանց ուղեկցող մեծահասակներն անմիջապես ձերբակալվեցին և ուղարկվեցին ոստիկանատուն:

Ոստիկանատանը, յերբ գործազուրկ մանածագործի 11 տարեկան դուստր Գրասին հարց տվին, թե «ինչո՞ւ յեք դուք յեկել Վաշինգտոն» — նա պատասխանեց հպարտորեն — «որպեսզի պայքարենք կապիտալիստների դեմ»:

Ամբողջ աշխարհի բոլոր կապիտալիստների գործը միատեսակ է: Նրանք անողոք կերպով շահագործում, հարստահարում են աշխատավորներին: Բանվորների ու գյուղացիների գործն ամբողջ աշխարհում նմանապես միատեսակ է. նրանք պետք է իրենց ազատագրեն կապիտալիստների տիրապետությունից, նրանք պետք է կատարեն պրոլետարական հեղափոխություն, տապալեն կապիտալիստներին:

§ 87. ԱՄՐԱՑՆԵԼ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԻ — ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ աշխարհի հեղափոխական բանվորներն ու գյուղացիները հպարտությամբ են նայում խորհուրդների յերկրին: Առաջին հնգամյակի հաջող կատարումն ամբողջ աշխարհի աշխատավորներին ցույց է տալիս, թե ինչ հաջողությունների կարող են հասնել ազատ յերկրի բանվորներն ու գյուղացիները:

Անցյալում ամբողջ աշխարհի բանվորները չունեյին իրենց հայրենիքը: Ամենուրեք իշխանության գլուխ կանգնած եյին կապիտալիստները: Այժմ բանվորներն ունեն իրենց հայրենիքը: Այդ հայրենիքը խորհուրդների յերկիրն է, ուր իշխանության գլուխ են կանգնած բանվորներն ու գյուղացիները:

Նայելով ԽՍՀՄ-ի վրա՝ ամբողջ աշխարհի բանվորներն ասում են. «Ահա նա—իմ առաջավոր ջոկատը, ահա նա—իմ հարվածային բրիգադը, ահա նա—իմ բանվորական իշխանությունը, ահա նա—իմ հայրենիքը,—նրանք կատարում են իրենց գործը, մեր գործը, լավ, ուրեմն, օգնենք նրանց՝ ընդդեմ կապիտալիստնե-

ըր և լորըոքենք համաշխարհային հեղափոխության գործը» (Ստալին):

Կապիտալիստներն իրենց ատամներն են սրում խորհուրդների յերկրի դեմ: Ամեն րոպե նրանք պատրաստ են հարձակվելու մեզ վրա: Մենք պետք է պատրաստ լինենք նրանց հակահարված տալու:

Մեր Կարմիր բանակը ուշիուշով պաշտպանում է Խորհրդային Միության սահմանները: Պրոլետարական պետությունն ամեն ջանք գործ է դնում իր Կարմիր բանակն ամրապնդելու համար:

1924 թ. Լենինի հիշատակին նվիրված նիստում ընկ. Ստալինն ասում եր—«Լենինը շատ անգամ է մեզ ցույց տվել, վոր Կարմիր բանակի ամրացումը և նրա դրության բարելավումը մեր կուսակցության կարևորագույն խնդիրներից մեկն է: Ուրեմն յերդվենք, ընկերներ, վոր չենք խնայի մեր ուժերը ամրացնելու համար մեր Կարմիր բանակը, մեր Կարմիր նավատորմը»:

Եվ բոլշևիկները կատարեցին այդ յերդումը: Առաջին հնգամյակը Կարմիր բանակը տեխնիկապես հետամնաց բանակից վերածեց առաջավոր բանակի:

Մենք ունենք սեփական տիպի հրացաններ ու գնդացիրներ: Մենք ինքներս ենք կառուցում հեռահար հրանոթներ: Մեզ մոտ առաջ տանկեր բոլորովին չկային: Այժմ տանկեր պատրաստում են մեր բանվորներն իրենց սեփական ձեռներով: Մենք ինքներս կառուցում ենք աերոպլաններ (ինքնաթիռներ): Մեր բանակը ռադիոֆիկացման է յենթարկված: Մեր զորքերը կարող են պաշտպանվել նաև քիմիական հարձակման դեպքում: Ծովային սահմանները պահպանելու և պաշտպանելու համար մենք ունենք ծովային նավատորմ:

Մեր յերկրի պաշտպանունակության ամրացումը անխզելի կերպով կապված է ընկ. Ստալինի անվան հետ: Քաղաքացիական կռիվների տարիներին, յերբ առանձնապես ծանր եր կացությունը ճակատում և սպառնում եր անհաջողություն, ամենուրեք հայտնվում

եր աննկուն, սառնասիրտ ու վճռական ընկ. Ստալինը: Սակայն քաղաքացիական կռիվներից հետո ել ընկ. Ստալինը վոչ մի րոպե չդադարեց յերկրի պաշտպանության գործով զբաղվելուց: Այսպես ուրեմն, ընկ. Ստալինը Կարմիր բանակի ամենամտերիմ ու թանկագին բարեկամն է:

Մենք վոչ մի րոպե չենք կարող բավականանալ յերկրի պաշտպանության գործում ձեռք բերված հաջողություններով: Յուրաքանչյուր աշխատավոր պետք է պատրաստ լինի սոցիալիստական հայրենիքի պաշտպանության համար: Մեր Կարմիր բանակը պետք է ամ-



բողջ ժամանակ ուժեղացնի իր մարտական կարողությունը: Մեր Միության յուրաքանչյուր աշխատավոր պետք է կարողանա հրացան ու գնդացիր կրակել, հակագազի հետ վարվել:

Կոմյերիտմիության և պիոներական կազմակերպության ղեկավարությամբ Խորհրդային Միության յերիտասարդությունը պետք է ակտիվորեն մասնակցի ԽՍՀՄ-ի պաշտպանությունը նախապատրաստելու գործին: Ռազմական գիտելիքներ ուսումնասիրող խմբակների, ռազմական անկյունների, ֆիզկուլտուրայի միջոցով դպրոցական աշակերտները պետք է տիրապետեն ռազմական գիտելիքներին: Յերիտասարդներից պետք է պատրաստվեն ուժեղ և առողջ մարտիկներ:

«Վոչ մի թիզ ուրիշի հողից մենք չենք ուզում, բայց և մեր հողից, վոչ մի վերշոկ չենք տա վոչ վոքի» (ՍՏԱԼԻՆ):

ԼԵՆԻՆԻ ԴՐՈՇՈՎ

Հաղթեցինք մենք Հոկտեմբերյան հեղափոխության համար մղված մարտերում:

ԼԵՆԻՆԻ ԴՐՈՇՈՎ

Մենք ձեռք բերինք վճռական հաջողություններ սոցիալիստական շինարարության համար մղվող պայքարում:

ԱՅԴ ՆՈՒՅՆ ԴՐՈՇՈՎ

Համաշխարհային պրոլետարիատի սիրելի առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Կապիտալիստական յերկրների բանվորներն ու գյուղացիները ի՞նչ կերպ կարող են ազատվել կապիտալիստների իշխանությունից:

2. Կապիտալիստական յերկրների բանվորներն ու գյուղացիներն ի՞նչպես են պայքարում իրենց շահագործողների դեմ:

3. Ո՞վ է ղեկավարում բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարն ամբողջ աշխարհում:

4. Ի՞նչ պետք է անել մեր յերկրի պաշտպանունակությունն ամրացնելու համար:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — ССРА

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ—ՀԱՄԿ(բ)Կ

Էջ
Կոմունիստական կուսակցությունը — բանվոր դասակարգի առաջավոր ջոկատն է 5
Կուսակցությունը բանվոր դասակարգի կազմակերպված ջոկատն է 12
Կոմունիստական կուսակցությունը բանվոր դասակարգի միակ կուսակցությունն է 18
Կուսակցության զտումը 22
Ստալինը—լենինյան կոմունիստական կուսակցության առաջնորդն է 24
Լազար Մոիսեևիչ Կագանովիչ 32
Համամիութենական լենինյան կոմյերիտմիությունը (ՀամԼԿՅԵՄ) 35

Գլուխ I. Խորհուրդներ

§ 1. Ինչպես առաջացան խորհուրդները . . . .
§ 2. Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի օրգաններն են 41
§ 3. Ո՞վ իրավունք ունի ընտրել և ընտրվել խորհուրդներում 44
§ 4. Ո՞վ է զրկված խորհուրդների յերկրում ընտրական իրավունքից 50
§ 5. Մեծ պատիվ և աշխատավորության հանդեպ խոշոր պատասխանատվություն է խորհրդի անդամ լինելը 51
§ 6. Խորհուրդների միջոցով աշխատավորները մասնակից են դառնում յերկրի կառավարմանը 53
§ 7. Բանվորները և գեղջկուհիները խորհուրդներում 54
§ 8. Ինչպես է կառուցված Խորհուրդների իշխանությունը 56
§ 9. Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ 57
§ 10. Ա. Ս. Բուբնով 63
. . . . 70

Գլուխ II. ԽՍՀՄ-ը բոլոր ազգությունների աշխատավորների յեղբայրական միությունն է

§ 11. Ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր . . . .
§ 12. Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում վերջ տվեց ազգային ճնշման 72
§ 13. Ինչու՞ զանազան ազգությունների աշխատավորները միացան և ԽՍՀՄ կազմեցին 75
. . . . 77

§ 14. Խորհրդային իշխանությունը փոխեց ազգային շրջանների դեմքը . . . 78
§ 15. Ի՞նչ հանրապետություններ են մտնում ԽՍՀՄ կազմի մեջ 81
§ 16. Բարձրագույն իշխանությունը ԽՍՀՄ-ում 81
§ 17. Մ. Ի. Կալինին 84
§ 18. ԽՍՀՄ ժողկոմխորհ 86
§ 19. Վ. Մ. Մոլոտով (Սկրյաբին) 87
§ 20. Միության ժողովրդական կոմիսարիատներ (ժողկոմատներ) 88
§ 21. Ծանր Արդյունաբեր ժողովրդական Կոմիսարիատ (Ծանրարդժողկոմատ) 90
§ 22. Ռազմածովային Գործերի ժողովրդական Կոմիսարիատ 93
§ 23. Կ. Ե. Վորոշիլով 94
§ 24. Կոմունիստական կուսակցությունները ղեկավարում են խորհուրդները . 96
§ 25. Կապիտալիստական յերկրներում բանվորներն ու գյուղացիները հերոսական պայքար են մղում Խորհրդային իշխանություն հաստատելու համար . . 98

Գլուխ III. Մենք կառուցում ենք սոցիալիզմ

§ 26. ԽՍՀՄ-ում իրականանում է միլիոնների իղձը 101
§ 27. Սոցիալիզմը կառուցվում է պլանով 103
§ 28. Հնգամյա պլանը սոցիալիզմի կառուցման պլանն է 105
§ 29. Աշխատավորության թշնամիներն աշխատում են խանգարել մեր շինարարքը 107
§ 30. Ինչպիսի՞ տնտեսություն եր մեզ մնացել ցարական Ռուսաստանից . . 108
§ 31. Հնգամյա պլանում հիմնականը ծանր արդյունաբերությունն է . . . 110
§ 32. Ուրալ-Կուզնեցկու կոմբինատը 112
§ 33. ԽՍՀՄ-ն իր դաշտերը վարում է սեփական տրակտորով 118
§ 34. Գյուղատնտեսական մեքենաների գործարաններ 123
§ 35. Յերկիրը խլանում է մեր սեփական ավտոմոբիլների ազդանշանների ձայներից 126
§ 36. Աճող արդյունաբերությունը պահանջում է ածուխ 130
§ 37. Նավթի հնգամյակն իրագործված է յերկու և կես տարում 134
§ 38. Դնեպրոգեսը խորհրդային յերկրի պարծանքն է 137
§ 39. Մեր յերկրի աճող տնտեսությանը հարկավոր է տրանսպորտ . . . 141
§ 40. Տրակտորին ու ավտոմոբիլին հարկավոր են լավ ճանապարհներ . . 144
§ 41. Հնգամյակը վերափոխեց յերկրի դեմքը 145
§ 42. Անընդհատ բարելավվում է բանվորների նյութական դրությունը . . 147
§ 43. Յերկրի ինդուստրացման միջոցով դեպի աշխատավորների նյութական դրության հետագա բարելավում 157

Գլուխ IV. Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը

§ 44. Ի՞նչ թողեց մեզ ցարական Ռուսաստանը 160
§ 45. Բանվոր դասակարգը գյուղին տանում է դեպի սոցիալիզմ 161
§ 46. Կապիտալիզմի օրոք գյուղացիական տնտեսության ուղին աղքատության ու քաղցի ուղին եր 165
§ 47. Բոլշևիկները գյուղացիությանն ինչպես տարան դեպի կոլեկտիվ տնտեսություն 168
§ 48. Սոցիալիստական արդյունաբերության օգնությունը գյուղին 171

ՀՀ Ազգային գրադարան
NL0189707